ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿՐՏՍԵՐ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐ

(2-3 ՏԱՐԵԿԱՆՆԵՐ)

ԵՐԵՎԱՆ 2012

ՀՏԴ 373.23 (073)
ԳՄԴ 74.1
Մ 260

*Երաշխավորված է ՀՀ ԿԳ նախարարի՝ 23.11.2012 թ.
№ 1070-Ա/Ք հրամանով*

Ծրագրի համակարգող՝ Հ. Միտոյան

Հեղինակային խումբ՝

Հ. Միտոյան, Ս. Մարության - մանկ. գիտ. թեկնածու, պրոֆ.,

Լ. Սմբատյան, Հ. Սինասյան, Գ. Մարտիրոսյան,

Հ. Հարությունյան, Կ. Ղազարյան, Լ. Վերդյան, Ժ. Ավետիսյան

Մ 260 Մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի կրթական համալիր ծրագիր: 2-3 տարեկաններ /Հ.Միտոյան, Ս. Մարության, Լ.Սմբատյան, Հ.Սինասյան, Գ.Մարտիրոսյան և ուրիշ. : ՀՀ ԿԳՆ. - Եր. : Կրթության ազգային ինստիտուտ, 2012 – 168 էջ:

ՀՏԴ 373.23 (073)
ԳՄԴ 74.1

ISBN 978 – 9939 – 806 – 59 – 4

© ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2012

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի կրթական համալիր ծրագրում առաջին պլան է մղված կրթության զարգացնող բնույթը, որն ապահովում է երեխայի անձի կայացումը՝ բացահայտելով նրա անհատական առանձնահատկությունները:

Ծրագրի հեղինակային խումբը, հենվելով նախադպրոցական կրթության բնագավառում ձեռք բերված գիտական նվաճումների, լավագույն ավանդույթների և և փորձի վրա, նորացրել ու հարստացրել է այն՝ առավելագույնս կիրառելով մանկական գործունեության տարաբնույթ տեսակները: Դրանց ինտեգրումը բարձրացնում է կրթական գործընթացի արդյունավետությունը՝ հիմքում ունենալով դիդակտիկայի կարևոր սկզբունքները: Ճիշտ կազմակերպված ուսուցումը զարգացման նախադրյալ է, իսկ դաստիարակությունը և հոգեկան զարգացումը չեն կարող միմյանցից անկախ գործընթացներով հանդես գալ. ընդ որում, դաստիարակությունը ծառայում է որպես երեխայի զարգացման համընդհանուր և անհրաժեշտ ձև:

Ծրագրում համալիր ձևով ներկայացված են դաստիարակության և ուսուցման բոլոր հիմնական ուղղությունները:

Տարիքային այս խմբի ծրագրային նյութերի ընտրության գլխավոր՝ ելակետային չափանիշը դրանց դաստիարակչական արժեքն է. արվեստի, գրական ստեղծագործությունների, ազգային ու համամարդկային արժեքային համակարգը ներկայացնող նմուշների գեղարվեստական բարձր մակարդակի առկայությունը նպատակաուղղված է երեխայի կարողությունների ու ունակությունների ներդաշնակ զարգացմանը:

Ծրագրի առաջատար նպատակներն են՝ նախադպրոցական երեխայի լիարժեք մանկության համար բարենպաստ պայմանների ապահովումը, նրա հոգեկան ու ֆիզիկական որակների համակողմանի զարգացումը, տարիքային ու անհատական առանձնահատկություններին համապատասխան ժամանակակից կյանքին նախապատրաստումը:

Ծրագրի յուրաքանչյուր բաժնում ներկայացված են դաստիարակության և ուսուցման ընդհանուր և հատուկ խնդիրները, երեխաների կյանքի կազմակերպման առանձնահատկությունները, ուսուցման գործընթացում կարևորագույն ունակությունների և կարողությունների անհրաժեշտ պատկերացումների ձևավորումը:

Մշակված է նաև մանկական տոների, ժամանցների, զվարճալիքների բովանդակությունը: Արտացոլված են նախադպրոցական հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացում երեխայի զարգացման ակնկալիքները և ձեռքբերումները տարեվերջին:

Ծրագիրը ներառում է գրական և երաժշտական ստեղծագործությունների, ազգային ավանդույթների, մանկական տոների, զվարճալիքների համար օգտագործվող նյութերի հարուստ ցանկ, որոնք երաշխավորվում են կիրառության՝ մանկավարժական գործընթացում:

Անշուշտ, յուրաքանչյուր դաստիարակի մասնագիտական վարպետությամբ, նրա անձի մշակույթով, երեխաների հանդեպ դրսևորած հոգատարությամբ ու սիրով են պայմանավորված երեխայի զարգացման ընդհանուր մակարդակը և բարոյական որակների յուրացման աստիճանը:

ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրտսեր խմբի՝ երկուսից երեք տարեկան երեխաների կրթական համալիր ծրագիրը սահմանում է կրթության բովանդակության ընդհանրական կառուցվածքը, կանոնակարգային պահերը, ուսումնական տարվա սկիզբը, ավարտը, հիմնական ուղղություններին հատկացվող շաբաթական և տարեկան պարապմունքների քանակը, երեխաների շաբաթական բեռնվածության առավելագույն քանակը, ակնկալվող արդյունքները՝ ըստ զարգացման ոլորտների և գործունեության ձևերի:

Առաջին անգամ կրտսեր խմբի համալիր ծրագրում ներառված են ծրագրային նյութեր՝ նպատակամիտված տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորմանը: Այդ բաղադրիչն ընդգրկում է հետևյալ 4 բաժինները. «Քանակ», «Մեծություն», «Ձև», «Կողմնորոշում տարածության մեջ»:

Ծրագրային նյութերը տրված են ըստ եռամսյակների:

Ծրագրի բովանդակային բաղադրիչները զուգակցվում են հավելվածներով;

Հավելվածների նպատակն է՝ աջակցել նախադպրոցական հաստատությունների դաստիարակներին՝ 2-3 տարեկանների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ իրականացման, դրանց նպատակային, համակարգված և մատչելի պլանավորմանը՝ ըստ մեթոդական հանձնարարականների: Ուսումնական տարվա ընթացքում երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների հեռանկարային պլանավորումը հավելվածներում ներկայացված է հետևյալ բաժիններով.

- Երեխան և շրջակա աշխարհը. առարկայական միջավայր, հասարակական կյանքի երևույթներ,
  ծանոթացում՝ բնությանը,
- Տարրական էկոլոգիական պատկերացումներ,
- Երեխաների գործունեության կազմակերպումը զբոսանքի ժամանակ,
- Ճանապարհային երթևեկության կանոնների ուսուցում,
- Խոսքի զարգացում. գեղարվեստական գրականություն,
- Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորում,
- Կերպարվեստային գործունեություն. նկարչություն, ծեփ,
- Երաժշտական դաստիարակություն,
- Ֆիզիկական դաստիարակություն:

Պարապմունքների շաբաթական թեմատիկ բաշխումը միանշանակ չէ: Խմբի դաստիարակը, սեփական փորձի և ներըմբռնողության (ինտուիցիայի) սահմաններում, ինչպես նաև ելնելով երեխաների հնարավորություններից, կողմնորոշվելով պլանավորման աղյուսակային ձևով, սեփական հայեցողությամբ կարող է պլանավորել շաբաթվա ընթացքում իրականացվող տարաբնույթ համալիր աշխատանքները:

Կրտսեր առաջին խմբի երեխաների հոգեֆիզիոլոգիական զարգացման տարիքային առանձնահատկությունները

Կյանքի երրորդ տարում երեխաները դառնում են առավել ինքնուրույն: Շարունակվում է զարգանալ երեխայի առարկայական գործունեությունը, երեխայի և մեծի իրավիճակային, գործնական շփումները, կատարելագործվում են երեխայի ըմբռնումը, կամայական վարքի սկզբնական ձևերը, խաղերը, դիտողական- գործնական մտածողությունը:

Այս տարիքում ֆիզիկական զարգացման տեմպերը դանդաղ են. ամբողջ տարում քաշը միջինում ավելանում է 2-ից 2,5 կգ, հասակը՝ 7-8 սմ: Եվ սա բնական է, քանի որ էներգիայի զգալի մասն ուղղվում է շարժողական ակտիվության ապահովմանը, ներքին օրգանների և համակարգերի կատարելագործմանը: Կենտրոնական նյարդային համակարգը դառնում է ավելի դիմացկուն: Նա կարող է պարապմունքի ընթացքում կենտրոնանալ մինչև 15 րոպե: Կատարելագործվում են գլխուղեղի կեղևի ֆունկցիաները, զարգանում է հիշողությունը, կայունանում է սրտանոթային համակարգը:

Առարկայական գործունեության ծավալումը սերտորեն առնչվում է տարբեր առարկաների գործողությունների յուրացմանը: Գործունեության ընթացքում ձևավորվում են հարաբերակցության հմտություններ: Բավականաչափ հղկվում է խոսքը, հարստանում է բառապաշարը:

Մեծերի հետ համատեղ առարկայական գործունեության ընթացքում շարունակում է զարգանալ երեխաների խոսքի ընկալումը: Բառն առանձնանում է իրադրությունից և ձեռք բերում ինքնուրույն նշանակություն: Երեխաները շարունակում են յուրացնել շրջակա միջավայրի առարկաների անվանումները, սովորում են կատարել մեծերի պարզագույն խոսքային խնդրանքները՝ դիտողական, տեսանելի իրադրության սահմաններում: Հասկանալի բառերի թիվը նշանակալիորեն ավելանում է: Մեծերի հետ շփման ընթացքում կատարելագործվում է երեխայի վարքը, նա սկսում է հասկանալ ոչ միայն մեծերի հրահանգները, այլև նրանց պատմումները:

Ինտենսիվ ձևով զարգանում է երեխայի ակտիվ խոսքը: Կյանքի երրորդ տարում նրանք յուրացնում են հիմնական քերականական կառուցվածքները, փորձում են կազմել պարզ նախադասություններ, մեծերի հետ խոսակցության ժամանակ գործնականում կիրառում են բոլոր խոսքի մասերը: Ակտիվ բառապաշարը հասնում է 1000-ից 1200 բառի: Տարեվերջին երեխայի կյանքում խոսքը դառնում է միջոց ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծերի հետ: Այս տարիքում երեխաների մեջ ձևավորվում են գործունեության նոր տեսակներ՝ խաղ, նկարչություն, կառուցողական աշխատանք: Խաղը կրում է ընթացային բնույթ. այստեղ գլխավորը գործողությունն է: Դրանք կատարվում են խաղային առարկաներով, որոնք մոտ են իրականությանը: Տարվա կեսին երեխան ի հայտ է բերում գործողություններ՝ առարկա-փոխարինիչներով:

Հատկապես գեղագիտական գործունեության երևան գալը պայմանավորված է այն հանգամանքով, որ երեխան ունակ է ձևակերպել իր մտադրությունը, վեր-

արտադրել ինչ-որ առարկա: Տիպային է մարդու արտացոլումը «Գլուխ-ոտք» տեսքով՝ միջավայրից և նրանից զատվող գծերով:

Այս տարիքում կատարելագործվում է երեխայի տեսողական և լսողական կողմնորոշումը, որը թույլ է տալիս նրանց առանց սխալվելու իրականացնել մի շարք հանձնարարություններ՝ առարկաների խմբից ընտրել և առանձնացնել երկուերեքը՝ ձևով, մեծությամբ, գույնով, տարբերել մեղեդիները, երգել:

Կատարելագործվում է լսողական ընկալումը, ամենից առաջ հնչյունային լսողությունը: Թեև նրանք ընկալում են մայրենի լեզվի բոլոր հնչյունները, սակայն արտաբերում են մեծ աղավաղումներով:

Մտածողության հիմնական ձևը դառնում է դիտողական-գործնական: Դրա առանձնահատկությունն այն է, որ երեխայի կյանքում ծագող խնդրահարույց իրավիճակները լուծվում են առարկաների հետ իրական գործողություններ կատարելու ճանապարհով:

Այս տարիքի երեխաներին բնորոշ են չգիտակցված, ներքին մղումով դրդապատճառներ՝ պայմանավորված իրավիճակային զգացողություններով և ցանկություններով: Երեխաները հեշտությամբ վարակվում են հասակակիցների հուզական վիճակով: Ընդ որում, այս տարիքում երեխայի վարքում սկսվում է կազմավորվել կամայականություն: Այն պայմանավորված է խոսքային միջոցների զարգացման գործընթացներով: Երեխաներն այս ընթացքում ի հայտ են բերում հպարտության, ամոթի զգացումներ: Սկսում են ձևավորվել ինքնագիտակցության տարրեր՝ կապված անվան, սեռի տարբերակման հետ: Ավարտվում է երրորդ տարում վաղ տարիքի ճգնաժամային փուլը (կրիզիսը): Երեխան ընկալում է իրեն որպես առանձին մարդ՝ մեծից տարբերվող: Նրա մեջ ձևավորվում է ***եսի*** կերպարը: Ճգնաժամային փուլը երբեմն դրսևորվում է մի շարք բացասական երևույթներով՝ կամակորությամբ, մեծերի և հասակակիցների հետ հաղորդակցման խանգարմամբ և այլն: Ճգնաժամը կարող է շարունակվել մի քանի ամիս՝ մինչև երկու տարեկանը: Երբեմն այն կարող է և չլինել:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Օրվա ռեժիմը (կանոնակարգը) օրվա ընթացքում երեխաների տարաբնույթ գործունեության տեսակների և հանգստի ռացիոնալ շարունակությունն ու խելամիտ հերթագայումն է:

Այն պարապմունքների սանդղակի կազմման, դաստիարակչական աշխատանքների ու գործունեության ազատ ձևերի պլանավորման, երեխաների ֆիզիկական, մտավոր աշխատանքների ճիշտ հերթագայման և ծանրաբեռնվածության ներդաշնակ բաշխման մեխանիզմ է:

Ռեժիմի ճիշտ կառուցվածքի հիմնական սկզբունքը դրա համապատասխանությունն է երեխաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններին: Ռեժիմային պահերի իրականացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև երեխայի անհատական առանձնահատկությունները (քնի տևողությունը, համային նախասիրությունները, գործունեության տեմպը և այլն):

Նպատակահարմար է ռեժիմում առանձնացնել երեխաների ընթերցանության ժամ: Անհրաժեշտ է ընթերցել ոչ միայն գեղարվեստական գրականություն, այլև ճանաչողական, պատկերազարդ գրքեր, մանկական հանրագիտարաններ, պատմվածքներ երեխաների համար՝ հայրենի եզերքի, ինչպես նաև արտասահմանյան երկրների պատմության, մշակույթի վերաբերյալ: Դաստիարակի խնդիրն է՝ ընթերցանությունը դարձնել գրավիչ, հետաքրքիր, որպեսզի այն հնարավորինս շատ երեխաներ լսեն և բավականություն ստանան:

Ստորև բերվում է օրվա ռեժիմի օրինակելի տարբերակ՝ հնգօրյա աշխատանքային կարգով, 9-10,5 ժամ տևողության համար: Առաջնորդվելով դրանով՝ **յուրաքանչյուր մանկապարտեզ պետք է կազմի իր պայմաններին և առանձնահատկություններին համապատասխան ռեժիմ**: Շուրջօրյա մանկապարտեզներում ռեժիմային պահերը կարելի է տեղաշարժել 20 րոպեից մինչև 30 րոպե՝ նկատի ունենալով, որ երեխաները ժամանակ չեն կորցնում մանկապարտեզ գալու ճանապարհին:

2-3 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԽՄԲԻ ՕՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՌԵԺԻՄԻ ՏԱՐԲԵՐԱԿ
(9-10,5 ժամյա՝ հնգօրյա աշխատանքային ռեժիմով)

	Կանոնակարգային պահեր	Ժամերը տարվա ցուրտ եղանակին	Ժամերը տարվա տաք եղանակին
	Երեխաների ընդունելություն, խաղեր, ինքնուրույն գործունեություն, առավոտյան մարմնամարզություն	8^{30}-9^{30}	$8.^{30}$-$9.^{30}$
	Նախաճաշի նախապատրաստում, նախաճաշ	9^{30}-10^{00}	$9.^{30}$-$10.^{00}$
	Ինքնուրույն գործունեություն, պարապմունքի նախապատրաստում	10^{00}-10^{30}	$10.^{00}$-$10.^{30}$
	Պարապմունքներ ենթախմբերով. Պարապմունք առաջին Պարապմունք երկրորդ	 10^{30}-10^{45} 10^{45}-11^{00} 11^{00}-11^{15} 11^{25}-11^{40}	 10^{30}-10^{45} 10^{45}-11^{00}
	Խաղեր, զբոսանքի նախապատրաստում, զբոսանք (Խաղեր, դիտումներ, աշխատանք, ինքնուրույն գործունեություն)	11^{40}-12^{00}	11^{00}-11^{55}
	Վերադարձ զբոսանքից, ինքնուրույն գործունեություն)	12^{00}-12^{10}	11^{55}-12^{10}
	Ճաշի նախապատրաստում, ճաշ	12^{10}-12^{30}	12^{10}-12^{30}
	Ցերեկային քնի նախապատրաստում, քուն	12^{30}-14^{30}	12^{30}-$14.^{30}$
	Աստիճանական արթնացում, ինքնուրույն գործունեություն	14^{30}-15^{00}	14^{30}-15^{00}
	Հետճաշիկի նախապատրաստում, հետճաշիկ, խաղեր	15^{00}-15^{30}	15^{00}-15^{30}
	Խաղեր,ինքնուրույն գործունեություն	15^{30}-16^{30}	15^{30}-16^{30}
	Զբոսանքի նախապատրաստում, զբոսանք, տուն ճանապարհել	16^{30}-17^{30}	16^{30}-17^{30}

- Շարունակել երեխաների առողջության պահպանումն ու ամրապնդումը: Դաստիարակել ինքնասպասարկման և կուլտուր-հիգիենիկ ունակություններ:
- Զարգացնել հիմնական շարժումները, կանխել հոգնածությունը:
- Դիտողական-գործուն մտածողության հետ մեկտեղ ձևավորել դիտողական-պատկերավոր մտածողություն: Զարգացնել երեխաների ընկալումը, ուշադրությունը, հիշողությունը:
- Ընդլայնել շրջակա միջավայրում կողմնորոշվելու փորձը, հարստացնել նրանց զգայական տարաբնույթ տպավորությունները:
- Ձևավորել պատկերացումներ՝ շրջակա միջավայրի առարկաների, դրանց պարզագույն կապերի վերաբերյալ:
- Արթնացնել հետաքրքրասիրություն բնության երևույթների հանդեպ, հոգատար վերաբերմունք բույսերի նկատմամբ:
- Շարունակել զարգացնել երեխաների խոսքը. ընդլայնել նրանց բառապաշարը, կատարելագործել խոսքի քերականական կառուցվածքը:
- Սովորեցնել հասկանալ մեծերի խոսքը՝ առանց դիտողական ուղեկցության. հասնել այն վիճակին, որ տարեվերջին կյանքի երրորդ տարին թևակոխած երեխայի խոսքը դառնա միմյանց հետ շփվելու լիարժեք միջոց:
- Նպատակաուղղված ձևով հարստացնել երեխաների բառապաշարը:
- Ձևավորել նկարներում արտացոլված առարկաները, երևույթները անվանելու կարողություններ:
- Սովորեցնել բառերով արտահայտել սեփական և ուրիշների գործողությունները:
- Վարժեցնել տարածական հարաբերություններն արտահայտող կապերի ճիշտ օգտագործմանը:
- Երեխաների մեջ ձևավորել նախադրյալներ՝ սյուժետադերային խաղերի կազմակերպման և իրականացման ուղղությամբ:
- Ձևավորել սկզբնական, տարրական պատկերացումներ առարկաների որակական և քանակական տարբերությունների մասին,
- Սովորեցնել հավաքել միատեսակ առարկաներ ըստ անվանումների, ընտրել խաղալիքներ տարբեր գույների, ձևի, մեծության:
- Զարգացնել երեխաների՝ հասակակիցների հետ կողք կողքի, միասին խաղալու կարողությունները:
- Արթնացնել հետաքրքրություն մեծերի աշխատանքի նկատմամբ:
- Ձևավորել հասակակիցների միջավայրում կիրթ վարվելաձևի փորձի և սյուժետադերային խաղերի նախադրյալներ:

- Զարգացնել երեխաների գեղագիտական ընկալումները, մշակել երաժշտության, երգի, կերպարվեստային ստեղծագործությունների հանդեպ զգայական արձագանք դրսևորելու կարողություն,
- Նպատակաուղղված ձևով հարստացնել երեխաների բառապաշարը, հետևել բառի ճիշտ փոփոխությանը՝ ըստ հոլովի, թվի, ժամանակի,
- Վարժեցնել երեխաներին ճիշտ արտաբերել ձայնավորներն ու բաղաձայնները:

ԿՐՏՍԵՐ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ՇԱԲԱԹԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՑԱՆԿ

/հնգօրյա աշխատանքային շաբաթի դեպքում/

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Ծանոթացում շրջակա աշխարհին (միջավայրին) և հասարակական կյանքի երևույթներին. Առարկայական միջավայր, հասարակական կյանքի երևույթներ, բնության երևույթներ, էկոլոգիական դաստիարակություն	1 /հերթագայմամբ/
Խոսքի զարգացում, գեղարվեստական գրականություն	2 /հերթագայմամբ/
Նկարչություն	1
Ծեփ	0,5
Կառուցողական նյութերով աշխատանք	0,5
Ֆիզկուլտուրա	2
Երաժշտություն	2
Դաստիարակի հայեցողությամբ	1
Շաբաթական ընդամենը	10

Պարապմունքներն անցկացվում են սեպտեմբերից մինչև հունիսի 1-ը՝ մինչև 15 րոպե տևողությամբ: Սեպտեմբերի առաջին երկու շաբաթը հարմարման փուլ է, ուստի հատուկ պարապմունքներ չեն անցկացվում: Պարապմունքների միջև ընկած ժամանակահատվածը նախատեսված է մինչև 10 րոպե: Ծեփի և կառուցողական աշխատանքների պարապմունքներն ամսվա ընթացքում անցկացվում են երկու անգամ՝ հերթագայմամբ:

ԿՐՏՍԵՐ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

/հնգօրյա աշխատանքային շաբաթի դեպքում/

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՔԱՆԱԿԸ
Ծանոթացում շրջակա աշխարհին(միջավայրին) և հասարակական կյանքի երևույթներին. Առարկայական միջավայր, հասարակական կյանքի երևույթներ, բնության երևույթներ, էկոլոգիական դաստիարակություն	36 /հերթագայմամբ/ Այդ թվում՝ 18-ը Ծանոթացում շրջակա միջավայրին և հասարակական կյանքի երևույթներին 18-ը Ծանոթացում բնությանը, էկոլոգիական դաստիարակություն
Խոսքի զարգացում, գեղարվեստական գրականություն	72 /հերթագայմամբ/
Նկարչություն	36
Ծեփ	18
Կառուցողական նյութերով աշխատանք	18
Ֆիզկուլտուրա	72
Երաժշտություն	72
Դաստիարակի հայեցողությամբ	36

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ

Կրթական գործընթացների պայմանականորեն դասակարգում.

- Կրթական գործընթացներ, որոնք իրականացվում են մանկական տարաբնույթ գործունեության ժամանակ /խաղային, հաղորդակցական, աշխատանքային, ճանաչողական, հետազոտական, արդյունքային, երաժշտական, գեղարվեստական, ընթերցանություն/,
- Ռեժիմային պահերին իրականացվող գործընթացներ,
- Երեխաների ինքնուրույն գործունեություն:

Կրտսեր նախադպրոցական տարիքի երեխաների հետ տարվող աշխատանքներում կիրառվում են կրթական գործունեության առավելապես խաղային-սյուժետային և ինտեգրված ձևեր: Ուսուցումն իրականացվում է միջնորդավորված, երեխաների գործունեության համար ներգրավիչ պայմաններում:

Շաբաթական պարապմունքների տեղաբաշխման օրինակելի ցանկով նախատեսված պարապմունքը, դաստիարակի հայեցողությամբ, նպատակահարմար է տրամադրել խոսքի զարգացումից դիդակտիկ խաղին: Այստեղ նկատառվում է խաղի առաջատար տեղը՝ այս տարիքի երեխայի զարգացման փուլում:

Կրթադաստիարակչական գործընթացում գերակա խնդիր է դաստիարակչական, ուսուցանող, զարգացնող խնդիրների միասնականության ապահովումը:

Կազմակերպված կրթական գործունեություն

• Դիդակտիկ խաղեր, խաղեր՝ շարժումների տարրերով, սյուժետադերային խաղեր, շարժախաղեր, երաժշտական, թատերականացված խաղեր, խաղ-բեմականացումներ, խաղեր զբոսանքի ժամանակ, նմանողական բնույթի շարժախաղեր

• Մուլտֆիլմերի, տեսաֆիլմերի, հեռուստահաղորդումների դիտում և քննարկում:

• Տարբեր ժանրերի ստեղծագործությունների ընթերցանություն, մանկական ճանաչողական, պատկերազարդ գեղարվեստական գրքերի, հանրագիտարանների դիտում:

• Մանկավարժական, բարոյահոգեբանական իրավիճակների ընտրություն, զրույցներ սոցիալական, բարոյական թեմատիկ բովանդակությամբ, հետաքրքիր փաստերի և իրադարձությունների վերաբերյալ իրավիճակային զրույցներ:

• Մեծերի աշխատանքների, բնության, սեզոնային փոփոխությունների դիտումներ:

• Թեմատիկ ցուցահանդեսներ /տարվա եղանակներ/, մանկական ստեղծագործությունների, բնության անկյունների ցուցահանդեսներ:

• Հանելուկներ, վիկտորինաներ, հեքիաթների հատվածների բեմականացում, ոտանավորներ:

• Արդյունավետ գործունեություն. նկարչություն, ծեփ, գեղարվեստական աշխատանք՝ մտահղացմամբ, ծանոթ հեքիաթների, ոտանավորների, երաժշտության ներքո ընթերցված ստեղծագործության թեմաներով:

• Ունկնդրված երաժշտական ստեղծագործությունների թեմաներով:

• Երգեցողություն, համատեղ երգեցողություն, ձայնային ապարատի զարգացման վարժություններ, երգերի բեմականացում, վոկալ կարողությունների զարգացում, զրույցներ՝ երգերի բովանդակության շուրջ:

• Պարեր, պարային ռիթմիկ վարժությունների, շարժումների ցուցադրում:

• ֆիզկուլտուրայի պարապմունքներ, համալիր պարապմունքներ (խոսքի զարգացման, մաթեմատիկայի, ֆիզիկական վարժությունների տարրերով) դիտարկման և գնահատման, ախտորոշիչ, ուսոմնական-վարժեցնող բնույթի, ֆիզկուլտ-դադարներ, ազգային ժողովրդական խաղեր և վարժություններ:

• Խմբային, միջխմբային, ներմանկապարտեզային տարաբնույթ միջոցառումներ:

• Ժամանցներ, սպորտային տոներ, տոներ, ստուգատես-մրցույթներ, էքսկուրսիաներ, թատերականացված ներկայացումներ:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Շարունակել ամրապնդել երեխաների առողջությունը:

Ուսուցման ընթացքում զարգացնել շարժողական գործունեության տարաբնույթ ձևեր:

Կանխել երեխաների հոգնածությունը:

Ձևավորել կուլտուր-հիգիենիկ և ինքնասպասարկման ունակություններ:

Այն խմբերում, որտեղ շատ են (2-ից 2տարեկան 6 ամսական) երեխաները, անհրաժեշտ է աշխատանքը պլանավորել հեշտացված ծրագրով:

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ-ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Տարվա ընթացքում բժշկական անձնակազմի ղեկավարությամբ, հաշվի առնելով երեխաների առողջությունը և տեղական պայմանները, հարկավոր է իրականացնել համալիր կոփիչ միջոցառումներ՝ բնական գործոնների՝ օդի, արևի, ջրի օգտագործմամբ:

Սովորեցնել երեխաներին տարածքում գտնվել թեթևացված հագուստով: Ապահովել, օրվա ռեժիմին համապատասխան, երեխաների բացօթյա գործունեության տևողությունը:

Երեխաների մեջ արթնացնել հետաքրքրասիրություն և ցանկություն՝ մասնակցելու բացօթյա շարժախաղերին և ֆիզիկական վարժություններին:

Կոփիչ միջոցառումների ժամանակ դրսևորել տարբերակված մոտեցում՝ երեխաների առողջական վիճակի հաշվառմամբ:

ԿՈՒԼՏՈՒՐ - ՀԻԳԻԵՆԻԿ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Շարունակել երեխաներին սովորեցնել՝ սկզբում մեծի հսկողությամբ, այնուհետև ինքնուրույն, ուտելուց առաջ լվանալ ձեռքերը, դեմքը և ձեռքերը սրբել անհատական սրբիչով:

Սովորեցնել մեծի օգնությամբ կարգի բերել իրեն. ձևավորել անհատական հիգիենիկ առարկաներից օգտվելու կարողություններ (թաշկինակ, անձեռոցիկ, սրբիչ, սանր, պետքանոթ):

Սովորեցնել ուտելու ժամանակ գդալը բռնել ճիշտ և կոկիկ:

Երեխաներին ուսուցանել հանվելու և հագնվելու հաջորդականությունը. սովորեցնել ճիշտ հագնվել և հանել հագուստը (անհրաժեշտության դեպքում այդ գործողությունները կատարել մեծի օգնությամբ), կոշիկը (կոճկել առջևի կոճակները,

ճարմանդները) որոշակի հաջորդական կարգով կոկիկ դասավորել հանած հագուստը:

Ծրագրային բովանդակությունը

Նախադպրոցական հաստատություններում երեխաների ֆիզիկական դաստիարակությունը նպատակաուղղված է նրանց առողջության պահպանմանը և ամրապնդմանը, ճիշտ կեցվածքի, մարմնի համաչափ կառուցվածքի, շարժողական կարողությունների ու հմտությունների ձևավորմանը:

Նախադպրոցական տարիքում ֆիզիկական դաստիարակության միջոցով բարձրանում է երեխաների շարժողական ակտիվությունը, որը նպաստում է ոչ միայն նրանց օրգանիզմի օրգան-համակարգերի գործունեության բարելավմանը, այլև՝ առողջության ամրապնդմանը և ֆիզիկական զարգացմանը:

Կրտսեր (փոքրերի) առաջին խմբի ֆիզիկական դաստիարակության ծրագրում տրված են ֆիզիկական հիմնական շարժումների, շարժախաղերի, մարմնամարզական, պարային վարժությունների, մարմնի ճիշտ կեցվածքի ձևավորման, հարթաթաթության կանխման, շնչառությունը կարգավորող վարժություններ, որոնք պետք է իրականացվեն ամբողջ տարվա ընթացքում:

Ծրագրում երեխաների շարժողական ունակությունների ու հմտությունների զարգացման համար վարժություններ ընտրվել են՝ հաշվի առնելով նրանց տարիքային և անհատական հնարավորությունները:

Ծրագրի համաձայն, շաբաթը երկու անգամ, անցկացվում են ֆիզկուլտուրայի պարապմունքներ: Բացի այդ, օրվա ընթացքում դաստիարակը կազմակերպում է զանազան խաղեր, ֆիզիկական վարժությունների տարբեր ձևեր, նմանողական շարժումներ, պարային շարժումների տարրեր և այլն, որոնց միջոցով ամրապնդվում է երեխաների առողջությունը, զարգանում են շարժողական հմտությունները:

Տարվա ընթացքում մանկապարտեզի բժշկական անձնակազմի ղեկավարությամբ անցկացվում են նաև կոփման միջոցառումներ /արարողակարգեր/, բնության, բնական գործոնների /օդ, արև, ջուր/ միջոցով: Այստեղ անհրաժեշտ է կիրառել անհատական մոտեցում՝ հաշվի առնելով երեխաների առողջական վիճակը և տեղի պայմանները:

Ֆիզիկական դաստիարակության աշխատանքները իրականացնելիս կարևոր է նաև մեկուսացված երեխաներին ներգրավել խաղերի և վարժությունների կատարման մեջ:

Օրվա ռեժիմի համաձայն՝ պետք է ապահովել երեխաների մաքուր օդում լինելու տևողությունը: Նրանց պետք է սովորեցնել շենքային պայմաններում լինել թեթևացած հագուստով:

Այս տարիքում անհրաժեշտ է նաև ձևավորել նրանց ինքնասպասարկման և կուլտուր-հիգիենիկ ունակությունները: Երեխաներին սովորեցնել՝ մեծահասակների հսկողությամբ, ապա նաև ինքնուրույն լվանալ ձեռքերը՝ ուտելուց առաջ և կեղտոտվելիս, անձնական սրբիչով մաքրել դեմքը և ձեռքերը:

Ձևավորել անհատական պարագաներից /թաշկինակ, սրբիչ, անձեռոցիկ, սանր/ օգտվելու հմտություններ, ուտելու ժամանակ ճիշտ բռնել գդալը:

Սովորեցնել մեծերի օգնությամբ հանվել և հագնել հագուստը և կոշիկները:

Շարժողական ռեժիմում մեծ տեղ է հատկացվում երեխաների ինքնուրույն շարժողական գործունեությանը, որտեղ երեխան ստանում է ազատ ընտրության հնարավորություն՝ զբաղվելու գործունեության տարբեր ձևերով: Այստեղ երեխան ձեռք է բերում ինքնահաստատման, ինքնաճանաչման հնարավորություն:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

Այս փուլում շարունակվում է փոքրերի առաջին խմբում ընդգրկված երեխաների օրգանիզմի աճն ու զարգացումը, կատարվում են կառուցվածքային փոփոխություններ:

Երեխայի այս տարիքը զարգացման կարևոր շրջան է. նրանք կարողանում են ինքնուրույն նստած դիրքից կանգնել, քայլել, քայլել ուղիղ, սողանցել, մագլցել, նետել առարկաներ և այլն:

Նրանց բնորոշ է ակտիվ, տարբերակված շարժումների կատարումը՝ առանց օգնության բարձրանալ և իջնել աստիճաններով, տեղաշարժման ժամանակ դրսևորել կոորդինացիա և այլն:

Սակայն այս տարիքի երեխան դեռևս չի կարող ինքնուրույն կարգավորել շարժման տատանումները, արագությունը, ուժը: Ֆիզիկական դաստիարակության աշխատանքներ կազմակերպելիս հարկավոր է պետք է հաշվի առնել այդ հանգամանքը և օգտագործել շարժողական գործունեության տարբեր ձևեր:

Այս տարիքում ֆիզիկական դաստիարակության հիմնական խնդիր է դառնում նպաստել երեխաների ճիշտ կեցվածք պահպանելու, քայլելու, ցատկելու, մագլցելու, տարածության մեջ տեղաշարժվելու ունակությունների ձևավորմանը, ձեռքերի և ոտքերի /ներբանի/ ամրապնդմանը:

Այստեղ կարևոր է նաև երեխային մղել ակտիվ, ինքնուրույն գործողությունների, աստիճանաբար վերացնել զգայական անկայուն դրսևորումներն ու վախի զգացումը:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՏԱՐԻՔ	ՍԵՌ	ՄԱՐՄՆԻ ՀԱՍԱԿԸ /սմ/	ՄԱՐՄՆԻ ՔԱՇԸ /կգ/	ԿՐԾՔԱՎԱՆԴԱԿԻ ՇՐՋԱԳԻԾԸ /սմ/
2 տարեկան	Տղաներ	85 – 95	12,5 – 13,7	48,9 – 53,4
	Աղջիկներ	82 – 90	11,7 – 14,1	47,6 – 52,5
3 տարեկան	Տղաներ	92 – 99	13,7 – 16,1	50,3 – 54,7
	Աղջիկներ	91 – 99	13,1 – 16,7	49,8 – 53,9

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կրտսեր առաջին խմբի ֆիզիկական դաստիարակության խնդիրներն են՝

- Նպաստել երեխաների առողջության պահպանմանը և ամրապնդմանը, հոգեֆիզիկական զարգացմանը, օրգանիզմի կոփմանը:
- Խթանել երեխաների շարժողական ակտիվությունը:
- Ձևավորել մարմնի կայուն դիրքը և ճիշտ կեցվածքը պահպանելու հմտություն:
- Նպաստել զգայական-շարժողական և մանր շարժողական կոորդինացիայի զարգացմանը:
- Նպաստել կենսականորեն անհրաժեշտ հիմնական շարժումների /քայլք, վազք, ցատկեր և այլն/ զարգացմանը:
- Սովորեցնել քայլել և վազել միմյանց չհրելով, ձեռքերի, ոտքերի համաձայնեցված ու ազատ շարժումներով:
- Սովորեցնել շարժվել խմբով, շարժման ժամանակ պահպանել որոշակի ուղղություն, ազդանշանով փոխել շարժման ուղղությունը և քայլքի բնույթը:
- Դաստիարակել ինքնուրույն գործելու, գործողություն կատարելու, տարածության մեջ կողմնորոշվելու հմտություններ:
- Սովորեցնել սողալ, մագլցել, սողանցել ձգված պարանի տակով:
- Սովորեցնել՝ երկու ոտքով ցատկել տեղում և, առաջ շարժվելով տեղից, հեռացատկել, երկու ոտքով հրվել:
- Սովորեցնել գնդակը գլորել, նետել, բռնել, տեղափոխել, վարել:
- Զարգացնել մատների մկանները:
- Խթանել շարժախաղեր խաղալու ցանկությունը, սեփական շարժումները համաձայնեցնել մյուս երեխաների շարժումներին:
- Երեխաների մեջ առաջացնել ձգտում և դրական վերաբերմունք ֆիզկուլտուրայի պարապմունքների նկատմամբ:

Ֆիզիկական դաստիարակության այս խնդիրներն իրականացվում են ֆիզկուլտուրայի պարապմունքների, ամենօրյա ֆիզկուլտ-առողջարարական միջոցառումների, տարբեր ֆիզիկական վարժությունների և խաղերի կազմակերպման միջոցով:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ

Աշխատանքի ձևերը	Կազմակերպման առանձնահատկությունները
1. Ուսուցում պարապմունքների միջոցով՝ Ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներ	Շաբաթական 2 պարապմունք՝ մինչև 15 րոպե տևողությամբ
2. Ֆիզկուլտ-առողջարարական աշխատանք-ներ օրվա ընթացքում - Առավոտյան մարմնամարզություն. - շարժախաղեր և ֆիզիկական վարժություններ - զբոսանքներ	 Ամեն օր, 4-5 րոպե տևողությամբ 10-15 րոպե
3. Երեխաների ինքնուրույն շարժողական գոր-ծունեություն	Ամեն օր. բնույթը և տևողությունը պայմանա-վորված են երեխաների անհատական հնարա-վորություններով և նրանց պահանջներով: Այն անցկացվում է դաստիարակի հսկողությամբ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քայլք. քայլել դաստիարակի հետևից՝ հանձնարարված ուղղությամբ:

Քայլել ուղիղ՝ խմբով, շարքով, ձեռք-ձեռքի բռնած, խմբով քայլքից անցնել շարքով քայլքին:

Քայլել զույգերով, քայլել ոտնաթաթերի վրա, ծնկները վեր բարձրացնելով, ազդանշանով կանգ առնելով:

Քայլել շրջանով, քայլել՝ փոխելով ուղղությունը, տեմպը:

Քայլել շրջանցելով առարկաները:

Քայլել 20 սմ լայնությամբ, 2-3 մետր երկարությամբ ուղիով:

Քայլքից անցնել վազքի և հակառակը:

Մտնել 10-15 սմ բարձրության արկղի մեջ և դուրս գալ այնտեղից:

Վազք. վազել դաստիարակի հետևից՝ տարբեր ուղղություններով, առանց միմյանց հրելու:

Վազել ուղիղ՝ խմբով, շրջանով, շարքով, խմբով վազքից անցնել շարքով վազ-քին:

Վազել զույգերով՝ ձեռք-ձեռքի բռնած, արագացնելով և դանդաղեցնելով:

Վազել երկու գծերի (25-30 սմ.) միջով՝առանց գծերը տրորելու:

Վազել դանդաղ տեմպով՝ 30-40 վրկ:

Վազել արագ՝ 10 մետր:

Ցատկեր. ցատկել ամբողջ ներբանի վրա՝ բարձրանալով ոտնաթաթերին:

Ցատկել զույգ ոտքով, տեղում, առաջ շարժվելով, պտտվելով իր շուրջը:

Ցատկել գծերի, հատակին դրված պարանի, երկու զուգահեռ գծերի (10-30սմ. հեռավորության) վրայով:

Ցատկել փոփոխելով ոտքերի դրությունը:

Տեղից հեռացատել՝ զույգ ոտքով հրվելով:

Ցատկել 10 սմ. բարձրության առարկաների վրայով:

Նետումներ. գնդակը՝ երկու կամ մեկ ձեռքով, գլորել դաստիարակին, միմյանց:

Գնդակը գլորել որևէ առարկայի տակով:

Գնդակը գլորել միմյանց՝ կանգնած և նստած դիրքով 50 – 100 սմ հեռավորությունից:

Գնդակը նետել առաջ՝ երկու ձեռքով, ներքևից, կրծքի բարձրությունից:

Գնդակը նետել միմյանց և բռնել:

Գնդակ նետել պարանի վրայով՝ 1- 1,5 մետր հեռավորությունից:

Գնդակը նետել նպատակակետին 1մ. հեռավորությունից՝ երկու ձեռքով, մեկ ձեռքով:

Գնդակը կամ ավազե պարկը ուղիղ նետել դեպե հեռուն / հեռավորությունը՝ 2,5-3 մետր/:

Հավասարակշռության վարժություններ

Քայլել առարկաների /դրոշակ, գուրզ/ միջով:

Քայլել հատակին դրված տախտակի /20սմ լայնությամբ, 2 մետր երկարությամբ/ վրայով:

Քայլել հատակին դրված պարանի վրայով:

Քայլել շրջանից-շրջան, օղակից-օղակ:

Քայլանցել 10-15սմ բարձրությամբ արգելքի / մարզանստարան, տախտակ/ վրայով:

Բարձրանալ 15-20սմ բարձրությամբ տեղադրված մարզանստարանի վրա, կանգնել և իջնել:

Քայլել մեկ ծայրը հատակից 10-20 սմ բարձրության վրա դրված թեք տախտակի վրայով՝ վեր և վար:

Բարձրանալ ոտնաթաթերին և իջնել:

Դանդաղ տեմպով պտտվել իր շուրջը /ձեռքերով բռնած որևէ առարկա/:

Սողանցում և մագլցում. սողանցում չորեքթաթ, ուղիղ՝ 3-4 մետր:

Սողանցում չորեքթաթ հատակին դրված հարթ տախտակի վրայով:

Սողանցում մի ծայրը 20-30սմ բարձրության վրա դրված մարմնամարզական նստարանի վրայով:

Սողանցում 30 - 40 սմ բարձրության արգելքի տակով:

Մագլցելով անցնել գետնին դրված գերանի / 20սմ բարձրության/ վրայով:

Մագլցել մարզասանդուղքով վեր և վար՝ երեխային հարմար եղանակով /1-1,5 մետր/:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլխի շարժումներ. գլուխը բարձրացնել և իջեցնել, թեքել աջ և ձախ:

Ձեռքերի և ուսագոտու ամրապնդման վարժություններ. ձեռքերը բարձրացնել առաջ, վեր, կողմեր և իջեցնել, ծալել ու տարածել:

Ձեռքերը կողմերից բարձրացնել, գրկել ուսերը կամ խաչաձևել կրծքի առջև ու տարածել կողմերը, տանել մեջքի հետևը:

Ձեռքերը բարձրացնել, ծափ տալ առջևում, գլխավերևում և իջեցնել:

Ձեռքերի մատները փակել /սեղմել/ և բացել:

Ձեռքերը առաջ տանելիս արտասանել «առաջ», հետ տանելիս՝«հետ»:

Ձեռքերը թափահարել առաջ և հետ, գլխավերևում և առջևում:

Ձեռքերը տանել կողմ, իջեցնել՝ հարվածելով ազդրերին:

Ձեռքերը բռունցք արած կատարել անիվի շարժման նման շարժումներ /գնացք/, արտասանելով ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ հնչյունը:

Ոտքերի վարժություններ. բռնել աթոռակի հենակից կքանստել և ուղղվել:

Ծնկային հոդում ծալված ոտքը բարձրացնել վեր և իջեցնել՝ մեկ ոտքի վրա կանգնած դիրքով:

Իրանի վարժություններ. իրանը թեքել աջ և ձախ՝ ձեռքերը ազատ թափահարելով:

Թեքվել աջ կամ ձախ՝ առարկան / դրոշակ, թաշկինակ/ փոխանցել կողքի կանգնածին կամ նստածին:

Թեքվել առաջ, ձգտելով ձեռքերը հասցնել ոտնաթաթերին և ուղղվել:

Թեքվել առաջ, ձեռքերով հարվածել ոտքերին և ուղղվել:

Մեջքին պառկած դրությունից միաժամանակ շարժել ձեռքերն ու ոտքերը:

Վարժությունները կատարել նաև առարկաներով /դրոշակով, գնդակ, չխկչխկան/:

ՇԱՐՈՒՄ ԵՎ ՇԱՐԱՓՈԽՈՒՄ

Դաստիարակի օգնությամբ շարվել խմբով, միաշարք, ձեռք-ձեռքի բռնած, կազմել զույգեր:

Շարափոխվել միաշարքից զույգերի, շրջանի:

Շարքում խտանալ և բացվել սովորական քայլով:

ՊԱՐԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երաժշտության ուղեկցությամբ քայլել տեղում, առաջ, կողմ:

Քայլել միմյանց ձեռքերից բռնած:

Կատարել ռիթմիկ ծափեր:

Կատարել կից քայլեր՝ առաջ և կողմ,

Դոփել մեկ աջ, մեկ ձախ ոտքով:

Դանդաղ պտտվել տեղում՝ միաժամանակ կատարելով դաստակների պտույտներ:

ՇԱՐԺԱԽԱՂԵՐ

Խաղեր և խաղային վարժություններ

Խաղեր քայլքով և վազքով՝

«Արահետով», «Հասե՛ք ինձ», «Տիկնիկներին հյուր գնանք», «Բեր խաղալիքը», «Ճնճղուկներն ու ավտոմեքենան», «Թռչունները թռչում են», «Անցնել փայտիկի վրայով»:

Խաղեր ցատկերով՝

«Իմ ուրախ հնչուն գնդակ», «Փուչիկ», «Ո՞վ ավելի կամաց», «Գտի՛ր դրոշակը», «Փոքրիկ նապաստակը», «Թռչունները թռչում են»:

Խաղեր սողանցումով՝

«Սողալ մինչև առարկան», «Եղի՛ր զգույշ», «Դարպասիկներ», «Գիծը չտրորել»:

Խաղեր՝ գնդակը նետելով և բռնելով՝

«Գնդակը շրջանում», «Բռնիր գնդակը», «Գցի՛ր դարպասի մեջ», «Ճիշտ նշան բռնիր»:

Խաղեր տարածության մեջ կողմնորոշումով՝

«Որտե՞ղ է հնչում զանգը», «Դրոշակը»:

Տարեվերջին երեխան պետք է կարողանա՝

- շարվել միաշարք, կազմել շրջան / դաստիարակի օգնությամբ/,
- քայլել միմյանց ձեռքից բռնած,
- քայլել և վազել սահմանված ուղղությամբ, ինքնուրույն կամ դաստիարակի օգնությամբ,
- դանդաղ վազել 30 վրկ,
- ցատկել զույգ ոտքով տեղում և առաջ շարժվելով,
- հեռացատկել տեղից՝ զույգ ոտքի հրումով,
- ցատկել 5-10սմ բարձրության առարկաների վրայով,
- գնդակը գլորել միմյանց երկու ձեռքով, նետել առաջ,
- առարկաները /գնդակ, ավազե պարկ, կոն և այլն/ նետել հորիզոնական նպատակակետին 1մ. հեռավորությունից,
- սողանցել 3-4մ,
- մագլցել մարզասանդուղքով վեր և վար,
- երաժշտության նվագակցությամբ քայլել տեղում, առաջ, կողմ, կատարել ռիթմիկ ծափեր, դոփել աջ և ձախ ոտքով, պտտվել տեղում՝ դաստակների պտույտներով:
- մասնակցել շարժախաղերին:

ՀԱՎԵԼՎԱԾ N1

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կրտսեր առաջին խմբի ֆիզիկական դաստիարակությունն իրականացվում է հետևյալ ձևերով՝

- ֆիզկուլտուրային պարապմունքներ,
- ֆիզկուլտ- առաղջարարական միջոցառումներ օրվա ընթացքում,
- երեխաների ազատ, ինքնուրույն շարժողական գործողություն:

Ֆիզկուլտուրայի պարապմունքների ընթացքում կատարվում են ծրագրով տրված ֆիզիկական հիմնական շարժումները /քայլք, վազք, ցատկեր և այլն/, պարային վարժությունները, շարժախաղերը:

Ֆիզկուլտուրայի պարապմունքներն անցկացվում են շաբաթական 2 անգամ՝ 10 – 15 րոպե տևողությամբ:

Պարապմունքների ընթացքում երեխաները տիրապետում են իրենց ծանոթ շարժումներին, սովորում են նոր շարժումներ, խաղեր և այլն:

Ֆիզկուլտուրայի պարապմունքների միջոցով բարձրանում է երեխաների շարժողական ակտիվությունը: Այն նպաստում է ոչ միայն նրանց օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների բարձրացմանը, այլև առողջության ամրապնդմանը և ֆիզիկական զարգացմանը:

Պարապմունքները պետք է անցկացնել տարվա տաք եղանակին՝ բացօթյա, իսկ ձմռանը՝ օդափոխված մարզադահլիճներում:

Ֆիզկուլտուրայի պարապմունքների հիմնական խնդիրներն են՝

- նպաստել երեխայի ճիշտ կեցվածքի ձևավորմանը,
- զարգացնել շարժողական ունակությունները, քայլքի, վազքի, ցատկերի, նետումների, սողանցման, մագլցման կարողությունները,
- սովորեցնել ընդհանուր զարգացնող, հավասարակշռության պահպանման, պարային վարժությունները, շարումները և շարժախաղերը,
- նպաստել երեխաների շարժողական ընդունակությունների /արագաշարժություն, ճկունություն, ճարպկություն, դիմացկունություն, ուժ, կոորդինացիա / մշակմանը:

Ֆիզկուլտուրայի պարապմունքներ կազմակերպելու համար անհրաժեշտ է պլանավորել ծրագրով նախատեսված ֆիզիկական վարժություններն ու խաղերը:

Յուրաքանչյուր Ֆիզկուլտուրայի պարապմունք ունի իր խնդիրները և դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցները:

Պարապմունքի սկզբում պետք է երեխաների տրամադրությունը բարձրացնել, հետաքրքրություն առաջացնել և ձևավորել ճիշտ կեցվածքը: Այդ նպատակով տրվում են տարբեր շարումներ, շարափոխումներ, քայլքի տարատեսակներ: Օրինակ՝ շարում խմբով, շարքով, զույգերով, շրջանով, շարափոխում՝ շարքից շրջանի, շարքից զույգերի, քայլք ոտնաթաթերի վրա, ծնկները վեր բարձրացնելով, քայլք տարբեր ուղղություններով և այլն: Այնուհետև պետք է կատարվեն ընդհանուր զարգացնող վարժություններ: Յուրաքանչյուր պարապմունքի ընթացքում տրվում են ընդհանուր զարգացնող 3-4 վարժություններ, որոնք կրկնվում են 4-5 անգամ:

Ընդհանուր զարգացնող վարժությունները կատարվում են առանց առարկաների և առարկաներով /գնդակ, դրոշակ, չխկչխկան/:

Վարժությունները պարտադիր պետք է ցուցադրել, հստակ բացատրել, նշել կատարման տեմպը: Վարժությունների կատարման ժամանակ անհրաժեշտ է հետևել, որ երեխաներն ընդունեն ճիշտ ելման դրություն, կատարեն ձեռքերի և ոտքերի հստակ շարժումներ՝ համաձայնեցմամբ:

Ընդհանուր զարգացնող վարժությունների կատարումից հետո ուսուցանվում են այն հիմնական շարժումները /քայլք, վազք, ցատկ, նետում, մագլցում/, հավասարակշռության պահպանման, պարային վարժությունները և շարժախաղերը, որոնք նախատեսված են ծրագրով և պլանավորված են դաստիարակի կողմից: Պարապմունքի վերջում հանձնարարվում են հանգիստ քայլք և շնչառությունը կարգավորող, հանգստացնող վարժություններ:

Նպատակահարմար է ֆիզկուլտուրայի պարապմունքները՝ հատկապես քայլքը, շարափոխումները, ընդհանուր զարգացնող և պարային վարժություններն անցկացնել երաժշտության նվագակցությամբ: դա կնպաստի ռիթմի զգացողությանը և կբարձրացնի հուզականությունը:

Պարապմունքների ընթացքում քայլքի, վազքի, նետումների, մագլցման, հավասարակշռության պահպանման, ընդհանուր զարգացմանը նպաստող վարժությունների կատարման ժամանակ պետք է ուշադրության կենտրոնում պահել երեխաների ճիշտ կեցվածքը և ձեռքերի ու ոտքերի համաձայնեցված շարժումները:

Ցատկերի ժամանակ պետք է հետևել, որ երեխաները ճիշտ կատարեն հրումը, իսկ վայրէջք կատարեն փափուկ, երկու ոտքի վրա ՝ ծնկները մի փոքր ծալելով:

Ֆիզկուլտուրայի պարապմունքների ժամանակ էական տեղ է տրվում շարժախաղերի անցկացմանը, որոնց ընթացքում երեխաները դրսևորում են բարձր ակտիվություն: Խաղերի ընթացքում երեխաները հմտանում են սովորած շարժաձևերում, մշակվում են նրանց շարժողական ունակությունները՝ ճարպկությունը, ճկունությունը, արագաշարժությունը, ուժը, դիմացկունությունը, կոորդինացիան և կողմնորոշումը տարածության մեջ: Շարժախաղերի կարևոր բաղադրիչներից է հուզականությունը: Դրա առկայության պայմաններում երեխաների շարժումներն առավել արդյունավետ և ներգործուն են դառնում: Դրանք նպաստում են նաև երե-

խայի համարձակության, ինքնուրույնության, սեփական ուժերի նկատմամբ վստահության դաստիարակմանը:

Դաստիարակը պետք է պարզ ու հակիրճ ձևով բացատրի կամ հիշեցնի խաղի կանոնները, այնուհետև հետևի, որ երեխաները պահպանեն խաղի կանոնները:

Շարժախաղերի անցկացման ժամանակ անհրաժեշտ է պահպանել անվտանգության կանոնները: Եթե պարապմունքն անցկացվում է մարզադահլիճում, ապա այն պետք է ազատել մարզագործիքներից, իսկ եթե անցկացվում է բացօթյա՝ ապա խաղահրապարակը պետք է լինի հարթ, մաքուր և նշագծված:

Պարապմունքների ընթացքում դաստիարակի կողմից տրվում են նաև հրահանգներ և ցուցումներ, որոնք կապված են հանձնարարված վարժությունների կատարման հետ: Հրահանգները և ցուցումները պետք է լինեն հասկանալի, հստակ և հակիրճ:

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ

Պարապմունքի նպատակը՝ սովորեցնել քայլել ուղիղ, սողանցել 3 մետր

Խնդիրները՝ ամրապնդել հավասարակշռությունը պահելու կարողությունը

Անհրաժեշտ պարագաներ՝ հարթ տախտակ՝ 2մ երկարությամբ, 20 սմ լայնությամբ

Անցկացման վայրը՝ մարզադահլիճ

Պարապմունքի ընթացքը

Ներգրավիչ մաս: Դաստիարակի օգնությամբ շարվել միաշարք: Քայլել շարքով դաստիարակի հետևից, քայլել ձեռք ձեռքի բռնած /զույգով/ երաժշտության նվագակցությամբ: Մեկ շարքից կազմել շրջան:

Հիմնական մաս: Կատարել ընդհանուր զարգացնող վարժություններ.

1-ին վարժություն. ձեռքերը տանել առաջ, թափահարել առջևում, կողմերում և իջեցնել: Կրկնել 3-4 անգամ:

2–րդ վարժություն. ձեռքերը բարձրացնել առաջ, վեր ձգվել «դառնալ հսկա» և իջեցնել: Կրկնել 3-4 անգամ:

3–րդ վարժություն. 1 հաշվին՝ թեքվել աջ, ասել «թիկ», 2-ին՝ ուղղվել, ասել «թակ», 3-4 հաշվին նույնը կատարել թեքվելով դեպի ձախ կողմը:

Կրկնել 3-4 անգամ:

4–րդ վարժություն. բարձրանալ ոտնաթաթերին և իջնել:

Կրկնել 3-4 անգամ:

Քայլել 20սմ լայնության և 2 մետր երկարության հարթ տախտակի վրայով:

Կրկնել 2 անգամ:

Սողանցել ուղիղ 3 մետր: Կրկնել 2 անգամ:

Շարժական խաղ՝ «Թռչունները թռչում են»:

Եզրափակիչ մաս. Շարում միաշարք, հանգիստ քայլք:

2. ԱՌԱՎՈՏՅԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Առավոտյան մարմնամարզությունն ունի առողջարարական և դաստիարակչական նշանակություն և համարվում է մանկապարտեզի օրվա ռեժիմի կարևոր միջոցառումներից մեկը:

Առավոտյան մարմնամարզությունը դրականորեն է ազդում երեխաների օրգանիզմի վրա. նպաստում է նյութափոխանակությանը, բարելավում սրտի և թոքերի գործունեությունը, կենտրոնական նյարդային համակարգի ֆունկցիոնալ վիճակը, բարձրացնում է տրամադրությունը, ակտիվացնում երեխաների ուշադրությունը:

Սիստեմատիկ և բացօթյա անցկացվող առավոտյան մարմնամարզությունը կոփում է երեխաների օրգանիզմը, բարձրացնում նրա դիմադրողականությունը, ինչպես նաև զարգացնում շարժողական ունակությունները:

Առավոտյան մարմնամարզության անցկացումը երաժշտություն նվագակցությամբ նպաստում է երեխաների երաժշտական լսողության, ռիթմի զգացողության զարգացմանը:

Առավոտյան մարմնամարզություն մանկապարտեզում անցկացվում է ամեն օր, առավոտյան՝ դաստիարակի կողմից նախապես կազմված պլանով: Այդ վարժությունները երեխաները յուրացնում են ֆիզկուլտուրայի պարապմունքների ընթացքում:

Առավոտյան մարմնամարզությունը հիմնականում անցկացվում է բացօթյա, իսկ տարվա ցուրտ եղանակներին՝ դալիհիճում կամ փակ տարածքներում:

Նախապես պետք է նախապատրաստել անցկացման վայրը (բակ, մարզադահլիճ, խմբասենյակ):

Եթե առավոտյան մարմնամարզությունն անցկացվում է բակում, ապա նախապես այն պետք է ջրել, մաքրել և կարգի բերել: Մարզադահլիճը նույնպես պետք է լինի մաքուր և օդափոխված: Իսկ եթե մանկապարտեզը չունի մարզադահլիճ, և մարմնամարզությունը պետք է անցկացվի խմբասենյակում, ապա այն պետք է օդափոխվի, իսկ սեղանները և աթոռները պետք է դասավորել սենյակի մի անկյունում, որպեսզի չխանգարեն երեխաների շարժումներին:

Երեխաները առավոտյան մարմնամարզություն պետք է կատարեն թեթև հագուստով, իսկ տաք եղանակներին մարզահագուստով, ինչը նպաստում է վարժությունները ազատ և լավ կատարելուն և օրգանիզմի կոփմանը:

Առավոտյան մարմնամարզության վարժությունների քանակը փոքրերի առաջին խմբերում 2-3 վարժություն է, որոնք կրկնվում են 4-5 անգամ՝ 4-5 բոպե տևողությամբ:

Առավոտյան մարմնամարզության ժամանակ երեխաները կանգնում եմ շրջանով, կամ շարքերով /միաշարք, երկշարք/:

Վարժությունների կատարման ժամանակ դաստիարակը պետք է կանգնի այնպիսի տեղում, որ բոլոր երեխաները լինեն իր տեսադաշտում:

Դաստիարակը սկզբում բացատրում, ցուցադրում է վարժությունը, հետո հրահանգում է և հետևում երեխաների կատարմանը:

Առավոտյան մարմնամարզության յուրաքանչյուր համալիր նախատեսվում է մեկ ամսվա համար, որից հետո այն պետք է փոփոխել:

Առավոտյան մարմնամարզության վարժությունները կարող են լինել նաև նմանակման /իմիտացիոն/ բնույթի: Այսպիսի վարժությունների ժամանակ երեխաներն իրենց շարժումները նմանեցնում են տարբեր կերպարների՝ կենդանիների, մեքենաների շարժումներին: Այսպես, յուրաքանչյուր վարժության համար կարելի է ընտրել կերպարներ /«թռչուն», «կատու», «գնացք», « ճոճանակ» և այլն/ և համապատասխան միջավայր:

Երեխաները հաճույքով են մտնում խաղի մեջ, երբ նրանց ասում ենք. «Այժմ դուք կլինեք նապաստակներ, իսկ ես մայր-նապաստակը: Մենք պետք է թաքնվենք թփերի տակ: Բոլորը կքանստում են, իսկ հետո կանգնում և նայում թփերի տակից»: Այսպես կարելի է ներկայացնել «զսպանակ» վարժության կատարման ընթացքը:

Փոքրերի առաջին խմբում առավոտյան մարմնամարզությունը կարելի է անցկացնել առանց առարկաների և առարկաներով /դրոշակ, գնդակ, չխչխկան/:

3. ԿՈՓՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Կոփման միջոցով բարձրանում է երեխայի օրգանիզմի դիմադրողականությունը, նա ունենում է լավ տրամադրություն, ախորժակ և հանգիստ քուն:

Կոփված երեխաները հազվադեպ են հիվանդանում, իսկ հիվանդանալիս թեթև են տանում հիվանդությունը և արագ կազդուրվում են:

Կոփման միջոցներն են բնության բնական գործոնները՝ **օդը, ջուրը և արևը:**

Օդային լոգանքները պետք է անցկացնել ամբողջ տարվա ընթացքում:

Կոփման միջոցներից են արևային արարողությունները (լոգանքների ընդունումը): Այդ արարողությունների օգտակարությունն ավելի բարձր է առավոտյան ժամը 9-11-ը ընկած ժամանակահատվածում:

Արևային արարողությունները պետք է սկսել 5-6 րոպեից է, ապա աստիճանաբար ավելացնել այդ ժամանակը՝ հասցնելով մինչև 10- 15 րոպեի:

Ջրային արարողությունները կոփման լավագույն միջոցներ են: Դրանից են՝

- ջրաշփումները,
- ջրցանումը, ջրշփումը,
- մինչև գոտկատեղը լվացվելը,
- լողը:

Ընդհանուր ջրցանումը կամ ցնցուղը և ջրցողումը պետք է կատարել 34 աստիճանի ջրով, ապա աստիճանաբար իջեցնել ջրի ջերմաստիճանը:

Նախապես պետք է կազմակերպել երեխաների ջրաշփում, ապա՝ ջրցանում, իսկ վերջում անցնել լողի:

Ջրային լոգանքները պետք է անցկացնել այն ժամանակ, երբ արտաքին միջավայրի ջերմաստիճանը 21 աստիճանից ցածր չէ:

4. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս տարիքային խմբի երեխաների ինքնուրույն շարժողական գործունեությունն իրականացվում է ամեն օր, դաստիարակի հսկողությամբ: Շարժողական գործունեության բնույթը և տևողությունը պայմանավորված են երեխաների անհատական առանձնահատկություններով և պահանջներով:

Ինքնուրույն շարժողական գործունեության ընթացքում երեխան կարող է ազատ ընտրություն կատարել՝ զբաղվելու գործունեության տարբեր ձևերով:

Այստեղ երեխան ձեռք է բերում նաև ինքնահաստատման, ինքնաճանաչման հնարավորություն:

ՄՏԱՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Երեխայի մտավոր զարգացման և դաստիարակության հիմքը զգայական դաստիարակությունն է և կողմնորոշումը շրջակա աշխարհում: Երեխան շրջապատող աշխարհը ճանաչում է զգայության և ընկալման միջոցով: Այդ մակարդակով էլ որոշվում է երեխայի ճանաչողական գործունեության հաջողությունը:

Մտավոր գործունեության բովանդակությունը ներառում է երեխայի մտածողության, իմացական կարողությունների ու հմտությունների, երևակայության, ընկալման, հիշողության, հետաքրքրասիրության և մտավոր ընդունակությունների զարգացումը:

Մտավոր դաստիարակության խնդիրներն իրականացվում են ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ զբոսանքների, դիդակտիկ խաղերի և պարապմունքների ընթացքում:

Ծրագրային թեմատիկայի հիմքում ընկած են Յ.Ա.Կոմենսկու հայտնի սկզբունքները՝

- երեխաների մեջ համակողմանի պատկերացումների և գիտելիքների ձևավորում այն ամենի մասին, ինչը շրջապատում է իրենց,
- գիտակցում, որ մարդը բնության մի մասնիկն է, և ենթարկվում է նրա օրենքներին,
- գիտելիքների դաստիարակչական արժեքի ապահովում:

«Երեխան և շրջակա աշխարհը» թեմատիկան բաշխվում է երեք հիմնական բաժինների՝ առարկայական միջավայր, հասարակական կյանքի երևույթներ և ծանոթացում բնությանը:

Կրտսեր առաջին խմբում կարևորվում են հետևյալ խնդիրները.

ԶԳԱՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Աշխատանք տանել զգայական դաստիարակության ուղղությամբ՝ գործունեության տարբեր ձևեր իրականացնելիս:
- Նպաստել երեխաների զգայությունների կիրառմանը /տեսողության, լսողության, համի, հոտառության/:
- Խրախուսել առարկաներն ինքնուրույն համեմատելու, խմբավորելու, դասակարգելու փորձերը:
- Սովորեցնել առանձնացնել առարկաներն ըստ հատկանիշների, խմբավորել դրանք ըստ 1-2 հատկանիշի՝ գույն-չափ:
- Ընդլայնել զգայական փորձը և կարողանալ դա արտահայտել խոսքում:

ԵՐԵԽԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

- Ծանոթացնել շրջապատող առարկաներին ու երևույթներին գործունեության տարբեր ձևերի իրականացման ժամանակ՝ խաղ, աշխատանք, ուսուցում:

Հետաքրքրություն առաջացնել շրջապատող իրականության նկատմամբ՝ մարդիկ, կենդանական աշխարհ, բնություն…:

- Ընդլայնել երեխաների մտահորիզոնը շրջապատի մասին, դրա համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ:

- Վարժեցնել երեխաներին՝ ճիշտ անվանել շրջապատի առարկաները, սովորեցնել դրանք օգտագործել ըստ իրենց նշանակության:

- Ծանոթացնել իրենց շրջապատող առարկաների առանձնահատկություններին և որակին, կարողանալ տարբերակել դրանք: Պատմել երեխաներին, թե ինչի՞ց է պատրաստված այդ առարկան:

- Սովորեցնել հասկանալ մի քանի երևույթների միջև առկա տարրական պատճառական կապերը /բաժակն ընկավ՝ կոտրվեց, լույսը վառվեց, մթնեց և այլն/:

- Ծանոթացնել անհրաժեշտ կենցաղային մի քանի առարկաների /սպասք, կահույք, հագուստ և այլն/:

- Պատմել երեխաներին շրջապատում տեղի ունեցող երևույթների մասին: Հետաքրքրություն առաջացնել նկարների, վերատպությունների, գրքերի և դրանց նկարազարդումների նկատմամբ:

- Ձևավորել պատկերացումներ հասարակական տրանսպորտի մասին՝ ավտոմեքենա, ավտոբուս, ինքնաթիռ, նավ, գնացք:

- Ձևավորել սեփական անձի սոցիալականացման ակզբնական պատկերացումներ՝ «Ես և մեծերը», «Ես՝ ընտանիքում», «Ես՝ մանկապարտեզում»» «Ես՝ փողոցում» և այլն:

- Նախնական պատկերացում ձևավորել շրջակա միջավայրի մասին, սովորեցնել ճիշտ կողմնորոշվել մոտակա տեղանքում /բակ, տուն, մանկապարտեզ, խմբասենյակ…/:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Ընտանիք

- Ձևավորել պատկերացում, թե ի՞նչ բան է ընտանիքը /դա նրանք են, ովքեր ապրում են երեխաների հետ՝ նույն տանիքի ներքո/:

- Սովորեցնել երեխաներին ճանաչել և անվանել ամենամոտ հարազատներին /հայրիկ, մայրիկ, տատիկ, պապիկ, քույր, եղբայր և այլն/:

Մանկապարտեզ

- Երեխաներին ծանոթացնել մանկապարտեզին և խմբի /դաստիարակ, դաստիարակի օգնական/ աշխատակիցներին: Ձևավորել պատկերացումներ նրանց գործունեության վերաբերյալ:

- Ընդգրկել երեխաներին խմբասենյակում տարվող որոշ աշխատանքներում /դասավորել խաղալիքները, լաթերով մաքրել սեղանների վրայի փոշին/:

- Ձևավորել մանկապարտեզի տարածքում և խմբասենյակում ճիշտ կողմնորոշվելու կարողություն:

Հայրենի երկիր

- Դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք հայրենի երկրի, հարազատ վայրերի /փողոց, տուն, մանկապարտեզ/ նկատմամբ:

- Ձևավորել տարրական պատկերացումներ հայրենի քաղաքի /գյուղի, ավանի/, մայրաքաղաք Երևանի ամենագեղեցիկ և տեսարժան վայրերի մասին:

- Նախնական տեղեկատվություն հաղորդել պետական մի քանի տոների, հայոց եռագույնի մասին:

- Պատմել հայոց բանակի, զինվորների մասին, ովքեր պաշտպանում են մեր երկիրը:

- Տոնական օրերին խթանել երեխաների ուրախ տրամադրությունը, խմբասենյակի զարդարմանը մասնակցելու ձգտումը, կազմակերպել նրանց մասնակցությունը տոնական ընդհանուր ուրախությանը:

Մեծերի աշխատանքը

- Ծանոթացնել մեծերի աշխատանքին՝ բժիշկ, վարորդ, խոհարար, վաճառող, դերձակ…: Ձևավորել հետաքրքրություն տարբեր մասնագիտությունների նկատմամբ:

- Արթնացնել հետաքրքրություն մտերիմ մարդկանց աշխատանքի նկատմամբ, մշակել աշխատանքային մի քանի գործողություններ ճանաչելու և անվանելու կարողություն /մայրիկը կարում է, հայրիկը գնում է աշխատանքի…/:

- Ձևավորել պատկերացում մարդկանց միջև հաղորդակցության մի քանի ձևերի մասին. մարդիկ միմյանց հետ շփվում են, օգնում են իրար, խոսում են հեռախոսով:

ԵՐԵԽԱՆԵՐԸ ՏԱՐԵՎԵՐՋԻՆ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱՆ

✓ Տարբերել և անվանել առարկաներ, խաղալիքներ, որոնք շրջապատում են իրենց /կահույքի, հագուստի, սպասքի պարագաներ, տրանսպորտի որոշ տեսակներ/:

✓ Ցուցաբերել պարզագույն գիտելիքներ շրջապատող միջավայրի վերաբերյալ:

✓ Ազատ կողմնորոշվել մոտակա տարածքում. ճանաչել տունը, մանկապարտեզը, խմբասենյակը:

- ✓ Իմանալ ընտանիքի անդամների և խմբասենյակի աշխատակիցների անունները:
- ✓ Հասկանալ իրադարձությունների հաջորդականությունը և պարզ պատճառահետևանքային կապերը:
- ✓ Խմբավորել առարկաները՝ ըստ մեկ հատկանիշի:
- ✓ Դասակարգել առարկաները՝ ըստ կոնկրետ հատկանիշի:
- ✓ Տեղեկացված լինել իրենց և իրենց ընտանիքների մասին:
- ✓ Մեծահասակի հսկողությամբ և ուղղորդումով հետևել հիգիենայի և անվտանգության տարրական կանոններին:
- ✓ Ցուցաբերել հետաքրքրություն նոր բան սովորելու և նոր փորձառությունների նկատմամբ:
- ✓ Մտապահել և վերարտադրել որոշակի տեղեկատվություն:
- ✓ Հետաքրքրություն դրսևորել նկարների, գրքերի, վերատպությունների նկատմամբ:
- ✓ Ցուցաբերել սեփական անձի և ուրիշների մասին իմացություն:
- ✓ Ճանաչել և կառավարել սեփական հույզերն ու զգացմունքները:

ՀԱՎԵԼՎԱԾ N2

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Ճանաչողական հետաքրքրությունների զարգացման գծով տարվող աշխատանքներն ինտեգրել գործունեության տարբեր ձևերի և ռեժիմային տարբեր պահերի մեջ:

2. Էական տեղ հատկացնել հեքիաթների ընթերցմանը, որոնց միջոցով երեխաները բազմաթիվ գիտելիքներ են ձեռք բերում մերձակա և հեռավոր շրջակա աշխարհի մասին՝ ոչ անմիջական ճանապարհով:

3. Երեխաների առօրյան հագեցնել զգացմունքներով և հուզականությամբ:

4. Համագործակցել ընտանիքի հետ:

Երեխաների հետ տարվող աշխատանքի կազմակերպման ձևերը

2-3 տարեկան երեխաների ճանաչողական զարգացման ուղղությամբ աշխատանքները տարվում են ինչպես պարապմունքների, այնպես էլ պարապմունքներից դուրս՝ ազատ գործունեության ժամանակ:

Ընդհանուր պարամունքների քանակը տարվա ընթացքում ***կազմում է 36, որից 18-ը*** *տրվում է* ***«Առարկայական միջավայր» և «Հասարակական կյանքի երևույթներ», իսկ 18-ը՝ «Ծանոթացում բնությանը» և «Էկոլոգիական դաստիարակություն» բաժիններին:***

Պարապմունքներն անցկացվում են շաբաթը մեկ անգամ՝ հերթագայմամբ: Պարապմունքներըեն երեխաների առօրյայում ձեռք բերած ճանաչողական գիտելիքների դասակարգման, ամփոփման, արդյունքների գնահատման կարևորագույն միջոց են: Դրանք նպաստում են նրանց ինքնուրույնության և ազատ ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Աշխատանքի կազմակերպմանը ներկայացվող պահանջներ

- Զարգացնող խոսքային միջավայրի ստեղծում,
- Աշխատանքի տարբեր ձևերի և մեթոդների օգտագործում,
- Աշխատանքի ճիշտ պլանավորում և կազմակերպում,
- Մանկապարտեզի և ընտանիքի սերտ համագործակցություն:

Մեծահասակի կողմից տրվող տեղեկատվության հիմնական ձևերը

Երեխաներին շրջապատի մասին նոր տեղեկատվության հիմնական աղբյուրը մեծահասակն է, իսկ հաղորդման հիմնական ձևը ճանաչողական *հեքիաթներն ու պատմվածքները, ինչպես նաև իրական պատմությունները*՝սեփական փորձից:

Տեղեկատվության հաղորդման նպատակն է՝ զարմացնել, հետաքրքրել, զվարճացնել երեխային և զարգացնել նրա երևակայությունը:

Պապապմունքներից դուրս անցկացվող աշխատանքի ձևեր և միջոցառումներ

Տոներ

2-3 տարեկան երեխաների իմացական ոլորտի զարգացման գործում հատկապես կարևոր է տոնակատարությունների դերը /պետական, ազգային, միջազգային/: Ողջ արարողությունը հարկավոր է կառուցել երեխաների հուզական ոլորտի մակարդակի վրա:

Զրույցներ

Մեծ է զրույցի դերը երեխաների ճանաչողական զարգացման գործում: Այն իրականացվում է ինչպես պարապմունքների ժամանակ, այնպես էլ պարապմունքներից դուրս: Զրույցի պլանավորման և անցկացման ժամանակ հարկավոր է հաշվի առնել հետևյալ պայմանները՝

- զրույցը դա երկխոսություն է /երեխա-դաստիարակ/,
- երկու կողմերը նախապես պետք է ծանոթ լինեն թեմային,
- երեխաներին պետք է տրվի ազատ արտահայտվելու հնարավորություն:

Թեմատիկ հավաքածուներ

Յուրաքանչյուր թեմային առնչվող տարբեր նյութերի հավաքածուները հնարավորություն են տալիս ճշտելու, ամրակայելու, համադրելու և դասակարգելու շրջապատի մասին երեխաների ունեցած պատկերացումները: Դրանք հիմնականում լինում են թեմատիկ /օրինակ՝ կահույք, ապակի, սպասք, փայտ և այլն/:

Հավաքածուները կարող են լինել նաև անհատական և խմբային: Լինում են ինչպես պատրաստի, այնպես էլ դաստիարակի և ավագ տարիքի երեխաների ձեռքով պատրաստված /օրինակ՝ մեքենաների կամ փայտե խաղալիքների հավաքածու/: Երեխաների ձեռքով ստեղծված հավաքածուներն այս տարիքում զարգացում են ապրում խաղի մեջ:

Մակետներ (մանրակերտեր)

Դրանք տարբեր առարկաների կամ ինչ-որ բանի փոքրացված մոդելներ են, որոնք նպաստում են շրջապատի մասին երեխաների պատկերացումների դասակարգմանը, հետաքրքրքրությունների շրջանակի ընդլայնմանը /թեմա՝ փողոց, մանկապարտեզ…/: Այստեղ հիմնական դերը վերապահվում է դաստիարակին: Կարևորվում են ոչ թե դետալների քանակը, այլ դրանց շարժունակությունը և բազմաֆունկցիոնալ բնույթը: Հաշվի առնելով այս տարիքի երեխաների առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է մակետի բովանդակությունը «կենդանացնել» տարբեր

գործողություններով ու գործունեության ձևերով /նկարչություն, ծեփ, ապլիկացիա, ձեռքի աշխատանք/:

Զվարճանքներ

Դրանց նպատակը շրջապատի մասին երեխաների պատկերացումների ձևավորումն է՝ ուրախ, զվարճալի և աշխույժ մթնոլորտում՝ ներառված թեմային վերաբերող նոր, հետաքրքիր տեղեկատվությամբ: Թեման ընտրում է դաստիարակը՝ ելնելով խմբի երեխաների առանձնահատկություններից, ընդունակություններից, հետաքրքրություններից:

Ավանդույթներ

2-3 տարեկան երեխաների մեջ հարկավոր է ձևավորել ճանաչողական հետաքրքրությունների գծով որոշակի ավանդույթներ, այսինքն՝ աշխատանքի պլանավորված և հաջորդաբար կրկնվող ձևեր, օրինակ՝ «Մեր հյուրերն են մեր սիրելի հեքիաթների հերոսները»: Որպես հյուր՝ կարող են հանդես գալ Գնդիկ բոքոնիկը, Կարմիր գլխարկը…: Վերջիններս հաղորդակցվում են երեխաների հետ. միասին խաղում են, երգում, պարում: Նմանատիպ միջոցառումներ կարող են կրկնվել ամիսը կամ երկու ամիսը մեկ անգամ:

Ցուցահանդեսներ

Դաստիարակը կարող է կազմակերպել տարբեր թեմաների հետ կապված ցուցահանդեսներ, որոնց ակտիվ մասնակիցներն են դառնում նաև ծնողները: Յուրաքանչյուր ցուցահանդեսից առաջ հարկավոր է մանրակրկիտ պլանավորել և սիստեմավորել աշխատանքը: Դրանք կարող են կազմակերպվել ինչպես խմբի ներսում, այնպես էլ մանկապարտեզի մասշտաբով:

Գեղարվեստական գրականություն

Անփոխարինելի է գեղարվեստական գրականության դերը երեխաների համակողմանի զարգացման գործում: Այն ոչ միայն նպաստում է փոքրիկի անհատականության ձևավորմանը, այլև նրա մտահորիզոնի, հետաքրքրությունների շրջանակի ընդլայնմանը: Հարստանում է խոսքը, և ձևավորվում է աշխարհայացք: Հեքիաթ ընթերցելիս կամ պատմելիս, գեղարվեստական և հուզական մասն ապահովելուց հետո, երեխաների իմացական ոլորտը զարգացնելու նպատակով պետք է նրանց ուշադրությունը հրավիրել առանձին պահերի և դրվագների վրա:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՍԵՊՏԵՄԲԵՐ			
Ի ՇԱԲԱԹ		Ի Ի Ի ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Բարև՛, մանկապարտեզ	ԹԵՄԱ	Հեքիաթային արկղիկ
ՆՊԱՏԱԿԸ	Երեխաներին սովորեցնել ճանաչել իրենց մանկապարտեզը, ինքնուրույն գտնել խմբասենյակը: Բացատրել, թե ինչով են զբաղված երեխաները մանկապարտեզում, և ովքեր են նրանց մասին հոգ տանում: Համակրանք դաստիարակել հասակակիցների նկատմամբ: Կարողանալ ազատ կողմնորոշվել մանկապարտեզի տարածքում և խմբասենյակում:	ՆՊԱՏԱԿԸ	Ընդլայնել երեխաների մտահորիզոնը՝ շրջապատող առարկաների շրջանակում: Արտաքուստ գունեղ, գեղեցիկ ձևավորված և զվարճալի արկղիկում պահվում են դիտողական տարբեր պարագաներ: Առարկաների հետ երեխաները շփվում են ոչ միայն պարապմունքի ժամանակ, այլև պարապմունքից դուրս (տեղադրում են նոր առարկաներ, վերցնում են, շոշափում, ուսումնասիրում):
ՀՈԿՏԵՄԲԵՐ			
Ի ՇԱԲԱԹ		Ի Ի Ի ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Իմ ընտանիքը	ԹԵՄԱ	Հագուստ
ՆՊԱՏԱԿԸ	Տալ պատկերացում, թե ինչ բան է ընտանիքը /դա նրանք են, ովքեր, ապրում են երեխաների հետ/: Սովորեցնել երեխաներին ճանաչել և անվանել ամենամոտ հարազատներին: Ձևավորել դրական հույզեր ընտանիքի անդամների հանդեպ՝ տարբեր իրավիճակներում:	ՆՊԱՏԱԿԸ	Ծանոթացնել տարբեր առարկաների առանձնահատկություններին և որակին: Սովորեցնել՝ արտաքին տեսքից տարբերել և անվանել հագուստի որոշ տեսակներ, խնամքով վերաբերվել գործվածքից, կտորից պատրաստված իրերին:
ՆՈՅԵՄԲԵՐ			
Ի ՇԱԲԱԹ		Ի Ի Ի ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Իմ սիրելի տատիկը	ԹԵՄԱ	Ծանոթացում թղթին
ՆՊԱՏԱԿԸ	Երեխաներին տրամադրել ուշադիր դիտելու տատիկի լուսանկարը և դրա շուրջ կազմել փոքրիկ, գեղեցիկ պատմություն. աշխատու՞մ է տատիկը, թե՞ ոչ, որտե՞ղ է աշխատում, ինչո՞վ է զբաղված տանը, խաղու՞մ է թոռնիկների հետ, պատմու՞մ է հեքիաթներ, համեղ պատրաստու՞մ է….:	ՆՊԱՏԱԿԸ	Ծանոթացնել երեխաներին թղթի առանձնահատկություններին, տալ տեղեկություններ թղթի տեսակների մասին: Ըստ որակի պետք է կարողանալ տարբերել դրանք: Խրախուսել երեխաների փորձերը գուշակելու, թե ինչ կարելի է պատրաստել թղթից: Շրջապատում կարողանալ գտնել թղթից պատրաստված առարկաներ:

ԴԵԿՏԵՄԲԵՐ			
Ի ՇԱԲԱԹ		Ի Ի Ի ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Իմ հայրենի քաղաքը	**ԹԵՄԱ**	Խաղ՝ «Խանութ» /Անհրաժեշտ ապրանքներ՝ տան համար/
ՆՊԱՏԱԿԸ	Սովորեցնել երեխաներին ճիշտ անվանել քաղաքը /գյուղը/ և փողոցը, որտեղ նրանք ապրում են: Դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք հայրենի եզերքի նկատմամբ: Պատմել քաղաքի /գյուղի, ավանի/ ամենագեղեցիկ և տեսարժան վայրերի մասին: Զնավորել քաղաքի տարբեր վերատպություններ դիտելու և հարցերին պատասխանելու կարողություն:	**ՆՊԱՏԱԿԸ**	Ամրապնդել երեխաների գիտելիքները կենցաղում կիրառվող տարբեր առարկաների մասին: Ծանոթացնել դրանց նշանակությանը, առանձնահատկություններին և որակին: Պատմել, թե ինչից են պատրաստված դրանք /թուղթ, կավ, կտոր, փայտ և այլն/:
ՀՈՒՆՎԱՐ			
Ի ՇԱԲԱԹ		Ի Ի Ի ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Մեր բանակը	**ԹԵՄԱ**	Լողացնենք տիկնիկ Նունեին
ՆՊԱՏԱԿԸ	Երեխաներին մատչելի ձևով ծանոթացնել պետական մի քանի տոների մասին: Պատմել հայոց բանակի, զինվորների մասին, ովքեր պաշտպանում են մեր երիրը: Նրանց նկատմամբ դաստիարակել սեր և հարգանք:	**ՆՊԱՏԱԿԸ**	Սովորեցնել երեխաներին ճիշտ անվանել լողանալու համար նախատեսված մի քանի պարագաներ /սրբիչ, սպունգ, օճառ…/: Զրուցել լողանալու, միշտ մաքուր լինելու անհրաժեշտության մասին: Արթնացնել դրական հույզեր: Ստեղծել խաղային իրավիճակ՝ լողացնել տիկնիկ Նունեին:
ՓԵՏՐՎԱՐ			
Ի ՇԱԲԱԹ		Ի Ի Ի ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Մեծերի աշխատանքը	**ԹԵՄԱ**	Մեր սիրելի խաղալիքները
ՆՊԱՏԱԿԸ	Շարունակել ծանոթացնել երեխաներին մեծերի աշխատանքին: Դիտել դաստիարակի և նրա օգնականի աշխատանքը և զրուցել այդ մասին: Կարողանալ տարբերակել նրանց աշխատանքի որոշ առանձնահատկություններ: Զնավորել հետաքրքրություն, սեր և հարգանք մեծերի աշխատանքի նկատմամբ:	**ՆՊԱՏԱԿԸ**	Սովորեցնել երեխաներին ինքնուրույն նկարագրել տարբեր նյութերից պատրաստված խաղալիքներ, նշել դրանց բնորոշ հատկանիշները՝ գույն, ձև, չափ: Խրախուսել առարկաների ուսումնասիրման ինքնուրույն փորձերը /համեմատել, խմբավորել, դասակարգել/:

ՄԱՐՏ			
Ի ՇԱԲԱԹ		Ի Ի Ի ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Իմ մայրիկը տանը խոհարար է	**ԹԵՄԱ**	Կահույք
ՆՊԱՏԱԿԸ	Շարունակել ընդլայնել երեխաների պատկերացումներն ընտանիքի անդամների մասին: Խոսել մայրիկի սիրած զբաղմունքի մասին. հոգ է տանում բոլորի մասին, համեղ ճաշատեսակներ է պատրաստում ընտանիքի անդամների համար: Սեր, ուշադրություն և հոգատարություն դաստիարակել մայրիկների նկատմամբ, սովորեցնել հարգել նրանց աշխատանքը:	**ՆՊԱՏԱԿԸ**	Շարունակել ծանոթացնել մեզ շրջապատող առարկաների առանձնահատկություններին և որակին: Ծանոթացնել «կահույք» հասկացությանը: Միաժամանակ ծանոթացնել փայտի առանձնահատկություններին: Խրախուսել երեխաների փորձերը արտաքնապես ճանաչելու և անվանելու կահույքի որոշ պարագաներ:
ԱՊՐԻԼ			
Ի ՇԱԲԱԹ		Ի Ի Ի ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Տունը, որտեղ ես ապրում եմ	**ԹԵՄԱ**	Սպասք
ՆՊԱՏԱԿԸ	Շարունակել ծանոթացումը հարազատ վայրերի /փողոց, տուն/ հետ: Բացատրել, թե ինչու է հարկավոր իմանալ տան, ինչպես նաև մանկապարտեզի հասցեն: Կարողանալ ճիշտ կողմնորոշվել մոտակա տարածքում, ճանաչել փողոցը, տունը, որտեղ ապրում է:	**ՆՊԱՏԱԿԸ**	Ծանոթացնել «սպասք» ընդհանրական հասկացությանը, նշել սպասքի մի քանի տեսակ՝ թեյի, ճաշի, խոհանոցի: Ճանաչել և տարբերակել ճաշի և թեյի սպասքը, ծանոթացնել դրանց նշանակությանն ու առանձնահատկություններին:
ՄԱՅԻՍ			
Ի ՇԱԲԱԹ		Ի Ի Ի ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Ինչպիսի օգնականներ ենք մենք	**ԹԵՄԱ**	Ինչո՞վ ենք մենք ճանապարհորդում
ՆՊԱՏԱԿԸ	Սովորեցնել կատարել մեծերի կողմից տրվող մատչելի հանձնարարականներ: Դիտարկել ավագ ընկերների կողմից կատարվող աշխատանքը մանկապարտեզի բակում և հողամասում: Հետաքրքրվել, թե ինչ պարտականություններ ունի երեխան /օգնու՞մ է մայրիկին. հավաքու՞մ է խաղալիքները, զբաղեցնու՞մ է փոքրիկ քույրիկին …/:	**ՆՊԱՏԱԿԸ**	Ծանոթացնել հասարակական տրանսպորտի որոշ տեսակների՝ ավտոմեքենա, ավտոբուս, ինքնաթիռ, նավ, գնացք: Արտաքնապես տարբերել և ճիշտ անվանել մարդատար և բեռնատար ավտոմեքենաները: Շարունակել ծանոթացնել մեծերի աշխատանքին՝ վարորդ, ուսուցիչ:

ԾԱՆՈԹԱՑՈՒՄ ԲՆՈՒԹՅԱՆԸ
ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Խթանել երեխաների հետաքրքրությունները բնության հանդեպ, ճշգրտել նրանց պատկերացումները բուսական /բույսեր, խոտ, ծառեր, թուփ/և կենդանական աշխարհի հանդեպ:

Սովորեցնել դիտել սենյակային ծաղիկները / առանձնացնել տերևները, ծաղիկները/, դիտել ընտանի կենդանիներին /կատուն իր ձագերի հետ, շունն իր ձագերի հետ/ ծանոթացնել ընտանի թռչուններին/ աքաղաղ, հավ իր ճուտիկներով/, ինչպես նաև մանկապարտեզի բակում, տարածքում եղած թռչուններին /ագռավ, ճնճղուկ, կաչաղակ և այլն/:

Նշել ընտանի կենդանիներին բնորոշ հատկանիշները /կատուն մլավում է, մռռում է, շունը հաչում է/:

Ցույց տալ ակվարիումում լողացող ձկներին /ոսկե ձկնիկին/:

Դիտումների ընթացքում ցույց տալ կենդանիների, թռչունների, ձկների տարբերակիչ, բնորոշ առանձնահատկությունները:

Ճանաչողական տարրական գիտելիքներ հաղորդել կենդանական աշխարհի վերաբերյալ:

Սովորեցնել երեխաներին (հեքիաթների, քառյակների ընթերցանության, նկարների և խաղալիքների դիտման ընթացքում) տարբերել և անվանել կենդանիներին՝ նապաստակ, աղվես, արջ և այլն:

Ձևավորել կարողություններ՝ տարբերելու առանձին կենդանիների բնութագրիչ հատկանիշները (նապաստակի ականջները երկար են, աղվեսը շեկլիկ է և ունի երկար, փափկամազ պոչ, արջը ծուռթաթ է և այլն):

Սովորեցնել երեխաներին՝ ըստ արտաքին տեսքի, համի, տվյալ տարածքում առավել տարածվածության, տարբերել մրգերը և բանջարեղենը:

Երեխաների հետ դիտել բնությունը և հմայվել նրա երևույթների գեղեցկությամբ /ձյունաթափ, անձրև, քամի, տերևաթափ, «Երկնքում երևաց ծիածանը», «Բացվեցին ծաղիկները», «Ծառերը ծաղկեցին»/:

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

- Մեծերի հետ համատեղ հոգ տանել կենդանի էակների մասին, ջրել սենյակային բույսերը, ծաղիկները, կերակրել թռչուններին, ձկներին :
- Ցուցաբերել հոգատար վերաբերմունք՝ շրջակա բնության հանդեպ:

ՀԱՎԵԼՎԱԾ N3

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

ՍԵՊՏԵՄԲԵՐ			
II ՇԱԲԱԹ		IV ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Բանջարեղեն Բուսական աշխարհ	ԹԵՄԱ	**Ծառ** Բուսական աշխարհ
ՆՊԱՏԱԿԸ	Սովորեցնել տարբերել բանջարեղենը՝ ըստ արտաքին տեսքի և համի՝ «լոլիկ, վարունգ, գազար, բազուկ»: Ձևավորել տարրական գիտելիքներ բանջարեղենի աճեցման վերաբերյալ:	ՆՊԱՏԱԿԸ	Ձևավորել պարզագույն գիտելիքներ ծառերի վերաբերյալ, ընդլայնել գիտելիքները բանջարեղենի «լոլիկ, վարունգ, պղպեղ» մասին:
ՀՈԿՏԵՄԲԵՐ			
II ՇԱԲԱԹ		IV ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	**Թռչուն** Կենդանական աշխարհ	ԹԵՄԱ	*Ընտանի կենդանիներ* Կենդանական աշխարհ
ՆՊԱՏԱԿԸ	Ձևավորել պարզագույն գիտելիքներ թռչունների մասին: Սովորեցնել տարբերել թռչուններին՝ ըստ իրենց արտաքին տեսքի «աղավնի, հավ, ճնճղուկ»:	ՆՊԱՏԱԿԸ	Ծանոթացնել ընտանի կենդանիներին և նրանց ձագերին:Ներկայացնել նրանց օգտակարությունն ու նշանակությունը: Ձևավորել հոգատար վերաբերմունք ընտանի կենդանիների նկատմամբ:
ՆՈՅԵՄԲԵՐ			
II ՇԱԲԱԹ		IV ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	*Ծաղիկներ* Բուսական աշխարհ	ԹԵՄԱ	*Հավ* Կենդանական աշխարհ
ՆՊԱՏԱԿԸ	Ձևավորել գիտելիքներ ծաղիկների մասին: Սովորեցնել ճանաչել վարդը, մեխակը ըստ արտաքին տեսքի և գույնի, անվանել նրանց անունները: Սովորեցնել ծաղիկների գեղեցկությունը նկատելու ունակություն, ձևավորել սեր և հոգատար վերաբերմունք նրանց նկատմամբ:	ՆՊԱՏԱԿԸ	Խորացնել երեխաների գիտելիքները հավի վերաբերյալ: Սովորեցնել տարբերել և անվանել թռչնի մարմնի մասերը, խաղալիք և կենդանի թռչունը միմյանցից:

ԴԵԿՏԵՄԲԵՐ			
II ՇԱԲԱԹ		IV ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Ճագարիկ Կենդանական աշխարհ	ԹԵՄԱ	Ձմեռ Անկենդան բնություն
ՆՊԱՏԱԿԸ	Որոշակի պատկերացում ձևավորել ճագարի մասին, ներկայացնել նրա արտաքին տեսքը, ծանոթացնել, թե ինչով է սնվում ճագարը: Ձևավորել հոգատար վերաբերմունք ճագարի նկատմամբ:	ՆՊԱՏԱԿԸ	Ձևավորել ճանաչողական ունակություններ ձմռան մասին,ներկայացնել ձմռանը բնության մեջ տեղի ունեցող երևույթները: Պատկերացումներ տալ երեխաներին ձմեռող թռչունների մասին: Ձևավորել հոգատար վերաբերմունք դեպի թռչունները:
ՀՈՒՆՎԱՐ			
II ՇԱԲԱԹ		IV ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Ձյուն է գալիս Անկենդան բնություն	ԹԵՄԱ	*Եղևնի* Բուսական աշխարհ
ՆՊԱՏԱԿԸ	Ձևավորել որոշակի գիտելիքներ ձյան մասին: Ներկայացնել ձյան տեսքը, գույնը հատկությունները :	ՆՊԱՏԱԿԸ	Ծանոթացնել եղևնուն, ներկայացնել կառուցվածքն ու առանձնահատկությունները: Դիտարկել որևէ սենյակային ծաղիկ, սովորեցնել ցույց տալ և անվանել ծաղկի մասերը: Ձևավորել հոգատար վերաբերմունք սենյակային ծաղիկների նկատմամբ, ներգրավել երեխաներին ծաղիկների ջրման աշխատանքների մեջ:
ՓԵՏՐՎԱՐ			
I I ՇԱԲԱԹ		IV ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	*Թռչունները վանդակում* Կենդանական աշխարհ	ԹԵՄԱ	*Ձյունածածկ ծառեր* Անկենդան բնություն
ՆՊԱՏԱԿԸ	Դիտարկել թռչնի վանդակի թռչուններին և ակվարիումի ձկնիկներին: Ձևավորել սեր և հոգատար վերաբերմունք նրանց նկատմամբ: Ներգրավել երեխաներին թռչունների և ակվարիումի ձկների խնամքի-աշխատանքներին: Ձևավորել հուզական վերաբերմունք կենդանիների նկատմամբ:	ՆՊԱՏԱԿԸ	Վարժեցնել նկատելու ձյունածածկ ծառերի գեղեցկությունը: Շարունակել ծանոթացնել 1-2 սենյակային բույսերի,նրանց անվանումներին: Երեխաների ուշադրությունը հրավիրել սենյակային բույսերի գեղեցկության վրա, ձևավորել հոգատար վերաբերմունք դրանց նկատմամբ:
ՄԱՐՏ			
II ՇԱԲԱԹ		IV ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Գարնանային ծաղիկներ Բուսական աշխարհ	ԹԵՄԱ	*«Ես շնիկ ունեմ»* Կենդանական աշխարհ
	Ձևավորել գիտելիքներ՝ գարնանային ծաղիկների		Շարունակել ծանոթացնել ընտանի կենդանիներին: Որոշակի գիտելիք-

ՆՊԱՏԱԿԸ	(ձնծաղիկ, մանուշակ) վերաբերյալ: Սովորեցնել անվանել, տարբերել ըստ գույների,արտաքին տեսքի:	**ՆՊԱՏԱԿԸ**	ներ տալ շան մասին: Ձևավորել նրա նկատմամբ սեր և հոգատար վերաբերմունք: Դաստիարակել շների հետ ճիշտ վարվելու վարքագիծ:
ԱՊՐԻԼ			
II ՇԱԲԱԹ		**1V ՇԱԲԱԹ**	
ԹԵՄԱ	Ծաղկած ծառեր Բուսական աշխարհ	**ԹԵՄԱ**	Ծանոթացնել սենյակային բույսերին, (խորդենի, ֆիկուս, չինական վարդ) ծաղիկներին, նրանց կառուցվածքին՝ ցողուն,տերև, ծաղիկ: Բուսական աշխարհ
ՆՊԱՏԱԿԸ	Ցույց տալ գարնանը ծառերի հետ կատարվող փոփոխությունները: Սովորեցնել նկատել գարնանը ծաղկած ծառերի գեղեցկությունը: Կատարելագործել ծաղիկները ջրելու կարողությունը, սովորեցնել մաքրել ծաղիկների տերևները:	**ՆՊԱՏԱԿԸ**	Ընդլայնել երեխաների պատկերացումները ծառերի վերաբերյալ, ծանոթացնել ծառի կառուցվածքին՝ ծառի բուն, ճյուղեր: Ձևավորել հոգատար վերաբերմունք և ծառերը խնամելու ցանկություն:
ՄԱՅԻՍ			
II ՇԱԲԱԹ		**IV ՇԱԲԱԹ**	
ԹԵՄԱ	Զատիկ Կենդանական աշխարհ	**ԹԵՄԱ**	Փիսիկը Կենդանական աշխարհ
ՆՊԱՏԱԿԸ	Ձևավորել գիտելիքներ զատիկի վերաբերյալ: Ծանոթացնել նրա արտաքին տեսքին, սովորեցնել անվանել այն և տարբերել գույները: Ձևավորել ճիշտ վերաբերմունք զատիկի նկատմամբ:	**ՆՊԱՏԱԿԸ**	Ձևավորել գիտելիքներ փիսիկի մասին, ծանոթացնել նրա մարմնի մասերին, սովորեցնել, թե ինչո՞վ է սնվում փիսիկը, ի՞նչ ձայն է հանում:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԶԲՈՍԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Դաստիարակության գործընթացն անընդհատ է: Երեխայի անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար հսկայական ներուժ և նախադրյալներ են ընձեռում զբոսանքների պայմաններում երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքները: Այստեղ մեծ հնարավորություն կա երեխաներին շրջակա աշխարհի, բնությանը ծանոթացման, ակտիվ շարժումների, ինքնուրույն գործողությունների, նոր ու վառ տպավորությունների դրսևորման համար: Անշուշտ այդ ամենը իրականացվում է մեծի մանկավարժական ուղղորդմամբ և հսկողությամբ: Երեխաների զբոսանքներ կազմակերպվում են ամեն օր:

Զբոսանքներն առավել հետաքրքիր և նպատակային անցկացնելու համար անհրաժեշտ են պայմաններ՝ երեխաների տարաբնույթ գործունեության համար:

Ստորև բերվում է զբոսանքների կազմակերպման ժամանակ բուսական, կենդանական, անկենդան աշխարհի վերաբերյալ երեխաների պարզագույն պատկերացումների, գիտելիքների ուղղությամբ հեռանկարային պլանավորման թեմաներն ըստ ամիսների:

ՍԵՊՏԵՄԲԵՐ- ռեժիմային պահեր՝զբոսանքներ			
II ՇԱԲԱԹ		IV ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	*Ավազ* Անկենդան բնություն	ԹԵՄԱ	*Ջուր* Անկենդան բնություն
ՆՊԱՏԱԿԸ	Սովորեցնել ճանաչել ավազը, ծանոթացնել ավազի հատկություններին, ձևավորել պատկերացում արևի մասին, ներկայացնել նրա կարևորությունը կյանքի գոյատևման համար:Պատուհանից դիտել, թե ինչպես է փչում քամին և ներկայացնել այն՝ որպես բնության երևույթ:	ՆՊԱՏԱԿԸ	Ձևավորել ճանաչողական գիտելիքներ ջրի և նրա բնորոշ հատկությունների մասին: Գաղափար տալ այն մասին, որ աշնանային անձրևը կարող է լինել հորդառատ, ուժեղ, մեղմ, դանդաղ: Վարժեցնել երեխաներին՝ նկատելու արևոտ օրը, տարբերելու ամպամած օրը պայծառ, արևոտ օրից: Սովորեցնել հասկանալու, թե ի՞նչ է տեղի ունենում, երբ ամպերը ծածկում են արևին: Էկոլոգիական խաղ՝ «Թռչուններն ու անձրևը»:
ՀՈԿՏԵՄԲԵՐ			
II ՇԱԲԱԹ		IV ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	*Մրգեր* Բուսական աշխարհ	ԹԵՄԱ	*Կրիա* Կենդանական աշխարհ
ՆՊԱՏԱԿԸ	Ձևավորել գիտելիքներ՝ մրգերի «խնձոր, տանձ» և ծառերի մասին: Ծանոթացնել աշնանը ծառատեսակներին, դրանց հետ կատարվող փոփոխություններին, ցույց տալ ծառերի տերևների փոխված գույները: Նկատել տալ աշնան գեղեցկությունը , հիանալ տերևների բազմերանգությամբ, Տարբերել աշնան տերևներն ըստ գույնի՝ «կարմիր, դեղին. կանաչ»:	ՆՊԱՏԱԿԸ	Պարզագույն պատկերացումներ տալ կրիայի մասին, ծանոթացնել նրա արտաքին տեսքին, ձևավորել հոգատար վերաբերմունք կենդանու նկատմամբ:

ՆՈՅԵՄԲԵՐ			
II ՇԱԲԱԹ		IV ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	*Ջուրը բոլորին է անհրաժեշտ* Անկենդան բնություն	**ԹԵՄԱ**	*Քամին փչում է* Անկենդան բնություն
ՆՊԱՏԱԿԸ	Խորացնել գիտելիքները ջրի մասին. ներկայացնել հատկությունները և կարևոր նշանակությունը կյանքի գոյատևման համար: Դիտարկել շնիկին, սովորեցնել ընկերների հետ կիսելու ստացած տպավորությունները:	**ՆՊԱՏԱԿԸ**	Ցույց տալ կապը բնության երևույթների միջև: Սովորեցնել որոշել եղանակը, նկատել քամուց ճոճվող ծառերի ճյուղերն ու քամուց թափվող տերևները: Էկոլոգիական խաղ «Աշուն»: Ամրապնդել երեխաների պատկերացումները բնության աշնանային գույների վերաբերյալ, սովորեցնել տարբերել տերևներն իրենց չափերով և գույներով:
ԴԵԿՏԵՄԲԵՐ			
II ՇԱԲԱԹ		IV ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Ձմռանը բակում Անկենդան բնություն	**ԹԵՄԱ**	Ընտանի կենդանիներն՝ ըստ արտաքին տեսքի և արձակած ձայնի Կենդանական աշխարհ
ՆՊԱՏԱԿԸ	Տալ պատկերացումներ ձմռան եղանակի մասին, բացատրել, որ արևը լուսավորում է տարվա բոլոր եղանակներին, իսկ ձմռանը թույլ է ջերմացնում: Ծանոթացնել ձմռան բնորոշ հատկություններին: Սովորեցնել, որ ձմռանը անհրաժեշտ է կերակրել թռչուններին: Ցուցադրել թռչունների համար պատրաստված կերակրամանը:	**ՆՊԱՏԱԿԸ**	Խորացնել գիտելիքները ընտանի կենդանիների մասին, անվանել, ներկայացնել նրանց արտաքին տեսքը, արտաբերած ձայնը: Ձևավորել սեր և հոգատար վերաբերմունք կենդանիների նկատմամբ:

ՀՈՒՆՎԱՐ			
I I ՇԱԲԱԹ		IV ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Հյուր ձյունանուշիկին	ԹԵՄԱ	Տոնական քաղաք
ՆՊԱՏԱԿԸ	Տոնական մանկապարտեզ: Ամրապնդել ամանորյա տպավորությունները:	ՆՊԱՏԱԿԸ	Ծանոթացնել երեխաներին, թե ինչպես են զարդարում քաղաքը (ավանը) ձմռանը: Էկոլոգիական խաղ՝ Ձյան փաթիլներ»: Ծանոթացնել ձյան հատկություն-ներին:
ՓԵՏՐՎԱՐ			
I I ՇԱԲԱԹ		IV ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	*Թռչունները ձմռանը* Կենդանական աշխարհ	ԹԵՄԱ	*Ձնեմարդ* Անկենդան բնություն
ՆՊԱՏԱԿԸ	Ձևավորել ցանկություն՝ հոգ տանելու ձմեռող թռչունների մասին:	ՆՊԱՏԱԿԸ	Ձմեռային զվարճալիքներ Պատրաստել ձնեմարդ
ՄԱՐՏ			
II ՇԱԲԱԹ		IV ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	Արագիլը գարնան ավետա-բերն է Կենդանական աշխարհ	ԹԵՄԱ	Էկոլոգիական արահետ Բուսական աշխարհ
ՆՊԱՏԱԿԸ	Ձևավորել գիտելիքներ՝ տաք երկրներից վերադարձող թռչունների մասին, պատկերացում տալ արագիլի մասին, ներ-կայացնել նրա արտաքին տեսքը, սեր և հոգատար վե-րաբերմունք դաստիարակել գարնան ավետաբեր թռչնի նկատմամբ:	ՆՊԱՏԱԿԸ	Շարունակել ընդլայնել երեխաների գիտելիքները բույսերի և կենդանի-ների մասին: Ձևավորել հոգատար վերաբերմունք նրանց նկատմամբ: Պատկերացում տալ ծառի տնկման մասին:
ԱՊՐԻԼ			
II ՇԱԲԱԹ		1V ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	*Ծաղիկներ* Բուսական աշխարհ	ԹԵՄԱ	*Հող* Անկենդան բնություն
ՆՊԱՏԱԿԸ	Շարունակել ձևավորել ծա-ղիկների մեջ գեղեցիկը տես-նելու կարողություն: Երե-խաներին մասնակից դարձ-նել սենյակային ծաղիկնե-րի՝ խորդենու, ֆիկուսի խնամքին:	ՆՊԱՏԱԿԸ	Շարունակել՝ երեխաներին մասնակից դարձնել ծաղիկների խնամքի աշխա-տանքներին, ցույց տալ, թե ինչպես են սերմերը դնում հողի մեջ, ներկայացնել հողի առանձնահատկություններն ու կարևորությունը բույսերի աճման հա-մար: Էկոլոգիական խաղ «Ծաղկեպսակ»: Ընդլայնել երեխաների պատկերա-ցումները ծաղիկների արտաքին տեսքի մասին:

ՄԱՅԻՍ			
II ՇԱԲԱԹ		IV ՇԱԲԱԹ	
ԹԵՄԱ	*Ուրախ ճնճղուկներ* Կենդանական աշխարհ	ԹԵՄԱ	*Ի՞նչնոր հյուրեր են հայտնվել մեր մանկապարտեզի տարածքում:* Կենդանական աշխարհ
ՆՊԱՏԱԿԸ	Ընդլայնել պատկերացումները գարնան վերաբերյալ: Հարստացնել գիտելիքները նոր բառերով;	ՆՊԱՏԱԿԸ	Դիտել միջատներին, հետևել տարածքում հայտնված թիթեռների, սարդերի, աշխատասեր մրջյունների վարքին:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

/Հանձնարարականներ՝ զարգացնող միջավայրի կառուցման ուղղությամբ/

Հարկավոր է ունենալ

Խաղալիքներ և խաղային սարքավորումներ. ավտոբուս, գնացք երկաթգծով, մարդատար, բեռնատար ավտոմեքենաներ /տարբեր չափերի, գույների /տիկնիկներ, հեծանիվներ, կառուցողական նյութեր, կանաչ և կարմիր առարկաներ /գնդակներ, խորանարդներ, շրջաններ / բուրգ, «Լուսակիր» կառուցողականով:

Բազմաֆունկցիոնալ խաղալիքներ՝ տարբեր գույների և չափերի, որոնք կարելի է կիրառել տրանսպորտի տեսակների մասին նյութի ամրապնդման, երեխաների հիշողության, դիտունակության զարգացման համար:

Դիտողական, դիդակտիկ նյութեր, ձեռնարկներ. ալբոմ՝ հասարակական տրանսպորտի սյուժետային նկարների արտացոլմամբ, ավտոբուս, տրոլեյբուս, մարդատար մեքենաներ՝ մարդկանցով, բեռնատար մեքենաներ՝ բեռնված բանջարեղենով, ավազով, նկարներ՝ ճանապարհի, երկաթգծի, լուսակրի արտացոլմամբ, նկարներ մեքենաների մասերի արտացոլմամբ, նկարներ «Երեխաները սահում են սահնակով» թեմայով:

Ատրիբուտներ սյուժետային խաղերի համար «Վարորդ» /ղեկ և դիմակներ/ «Գնացք»/, գլխարկներ մեքենավարի համար, պայուսակ տոմսերի համար, «Թղռչունները և ավտոմեքենան», «Ավտոմեքենան», «Լուսակիրը» խաղերի համար համապատասխան նյութեր:

Դիդակտիկ խաղեր «Գուշակի՛ր՝ ինչո՞վ ես երթևեկում», «Ճիշտ է, սխալ է», «Թույլատրվում է», «Արգելված է»:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երեխաները: Ծանոթ են տրանսպորտի տեսակներին /ավտոբուս, տրոլեյբուս, գնացք/ մարդատար, բեռնատար ավտոմեքենա/ կարող են անվանել և տարբերել տրանսպորտի կառուցվածքային մասերը /ղեկ, անիվ, խցիկ, դռներ, պատուհաններ, վագոններ/: Ունեն պատկերացում այն մասին, թե ինչի համար է անհրաժեշտ բեռնատար մեքենան /մեքենայով տեղափոխում են ավազ, փայտ, կաղամբ, կարտոֆիլ/, մարդատար ավտոմեքենան /մարդիկ երթևեկում են դրանով/:Գիտեն մարդկանց մասնագիտությունների մասին /մեքենավար, վարորդ/: Ունեն պատկերացում այն մասին, որ նեղ ճանապարհը մարդկանց համար է, լայն ճանապարհը՝ տրանսպորտի: Ճանաչում են կարմիր, կանաչ գույները: Ունեն պատկերացում լուսակրի մասին: «Նա կանգնած է ճանապարհին և օգնում է պահպանել կարգուկանոն, եթե կարմիր լույսն է վառվում, «բարկանում է» և թույլ չի տալիս մարդկանց անցնել մեծ ճանապարհով, եթե կանաչ լույսն է վառվում, նա «ժպտում է» և թույլ է տալիս անցնել ճանապարհը՝ բռնելով մայրիկի կամ հայրիկի ձեռքը:

Երեխաները կողմնորոշվում են տարածական հարաբերություններում՝ ներքև, վերև, մոտիկ, հեռու:Տեղյակ են, որ գնացքը շարժվում է երկաթգծով, ռելսերով: Ունեն պատկերացումներ արագության մասին. ավտոմեքենան արագ է ընթանում, ավտոմեքենան դանդաղ է ընթանում: Գիտեն, ինչպե՞ս կարելի է իրեն պահել ճմռանը սահնակով սահելու ժամանակ:

Դաստիարակները: Երեխաների մեջ զարգացնում են սթափ վերաբերմունք լուսակրի կարմիր և կանաչ գույների հանդեպ: Ամրապնդում են երեխաների կարողությունները՝ տարբերելու այդ լույսերը և դրանց նշանակությունը: Ստեղծում են պայմաններ երեխաների դիտունակության զարգացման համար: Ծանոթացնում են երեխաներին հասարակական տրանսպորտի տեսակներին: Ստեղծում են առարկայական զարգացնող միջավայր, որը նպաստում է երեխաներին ծանոթացնելու ճանապարհին վարվելաձևի տարրական կանոններին:

Ծնողները: Ակտիվ մասնակցություն են բերում մանկապարտեզում երեխաների ստացած գիտելիքների ամրապնդման գործին: Գիտեն, թե ինչպես պետք է ճիշտ անցկացնեն երեխային ճանապարհով: Ունեն պատկերացումներ այն մասին, թե ինչպե՞ս կարելի է մատչելի բացատրել երեխային՝ ինչո՞վ է ճանապարհը վտանգավոր:

ՀԱՎԵԼՎԱԾ N4

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ամիսը	Շաբաթը	Ճանապարհային երթևեկության կանոնների ուսուցման ուղղությամբ խնդիրները	Թեմա, պարապմունք, նպատակը	Դաստիարակի և երեխաների համատեղ գործունեությունը	Համագործակցությունը նեղ մասնագետների հետ
1	2	3	4	5	6
Սեպտեմբեր	I	Զնավորել պատկերացում գույների /կարմիր, կանաչ/ վերաբերյալ/:	**Պարապմունք 1** «Ընդունում ենք հյուր տիկնիկ Մանեին»: Ծանոթացնել *վարորդ, ավտոմեքենա* բառերին: Նպատակը՝ Սովորեցնել անվանել ավտոմեքենայի բաղկացուցիչ մասերը՝ ղեկ, անիվներ: Զարգացնել կարմիր և կանաչ գույների ընկալումը:	Խաղալիք մեքենաների դիտում	Հաղորդակցման իրավիճակ «Գույն և ձև»
	II	Ծանոթացնել տրանսպորտի ձևերին /մեքենային/ և նրա կառուցվածքային մասերին:		«Մենք վարորդներ ենք» սյուժետադերային խաղի դիտում:	
	III	Ծանոթացնել *վարորդ, ավտոմեքենա* բառերին:		Խաղ՝ «Կարմիր-կանաչ»: Նպատակը՝ Ամրապնդել երեխաների գիտելիքներն այն մասին, որ կանաչ լույսի տակ քայլում են, կարմիր լույսի տակ՝ կանգնում:	
	IV	Զարգացնել դիտունակությունը և գունազգացողությունը:		Կառուցողական՝ «Մեքենաներ»: Խաղային իրավիճակ՝	Սյուժետային խաղ՝ «Մենք երթևեկում ենք ավտոբուսով», Երաժշտ. դաս-

				«Տիկնիկները հյուր են գնում մեքենայով»:	տիարակ
Հոկտեմբեր	I	Ամրապնդել դիտունակությունը և գույնի ընկալումը:	**Պարապմունք 2** «Բեռնատար մեքենա» Նպատակը՝ Սովորեցնել տարբերել բեռնատար մեքենաները: Ձևավորել հասկացողություն այն մասին, որ բեռնատար մեքենան ունի թափք, որով կարելի է տեղափոխել ավազ, խաղալիքներ:	Շարժախաղ՝ «Մեքենաները սլանում են»: Նպատակը՝ Ամրապնդել գիտելիքներն այն մասին, որ մեքենաները սլանում են ճանապարհով:	
	II	Սովորեցնել տարբերել բեռնատարները ուրիշ մեքենաներից:		Շարժախաղ՝ «Վազե՛ք ինձ մոտ»	Նկարչություն «Ռելսեր և տոմսեր» խաղալիք երկաթգծի համար:
	III	Տեղեկացնել, որ բեռնատար մեքենաներով տեղափոխում են բեռներ:		Բեռնատար ավտոմեքենայի դիտում Շփման իրավիճակ՝ «Ինչի՞ց են կազմված մեքենաները»:	Դիդակտիկ խաղ՝ «Գտի՛ր քո գույնը» Նպատակը՝ Ամրապնդել առարկաների կարմիր և կանաչ գույները գտնելու կարողությունները:
	IV	Ծանոթացնել բեռնատար ավտոմեքենայի նշանակությանը:		Մեքենաների դիտում: Ավտոմեքենաներ և մեծ բեռնատար մեքենա: Նպատակը՝ Սովորեցնել տարբերել տրանսպորտի տեսակները:	Զվարճալիք՝ «Փոքրիկ ոտիկները վազում են ճանապարհով» (ֆիզկուլտուրայի հրահանգիչ):

Դեկտեմբեր	I	Շարունակել վարժեցնել տարբերելու գույները:	**Պարապմունք 3** Փողոցում նեղ և լայն ճանապարհներ են: Նպատակը՝ ձևավորել հասկացողություն՝ փողոցում կան լայն ճանապարհներ, որոնցով սլանում են մեքենաները, և նեղ ճանապարհներ, որոնցով քայլում են մարդիկ, երեխաներն իրենց մայրիկների և հայրիկների հետ: Շարունակել աշխատանքը՝ կանաչ և կարմիր գույների ընկալման կարողությունների ամրապնդման ուղղությամբ:	Խաղ՝ «Գտի՛ր այն մեքենան, որը ես կանվանեմ». Ավտոմեքենաներ՝ բեռնատար և մարդատար:	Նկարչություն «Ճանապարհի մեքենաների համար»:
	II	Ծանոթացնել տրանսպորտի տեսակներին:		Խաղային իրավիճակ՝ «Հավաքի՛ր բերքը» Նպատակը՝ Ամրապնդել երեխաների գիտելիքներն այն մասին, որ բեռը տեղափոխում են բեռնատար մեքենայով:	
	III	Տալ պատկերացում այն մասին, թե ինչ է նշանակում ճանապարհ:		Կառուցողական նյութերով աշխատանք՝ «Լայն, նեղ ճանապարհ»:	Հաղորդակցման իրավիճակ՝ «Գույն և ձև»:
	IV	Սովորեցնել տարբերել նեղ ճանապարհը. այն մեծերի և երեխաների համար է, իսկ լայն ճանապարհը՝ մեքենաների (մարդատար և բեռնատար):		Խաղային վարժություն՝ «Ո՞վ է ուշադիր»:	Խաղային իրավիճակ՝ «Մենք վարորդներ և մեքենավարներ ենք» (երաժշտության դաստիարակ):

Դեկտեմբեր	I	Ձևավորել պատկերացումներ այն մասին,թե ինչո՞վ են մարդիկ երթևեկում:	**Պարապմունք 4** Ինչո՞վ են մարդիկ երթևեկում: Նպատակը՝ Ամրապնդել գիտելիքներն այն մասին, որ բեռնատար մեքենայով տեղափոխում են բեռներ՝ կարտոֆիլ, խնձոր, շաքարավազ, իսկ փոքր մեքենաներով երթևեկում են մարդիկ: Ձևավորել հասկացողություն այն մասին, որ լայն ճանապարհով երթևեկում են բեռնատար և մարդատար մեքենաները,ավտոբուսները, որոնք կարող են տեղափոխել շատ մարդիկ:	Խաղ՝ «Գտի՛ր այն մեքենան, որը ես կանվանեմ»: Նպատակը՝ Ամրապնդել երեխաների՝ մեքենաները տարբերելու կարողությունները: Շարժախաղ՝ «Թռչունները և ավտոմեքենան», նպատակը՝ Դաստիարակել դիտունակություն:	
	II	Ամրապնդել գիտելիքները տրանսպորտի վերաբերյալ:		Խաղային վարժություն՝ «Ո՞վ է ուշադիր» Ստեղծագործության ընթերցանություն՝ Ա.Բարտո, «Բեռնատարը»:	Սյուժետային խաղ՝ «Մենք երթևեկում ենք ավտոբուսով», Երաժշտ. դաստիարակ:
	III	Երեխաներին բացատրել, որ տարբերեն՝ նեղ ճանապարհը մեծերի և երեխաների համար է, լայն ճանաարհը՝ մեքենաների (մարդատար և բեռնատար):		Դիդակտիկ խաղ՝ «Գուշակի՛ր՝ ինչո՞վ ես տեղափոխելու»: «Վարորդ». սյուժետադերային խաղի դիտում: Շփման իրավիճակ՝ «Ինչո՞վ է վտանգավոր ճանապարհը ձմռանը»:	

	IV	Ծանոթացնել տրանսպորտի տեսակներից ավտոբուսին և դրա նշանակությանը:		Կառուցողական նյութերով աշխատանք՝ «Փողոցում լայն և նեղ ճանապարհը»: Նկարի դիտում՝ «Ձմռանը զբոսանքի ժամանակ»:	Նկարչություն՝ «Ռելսեր և տոմսեր», խաղալիք երկաթգծի համար:
Հունվար	I	Շարունակել ծանոթացումը հասարակական տրանսպորտի տեսակներից գնացքին, որն ընթանում է երկաթգծի ռելսերով:	**Պարապմունք 5** **Գնացքը և երկաթուղին** Նպատակը՝ Ծանոթացնել հասարակական տրանսպորտի տեսակներից գնացքին: Տալ հասկացողություն այն մասին, որ՝ - գնացքն ընթանում է ռելսերով, - այն շատ երկար է և բաղկացած է վագոններից, որոնցով կարելի է տեղափոխել մարդկանց: Ծանոթացնել մեքենավարի մասնագիտությանը		Դիդակտիկ խաղ՝ «Գտի՛ր քո գույնը»: Նպատակը՝ Ամրապնդել առարկաների մեջ կարմիր և կանաչ գույները գտնելու կարողությունները:
	II	Սովորեցնել տարբերել գնացքը տրանսպորտի այլ տեսակներից:		Խաղ՝ «Ղեկի մոտ», Նպատակը՝ Բառապաշարի հարստացում:	Զվարճալիք՝ «Փոքրիկ ոտիկները վազում են ճանապարհով» (ֆիզկուլտուրայի հրահանգիչ):
	III	Ծանոթացնել մեքենավարի մասնագիտությանը:		Խաղ՝ «Երազային գնացք»: Խաղային վարժություն՝ «Շոգեքարշ»:	Նկարչություն՝ «Ճանապարհի կենդանիների համար»:
	IV	Ծանոթացնել ձմռանը սահնակով սահելու կանոններին:		Կառուցողական նյութերով աշխատանք՝ «Կառուցում ենք երկաթգիծ»:	Սյուժետային խաղ՝ «Ճանապարհորդություն գնացքով»:

Փետրվար	I	Շարունակել աշխատանքները՝ տրանսպորտի մասին երեխաների գիտելիքների ամրապնդման ուղղությամբ:	**Պարապմունք 6** **Ի՞նչ է տրոլեյբուսը** Ծանոթացնել տրոլեյբուսի առանձնահատկություններին, սովորեցնել տարբերել այն տրանսպորտի մյուս տեսակներից: Շարունակել աշխատանքը տրանսպորտի մասին երեխաների գիտելիքներն ամրապնդելու ուղղությամբ:	Խաղ՝ «Սահնակի վրա» Տրոլեյբուսի դիտում: Շարժախաղ՝ «Գնացք»	
	II	Շարունակել աշխատանքները՝ հասարակական տրանսպորտի ծանոթացման ուղղությամբ:		Կառուցողական նյութերով աշխատանք՝ «Ավտոբուս», «Տրոլեյբուս»: Հաղորդակցման իրավիճակ՝ «Ինչո՞վ է վտանգավոր ճանապարհը»:	Նկարչություն՝ «Անիվներ և լուսակիր»:
	III	Սովորեցնել տարբերել տրոլեյբուսը տրանսպորտի այլ տեսակներից:		Դիդակտիկ խաղ՝ «Շոգեքարշ»:	
	IV	Ամրապնդել կարմիր և կանաչ գույները տարբերակելու կարողությունները:		Խաղ՝ «Գնացք և թունել» Շարժախաղ՝ «Ծիտիկները և ավտոմեքենան» Նպատակը՝ դաստիարակել դիտունակություն:	Հաղորդակցման իրավիճակ՝ «Գույն և ձև»:

Մարտ	I	Ձևավորել գիտելիքներ լուսացույցի և նրա նշանակության մասին:			Դիդակտիկ խաղ «Գտի՛ր քո գույնը» Նպատակը Ամրապնդել առարկաների մեջ կանաչ և կարմիր գույնի առարկաները տարբերելու կարողությունները:
	II	Վարժեցնել երեխաներին՝ տարբերել տրանսպորտի տեսակները:	**Պարապմունք 7 Մեր ընկերը ճանապարհին** Ծանոթացնել՝ - ճանապարհային երթևեկության և լուսացույցի տարրական կանոններին, Ձևավորել հմտություններ՝ ճանապարհային երթևեկության կանոնների պահպանման ուղղությամբ.«Կանաչ գույն՝ անցի՛ր,կարմիր գույն՝կանգնի՛ր»: Տալ պատկերացում տարածական՝ վերևներքև հասկացությունների վերաբերյալ:	Դիդակտիկ խաղ «Հավաքի՛ր լուսացույց» Շարժախաղ «Շոգեքարշներ, մեքենաներ»:	
	III	Ամրապնդել երեխաների կարողությունները՝ տրանսպորտի մասերը տարբերակելու ուղղությամբ:		Դիդակտիկ խաղ՝ «Գուշակիր՝ ինչո՞վ են տեղափոխում», «Ճիշտ է, ճիշտ չէ»:	
	IV	Ձևավորել ճանապարհային երթևեկության կանոնների պահպանման հմտություններ. «Կանաչ է՝ անցի՛ր, կարմիր է, կանգնի՛ր»:		Խաղ՝ «Վարորդներ-մեքենավարներ»: Կառուցողական նյութերով աշխատանք՝ «Ճանապարհ մեքենաների համար»:	

Մարտ	I	Բացատրել երեխաներին՝ ճանապարհին վարքի տարրական կանոնների պահպանման կարևորությունը (լինել ուշադիր, չվազել):		Դիդակտիկ խաղ՝ «Գտի՛ր և հավաքի՛ր»: Նպատակը՝ ամրապնդել երեխաների գիտելիքները մեքենաների մասերի և դրանց տարբերության մասին:	
	II	Սովորեցնել լինել ուշադիր, ճանապարհն անցնել միայն մեծի հետ՝ ձեռքը բռնած. «Չի՛ կարելի անցնել ճանապարհը կարմիր լույսի դեպքում:	**Պարապմունք 8 Զգու՛յշ՝ ճանապարհ է:** Ամրապնդել գիտելիքները տրանսպորտի մասին: Սովորեցնել՝ ճանապարհին շարժվելու կանոնները (ճանապարհին չշեղվել, քայլել միայն մեծահասակի հետ՝ ձեռքը բռնած). լուսացույցը կարմիր լույսի դեպքում արգելում է անցնել, իսկ կանաչի դեպքում՝ թույլատրում:	Խաղ-բեմականացում՝ «Ինչպե՞ս էր գազանների մեքենան ճոճվում»: Դիդակտիկ խաղ՝ «Թույլատրվում է, չի թույլատրվում»:	
	III	Զարգացնել երեխաների դիտունակությունը, կարողություն՝ գնահատելու ճանապարհի վրա շարժումը:		Մեքենաների ընթացքի դիտում: Շարժախաղ՝ «Ճնճղուկները և ավտոմեքենան»:	
	IV	Սովորեցնել լինել ուշադիր, ճանապարհն անցնել միայն մեծի հետ՝ ձեռքը բռնած. «Չի՛ կարելի անցնել ճանապարհը կարմիր լույսի դեպքում»:		Ավագ խմբի երեխաների խաղի դիտում:	Նկարչություն՝ «Ճանապարհ մեքենաների համար»

Մայիս	I	Ամրապնդել ճանապարհի վերաբերյալ գիտելիքները և ճանապարհային վարքի կանոնների իմացությունը:	**Պարապմունք 9** /ամփոփիչ/ **Թույլատրվում է, արգելվում է** Ամրապնդել երեխաների գիտելիքները ճանապարհային վարքի կանոնների վերաբերյալ՝ օգտագործելով սյուժետային նկարներ: Կրկնել լուսացույցի, տրանսպորտային միջոցների վերաբերյալ երեխաներին հայտնի ոտանավորները, հանելուկները: Առաջարկել երեխաներին՝ պատմել ճանապարհին պատահած այն դեպքերը, երբ որևէ մեկը դրսևորել է իրեն ճանապարհային երթևեկության կանոնները պահպանելու կամ խախտելու մասին:	Խաղի դիտում՝ «Վարորդ»: Կառուցողական նյութերով պարապմունք՝ «Տրոլեյբուս»:	Խաղային իրավիճակ «Գուշակի՛ր ձայնից» Նպատակը Սովորեցնել տարբերել մեքենաների ձայները, (երաժշտության դաստիարակ)
	II	Շարունակել աշխատանքը՝ լուսացույցի նշանակության վերաբերյալ երեխաների գիտելիքների ամրակայման ուղղությամբ:		Դիդակտիկ խաղ՝ «Թույլատրվում է, չի թույլատրվում», «Հավաքի՛ր լուսացույց»:	
	III	Ամրապնդել գիտելիքները՝ ուսումնասիրված տրանսպորտի վերաբերյալ:		Կառուցողական նյութերով պարապմունք՝ «Ավտոբուս»: Խաղ՝ տրանսպորտի հրապարակում: Հեծանվի վարում:	Հաղորդակցական իրավիճակ «Գույն և ձև»
	IV	Ամրապնդել երեխաների գիտելիքները ճանապարհային վարքի կանոնների պահպանման մասին:		Խաղ՝ տրանսպորտի հրապարակում:	Դիդակտիկ խաղ՝ «Գտի՛ր քո գույնը»: Նպատակը՝ ամրապնդել առարկաների խմբի մեջ կանաչ և կարմիր առարկաները տարբերելու կարողությունները:

ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Կյանքի երրորդ տարին ակտիվ խոսքի զարգացման շրջան է: Երեխան խոսում է ռեժիմային բոլոր պահերի ընթացքում, խաղային գործողությունները զուգակցում խոսքով: Այս տարիքում դրվում են երեխայի վարքագծի կայունացման հիմքերը, ձևավորվում հոգեկան գործընթացները: 2-3 տարեկան երեխայի համար բնորոշ է առարկայական, պատկերային մտածողությունը: Սովորաբար նա ձեռք է բերում խոսքի զարգացման որոշակի մակարդակ: Շատ երեխաներ կարողանում են ճիշտ արտահայտել մայրենի լեզվի հնչյունները, կարգավորել առոգանությունը, ձայնի ուժգնությունը, արտահայտել ուրախություն, զարմանք և այլն: Այս տարիքում հարստանում է երեխայի ակտիվ բառապաշարը, կարևորվում են բառերի որակային հատկանիշները: Որոշակիորեն քերականացվում է երեխայի խոսքը, կարողանում է կազմել պարզ համադասական նախադասություններ, զարգանում է երկխոսական կարողությունը: Որոշ երեխաներ կարողանում են հորինել և ներկայացնել փոքրիկ պատմություններ, առանձնացնել առարկաների և երևույթների հատկանիշներ ցույց տվող բառերը: Կարևոր է երեխաներին սովորեցնել հուզական և խոսքային հաղորդակցման մեջ մտնել հասակակիցների և անծանոթ մարդկանց հետ:

Տարիքային այս փուլում երեխայի խոսքի զարգացումն ընթանում է երկու ուղղությամբ՝ խոսքի իմաստային նշանակության հետագա զարգացում և ակտիվ խոսքի զարգացում: Այս խնդիրները լուծվում են գործունեության ընթացքում՝ դաստիարակի հետ հուզական, խոսքային շփման և երեխաների ակտիվ գործողությունների զուգակցմամբ: Երեք տարեկանում երեխան արդեն ընկալում է իրեն ծանոթ առարկաների նշանակությունը, որակներն ու հատկանիշներն արտահայտող բառերը: Համակարգված ուսուցման արդյունքում երեխաները սկսում են նկատել կրկնվող երևույթների պատճառահետևանքային կապերը /ձյուն է գալիս, որովհետև ձմեռ է, ցուրտ է, պետք է տաք հագնվել/: Հետզհետե յուրացնելով բառի ընդհանրացված իմաստը՝ երեխան աստիճանաբար սովորում է խմբավորել առարկաները, որոնք կարելի է անվանել նույն բառով, օրինակ՝ խաղալիք, կենդանի, միրգ և այլն: Ընկալելով մեծահասակի խոսքը՝ երեխան շրջապատող միջավայրի վերաբերյալ գիտելիքներ է ստանում ոչ միայն անմիջական, զննական ճանապարհով, այլև բացատրությունների, հանձնարարությունների միջոցով: Այս տարիքում երեխաները հետաքրքրությամբ են ունկնդրում պատմվածքները, հեքիաթները, կարողանում են օգտվել խոսքի մասերից, ինչպես՝ գոյականներից, այնպես էլ բայերից՝ փորձելով ճիշտ ներկայացնել ժամանակը:

Պարապմունքների ընթացքում և պարապմունքներից դուրս բանավոր խոսքի զարգացման հիմքում երեխան կարողանում է սեփական մտքերն արտահայտելիս ընտրել համապատասխան բառեր: Հարկ է խրախուսել երեխայի խոսելու, խոսակցությունը շարունակելու, հաղորդակցվելու ցանկությունները:

Ծրագրի «Խոսքի զարգացում» բաժինը ներառում է ուսումնական տարվա ընթացքում երեխաների հետ տարվող խոսքի զարգացման գործընթացը մի քանի բաղադրիչներով.

Զարգացնող խոսքային միջավայր: Այստեղ հստակեցված են այն պայմաններն ու միջոցները, որոնք նպաստում են երեխայի մեջ հետաքրքրության առաջացմանը խոսքի նկատմամբ: Բավարարվում է երեխայի պահանջը առարկաների, երևույթների, իրադարձությունների մասին տեղեկություններ ստանալու վերաբերյալ, և իրականանում է անկաշկանդ շփում հասակակիցների ու դաստիարակի հետ:

Բառապաշարի զարգացում: Այն նպատակուղղված է երեխայի խոսքի ընկալմանը, բառապաշարի ակտիվացմանը և առարկաները բնութագրող հատկանիշների տարբերակմանը:

Խոսքի հնչյունային կուլտուրայի զարգացում: Այս բաղադրիչով առանձնացվում են երկու ուղղություններ՝ ճիշտ հնչարտաբերում և խոսքային լսողության զարգացում, որոնք նպաստում են երեխաների կողմից մայրենի լեզվի հնչյունների յուրացմանը:

Խոսքի քերականական կառուցվածքի ձևավորում: Այս բաղադրիչն ուղղված է երեխաների խոսքում գոյական անունների ակտիվ կիրառմանը, պարզ, ընդարձակ նախադասություններ կազմելու կարողության ձևավորմանը, ինչպես նաև նախադասության մեջ հարցական բառերի օգտագործմանը:

Երեխաների կապակցված խոսքի զարգացման հիմքում ընկած են հասակակիցների հետ խոսքային հաղորդակցման պահանջի ձևավորումը, մենախոսության և երկխոսության զարգացումը:

Զարգացնող խոսքային միջավայր

Խոսքի ակտիվացմանը նպաստում է մանկավարժական պահանջներին համապատասխան զարգացնող խոսքային միջավայրը: Այն օժանդակում է երեխաների խոսքի՝ որպես հաղորդակցման միջոցի կատարելագործմանը: Երեխաներին տալով տարբեր հանձնարարություններ, դաստիարակը օգնում է նրանց ակտիվ խոսքի միջոցով հաղորդակցվել հասակակիցների և մեծահասակների հետ, օրինակ՝ «Իմացի՛ր մորաքույր Աննայից», «Զգուշացրո՛ւ Արամին», «Խնդրի՛ր ընկերոջդ» և այլն:

Խոսքի զարգացման բոլոր կողմերի ուղղությամբ պետք է աշխատանք տանել ոչ միայն պարապմունքների, այլև գործունեության տարբեր ձևերի կազմակերպման ընթացքում (խոսքային, խաղային, երաժշտական, կերպարվեստային գործունեություն, աշխատանքային տարրական հանձնարարությունների կատարում):

Ինքնուրույն դիտման համար երեխաներին առաջարկվում են նկարներ, խաղալիքներ, տիկնիկներ, նկարազարդ գրքեր, առարկաներ, լարովի խաղալիքներ: Պահանջվում է մատչելի և հուզականորեն պատմել այդ առարկաների, ինչպես նաև հետաքրքիր իրադարձությունների ու իրավիճակների մասին:

Ինքնուրույնության զարգացման նպատակով հարկավոր է երեխաներին սովորեցնել ուշադիր լսել դաստիարակի պատմածը, նպաստել նրանց բանավոր խոսքի զարգացմանը:

Բառապաշարի զարգացում

Բառապաշարի զարգացումն ընկալվում է որպես բառերի քանակական կուտակման և դրանց սոցիալական կիրառելիության երկարատև գործընթաց: Բառն ապահովում է շփման բովանդակությունը, իսկ ազատ բանավոր խոսքը հիմնվում է բառապաշարի տիրապետման վրա:

Շրջակա միջավայրում երեխաների կողմնորոշման ունակության զարգացման հիման վրա անհրաժեշտ է ակտիվացնել բառապաշարը և նպաստել խոսքի ընկալմանը:

Բառապաշարի ակտիվացման խնդիրներն են.

• կարողանալ դաստիարակի խոսքային ցուցումների հիման վրա ըստ անվան, գույնի և չափի գտնել անհրաժեշտ առարկաները /«Մեր թխվածքի համար նախատեսված ափսեն», «Վերցրո՛ւ կարմիր մատիտը», «Մի երգ երգիր փոքրիկ արջուկի համար»/, անվանել դրանց գտնվելու վայրը /«Սունկը դրված է վերևի դարակին, բարձր է»/, ցուցադրել մարդկանց և կենդանիների շարժումներ /«Ցու՛յց տուր, ինչպես են ջրում ցնցուղով», «Քայլի՛ր, ինչպես արջուկը»/ և այլն:

Երեխաների բառապաշարը հարստացնել.

• խաղալիքների անուններով.

• անձնական հիգիենայի պարագաներ ցույց տվող գոյականներով /սրբիչ, ատամի խոզանակ, սանր, թաշկինակ և այլն/,

• հագուստի, կոշիկների, սպասքի, կահույքի, անկողնային պարագաների անվանումներով /ծածկոց, բարձ, վերմակ, սավան, գիշերազգեստ և այլն /,

• տրանսպորտային միջոցների անվանումներ /մեքենա, ավտոբուս / և այլն,

• բանջարեղենի, մրգի, ընտանի կենդանիների և նրանց ձագերի անվանումներով /կատու-փիսիկ, հավ-ճուտիկ, ոչխար-գառնուկ և այլն/:

• գործողություն ցույց տվող բառերով /մաքրել, լվանալ, արդուկել, բուժել, ջրել և այլն /,

• հակառակ գործողություններ ցույց տվող բառերով / բացել-փակել, հանել-հագնել, վերցնել-դնել և այլն /,

• գործողություններ, որոնք բնութագրում են մարդկանց փոխհարաբերությունները /օգնել, ցանկանալ, նվիրել, գրկել և այլն/, նրանց հուզական վիճակը /լացել, ծիծաղել, ուրախանալ, նեղանալ / և այլն,

• առարկայի գույնը, չափը, համը, ջերմաստիճանը բնութագրող ածականներով /կարմիր, կապույտ, քաղցր, թթու, սառը, տաք և այլն/,

• օժանդակել յուրացրած բառերի կիրառմանը առօրյա կյանքում:

Խոսքի հնչյունային կուլտուրայի զարգացում

Տարիքային այս փուլում կարևորվում է ճիշտ հնչարտաբերումը, որը մեծ մասամբ պայմանավորված է բառի կառուցվածքով: Երեխան միևնույն հնչյունը մի համակարգում արտաբերում է, մյուսում՝ աղավաղում: Ճիշտ արտասանության ուսուցումը տարիքային այս խմբում կազմում է մայրենի լեզվի պարապմունքների կարևոր մասը: Քանի որ լեզվի հնչյունային համակարգի յուրացումը կապված է հնչարտաբերման օրգանների համակարգի զարգացման և շնչառության հետ, ապա արտասանական թերությունների վերացման աշխատանքն իրականացվում է երեք ուղղությամբ՝ տարբեր խաղերի միջոցով խոսքային ապարատի վարժեցում, խոսքային լսողության, խոսքային շնչառության զարգացում. վարժությունները կատարվում են խաղային հնարներով:

Երկուսից երեք տարեկան երեխան կարող է ունենալ հնչարտաբերման տարբեր թերություններ: Բնորոշ են հնչյունների ոչ պարզ լինելը և փոփոխությունները, օրինակ՝ Ճ, Ժ, Չ առաջնալեզվային հնչյունները փոխարինվում են առաջնալեզվային Ս, Զ, Ց հնչյուններով: Օրինակ՝ շուն-սուն, ժամ-զամ, չի կարելի-ցի կարելի: Չեն կարողանում արտասանել Ր-ն, Ռ-ն, այն կամ բաց են թողնում, կամ փոխարինում մեկ այլ հնչյունով, օրինակ մկրատ-մկատ, Ռոբերտ-Յոբերտ, փոխարինում են Կ հնչյունները Տ-ով /կատու-տատու և այլն/:

Այս տարիքի երեխայի խոսքային շնչառությունը դեռևս ձևավորված չէ, բնորոշ է ներշնչման հետ համեմատած արտաշնչման երկար տևողությունը: Պետք է անցկացնել խոսքային շնչառությունը վարժեցնող խաղեր, դրանք են՝ թեթև առարկաները փչելով հեռացնելը, պղպջակներ բաց թողնելը և ընդհանրապես փչելու գործողություն կատարելը: Հետևել, որ շնչառությունը կատարվի կրծքավանդակի օգնությամբ:

Անհրաժեշտ է վարժեցնել երեխաներին հստակ հնչարտաբերել առանձին ձայնավորները, կրկնօրինակել մեծահասակների արտաբերած հնչյունները, բառերը և արտահայտությունները:

Անհրաժեշտ է օժանդակել խոսքային ապարատի, շնչառության և ուշադիր լսելու կարողության զարգացմանը:

Խոսքային լսողության զարգացմանը նպաստում են դիդակտիկ խաղերը: Երեխան, առանց նայելու խոսողին, ձայնից գուշակում է, թե ով է: Լսողական ընկալումը հնարավորություն է տալիս երեխային ոչ միայն ընկալելու շրջապատի խոսքը, այլև վերահսկելու սեփական խոսքը:

Անհրաժեշտ է ձևավորել ձայնի բարձրությունը և ուժգնությունը ճիշտ և տեղին օգտագործելու կարողություն:

Արտասանական թերությունների վերացման համար կարևոր են նաև ոտանավորները, խաղ-բեմականացումները և այլն:

Խոսքի քերականական կառուցվածքի ձևավորում

Քերականությունը որպես լեզվի կառույց՝ միավորում է ձևաբանությունը, շարահյուսությունը, բառակազմությունը: Երեխայի կողմից լեզվի քերականական կառույցի յուրացումը մեծ նշանակություն ունի, քանի որ միայն ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ ու հստակ կառուցված խոսքը կարող է հասկանալի լինել խոսակցին և ծառայել հասակակիցների ու մեծահասակների հետ որպես շփման միջոց: Քերականորեն ճիշտ կառուցված խոսքի տիրապետումը մեծ ազդեցություն է ունենում երեխայի մտածողության վրա: Նա սկսում է մտածել ավելի տրամաբանորեն և ճիշտ է կառուցում իր մտքերը: խոսքի քերականական կառուցվածքի ձևավորման խնդիրը համեմատաբար բարդ է. այն լեզվի տրամաբանությունն է, որ ձևավորվում է ողջ նախադպրոցական և ավելի բարձր տարիքում:

Տարիքային այս խմբում անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել ճիշտ օգտագործվել մի քանի անձնական դերանուններից, բայի հրամայական եղանակի և ժամանակի ձևերից, խոսքի մեջ ձևավորել հոգնակի թվի կազմման կարողություն: Սովորեցնել լսել և հասկանալ մեծահասակի խոսքը, կենտրոնացնել ուշադրությունը առարկաների, խաղալիքների, նկարների վրա, հարստացնել երեխաների ակտիվ բառապաշարը գոյականներով, մի քանի գործողություն նշանակող բայերով, ածականներով, ժամանակ ցույց տվող մակբայներով: Հետևել, որպեսզի երեխաները խոսեն հստակ, առանց շտապելու, ձայնի միջին բարձրությամբ: Զարգացնել ոտանավորներ, քառյակներ արտասանելու կարողությունը, հետևել, որպեսզի երեխաները խոսեն մի քանի բառ պարունակող նախադասություններով: Օգնել երեխաներին խոսքի մեջ կիրառել գոյական անուններ, հասկանալ և օգտագործել որոշ կենդանիների ձագերի անունները, նպաստել բառակազմության, պարզ ընդարձակ նախադասություններ կազմելու կարողության ձևավորմանը: Սովորեցնել համաձայնեցնել գոյականը խոսքի մյուս մասերի հետ, օգտագործել բայը անցյալ և ապառնի ժամանակներում, համաձայնեցնել գոյականի թիվը, վարժեցնել երեխաներին՝ օգտագործելու հարցական բառեր: Օրինակ՝ «Ծիտիկը թռա՞վ, մայրիկը եկա՞վ, ի՞նչ եղավ, ո՞վ բերեց» և այլն:

Կապակցված խոսքի զարգացում

Կապակցված խոսքը, համարվելով խոսքային գործունեության առավել բարդ մակարդակ, իր մեջ ներառում է երեխայի ընդհանուր զարգացման բոլոր ձեռքբերումները, մայրենի լեզվին տիրապետումը, հաղորդակցման կուլտուրան և այլն: Կապակցված խոսքի մեջ արտացոլվում են երեխայի տրամաբանությունը, պատկերացումները, բնավորության գծերը՝ նախաձեռնողականությունը, ստեղծագործելու ձգտումը և այլ հատկանիշներ:

Անհրաժեշտ է սովորեցնել հասկանալ մեծահասակների խոսքը, լսել ուսուցողական պատմվածքներ առանց պատկերավոր նյութի առկայության, պատասխա-

նել պարզագույն հարցերի /«Ո՞վ», «Ի՞նչը», «Երբ», «Ի՞նչ է անում»/ և փոքր-ինչ բարդ /«Ի՞նչ էր հագել», «Ի՞նչ էր տանում», «Ո՞ւմ համար էր տանում»/ և այլն: Խթանել երեք տարեկանին մոտ երեխաների ակտիվությունը, երբ նրանք իրենց ցանկությամբ կամ դաստիարակի խնդրանքով պատմում են նկարում պատկերվածը կամ մի պատմություն սեփական փորձից:

Երեխաներին օգնել հաղորդակցվել միմյանց հետ, փորձել հարցերի միջոցով նրանց ներգրավել զրույցի մեջ, օժանդակելով երկխոսության զարգացմանը: Պարզ նկարների ցուցադրման միջոցով նպաստել նախադասություն կազմելու կարողության զարգացմանը: Սովորեցնել օգտվել 3-4 բառից կազմված նախադասություններից՝ օգտագործելով ածականներ և դերանուններ, ունկնդրել և հուզականորեն վերարտադրել ոչ ծավալուն հեքիաթներ, պատմվածքներ, որտեղ արտացոլված են կենդանիների և մարդկանց արարքներ, դիտել գրքերի նկարազարդումներ: Հետևելով երեխայի խոսքին՝ միաժամանակ նրա մեջ հետաքրքրություն առաջացնել շրջապատող աշխարհի երևույթների, իրավիճակների նկատմամբ՝ նպաստելով ծանոթ մեծահասակների հետ տպավորությունները կիսելու պահանջի ձևավորմանը /«Ի՞նչ տեսար, ի՞նչ է եղել, ո՞վ եկավ» և այլն/:

Օժանդակելով երկխոսության զարգացմանը՝ երեխաներին սովորեցնել լսել, հասկանալ տրված հարցը և պատասխանել դրան:

Օգնել երեխաներին բեմադրելու ծանոթ հեքիաթից որևէ հատված:

Ծանոթացում գեղարվեստական գրականությանը

Գեղարվեստական գրականության նմուշներին ծանոթացումը նպաստում է երեխաների աշխարհաճանաչողությանը: Լսելով, արտասանելով, պատմելով՝ երեխան ծանոթանում է ստեղծագործության հերոսներին, փորձում զգալ դրա տրամադրությունը, տարբերակել լավն ու վատը:

Գեղարվեստական ստեղծագործությունների միջոցով անհրաժեշտ է երեխաների մեջ առաջացնել պատմությունը լսելու ցանկություն, հետաքրքրություն գրքի, նկարազարդումների հանդեպ: Այս տարիքում անհրաժեշտ է պարբերաբար կարդալ և պատմել ծրագրով նախատեսված գեղարվեստական ստեղծագործություններ, որոնք նպատակ ունեն՝

- սովորեցնել երեխաներին լսել ազգային, ժողովրդական երգեր, հեքիաթներ, հեղինակային ստեղծագործություններ,
- ընթերցանությունը զուգակցել դիդակտիկ պարագաների, նկարների ցուցադրության և խաղային գործունեության հետ:
- Ընթերցանությունն ուղեկցել խաղալիքի ցուցադրության, սեղանային թատրոնների պերսոնաժների և այլ դիտողական նյութերի միջոցներով, ինչպես նաև ընթերցել առանց դիտողական ուղեկցության:
- Երեխաներին հնարավորություն տալ ավարտելու նախադասությունը կամ բառակապակցությունը:

• Խրախուսել երեխաների՝ մեծահասակի հետ միասին գեղարվեստական ստեղծագործությունն ընթերցելու ցանկությունը:

• Երեխաներին ընդգրկել նկարների դիտման, քննարկման գործընթացին, սովորեցնել անվանել ծանոթ պատկերներն ու առարկաները, հարցեր տալ:

• Երեխաների ուշադրությունը սևեռել խմբի այն անդամների վրա, ովքեր սեփական կամքով ուսումնասիրում են նկարազարդ գիրքեր:

Երեխաներին ընթերցելու, ունկնդրելու և անգիր անելու համար առաջարկվում են հայ և արտասահմանյան մանկագիրների ստեղծագործություններ, խաղիկներ, բանաստեղծություններ, հեքիաթներ, պատմվածքներ, կարճ պատմումներ:

Այս տարիքում խոսքի զարգացումն իրականացվում է, ինչպես գործունեության տարբեր ձևերի, այնպես էլ խաղ-պարապմունքների միջոցով, որոնց տեսակներն են.

• դիդակտիկ խաղերը,

• հնչարտաբերման դիդակտիկ վարժությունները,

• հեքիաթի ունկնդրումը,

• ոտանավորի ունկնդրումը, արտահայտիչ արտասանությունը,

• խաղ-բեմականացումները,

• նկարի դիտումը:

Դիդակտիկ խաղի միջոցով երեխաները ծանոթանում են առարկաների ձևին և հատկանիշներին:

Հնչարտաբերման դիդակտիկ վարժությունները նպաստում են խոսքային շնչառության զարգացմանը, խոսքային լսողության կատարելագործմանը:

Հեքիաթի ունկնդրման, դաստիարակի հետ համատեղ պատմելու միջոցով երեխաները ձեռք են բերում գիտելիքներ մարդկանց ու կենդանիների վերաբերյալ:

Ոտանավորին ծանոթացումը, ունկնդրումը, ուսուցումը նպաստում են ճիշտ հնչարտաբերմանը, վարժեցնում խոսքի արտահայտչականությունը:

Խաղ-բեմականացումներն օգնում են երեխաներին՝ հասկանալու և հիշելու հեքիաթի բովանդակությունը:

Նկարի դիտման միջոցով երեխաները սովորում են վերարտադրել նկարի բովանդակությունը:

Նշված բոլոր միջոցները նպատակամիտված են բանավոր խոսքի զարգացմանը:

Առաջարկվում են բանավոր խոսքի զարգացմանն ուղղված մեթոդական հետևյալ խորհուրդները.

• օգնել երեխաներին՝ խոսքի միջոցով հաղորդակցվել հասակակիցների և մեծահասակների հետ կենցաղում, ինքնուրույն խաղերի ժամանակ,

• սովորեցնել լսել դաստիարակի պատմած փոքրիկ պատմվածքները, հեքիաթները,

• սովորեցնել օգտվել բարեկիրթ վարվեցողության դիմելաձևերից՝ «շնորհակալությու՛ն», «բարև՛ ձեզ» և այլն,

• ստեղծագործական խաղերում խոսքային հաղորդակցման մեջ մտնել հասակակիցների հետ,

• տրամադրել երեխաներին նկարներ, առարկաներ, գրքեր՝ ինքնուրույն դիտումների համար:

Երեխայի խոսքի զարգացումն իրականանում է ծրագրի մյուս բաղադրիչների՝ տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման, երաժշտական դաստիարակության, էկոլոգիական կրթության, ֆիզիկական դաստիարակության և կերպարվեստային գործունեության հետ համատեղ:

Տարեվերջին երեխաները պետք է իմանան և կարողանան՝

• կրկնել մեծահասակի արտահայտած փոքրիկ, այդ թվում նաև՝ հարց և բացականչություն արտահայտողնախադասությունները,

• պատասխանել մեծահասակի հասկանալի հարցերին,

• փոխանակել տեղեկատվություն, հայտնել անհարմարության մասին,

• կենցաղային և խաղային գործողությունները զուգակցել խոսքով, լսել ոչ ընդարձակ պատմություններ առանց ակնառու նյութի,

• օգտագործել խոսքը՝ որպես հասակակիցների հետ շփման միջոց,

• ակտիվ բառապաշարում կիրառել ոչ պակաս, քան 1000-1200 բառ:

ՀԱՎԵԼՎԱԾ N 5

Խոսքի զարգացման պարապմունքների հեռանկարային պլանավորում

Անցկացման ժամանակը		1-ին շաբաթ	2-րդ շաբաթ	3-րդ շաբաթ	4-րդ շաբաթ
Սեպտեմբեր	Թեմա	Ի՞նչ կա մանկապարտեզի տարածքում: Զբոսանք մանկապարտեզի հարակից տարածքում:	Ի՞նչ կա մեր խմբասենյակում Պտույտ խմբասենյակում:	Ո՞վ է խելոք, ո՞վ չարաճճի:	Ա. Բարտո, «Խաղալիքները»
	Նպատակ	Սովորեցնել մասնակցել կոլեկտիվ միջոցառումներին, լսել, հասկանալ և կատարել դաստիարակի խոսքը, առաջադրանքը:	Սովորեցնել՝ մասնակցել կոլեկտիվ միջոցառումների, լսել, հասկանալ և կատարել դաստիարակի խոսքը, առաջադրանքը:	Առաջացնել բարյացակամ վերաբերմունք հասակակիցների հանդեպ, օգնել. -հիշել ընկերների անունները, -հաղթահարել ամաչկոտությունը:	Օգնել երեխաներին հասկանալու, որ առավոտյան մայրիկներից բաժանումը տխրեցնում է թե՛ երեխաներին, թե՛ մայրիկներին: Սովորեցնել նախադասություն, որը կարելի է արտասանել մայրիկներին, հայրիկներին, տատիկներին, պապիկներին հրաժեշտ տալիս:
	Թեմա	Հ. Գալիկյանի «Հեյ աշուն» երգը: Դիդակտիկ խաղ՝ «Հանձնարարություն»: Դիդակտիկ վարժություն՝ «Վերև-ներքև»:	Ռուսական ժողովրդական հեքիաթ՝ «Շաղգամը»: Դիդակտիկ խաղ՝ «Ով ինչ է ուտում», «Ասա՛ Ա»: Դիդակտիկ խաղ՝ «Հանձնարարություն», «Ձիուկներ»:	Հ. Թումանյան, «Ուլիկը», Կ. Դ. Ուշինսկի «Համբերություն ունեցիր»:	Ուտանավորի ընթերցանություն, Ս. Կապուտիկյան «Պարտեզ»:

Հոկտեմբեր	**Նպատակ**	Երեխաների համար կարդալ երգի տեքստը, սովորեցնել. - լսել բանաստեղծության տեսքը, -արտասանել բացականչական նախադասությունները, -կարողանալ շարժվել երգի երաժշտությանը և տեքստին համահունչ, Արտահայտիչ արտասանել ***վերև, ներքև*** բառերը, այդ բառերին համապատասխան՝ դաստիարակի առաջադրանքով կատարել գործողություններ. -կատարելագործել դաստիարակի խոսքը հասկանալու կարողությունը, -զարգացնել առարկաների հետ ինքնուրույն գործողություններ կատարելու և դրանք անվանելու ունակությունները, -օգնել հասկանալու ***վերև, ներքև*** բառերի նշանակությունները:	-Հիշեցնել «Շաղգամը» հեքիաթի բովանդակությունը: Ցանկություն առաջացնել՝ դաստիարակի հետ համատեղ պատմելու հեքիաթը: -Ճշտել գիտելիքներն այն մասին, թե որ կենդանին ինչ է ուտում /մուկը պանիր է ուտում, շունը՝ ոսկոր է կրծում և այլն/: -Խոսքում ակտիվացնել «կրծել», «լակել», «ուտել» բայերի կիրառումը: -Սովորեցնել արտահայտիչ արտասանել «Ա» հնչյունը, վերարտադրել փոքր նախադասություններ: -Սովորեցնել՝ առաջադրանքը մինչև վերջ լսել, հասկանալ այն և կատարել դաստիարակի հանձնարարությունները: Տարբերակել իրար հակառակ գործողությունները/ բարձրանալ-իջնել/: -Արտասանել «Ի» հնչյունը:	-Երեխաների համար կարդալ հեքիաթն ու պատմվածքը առանց դիդակտիկ նյութի: -Վարժեցնել արտահայտիչ արտասանել «Ա» և «Ի» ձայնավոր հնչյունները: -Սովորեցնել դիտել նկարը: -Կատարելագործել պատմվածքն առանց դիդակտիկ նյութի լսելու ունակությունը:	-Երեխաների համար կարդալ բանաստեղծությունը: -Ամրապնդել **Ու** հնչյունի ճիշտ արտասանությունը ինչպես առանձին բառերում, այնպես էլ բառակապակցություններում: Սովորեցնել. - հասկանալ, թե ինչ է պատկերված նկարում, -ընկալել հերոսների փոխհարաբերությունները, պատասխանել հարցերին, -նպաստել խոսքի ակտիվացմանը:

	Թեմա	Ս. Կապուտիկյանի «Լուսիկի կատուն» ոտանավորը, Ա. Բարտո ,«Ո՞վ ինչպես է բղավում», Դիդակտիկ խաղ՝ «Ո՞վ եկավ, ո՞վ գնաց», Դիդակտիկ վարժություն՝ «Քամի»:	Հովի. Թումանյան, «Ծիտը» ոտանավորի ունկնդրում: Դիդակտիկ խաղ՝ «Ես եմ մտածել»: Դիդակտիկ վարժություն և խորանարդիկներով խաղեր:	Կ. Դ. Ուշինսկու մշակմամբ «Գայլն ու այծիկները» հեքիաթի ընթերցում: Խաղ-բեմականացում՝ «Բարի երեկո, մայրիկ»:	Մայրիկն ափսեներն է լվանում/նկարով պատմում/: Սյուժետային նկարի դիտում/դաստիարակի հայեցողությամբ/: Դիդակտիկ վարժություն՝ «Վերև-ներքև, հեռու-մոտիկ»:
Նոյեմբեր	Նպատակ	Երեխաների համար կարդալ ոտանավորը, -կատարելագործել՝ հարցերը հասկանալու, հասակակիցների հետ երկխոսություն վարելու ունակությունները: Զարգացնել ուշադրությունը: Սովորեցնել՝ -անվանել կենդանիներին, որոնց մասին խոսվում են ստեղծագործությունների, - աստիճանաբար բերանից օդը դուրս մղել/խոսքային շնչառությանը նպաստող վարժություն/: Ծանոթացնել ոտանավոր- հանելուկին: Կատարելագործել խոսքային լսողությունը:	Ամրապնդել 2-3 տարբեր խաղալիքների հետ գործողություններ կատարելու և դրանք նախադասությունների միջոցով արտահայտելու կարողությունը: Ծանոթացնել Հովի. Թումանյանի «Ծիտը» ոտանավորին: -Տարբերել և անվանել գույների անվանումները, -Կատարել դաստիարակի հանձնարարությունները/«Արա այսպես»/՝ ուղղված խոսքի ընկալմանը և դրա ակտիվացմանը:	Ծանոթացնել «Գայլն ու այծիկները» հեքիաթի բովանդակությանը: Առաջացնել հեքիաթը խաղալու ցանկություն: Պատմել, թե երեկոյան ինչպես կարելի է դիմավորել մայրիկին, երբ նա վերադառնում է աշխատանքից /կամ այլ հարազատ մարդու/:	Օգնել. -հասկանալու նկարի բովանդակությունը, -դիտման ժամանակ ակտիվացնել խոսքը: Սովորեցնել արտասանել բառեր, նախադասություններ: Սովորեցնել ճիշտ որոշել առարկայի գտնվելու վայրը՝ կախված դրա նշանակությունից: Զարգացնել հիշողությունը:

	Թեմա	Հեքիաթ՝ «Ո՞վ ասաց մյաու» /Վ. Սուտեև/ Հնչարտասանական խաղեր և դիդակտիկ վարժություններ՝ Մ, Պ, Բ հնչյունների կատարելագործման համար: Դիդակտիկ խաղ՝ «Ո՞վ գնաց»:	Հեքիաթ՝ «Ո՞վ ասաց «մյաու»» /Վ. Սուտեև/ Դիդակտիկ վարժություններ՝ ուղղված Ֆ, հնչյունի հստակ արտասանությանը: Դիդակտիկ խաղ՝ «Հեռումոտիկ», հեքիաթի բեմականացում:	Հեքիաթ՝ «Ո՞վ ասաց «մյաու»» /Վ. Սուտեև/: Հովհ. Թումանյան, «Ծիտը» ոտանավորը: Դիդակտիկ խաղ՝ «Ընտրի՛ր փետուրը»:	Հովհ. Թումանյան, «Առաջին ձյուն» ոտանավորի ընթերցանություն, սյուժետային նկարի դիտում/դաստիարակի հայեցողությամբ/, Կ հնչյունի արտասանության դիդակտիկ վարժություն:
Դեկտեմբեր	Նպատակ	Ձևավորել մ-մի, պ-պի, բ-բի հնչյունակապակցությունները մաքուր արտասանելու ունակություն, -տարբերակել արտասանությամբ իրար մոտ հնչյունները, -կատարելագործել հիշողությունը և ուշադրությունը: Ծանոթացնել հեքիաթի բովանդակությանը /կարդալ այն զգացմունքային, արտահայտիչ, որպեսզի երեխաները հեքիաթի բովանդակությունից բավականություն ստանան/:	Աշխատել բավականություն պարգևել երեխաներին՝ ծանոթ հեքիաթի ունկնդրումից: Ուշադրությունը կենտրոնացնել շնիկի և մյուս կենդանիների երկխոսությանը: Ամրապնդել հնչարտասանական և ձայնային ապարատը, Ֆ հնչյունի արտասանությունը: Սովորեցնել. -արտասանել հնչյունային կապակցություններ՝ ձայնի տարբեր ելևէջներով, -որոշել առարկաների գտնվելու վայրը/հեռու-մոտիկ/, խոսքում կիրառել համապատասխան բառեր:	Սովորեցնել. -դիտել նկարներ և գրքերի նկարազարդումներ, -պատմել նկարներն ուշադիր դիտող ընկերների մասին: Կրկնել «Ծիտը» ոտանավորը: Սովորեցնել. տարբերել և անվանել գույները՝ կարմիր, դեղին,կանաչ, -դաստիարակի հետևից կրկնել նախադասությունները:	Սովորեցնել. -դիտել նկարը, ուրախանալ պատկերվածով - հարցերին պատասխանել ըստ բովանդակության, տարրական եզրակացություններ կատարել -ճիշտ և արտահայտիչ արտասանել «Կ» հնչյունը, - նպաստել ձայնային ապարատի զարգացմանը /հնչյուններն արտասանել տարբեր տոնայնությամբ/, - ակտիվացնել բառապաշարը: Ծանոթացնել գեղարվեստական ստեղծագործության բովանդակությանը /ընթերցել արտահայտիչ, զգացմունքային/:

	Թեմա	«Երեք արջի հեքիաթը», Լ. Ն. Տոլստոյ, Դիդակտիկ խաղ՝ «Հիմա ձմեռ է», «Ո՞վ կանչեց»:	Որտե՞ղ և ինչպես է ապրում իմ տիկնիկը/խաղալիքը/: Պատմում առանց դիտողական նյութի: Դիդակտիկ խաղ՝ «Հարդարենք տիկնիկի սենյակը»:	Ծանոթ հեքիաթներ, Գ.Գեղունի, «Ծիտիկը» Խոսքի հնչյունային կուլտուրայի կատարելագործման վարժություններ:	Կենդանիներն ու ձագուկները: Դիդակտիկ խաղ՝ «Ո՞ւմ մայրիկն է, ու՞մ ձագուկն է»:
Հունվար	Նպատակ	Ծանոթացնել Լ. Ն. Տոլստոյի «Երեք արջի հեքիաթը» հեքիաթին: Սովորեցնել ուշադիր լսել և հետևել ծավալուն ստեղծագործություններին: Սովորեցնել. -Տարբերել նմանաձայնությունները, -Ձայնից ճանաչել ընկերներին/խաղ՝ «Ո՞վ կանչեց»/, -Դիտել բաշխիչ նկարներ և բացատրել, թե ինչ է այնտեղ պատկերված:	Զարգացնել. -պատմվածքի բովանդակությունն առանց դիդակտիկ նյութի հասկանալու և ըմբռնելու ունակությունը, -նույն սյուժեն կրճատ և լրիվ տարբերակներով լսելու ունակությունը: Սովորեցնել ճիշտ անվանել կահույքի պարագաները: Սովորեցնել արտահայտիչ արտասանել հնչյունակապակցությունները:	Հիշել ծանոթ հեքիաթները Սովորեցնել. -բեմականացնել ստեղծագործություններից հատվածներ, -մտապահել նոր ոտանավորը: Վարժեցնել «Տ» հնչյունի պարզ և հստակ արտասանությունը: Զարգացնել ձայնային ապարատը:	Սովորեցնել՝ -անվանել ընտանի կենդանիներին և դրանց ձագերին, - նկարագրությամբ գուշակել կենդանիներին: Կրկնել այն նյութը, որը որոշակի դժվարություն է առաջացրել:
	Թեմա	«Արջը և աղջիկը» հեքիաթի ընթերցում: Կազմել պատմում՝ «Ի՞նչպես կերակրեցինք թռչուններին» թեմայով: Վարժեցնել ճիշտ հնչարտաբերման և հնչարտասանական ապարատները:	Հ. Բաբաջանյան «Արան ու շնիկը», Ս.Կապուտիկյան «Մաշան ճաշում է» բանաստեղծությունները: Դիդակտիկ խաղ՝ «Ո՞ւմն է»:	«Արջը և աղջիկը» հեքիաթի ընթերցում: Հեքիաթի նկարազարդումների դիտում: Դիդակտիկ վարժություն՝ «Ի՞նչ եմ արել ես»: Հեքիաթի բեմադրում:	Ս.Մարշակ, «Հեքիաթ հիմար մկնիկի մասին»: Սյուժետային նկարների դիտում:

Փետրվար	Նպատակ	Ծանոթացում «Արջը և աղջիկը» հեքիաթին: Սովորեցնել. -հետևել դաստիարակի պատմումին -ավելացնել բառեր, ավարտել նախադասությունները: Վարժեցնել արտահայտիչ արտասանել Խ հնչյունը ինչպես առանձին, այնպես էլ տառակապակցություններում, բառերում և նախադասություններում:	Ծանոթացնել Ս.Կապուտիկյանի «Մաշան ճաշում է» բանաստեղծությանը: Սովորեցնել. -արտասանել նմանաձայնություններ և բանաստեղծության մեջ հանդիպող ոչ մեծ նախադասություններ, -համաձայնեցնել բառերն ու նախադասությունները, -հետաքրքրություն արթնացնել ծանոթ ստեղծագործության սյուժեի և համատեղ ընթերցանության հանդեպ:	Սովորեցնել ճիշտ անվանել նշանակությամբ իրար հակառակ գործողությունները: Օգնել հիշելու հեքիաթը, ցանկություն առաջացնել վերարտադրելու հեքիաթի հերոսների երկխոսությունները:	Սովորեցնել վերարտադրել նկարի բովանդակությունն առավել լիարժեք և բազմանշանակ:
	Թեմա	«Երեք արջի հեքիաթը». հեքիաթի նկարազարդումների դիտում, սյուժետային նկարների դիտում /դաստիարակի հայեցողությամբ/ Դիդակտիկ խաղ «Ու՞մ նկարն է»:	Հ.Վարդանյան, «Օդաչու» բանաստեղծության ընթերցանություն: Նկարազարդումների դիտում Դիդակտիկ վարժություն՝ «Ի՞նչ եմ ես անում»	Կ. Դ. Ուշինսկու, «Սագեր» պատմվածքը /առանց դիտողական նյութի/: Խաղ-բեկանացում՝ «Ինչպե՞ս էին կենդանիները մեքենայով սլանում»:	Հովհ. Թումանյան, «Փիսոն» բանաստեղծությունը, դիդակտիկ վարժություն՝ «Մի՛ փախիր մեզնից, փիսի՛կ», «Ինչպե՞ս ուրախացնենք արջուկին»:

Մարտ	Նպատակ	Հնարավորություն տալ՝ համոզվելու, որ նկարազարդումների դիտումը հետաքրքիր և օգտակար է /կարելի է շատ նոր բաներ սովորել/: Շարունակել սովորեցնել նախադասությունների մեջ բառերի համաձայնեցումը: Սովորեցնել. -հասկանալ նկարի սյուժեն, -պատասխանել հարցերին և արտահայտել նկարի բովանդակությունը:	Հ.Վարդանյանի «Օդաչու» բանաստեղծության արտահայտիչ արտասանություն: Շարունակել վարժեցնել երեխաներին՝ դիտելու գրքերի նկարազարդումները: Վարժությունների միջոցով խոսքում ակտիվացնել բայերի կիրառումը:	Շարունակել սովորեցնել. -պատմվածքը լսել առանց դիտողական նյութի, -մասնակցել բեմականացումներին: Զարգացնել՝ -դաստիարակի գործողություններին հետևելու, -պարզ և բարդ նախադասություններն ակտիվորեն արտասանելու կարողություն, - սովորեցնել «Է» հնչյունը և «Էյ» տառակապակցությունն արտահայտիչ արտասանել:	Սովորեցնել տարբեր խաղալիքներով խաղալ և կարողանալ զրուցել դրանց հետ, -դաստիարակի հետևից կրկնել և ինքնուրույն հարցեր ուղղել խաղալիքին: Շարունակել սովորեցնել խաղալ և զրուցել խաղալիքների հետ՝ օգտագործելով տարբեր դիմելաձևեր: Հովի. Թումանյանի «Փիսոն» բանաստեղծության արտահայտիչ արտասանություն:
	Թեմա	Ռուսական ժող. հեքիաթ՝ «Արջն ու Մաշան»/Մ.Բուլատովի մշակմամբ/: Հեքիաթի պատմում՝ նկարազարդումների միջոցով:	Գ.Մովսիսյան «Մարթա փիսիկն ու անձեռոցիկները» Դիդակտիկ վարժություն՝ «Որտե՞ղ է հնչում զանգը»:	Մեր սիրելի կենդանիները: Լողացնենք Մարթա տիկնիկին: Նկարի դիտում «Ընտանի կենդանիներ» շարքից: «Մարթա տիկնիկի լոգանքը»:	Դ. Բիսեթի «Դա՜-դա՜-դա՜» հեքիաթը:

Ապրիլ	Դպրոցական	Ծանոթացնել Մ. Բուլատովի մշակմամբ «Արջն ու Մաշան» ռուսական ժող. հեքիաթի բովանդակությանը: Սովորեցնել. -դիտել նկարազարդումները, -բեմադրել մի հատված «Արջն ու Մաշան» հեքիաթից, -հետաքրքրություն առաջացնել բեմականացման նկատմամբ:	Սովորեցնել՝ ուտելու ժամանակ սպասքից, անձեռոցիկից ճիշտ օգտվելու կանոնները: Առաջացնել կարեկից վերաբերմունք խաղալիքի նկատմամբ:	Օգնել տեսնելու մեծ կենդանիների և դրանց ձագերի միջև եղած տարբերությունները: Հարստացնել և ակտիվացնել բառապաշարը, զարգացնել խոսքի արտահայտչականությունը: Օգնել հիշելու և խոսքում կիրառելու հետևյալ առարկաների, դրանց կատարած գործողությունների, հատկանիշների անվանումները. տաշտակ, օճառ, օճառաման, սրբիչ, օճառել, օճառը լվանալ, տաք, գոլ և սառը ջուր: Ցույց տալ, թե ինչպես կարելի է հետաքրքրքիր խաղալ տիկնիկով:	Համակրանք առաջացնել փոքրիկ բադիկի հանդեպ, որը նոր է բացահայտում աշխարհը: Վարժեցնել հնչյունակապակցությունների արտասանությունը: Օգնել տարբեր հնարներով հիշել նախորդ պարապմունքներում պատմված հեքիաթների բովանդակությունը՝ դրդելով դրանք ինքուրույն վերապատմելու նախաձեռնությանը: Դ.Աղայան. «Աղունակ» բանաստեղծության արտահայտիչ արտասանություն:
Մայիս	Թեմա	Ռուսական ժող. հեքիաթ «Գնդիկ Բոքոնիկ»: Նկարի դիտում՝ «երեխաները կերակրում են հավերին և ճուտիկներին»: Դիդակտիկ խաղ՝ «Մենք ճուտիկներ ենք, համերաշխ ընկերներ ենք»:	Գ.Մովսիսյանի «Ո՞վ է մեզնից գեղեցիկ» պատմվածքը, Հ.Բաբաջանյանի «Գարուն» բանաստեղծությունը: Դիդակտիկ խաղ՝ «Այդպե՞ս է, թե՝ ոչ»:	Շ.Պերոյի «Կարմրիկը» հեքիաթը, Ս.Կապուտիկյանի «Արդեն մեծ եմ» բանաստեղծությունը: Դիդակտիկ խաղ «Այդպե՞ս է, թե՝ ոչ»:	«Բարև՛, գարուն՛»: Գարնան վերաբերյալ հայտնի ստեղծագործությունների ընթերցում, պատմում:

Երեխաների խոսքի զարգացման պարապմունքների կազմակերպման համար, ինչպես նաև առօրյա գործունեության ընթացքում առաջարկվում է գեղարվեստական ստեղծագործությունների հետևյալ ցանկը՝ ըստ եռամսյակների: Այն ուղեցույց է դաստիարակի համար և ենթակա է լրացման՝ ելնելով երեխաների զարգացման մակարդակից և իրականացվող միջոցառումների բովանդակությունից:

Առաջին եռամսյակ
Սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր

Երեխաներին պատմելու և ընթերցելու համար
1. Ռուսական ժողովրդական հեքիաթ՝ «Շաղգամը»
2. Հովհ. Թումանյան, «Ուլիկը»
3. Կ. Դ. Ուշինսկի, «Համբերություն ունեցիր»
4. Կ. Դ. Ուշինսկի, «Գայլն ու այծիկները»
5. Հոբոս Ապեր, «Ծիածան»

Ոտանավորի ընթերցանություն/ունկնդրում/
1. Ս. Կապուտիկյան, «Պարտեզ»
2. Ա. Բարտո, «Խաղալիքները»
3. Հովհ. Թումանյան, «Ծիտը»
4. Պ. Խաչատրյան, «Ջրում»
5. Ս. Կապուտիկյան, «Լուսիկի կատուն»
6. Ա. Բարտո, «Ով ինչպես է բղավում»
7. Հ. Հայրապետյան, «Աշնան շուկա»

Երկրորդ եռամսյակ
Դեկտեմբեր, հունվար, փետրվար

Երեխաներին պատմելու և ընթերցելու համար
1. Լ. Ն. Տոլստոյ, «Երեք արջի հեքիաթը»
2. Վ. Սուտեև, «Ո՞վ ասաց մյաու»
3. Ս. Մարշակ, «Հեքիաթ հիմար մկնիկի մասին»

Ոտանավորի ունկնդրում,արտահայտիչ արտասանություն
1. Հովհ. Թումանյան, «Առաջին ձյունը»
2. Գ. Գեղունի, «Ծիտիկը»
3. Հ. Բաբաջանյան, «Արան ու շնիկը»
4. Ս. Կապուտիկյան «Մաշան ճաշում է»
5. Գ. Գեղունի, «Ծափ, ծափ արա»
6. Հ. Հայրապետյան, «Տոնածառ»

Երրորդ եռամսյակ
Մարտ, ապրիլ, մայիս

Երեխաներին պատմելու և ընթերցելու համար

1. Կ. Դ. Ուշինսկի, «Սագեր»
2. Դ. Բիսեթ, «Ղա՜- ղա՜ - ղա՜» հեքիաթը
3. Գ. Մովսիսյան, «Մարթա փիսիկն ու անձեռոցիկները»
4. Ռուսական ժողովրդական հեքիաթ, «Արջն ու Մաշան», Մ. Բոիլատովի մշակմամբ
5. Ռուսական ժողովրդական հեքիաթ, «Գնդիկ բոքոնիկը»
6. Գ. Մովսիսյան, «Ո՞վ է մեզնից գեղեցիկ»
7. Շ. Պերո, «Կարմրիկը»
8. Հ. Հովնաթան, «Ձնծաղիկ»
9. Ա.Դարբնի, «Սագը և ագռավը»

Ոտանավորի ուսուցում/արտահայտիչ արտասանություն/

1. Հ. Վարդանյան, «Օդաչու»
2. Հովհ. Թումանյան, «Փիսո»
3. Ս. Կապուտիկյան, «Արդեն մեծ եմ»
4. Հ. Բաբաջանյան, «Գարուն»
5. Ղ.Աղայան, «Աղունակ», «Կաչաղակ»

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Քանակ

• Զարգացնել՝ շրջապատող միջավայրում «մեկ» և «շատ» առարկաներ տեսնելու, առանձնացնելու, «որքա՞ն է» հարցին պատասխանելու կարողություն:

• Ձևավորել՝ «մեկ» և «շատ» առարկաները լսողությամբ և շարժումներով ընկալելու հմտություն:

• Շրջապատում, նկարներում և գրքերում դիտել և մեծի օգնությամբ անվանել «մեկ» և «շատ» առարկաներ. հետևել, որ բառը ճիշտ հասկանան և իմաստով տեղին օգտագործեն:

Մեծություն

• Ձևավորել՝ առարկաները և դրանց պատկերները համեմատելու կարողություն:

• Երեխաների ուշադրությունը հրավիրել հակադիր չափերի առարկաների և խոսքի մեջ դրանց նշանակության վրա /մեծ տուն, փոքր տնակ, մեծ գնդակ, փոքր գնդակ, մեծ տիկնիկ, փոքր տիկնիկ/:

• Հաղորդել առարկաների գույների, քանակի, մեծության և տարածական կողմնորոշումների մասին տեղեկություններ:

Ձև

• Սովորեցնել տարբերել առարկաներն ըստ ձևի և անվանել դրանք /խորանարդ, աղյուս, գունդ/:

Կողմնորոշում տարածության մեջ

• Զարգացնել՝ առարկան, տարածության մեջ որոնելու և գտնելու տարածական կողմնորոշումներ:

• Վարժեցնել երեխաներին՝ հավաքովի խաղալիքներով գործողություններ կատարելու գործողությունների մեջ:

• Առօրյա կյանքում, զբոսանքների ժամանակ դիտել շրջապատի գույները, առարկաների չափերը /ծառեր, ծաղիկներ, տերևներ/:

• Օժանդակել, որպեսզի երեխաները կուտակեն գործնական յուրացման փորձ շրջակա միջավայրում /խմբի տարածքում, մանկապարտեզի հողամասում/:

• Սովորեցնել գտնել խաղասենյակը, ննջասենյակը, լվացարանը, հանդերձասենյակը:

• Ընդլայնել երեխաների գիտելիքները սեփական մարմնի մասերի անվանումների և կողմնորոշման վերաբերյալ:

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

- Առարկաներով, որոշակի հերթականությամբ, կատարել ձեռքի շարժման գործողություններ:
- Միատեսակ, հավասար և անհավասար քանակի առարկաներով կազմել խմբեր:
- Տարբերել «մեկ», «շատ» առարկաները:
- Հետազոտել, համեմատել և խմբավորել առարկաները՝ ըստ մեկ հատկանիշի (գույն, մեծություն):
- Տարբերել և անվանել մեծ և փոքր առարկաները:
- Ճանաչել խորանարդն ու գունդը:
- Համեմատել առարկան և դրա պատկերը:
- Որոշել առարկայի դիրքը տարածության մեջ, շարժվել դաստիարակի շարժման ուղղությամբ:
- Միաժամանակ մասնակցել դաստիարակի կատարած գործողություններին:

Ծրագրում որոշարկված է երեխաների ճանաչողական ընդունակությունների զարգացման, զգայական փորձի կուտակման ուղղությամբ տարվող խնդիրները, և կոնկրետացված է առաջին անգամ ծրագրում տեղ գտած մաթեմատիկական պատկերացումների ու ծնողների հետ կազմակերպվող աշխատանքների հաջորդականությունը:

2-3 տարեկան երեխաների ճանաչողական և մաթեմատիկական պատկերացումների խնդիրները

1. ԸՆԴԼԱՅՆԵԼ ԵՎ ՀԱՐՍՏԱՑՆԵԼ ՇՐՋԱՊԱՏԻ ՄԱՍԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

ՏԱՆԸ

- Ծանոթացանել կենդանիների մարմնի մասերին՝ գլուխ, ականջներ, աչքեր, թաթեր, պոչ, տվյալ կենդանուն համապատասխան ձայնին, շարժումներին:
- Ձևավորել բնակարանում եղած առարկաների քանակը, մեծությունը, գույնը տեսնելու, հասկանալու և անվանելու հմտությունը:
- Սովորեցնել երեխաներին կողմնորոշվել իրենց շրջապատող տարածության մեջ:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

- Ընդլայնել և խորացնել շրջապատող առարկաների, դրանց հատկանիշների հետազոտման և ձեքերի շարժման հետ կապված գործողությունների մասին երեխաների ունեցած պատկերացումները:

• Ստեղծել երեխայի տարիքին համապատասխան բազմաբովանդակ և հաճախակի փոփոխվող զարգացնող միջավայր:

• Նպաստել մարմնի մասերի տարբերակմանն ու տարածական դասավորությանը՝ գլուխ, ձեռքեր, մատներ, ոտքեր, մեջք, դեմքի վրա ցույց տալ և անվանել աչքերը, բերանը, լեզուն, շրթունքները, քիթը, գլխի վրա՝ մազերը, ականջները:

• Ձևավորել առարկաներն ըստ **մեկ** հատկանիշի՝ մեծության կամ գույնի խմբավորելու հմտություն:

2. ՀԱՐՍՏԱՑՆԵԼ ԵՐԵԽԱՅԻ ԶԳԱՅԱԿԱՆ ՓՈՐՁԸ ԵՎ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՐԶ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

ՏԱՆԸ

• Ընդլայնել զգայական փորձը, երեխաների ընկալմանը հասանելի առարկայական միջավայրը՝ նպաստելով երեխայի տեսողական, լսողության և շոշափելիքի զարգացմանը:

• Նպաստել գույնի՝ կարմիր, կապույտ, դեղին, կանաչ, ձևի՝ խորանարդ, գունդ, մեծության՝ մեծ, փոքր, տարածական՝ առաջ, հետև, վերև, ներքև պատկերացումների ընդլայնմանը:

• Խթանել առարկան ինքնուրույն հետազոտելու գործողությունները:

• Զարգացնել ձեռքի շարժումների օգնությամբ առարկաների հետ կատարվող զգայական գործողությունները՝ բացել-փակել, հանել-հագցնել, գլորել և այլն:

• Խթանել շրջապատի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունը, տրված հարցերին պատասխանելու ձգտումը:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

• Զարգացնել շրջապատող միջավայրում «մեկ» և «շատ» առարկաներ տեսնելու, առանձնացնելու «որքա՞ն է» հարցին պատասխանելու հմտությունը:

• Զարգացնել ***մեկ*** և ***շատ*** առարկաները լսողությամբ և շարժումներով ընկալելու հմտությունը:

• Շրջապատում, նկարներում և գրքերում դիտել և մեծի օգնությամբ անվանել «մեկ» և «շատ» առարկաներ: Հետևել, որ բառը ճիշտ հասկանան և իմաստով տեղին օգտագործեն:

• Ձևավորել՝ առարկաները և դրանց պատկերները համեմատելու հմտությունը:

• Ձևավորել առարկաների գույների, քանակի, մեծության և տարածական կողմնորոշումների մասին տեղեկություններ:

• Զարգացնել կարողություն՝ առարկան տարածության մեջ որոնելու և գտնելու: Հմտացնել երեխաներին գործողություններ կատարել հավաքովի խաղալիքների հետ:

• Առօրյա կյանքում, զբոսանքների ժամանակ ստեղծված զգացմունքային իրավիճակներում դիտել շրջապատի գույները, առարկաների չափերը /ծառեր, ծաղիկներ, տերևներ/:

Ծրագրով տարրական մաթեմատիկական պատկերացումների նպատակադրված ուսուցում չի նախատեսվում, և այդ է պատճառը, որ ծրագրային խնդիրները ձևակերպված են «**ձևավորել», «զարգացնել», «նպաստել»** սկզբունքով:

Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերից:

ՀԱՎԵԼՎԱԾ N6

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԾՐԱԳՐԻ ԹԵՄԱՏԻԿ ԲԱԺԽՈՒՄԸ՝ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ ԵՎ ՇԱԲԱԹՆԵՐԻ

ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

Երեխաների զարգացման այս շրջանը նախադպրոցական հաստատության միջավայրին հարմարվելու շրջան է: Դաստիարակի հիմնական նպատակն է շփման եզրեր գտնել և ճիշտ միջանձնային փոխհարաբերություններ հաստատել յուրաքանչյուր երեխայի հետ:

Տարիքային այս խմբում հետազոտվում են երեխայի խոսքն ու մտածողությունը, կարողություններն ու ունակությունները, և ըստ այդմ կազմակերպվում է ուսումնադաստիարակչական գործընթաց՝ հիմքում ունենալով երեխաների անհատական, հոգեբանական առանձնահատկությունները, մտածողության զարգացման օրինաչափությունները;

Երեխաների տարրական մաթեմատիկական պատկերացումների և ինքնուրույն գործունեության ձևավորման համար կարևորվում է զարգացնող միջավայրի ստեղծումը: Այն պետք է հագեցված լինի՝

• դիդակտիկ նյութերով՝ սեղանային և կառուցողական նյութեր, սյուժետային խաղալիքներ, նկարներ, ամանեղեն և այլն,

• բնական նյութերով՝ կոներ, խխունջներ, քարեր և այլն,

• բացվող և փակվող տարբեր նպատակների ծառայող տուփեր, հին պայուսակներ, տարաներ և այլն,

• տարվա տարբեր եղանակներին ավազով և ձյունով բակում խաղալու անհրաժեշտ իրեր՝ փայտյա առարկաներ, դույլեր, խաղալիքներ, կաղապարներ և այլն:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

Նախապատրաստական շրջան՝ հարմարման փուլ

Ձևավորել շրջապատի նկատմամբ կողմնորոշման ակտիվություն: Ծանոթացնել նախադպրոցական հաստատության խմբասենյակներին՝ աշխատանքային, խաղային կենտրոններին և նշել յուրաքանչյուր կատարվող գործողությունների մասին՝ օգտագործելով խոսքի հետևյալ կառույցները. «Սա խմբասենյակն է, այն մեծ է, կան շատ խաղալիքներ, մենք այստեղ խաղում ենք, կառուցում, սա էլ արվեստի կենտրոնն է, որտեղ նկարում ենք, ծեփում: Սա ննջասենյակն է, այստեղ քնում ենք, իսկ սա հարդարանքի սենյակն է, այստեղ լվացվում ենք, օգտվում ենք սրբիչից, սանրվում ենք: Սա էլ հանդերձարանն է, որտեղ հանվում ենք և հագնվում»: Նույն ձևով ծանոթացնել նաև մարզական և երաժշտական դահլիճներին, հետևել, որ երեխաները ուշադիր լսեն, հետևեն դաստիարակի խոսքին, խրախուսել շրջապատող առարկաների նկատմամբ նրանց հետաքրքրությունը:

ՆՈՅԵՄԲԵՐ

ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. «Գնդակը դի՛ր զամբյուղի մեջ», «Հագցնենք Աննային», «Հավաքի՛ր և հանի՛ր աշտարակը» և այլն:

Ծանոթացնել իրենց հատկացված տարածքին: «Այստեղ մենք խաղում ենք, զբոսնում, այստեղ՝ ավազարկղն է, որտեղ խաղում ենք ավազով: Սա ճոճանակն է, որի վրա մենք ճոճվում ենք, սա տաղավարն է, որտեղ կարելի է նստարանին նստել, հանգստանալ, թաքնվել անձրևից, իսկ այստեղ ծաղկանոցն է, մենք հիանում ենք ծաղիկներով, պահպանում ենք, չենք տրորում»:

Ստեղծել խոսքը հասկանալու նախադրյալներ՝ դաստիարակի ցուցադրումից հետո շրջապատում, խմբասենյակում, զբոսանքի ժամանակ գտնել առարկան:

Երեխաների մեջ առաջացնել հետաքրքրություն՝ դաստիարակից հետո կրկնելու և խոսքի մեջ օգտագործելու մի շարք բառեր:

Զարգացնել երեխայի ձեռքի շարժման հետ կապված առարկային յուրահատուկ գործողություններ կատարելու հմտություն՝ գլորել, բացել, փակել, դնել-հանել, դասավորել:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ
Զարգացնել մարմնի մասերի տարբերակումը, նրանց տարածական դասավորության մասին նրանց պատկերացումները: **Խթանել** բազմատեսակ առարկաների նկատմամբ երեխաների ցուցաբերած հետաքրքրությունը: **Ձևավորել** բառը ճիշտ հասկանալու կարողությունը, տարբերել առարկայի քանակը բնութագրող «շատ» և «մեկ» բառերի իմաստը: **Ծանոթացնել** կարմիր և կապույտ գույներին: **Զարգացնել** տարածության մեջ (վերև, ներքև, առջև, հետև) կողմնորոշվելու հմտությունը: **Պահպանել** երեխաների դրական-հուզական վիճակը խաղ-առաջադրանքների ժամանակ: **Խաղային գործունեություն՝** «Մեկ և շատ», «Ինքնաթիռներ», «Արևային նապաստակ», «Խաղալիքներին հյուր», դիդակտիկ խաղեր՝ «Հրաշալի պարկ», «Ձայներ»:

Խաղ -առաջադրանքների նպատակը 1-ին շաբաթ	**2-րդ շաբաթ**
Ընդլայնել՝ մարմնի մասերն անվանելու, հմտությունը, ցույց տալ գլուխը, դեմքը, ձեռքերը, մեջքը, որովայնը, դեմքի վրա՝ աչքերը, ականջները, բերանը, քիթը: **Պարզել՝** ինչի համար են աչքերը, ականջները և այլն, **Ձևավորել՝** պատկերացումներ «մեկ», «շատ» հասկացությունների վերաբերյալ, նպաստել, որ հասկանան «մեկ քիթ, շատ մազեր» հասկացությունները:	**Զարգացնել՝** Միատեսակ և միագույն առարկաներից, մեկական ավելացնելու ճանապարհով խմբեր ստեղծելու հմտություն՝ սկզբից ընդօրինակելով, ապա բառային ցուցումով: Ցույց տուր մեկ, ապա շատ ավտոմեքենաներ, միաժամանակ օգտագործելով «մեկ», «շատ» բառերը, ձեռքի շարժումների կոորդինացիան (ներդաշնակություն):

3-րդ շաբաթ	4-րդ շաբաթ
Ծանոթացնել՝ կեղանիների մարմնի մասերին, նրանց բնութագրող շարժումներին, արձակած ձայներին: **Աջակցել** երեխաներին՝ ձևավորելու հետաքրքրություն, դիտելու, հետազոտելու, հաշվելու զգայաբար ընկալվող առարկաների քանակը. «Թիթեռը մեկ հատ է, ծաղիկները շատ են», օգնել նրանց՝ կազմել խմբեր: **Զարգացնել** ձեռքով կատարվող գործողությունների կարողություն՝ հանել, դնել տուփի մեջ տարբեր առարկաներ: **Ամրապնդել՝** դիդակտիկ նյութերով աշխատելու հմտությունները:	**Ծանթացնել՝** կարմիր և կապույտ գույներին: **Զարգացնել՝** ըստ գույնի առարկաների խմբեր կազմելու, հարցերին պատասխանելու հմտություն («Ձեզ մոտ քանի՞ դրոշակ կա» /շատ/ (Ի՞նչ գույն ունեն դրանք (կարմիր, կապույտ): **Ձևավորել՝** գնդակը վերև նետելու, հատակին հարվածելու, առաջ գլորելու, հետ գցելու և դաստիարակի շարժման ուղղությամբ շարժվելու հմտություններ:

ՀՈՒՆՎԱՐ Տոնական մթնոլորտում, հիմնականում տոնածառի խաղալիքների օգնությամբ, շարունակել զարգացնել տարբեր գույների առարկաների խմբեր կազմելու կարողություններ, ամրապնդել երեխաների պատկերացումներն առարկայի վերաբերյալ՝ ըստ դրանց հատկանիշների, քանակի և ձևի:
ՓԵՏՐՎԱՐ ***ԾՐԱԳՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ*** • Ամրապնդել՝ «մեկ» և «շատ» հասկացությունները, հասկանալ «որքա՞ն է» բառի իմաստը. • Ընդլայնել առարկաներով և խաղալիքներով կատարվող զգայական գործողությունները. • Ծանոթացնել կանաչ և դեղին գույներին, • Հետազոտել և համեմատել առարկաներն ըստ գույնի, • Ծանոթացնել խորանարդին: **Խաղային գործունեություն.** «Գտի՛ր գույնով», «Գույնզգույն կծիկները», «Որտե՞ղ, ի՞նչ», «Որտե՞ղ է թաքնվել արջը», դիդակտիկ խաղ ***Ընտրիր՝ ըստ չափի*** և այլն:

Խաղ առաջադրանքների նպատակը 1-ին շաբաթ	2-րդ շաբաթ
Ամրապնդել՝ «մեկ» և «շատ» հասկացությունները. **Հմտացնել** երեխաների գործողությունները. հավաքել տարբեր մասերից կազմված խաղալիքներ, առարկաները միացնել, անջատել և մատների ծայրերով աշխատել: **Խմբավորել** առարկաներն ըստ գույնի: **Որոշել** առարկաների դիրքը տարածության մեջ՝ օգտագործելով *տակ, վրա* բառերը:	**Ծանոթացնել** խորանարդին: **Ամրապնդել՝** «որքա՞ն է» հարցին պատասխանելու, շրջապատում տարբեր գույնի խորանարդներ (խաղալիքներ) գտնելու կարողությունը, որոշել ըստ գույնի միատեսակ առարկաների նմանությունն ու տարբերությունը: Առարկաներով որոշակի հերթականությամբ կատարել ձեռքի շարժումներ:

3-րդ շաբաթ	4-րդ շաբաթ
Ձևավորել՝ առարկաների գույների, քանակի և տարածության մասին պատկերացումները: **Ամրապմդել՝** տարբեր գույնի առարկաները ճանաչելու, անվանելու և խմբավորելու հմտությունները («Այստեղ բոլոր գնդակները կարմիր են»): **Ամրապնդել** «տակ», «վրա», «վերև», «ներքև» տարածական հասկացությունները՝ հայելու արտացոլմամբ ստացված «արևային նապաստակի» միջով:	**Զարգացնել՝** «շատ» և «մեկ» հասկացությունները տարբերելու հմտությունը: **Համեմատել՝** տարբեր գույնի, շատ և մեկ առարկաների խմբեր՝ արդյունքը արտահայտել խոսքով: **Խորացնել՝** դեղին և կանաչ գույներից խմբեր կազմելու կարողությունը: **Զարգացնել՝** մատների ծայրերով աշխատելու հմտությունը:

ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ
ՄԱՐՏ

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ
Ամրապնդել «շատ», «մեկ» հասկացությունները, տարածական հասկացությունները և համապատասխան բառերը: Զարգացնել հարցերին պատասխանելու հմտությունը: Ծանոթացնել «մեծ» և «փոքր» հասկացություններին: Զարգացնել առարկաներն ըստ գույնի և մեծության խմբավորելու հմտությունը: Օգտվելով ցուցադրական մեթոդից՝ զարգացնել հավասար խմբեր ստեղծելու հմտությունները: Ծանոթացնել գնդին: Օրինակի և բանավոր խոսքի միջոցով, ըստ գույնի, աշտարակի օղակները դասավորել պահանջված հերթականությամբ, խրախուսել երեխաների հաղորդակցման փորձերը: **Խաղային գործունեություն.** «Մեծ-փոքր», «Այնքան է, որքան», «Հյուրեր», «Գտի՛ր զույգը», «Ի՞նչ կա շրջապատում» և այլ խաղեր:

Խաղ առաջադրանքների նպատակը **1-ին շաբաթ**	**2-րդ շաբաթ**
Զարգացնել՝ շրջապատում թաքնված խաղալիքների տեղերը գտնելու հմտությունը. հասկանալ և պատասխանել «որքա՞ն է» հարցին, օգտագործել «շատ է», «մեկ» բառերը: **Խմբավորել** տարբեր գույնի առարկաները: **Համեմատել** նմանատիպ առարկաները՝ մեծ և փոքր կոճակներ, ափսեներ և այլն:	**Ամրապնդել՝** «շատ», «մեկ» հասկացությունները: **Ընդլայնել** «մեծ», «փոքր» հասկացությունների վերաբերյալ պատկերացումները՝ ներմուծելով պարզ տպագիր նյութեր՝ լեգոներ, խճանկար: **Չնավորել՝** առարկաները ըստ մեծության խմբավորելու կարողությունը՝ օգտվելով բանջարեղենի, մրգերի տեսակներից:

3-րդ շաբաթ	4-րդ շաբաթ
Զարգացնել՝ տարբեր գույնի, բայց նույն քանակի առարկաների խմբերը համեմատելու, դրանց հավասարությունը որոշելու կարողությունը: Այստեղ դեղին դրոշակներն էլ են շատ, կարմիրներն էլ: Օգտագործել «շատ են» արտայտությունը: Ավտոմեքենայի մեջ բոլոր խաղալիքները կանաչ են, նրանք շատ են: Ափսեի մեջ բոլոր խնձորները կարմիր են, շատ են:	**Ծանոթացնել գնդին:** Համեմատել գունդն ու խորանարդը՝ գունդը գլորվում է, խորանարդը՝ ոչ: **Չնավորել** հմտություն՝ խմբավորել առարկաներն ըստ մեծության (տանձերը մեծ են, սալորները՝ փոքր): **Ամրապնդել՝** «մեկ», «շատ» հասկացությունները, նկարներում ցույց տալ «մեկ» և «շատ» առարկաներ՝ մրգեր, բանջարեղեն:

ԱՊՐԻԼ

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ
Ամրապնդել առարկայի մեծության, ձևի և գույնի մասին պատկերացումները. **Ամրապնդել** տարբեր գույնի և մեծության առարկաների՝ քանակով հավասար խմբերը որոշելու հմտությունը, **Զարգացնել** առարկների տարածական դասավորությունը որոշելու կարողությունը. **Ամրապնդել** առարկներն ըստ գույնի, մեծության **խմբավորելու** կարողությունը. **Զարգացնե**լ առարկաները նկարների հետ համապատասխանեցնելու հմտությունը. **Զարգացնել** լսողությամբ և շարժումներով գործողություն կատարելու հմտությունը. **Խաղային գործունեություն_** «Արա՛ այնպես, ինչպես ես կասեմ», «Վերցրո՛ւ և անվանի՛ր», «Պահմտոցի», «Մեկ և շատ ձեռքեր», դիդակտիկ խաղ «Հավաքիր ավտոմեքենա երկրաչափական ձևերից» և այլն:

Խաղ -առաջադրանքների նպատակը 1-ին շաբաթ	*2-րդ շաբաթ*
Ամրապնդել՝ տարբեր գույնի հավասար խմբեր կազմելու հմտությունը. «Կարմիր տուփում էլ մատիտները շատ են, կապույտում էլ»: **Զարգացնել՝** երեխաների զգայական փորձը: Օրինակի և բանավոր խոսքի համաձայն, խմբավորել առարկաները՝ ըստ մեծության, գույնի: **Ամրպնդել՝** առարկաները և նրա պատկերները համեմատելու հմտությունը:	**Զարգացնել** շրջապատող միջավայրում, գրքերում, նկարներում «մեկ» և «շատ» առարկաներ տեսնելու և առանձնացնելու կարողությունը, խրախուսել երեխաների ցուցաբերած հետաքրքրությունը: **Ամրապնդել** առարկան ըստ բանավոր խոսքի՝ տարածության մեջ որոնելու և գտնելու հմտությունը՝ սեղանի վրա, բազմոցի աթոռի տակ:
3-րդ շաբաթ	*4-րդ շաբաթ*
Ամրապնդել պատկերացումները գնդի, նրա գլորվելու մասին: **Ամրապնդել՝** առարկաները համապատասխան նկարների հետ համեմատելու ունակությունը: **Զարգացնել** «մեկ» և «շատ» առարկաները տեսնելու և դրանք ծափերով կամ դոփյուններով արտահայտելու կարողությունը (մեկ ծափ, մեկ առարկա, շատ ծափ՝ շատ առարկաներ):	**Ստեղծել** *մեկ* և *շատ* թվով առարկաների խմբեր և բառերով անվանել դրանց քանակն ու գույնը: Հավաքովի խաղալիքների /ձվիկներ, աշտարակներ, տակառիկներ/ օգնությամբ նպաստել «մեկ» և «շատ» հասկացությունների ամրապնդմանը: **Զարգացնել** տարբեր շարժումներով առարկաների քանակը՝ «մեկ», «շատ», որոշելու ունակություն. կքանստել մեկ անգամ, թռչկոտել շատ անգամ, առաջ թեքվել մեկ անգամ և այլն:

ՍԱՅԻՍ

Նյութի կրնություն: Զբոսանքի ժամանակ, կենցաղում ստեղծել պայմաններ, երեխաների մեջ խաղերի օգնությամբ արթնացնել հետաքրքրություն առարկաների բազմատեսակ գույների, ձևերի և քանակի հանդեպ: Շեշտել, հուշել այն բառերը, որոնք առավել ցայտուն են արտահայտում առարկաների գույնի, մեծության հատկանիշները, ուշադրություն դարձնել բառը ճիշտ հասկանալու, տեղին օգտագործելու վրա:

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

• Ակտիվ մասնակցել միատեսակ առարկաներով հավասար և անհավասար քանակի խմբերի կազմմանը,տարբերել «մեկ», «շատ» առարկաները:

• Դիտել, համեմատել և խմբավորել առարկաները՝ ըստ մեկ հատկանիշի (գույն, մեծություն):

• Տարբերել և անվանել մեծ և փոքր առարկաները:

• Ճանաչել խորանարդն ու գունդը:

• Տեսնել առարկայի դիրքը տարածության մեջ, շարժվել դաստիարակի նշած ուղղությամբ:

• Ընդգրկվել դաստիարակի նախանշած գործողությունների մեջ:

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Նախքան երեխաների հետ աշխատանք սկսելը՝ տարեսկզբին առաջին շաբաթը հարկավոր է նվիրել նրանց հետազոտությանը: Այս ընթացքում պետք է պարզել խմբի յուրաքանչյուր երեխայի անհատականության զարգացումը, բացահայտել շրջապատող առարկաների և նրանց հատկանիշների (գույն, մեծություն) մասին պատկերացումների զարգացման մակարդակը: Որոշել յուրաքանչյուր երեխայի հետ աշխատելու նպատակները, դրանք իրականացնելու միջոցները, մանկավարժական աշխատանքի այն տեմպն ու ռիթմը, որը հարմար է նրա անհատականությանը:

Ժամանակին կատարված հետազոտությունը հնարավորություն կտա ճիշտ տեղեկություններ ունենալ յուրաքանչյուրի հետ արդյունավետ աշխատելու համար: Հետազոտությանը վերաբերող դիտման և զրույցի թեմաները կարող են ուղղված լինել առարկաների **քանակին, մեծությանը, ձևին, գույնին:** Զրույցն անցկացվում է յուրաքանչյուր երեխայի հետ, խաղային իրավիճակում, իրեն ծանոթ միջավայրում՝ ստեղծելով զգացմունքային ջերմ մթնոլորտ, բարյացակամ վերաբերմունք՝ բացառելով լարվածությունը:

Երեխաների վստահությունը շահելու նպատակով հարցադրումների գնահատականները չպետք է իրազեկել երեխային, հատկապես՝ բացասականը: Զրույցը նախ կարելի է սկսել հաճոյախոսություններով՝ տալով նրանց երկրորդական հարցեր սիրած խաղալիքների, կենդանիների, նրանց հետաքրքրությունների մասին, այնուհետև յուրաքանչյուր երեխայի առաջարկել խաղ-առաջադրանքներ, որոնց օգնությամբ կիրականացվեն առարկայական գործողություններ «**Ցու՛յց տուր»** և ոչ թե՝ «**Անվանի՛ր»** հրահանգներով:

Դիտման և հետազոտության ընթացքում ստացված արդյունքները, միջոցները, երեխաների ինքնուրույն կատարված գործողությունները, նրանց ցուցաբերած հետաքրքրությունները, բառացի պատասխանները գրանցվում են օրագրում: Անհրաժեշտ է ժամանակին հայտնաբերել երեխաների հոգնածության երե-

վույթները (շորերի քաշքշելը, հաճախակի շարժվելը, անհանգիստ վիճակը և այլն), այլապես այդ հոգնածությունը կարող է հանգեցնել առաջադրանքի նկատմամբ հետաքրքրությունների կորստի: Հետազոտություններից ստացված արդյունքները քննարկվում են ծնողի հետ՝ տեղյակ պահելով նրանց երեխաների մեջ հայտնաբերված դժվարությունները և, ըստ այդմ՝ տալ հանձնարարականներ: Ծնողի և դաստիարակի համագործակցությունը թույլ կտա որոշել տեղեկատվության հաղորդման ծավալը՝ հաշվի առնելով երեխաների անհատական առանձնահատկությունները, թույլ չտալով գերծանրաբեռնվածություն: Արդյունավետ կլինի, եթե նրանք աշխատեն նույն պահանջներով, օգնեն մեկը մյուսին, քաջալերեն առաջադրանքի նկատմամբ երեխայի ցուցաբերած ձգտումը:

Այս տարիքի երեխաների հետ մանկավարժական աշխատանքի հիմնական նպատակն է՝ զարգացնել երեխայի զգայական-ճանաչողական հետաքրքրությունները, մեծահասակի հետ կատարվող համատեղ առարկայական գործողությունները, հարստացնել մաթեմատիկական պարզ պատկերացումները:

Զգայական զարգացումը մաթեմատիկական պատկերացումների հիմքն է, դրա համար էլ այն անհրաժեշտ է ձևավորել զգուշորեն և աստիճանաբար: Կրտսեր առաջին խմբում այս ուղղությամբ տարվող աշխատանքը անցկացվում է `

Առավոտյան ժամերին,

Անհատական կամ ենթախմբերով /6-8 երեխա/,

Կարճ ժամանակահատվածում /7-8 րոպե/,

Ամեն օր՝ խաղասենյակում կամ զբոսանքի ժամանակ:

Առանձին հասկացություններ, ինչպիսիք են՝ «շատ-մեկ», «շատ-քիչ», «մեկ-շատ», «քիչ-շատ», կարող են դիտարկվել կանոնակարգված խաղ-պարապմունքի ընթացքում՝ որպես կառուցվածքային մաս (ծանոթացում շրջակա աշխարհին, կառուցողական աշխատանք, ծեփ և այլն):

Մաթեմատիկական պարզ պատկերացումների ձևավորման և զարգացման աշխատանքը ներառում է երեխաների ինքնուրույն գործունեությունը, որտեղ երեխան դիտում է, զննում մեծահասակի գործողությունը, լսում նրա բացատրությունները, ցուցումները և ձեռք բերում զգայական փորձ, որը ստացվում է *մեծահասակ-երեխա* անմիջական շփման և նրանց երկխոսության օգնությամբ: Մեծահասակի խոսքը պետք է լինի ոչ ընդարձակ, հստակ և հաղորդվի երեխաների ընկալմանը հասանելի արագությամբ:

<u>**Մաթեմատիկական պարզ պատկերացումներին նվիրված պարապմունքներ չեն անցկացվում.**</u> դրանք իրականացվում են խաղերի և խաղ-առաջադրանքների օգնությամբ, որոնք ներառում են երեխայի հետազոտական տարբեր գործողություններ, ձեռքի շարժումներ, զգայաբար ընկալվող առարկաների ցուցադրումներ և բացատրություններ: Անհրաժեշտ է երեխաների համար ապահովել բազմակի խաղային *իրավիճակների կրկնություն՝* պահպանելով համապատասխան ժամանակահատվածը: Ինչպես խաղ-առաջադրանքները, այնպես էլ օգտագործվող դիդակտիկ նյութերը պետք է հաճախակի փոփոխվեն, այլապես միօրինակությունը

երեխաների մեջ կհանգեցնի առաջադրանքների նկատմամբ հետաքրքրության կորստի: Իսկ **երեխան սովորում է այն, ինչ իրեն հետաքրքիր է և նրանից, ում վստահում է և համակրում:** Ահա այդ է պատճառը, որ ծրագրում մեծ տեղ է հատկացված մանկապարտեզին հարմարվելու նախապատրաստական շրջանին՝ շրջապատող առարկաների գույնի, մեծության բացահայտմանը նվիրված զգայական ընկալման և ըմբռնման փորձի կուտակմանը: Առաջադրանքները ձևակերպելիս նախ պարզաբանվում է, թե ինչ պետք է անի երեխան («Բե՛ր շատ ավտոմեքենաներ», «Վերցրու՛ մեկ բաժակ»), իսկ ավելի ուշ՝ երեխային խնդրում են բերել «մեկ» կամ «շատ» խաղալիքներ՝ իր ընտրությամբ:

Երեխաների մաթեմատիկական պարզ պատկերացումների յուրացման գործընթացը կարելի է պայմանականորեն բաժանել երեք փուլի.

Առաջին փուլում մեծահասակը հետաքրքրություն է առաջացնում զննվող առարկայի որևէ հատկանիշի հանդեպ:

Երկրորդ փուլի նպատակն է՝ զարգացնել ձեռքի մանր մկանները, ընդլայնել երեխաների մատների հետ կապված գործողությունները, ձևավորել՝ առարկան ինքնուրույն զննելու, դիդակտիկ նյութերով աշխատելու, ընդօրինակման հիման վրա առարկայական գործողություններ կատարելու հմտություններ:

Առարկաներն առանձնացնել ըստ հատկանիշների.

Գույն- կարողանալ տարբերել կարմիր, կապույտ, կանաչ, դեղին գույները,

Չափ-տարբերել հակադիր երկու չափեր՝ մեծ, փոքր,

Ձև-տարբերել խորանարդն ու գունդը,

Տարածական տարբեր ուղղություններ՝ վերև, ներքև, առջև, հետև, տակ, վրա,

Տարբերել նույն տեսակի, նույն գույնի առարկաների **քանակը**:

Վերը թվարկված հմտություններն աստիճանաբար երեխային կբերեն այն համոզման, որ առանձին առարկաներ և առարկաների խմբեր կարող են իրարից տարբերվել չափով, գույնով և քանակով: Սկզբում անհրաժեշտ է երեխաների ուշադրությունը կենտրոնացնել խմբասենյակի **որոշակի հատվածների** վրա. «Տեսե՛ք, թե հատակին, սեղանի վրա, ո՞ր առարկաներից շատ կա, և որի՞ց՝ մեկը:

Այս փուլում մեծահասակն օգտվում է **«ուղղություն ցույց տվող»** ցուցումներից, ինչպես նաև **«ցուցադրում»՝** անվանելով և **«փորձի՛ր և սխալվի՛ր»** մեթոդներից: Ցուցադրումն ուղեկցվում է հստակ բացատրություններով, երկուսից երեք անգամ կրկնելով: Որոշ դեպքերում երեխաների սխալներն ուղղվում են առանց բացատրությունների՝ «Վերցրո՛ւ ահա սա»: Երեխաների համար նոր բառը մեծահասակն արտաբերում է չշտապելով, առոգանությամբ: Մի քանի երեխա դաստիարակի անմիջական հսկողությամբ կատարում են անհատական առաջադրանքներ: Դաստիարակի խնդրանքով, առանց խոսքի, ցույց են տալիս պատասխանը, ավելի ուշ՝ անվանում են առարկան և դրա հետ կատարվող գործողությունը: Մեծահասակի կողմից դիդակտիկ նյութերի փոփոխմամբ բազմակի կրկնությունները և միաժամանակյա ցուցադրումները նպաստում են երեխաների զգայարանների, մատների

մանր մկանների և մաթեմատիկական պարզ պատկերացումների ձևավորմանն ու զարգացմանը:

Երրորդ փուլում շարունակվում են առարկաների ուսումնասիրման աշխատանքները: Երեխաները դիտում են, տարբերում և գտնում դրանց միջև եղած նմանությունն ու տարբերությունը, և ըստ մեկ հատկանիշի՝ գույն (մեծություն) **խմբավորում են՝** առանձնացնելով նույն գույնի կամ նույն մեծության առարկաները («Այստեղ բոլորը կանաչ են», «Բոլորը մեծ են»ն:

Եթե խաղ-առաջադրանքները համապատասխանում են երեխաների ուժերին, ապա դիդակտիկ նյութը կծառայի որպես զարգացնող միջոց:

Մաթեմատիկական պատկերացումների և զգայական զարգացման երեք փուլերում էլ առաջնակարգ նշանակություն ունի **դիտողականության դերը:**

Առարկայի հատկանիշի գույն (մեծություն) բացահայտման համար կարևոր նշանակություն ունի նաև **նյութի ընտրությունը**: Դիդակտիկ նյութը պետք է հստակ արտահայտի այն հատկանիշը, որը տվյալ պահին զննում, առանձնացնում և ասում է երեխան: Դիդակտիկ նյութը և դրա հետ կատարվող գործողությունները պետք է համընկնեն առաջադրված նպատակին («Գնդակը գլորվում է») և նպաստեն այդ նպատակի իրականացմանը:

Անհրաժեշտ է հիշել. պետք է երեխաներին միշտ հնարավորություն տալ հրճվանք ապրելու իր ճիշտ կատարած գործողությունների համար:

ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԵՐ, ԽԱՂ-ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ և ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկել՝ գտնել ընտրված նմուշի մի քանի խաղալիքներին նման մեկ այլ խաղալիք: «Կախարդական պարկից» հանել որևէ խաղալիք և առաջարկել սեղանից ընտրել ճիշտ այդպիսին:

Տարբեր գույնի 2-3 խաղալիքներից ընտրել նույն գույնի մեկ ուրիշ խաղալիք, ցույց տալ և անվանել: Կապույտ տուփի մեջ տեղավորել բոլոր նշված գույնի խորանարդները և ասել. «Տուփի մեջ բոլոր խաղալիքները կապույտ են», «Ի՞նչ գույնի խաղալիքներ դու դրեցիր կապույտ տուփի մեջ»: Նույն գործողությունը կատարել կարմիր խաղալիքներով:

Առաջարկել երեխաներին, դաստիարակի օգնությամբ, անվանել իր մարմնի մասերը և դեմքը. ապա դաստիարակը երեխայի ձեռքը մոտեցնում է իր ձեռքին ասելով՝ «Քո ձեռքը թաքնվեց իմ ափի մեջ և չի երևում, այն փոքր է»:

Մոտենալ հայելուն, հերթականությամբ ցույց տալ մարմնի մասերը և ասել. «Ահա իմ քիթը, այն մեծ է, քո քիթիկը փոքր է»: Նմանօրինակ ձևով ցույց տալ դեմքի մյուս մասերը, պահանջել, որ ընդօրինակելով վերարտադրեն մեծահասակի բառերը:

Երեխաներին ցույց տալ երկու տիկնիկ: Մեծ տիկնիկին անվանել Աննա, փոքրիկին՝ Սոնա: Խնդրել երեխաներին ցույց տալ մեծ տիկնիկը, իսկ հետո՝ փոքրը:

Եթե երեխան դժվարանա, երեխայի ցուցամատով ցույց տալ Աննային և ասել. «Սա մեծ տիկնիկն է՝ Աննան»: Նույն գործողությունը կատարել՝ ցույց տալով Սոնային: Խնդրել երեխային՝ հավաքել հատակին թափված խաղալիքները, մեծ խաղալիքները դնել մեծ տուփի, փոքրերը՝ փոքրի մեջ: Ընթացքում հարցնել՝ «Ո՞ր խաղալիքները դրեցիր մեծ տուփի մեջ»:

Երեխաներին ցույց տալ **մեծ** և **փոքր** երկու եղևնի և հարցնել. « Ինչո՞ւ են եղևնիներն անտառից մեզ մոտ եկել»: Այնուհետև առաջարկել՝ «կախարդական արկղի» միջի խաղալիքներով զարդարել միանգամից երկու եղևնիները. մեծ խաղալիքներով՝ մեծ, փոքր խաղալիքներով՝ փոքր եղևնին: Դժվարանալու դեպքում հուշել:

Երկրորդ տարբերակ: Ցուցադրել սեղանի վրա դրված տոնածառի խաղալիքներ, նշել դրանց **գույները** (կարմիր, կապույտ, դեղին, կանաչ), ապա դրանք տեղադրել «կախարդական պարկի» մեջ և առաջարկել մեկական հանելով՝ ասել յուրաքանչյուր խաղալիքի գույնը:

Երեխայի հետ դիտել զամբյուղի մեջ դրված գնդակները: Գնդակները դատարկել հատակին. առաջարկել՝ կանաչ գնդակները դասավորել կանաչ զամբյուղի մեջ, դեղին գնդակները՝ դեղին զամբյուղի մեջ: Որոշել դրանց շատ լինելը և ասել. «Կանաչ զամբյուղի մեջ կանաչ գնդակներն են, դեղին զամբյուղի մեջ՝ դեղին գնդակները»: Ցույց տալով կարմիր դրոշակը՝ առաջարկել բերել նույն գույնի խաղալիքներ, ասելով. «Դու բերեցիր նույն կարմիր գույնի ափսեներ (գավաթներ), ինչպիսին դրոշակներն են»:

Առաջին տարբերակ: Երեխաների օգնությամբ, ըստ մեծության, խմբավորել նույն գույնի խաղալիքները:

Երեխաների ուշադրությունը հրավիրելով աշտարակներից մեկ վրա՝ ասել, որ այն կազմված է կարմիր օղակներից: Աստիճանաբար հանելով օղակները և դնելով սեղանի վրա ասել. «Այս օղակը կարմիր է, սա էլ կարմիր է, սա էլ»: Նույն գործողությունը կատարել կապույտ աշտարակի օղակների հետ: Երեխաների օգնությամբ հավաքել նախ կարմիր, ապա կապույտ աշտարակը, ամեն անգամ շեշտելով օղակների գույնը: Դժվարանալու դեպքում օգնել՝ դիմելով ցուցադրման և համեմատման միջոցներին:

Երկրորդ տարբերակ: Առաջարկել երեխաներին հավաքել աշտարակը՝ օղակների գույները հաջորդաբար փոխելու եղանակով. «Հիմա դի՛ր կարմիրը, հիմա կապույտը, դեղին-կանաչը»:

Առաջին տարբերակ: Երեխաների ուշադրությունը հրավիրել սեղանի վրա դրված տուփի վրա, թափահարել այն և ասել. «Տուփի մեջ ինչ-որ բան կա, տեսե՛ք՝ ինչ է թաքնվածտուփի մեջ»: Առաջարկել երեխաներին բացել տուփը, անվանել դրա մեջ եղած բոլոր խաղալիքները և զվարճալի մթնոլորտի պայմաններում ասել. «Ինչքա՞ն շատ են նապաստակները /թվել/». «Ես կվերցնեմ մեկ նապաստակ և

կդնեմ սեղանի վրա, դու էլ վերցրու՛ մեկ այլ նապաստակ», «Ինձ մոտ կա մեկ նապաստակ, իսկ քեզ մոտ քանի՞սն են»: Նույնը անել մյուս խաղալիքների հետ, խնդրել, որ երեխան ցույց տա շատ, միատեսակ (նույն գույնի), մեկ և շատ խաղալիքներ: Հետևել, որ երեխան խաղալիքը վերցնի մատներով: Խաղալիքների շատ լինելն ընդգծելու նպատակով օգտվել ձեռքի ընդհանրացնող շարժումից՝ շրջագծելով խմբի քանակը:

Երկրորդ տարբերակ: Երեխաներին ցույց տալ մրգով լի տոպրակը և ասել. «Տեսե՛ք ինչքան շատ խնձորներ կան, եկե՛ք հանենք և դնենք մրգամանի մեջ, տու՛ր ինձ մեկ խնձոր, էլի՛ մեկ խնձոր, էլի, էլի»: Այսպես՝ մինչև տոպրակի մեջ խնձոր չմնա: Ասել. «Մրգամանում ինչքա՞ն շատ խնձորներ կան, իսկ տոպրակի մեջ ոչ մի խնձոր չկա, վերցրո՛ւ քեզ մեկ խնձոր»:

Առաջին տարբերակ: Առաջարկել դիտել նկարները և ըստ դրանց ցույց տալ «մեկ» ու «շատ» մրգերը, կոնֆետները, ամանեղենը, բանջարեղենը և այլն:

Առաջարկել երեխաներին դիտել սեղանի վրա դրված գունդը և դրանով կատարել զանազան գործողություններ՝ գլորել սեղանի վրա, մի ափից մյուսը, միաժամանակ ասելով. «Գնդակը գլորվում է», «Ես գնդակը գլորեցի մի ձեռքից մյուսը» (այս տարիքում երեխաները գունդը ընկալում են որպես գնդակ): Երեխաներից յուրաքանչյուրին պետք է առաջարկել վերցնել գնդակը և իր հետ միասին նետել գլխից վերև, հարվածել հատակին, գլորել առաջ, սեղանի տակ: Ամեն անգամ հարկավոր է հարցնել. «Ու՞ր է գնդակը»: Գնդին ծանոթացնելիս պետք է աշխատել ենթախմբերով:

Երկրորդ տարբերակ: Որոշել գնդակի գույնը, պարզել՝ այն գլորվում է, թե ոչ, և ասել՝ «Կարմիր գնդակը Արմենի մոտ է, Դավիթի մոտ կապույտն է, Հասմիկի մոտ՝ կարմիրն է, այն նույնպես գլորվում է: Բոլոր գնդակները գլորվում են»:

Նմանօրինակ վարժությունները կարելի է կատարել գնդակների մեծության հատկանիշի վերաբերյալ. «Առանձնացրո՛ւ բոլոր կարմիր գնդակները /բոլոր մեծ գնդակները/, «Բոլոր գնդակները մեծ են, բոլոր կարմիր գնդակներ մեծ են»:

Առաջակել երեխաներին **շոշափել , զննել** սեղանի վրա դրված **խորանարդիկը**, անվանել, ապա փորձել գլորել այն՝ համոզվելու համար, որ չի գլորվում, ինչպես գնդակը: Ցուցադրման համար սկզբում օգտագործել **միագույն** և **նույն մեծության** խորանարդիկներ, ապա տալ խորանարդիկներ, որոնք տարբերվում են. սկզբում գույնով, իսկ հետո՝ չափերով:

Խաղ-առաջադրանքներում կարող են ներառվել նաև դիդակտիկ խաղեր, մատիկներով խաղեր, մատների վարժանքներ, որոնք նպաստում են երեխաների՝ ինչպես ձեռքերի մանր մոտորիկային, այնպես էլ նրանց մտածողության զարգացմանը:

Դիդակտիկ խաղեր. «Մեր սիրելի տիկնիկը», «Հրաշալի պարկ», «Ձայներ», «Թուխսն իր ձվերով», «*Հաշտեցնենք ոգնիներին», «Ընտրի՛ր ըստ չափի», «*Հավաքի՛ր ավտոմեքենա երկրաչափական ձևերից»:

Դիդակտիկ խաղերի և մատիկներով խաղերի մի քանի օրինակ

Հաշտեցնենք ոզնիներին

Նպատակը: Զարգացնել երեխաների՝ առարկաներն ըստ մեծության և գույնի խմբավորելու կարողությունները:

Անհրաժեշտ պարագաներ: Տարբեր մեծության (մեծ, փոքր, ավելի փոքր) երեք ոզնիների նկարներ: 3 խնձոր՝ մեծ չափի, 3 խնձոր՝ մի քիչ փոքր, ավելի փոքր չափերի 3 խնձոր՝ կարմիր, դեղին և կանաչ:

Խաղի ընթացքը

Խաղի սկզբում հարկավոր է պատմել, որ ոզնիների ընտանիքը՝ հայրիկը, մայրիկը և նրանց ձագուկը, գնացել էին զբոսանքի: Հանկարծ նրանք տեսան մի մեծ ծառ՝ խնձորենի, որի տակ թափվել էին խնձորներ: Սկսեցին վիճել, թե ով ո՞ր խնձորը պիտի ուտի: Առաջարկվում է երեխաներին հաշտեցնել ոզնիներին:

Տարբերակ: Բաժանել խնձորները ոզնիների չափերին համապատասխան, այնուհետև բաժանել խնձորները յուրաքանչյուր չափի ոզնու համար որոշակի գույնի. մեծ ոզնիների համար՝ միայն կարմիր խնձորներ, ավելի փոքր ոզնիների համար՝ դեղին, իսկ ամենափոքրերի համար՝ կանաչ:

Ընտրիր ըստ չափի

Նպատակը: Երեխաների մեջ զարգացնել առարկաներն ըստ մեծության համեմատելու և տարբերելու կարողությունները:

Անհրաժեշտ պարագաներ: Առարկայական նկարներ տարբեր չափերի ծաղիկների արտացոլմամբ՝ մեծ, միջին, փոքր, թիթեռների հավաքածու՝ մեծ, միջին, փոքր չափերի:

Խաղի ընթացքը

Երեխաներին առաջարկել՝ ըստ նկարի ընտրել մեծ ծաղիկը և նրա վրա տեղադրել մեծ թիթեռ, այնուհետև հերթագայմամբ՝ միջին և փոքր չափերի ծաղիկները և դրանց համապատասխան թիթեռներ:

Հավաքի՛ր ավտոմեքենա երկրաչափական ձևերից

Նպատակը: Ամրապնդել երեխաների մեջ երկրաչափական ձևերի մասին պատկերացումները:

Անհրաժեշտ պարագաներ: Ստվարաթղթի վրա գծապատկերով արտացոլված ավտոմեքենա, որի մասերը տարբեր երկրաչափական ձևեր և մարմիններ են (շրջան, քառակուսի, եռանկյունի, ուղղանկյուն):

Խաղի ընթացքը: Երեխաներին ցույց տալ գծապատկերի վրա պատկերված ավտոմեքենայի մասերը դասավորելու և դրանք իրար վրա դնելով հավաքելու ձևը, ապա առաջարկել նրանց ինքնուրույն հավաքել ավտոմեքենան: Այնուհետև հարցնել, թե ինչպիսի՞ երկրաչափական ձևեր են հիշեցնում ավտոմեքենայի անիվները, թափքը, խցիկը:

Մատիկներով խաղեր, վարժանքներ

«Մեր մատները», «Լապտերիկ», «Մարզում ենք մեր ձեռքերը», «Իմ տիկնիկի աչքերը», «Օղակներ» (օգտվել Ս.Վարդումյանի «Հրաշք մատիկներ» ձեռնարկից, 2006թ., Երևան)

Մեր մատները

Իմ ձեռքերն են՝ աջ ու ձախ,
Աշխատանքից չունեն վախ,
Չէ՞ որ ամեն մարդ գիտի՝
Ով աշխատի, նա կուտի:

Մարզում ենք մեր ձեռքերը

Մատիկները կորանում,
Ուժեղ բռունցք են դառնում,
Աջից, ձախից հարվածում,
Մարզվում են ու ամրանում:

Ակնոց

Ահա նայի՛ր՝ օղակներ,
Որ դառնում են ակնոցներ,
Եվ տատիկը դրանցով
Կարդում է մեզ հեքիաթներ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Երեխաների մեջ սերմանել բարություն, հարգանք՝ մեծերի հանդեպ: Նպաստել հասակակիցների հետ փոխհարաբերություններում բարյացակամ վերաբերմունքի դրսևորմանը, այդ ուղղությամբ փորձի կուտակմանը: Երեխաների ուշադրությունը հրավիրել այն երեխայի հանդեպ, որը կարիք ունի հոգածության, ներշնչել հոգատարություն ընկերոջ հանդեպ և կարեկցանք հանդես բերել անհրաժեշտության դեպքում: Երկչոտ երեխայի մեջ ձևավորել վստահություն, որ մեծերը սիրում են իրեն այնպես, ինչպես մյուս երեխաներին:

Ձևավորել հոգատար վերբերմունք բնության նկատմամբ:

Շարունակել՝ երեխաներին սովորեցնել բարևել և հրաժեշտ տալ /մեծերի հիշեցմամբ/, իրենց խնդրանքը ներկայացնել հանգիստ՝ օգտագործելով «շնորհակալություն», «խնդրեմ» բառերը:

Դաստիարակել մերժողական վերաբերմունք՝ կոպտության, ագահության հանդեպ: Սովորեցնել՝ հասակակիցների հետ խաղալ համերաշխ, առանց վիճելու, օգնել իրար և ուրախանալ միմյանց հաջողություններով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Շարունակել երեխաների՝ ինքնասպասարկման կարողությունների ձևավորմանը միտված աշխատանքները (հագնվել, հանվել, լվացվել ուտելուց առաջ և հետո):

Սովորեցնել պահպանել կարգուկանոն խաղասենյակում, խաղն ավարտելուց հետո խաղալիքներն ու խաղային նյութերը դասավորել իրենց տեղերում:

Ներգրավել երեխաներին իրենց պարզագույն աշխատանքային հանձնարարությունները կատարելու հարցում:

Սովորեցնել, մեծերի հետ համատեղ և նրանց հսկողությամբ, ճաշից առաջ դնել հացամանները և անձեռոցիկները:

Մանկապարտեզի տարածքում և հողամասում հոգ տանել բույսերի և կենդանիների հանդեպ:

Դաստիարակել հարգանք՝ մարդկանց մասնագիտությունների հանդեպ: Ընդգծել նրանց աշխատանքի արդյունքի նշանակությունը: Աջակցել երեխաների ցանկությանը՝ մեծերին օգնելու հարցում:

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

- կատարել պարզագույն աշխատանքային գործողություններ /դաստիարակի օգնությամբ/,
- դիտել և հետևել դաստիարակի կողմից բնության անկյունում իրականացվող աշխատանքային գործընթացին:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընթերցել և պատմել կրթական ծրագրով այս տարիքային խմբի համար նախատեսված գեղարվեստական ստեղծագործություններ: Սովորեցնել երեխաներին լսել ժողովրդական հեքիաթներ, հեղինակային ստեղծագործություններ: Ընթերցանությունն ուղեկցել խաղալիքի, նկարի ցուցադրմամբ, սեղանային թատրոնի, այլ դիտողական նյութերի միջոցով, ինչպես նաև սովորեցնել ունկնդրել գեղարվեստական ստեղծագործություններ՝ առանց դիտողական նյութի ուղեկցության:

Ոչ մեծ բանաստեղծական ստեղծագործությունների ընթերցանությունն ուղեկցել խաղային գործողություններով:Հնարավորություն ընձեռել երեխաներին՝ ասելու բառեր, դարձվածներ ծանոթ ոտանավորների ընթերցանության ժամանակ:

Խրախուսել երեխաներին՝ արտասանելու ոտանավորի տեքստն ամբողջությամբ՝ մեծի օգնությամբ: Օգնել երեխաներին /2 տարեկան 6 ամսականից/ խաղալ իրենց լավ ծանոթ հեքիաթը:

Օգնել երեխաներին՝ նկարների միջոցով հաղորդակցվելու գրքերին, նրանց դրդել անվանելու ծանոթ առարկաները և ցույց տալ դաստիարակին: Սովորեցնել հարցեր տալ. «Ո՞վ է սա», «Ի՞նչ է սա», «Ի՞նչ է անում»: Պատմել երեխաներին ոչ բարդ սյուժետային նկարների բովանդակությունը: Առաջարկել վերարտադրել հերոսների գործողությունները /շարժումները/:

Ուշադրություն դարձնել այն երեխաներին, որոնք սեփական նախաձեռնություն են հանդես բերում գրքեր դիտելու և զննելու նկատմամբ:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Գեղարվեստագեղագիտական գործունեությունը ենթադրում է՝ երեխայի ընկալման, երևակայության, հետաքրքրությունների, զգացմունքների, ունակությունների և հակումների զարգացում, հիշողության ձևավորում: Երեխան ընկալում է աշխարհը տպավորությունների և կերպարների միջոցով: Հուզական տպավորությունները և ապրումները խոր հետք են թողնում երեխայի կյանքում, և դրանք հետագայում երբեք չեն մոռացվում: Մանկության շրջանում հուզական ներդաշնակությամբ զուգորդված զգացողությունները վստահություն են ներշնչում աշխարհի հանդեպ և պահպանվում են ամբողջ կյանքում: Գեղարվեստագեղագիտական գործունեության հիմնական նպատակն է՝ ձևավորել տպավորություններով և կերպարային պատկերացումներով հարուստ, ստեղծագործող երեխա:

Գեղարվեստագեղագիտական ընկալումը ենթադրում է.

- ձևավորել սկզբնական պատկերացումներ գեղեցիկի նկատմամբ,
- ձևավորել գեղարվեստակերպարային պատկերացումներ,

դրսևորել առարկաների և երևույթների նկատմամբ զգայական վերաբերմունք,

• զարգացնել նկարելու և ծեփելու ունակությունները,

ձևավորել աշխատանքային հմտություններ՝ գեղարվեստական գործունեության տարբեր ձևերում,

• զարգացնել զգայական ընկալումները՝ ձևի, գույնի և ռիթմի նկատմամբ,

• գեղեցիկի նկատմամբ լինել ակտիվ արձագանքող, դաստիարակել գեղագիտական ճաշակ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԱՐՎԵՍՏԻՆ

Գեղարվեստագեղագիտական դաստիարակությունը սկսվում է նախադպրոցական տարիքից՝ իր առջև խնդիր դնելով ակտիվացնել երեխաների շփումը արվեստի հետ: Դրա ներգործությունը գեղարվեստագեղագիտական գործունեության և զարգացման գործընթացների վրա բավականին հզոր է: Արվեստը, ինչպես և բնությունը, իր մեջ ներառում է մարդկության հավաքական գեղեցկության տարրեր, որոնք ընկալելի և ընդունելի են բոլորի կողմից: Արվեստի գեղեցկությունը կարող է նկատել և հասկանալ նաև նախադպրոցական տարիքի երեխան:

Այս տարիքում կերպարվեստային գործունեությունը և զանազան գեղարվեստական նյութերի հետ ծանոթացումը, խթանում են երեխայի հետաքրքրությունները շրջապատող աշխարհի առարկաների և երևույթների նկատմամբ, զարգացնում գեղեցիկը նկատելու և ընկալելու ունակությունները:

Այդ իսկ նպատակով անհրաժեշտ է երեխաներին ծանոթացնել պատկերազարդ հեքիաթային գրքերին, վերատպություններին, դեկորատիվ -կիրառական արվեստի նմուշներին /գորգեր, կարպետներ, կավե իրեր և այլն/, ինչպես նաև նախապատրաստել առաջին այցելությանը մշակութային կենտրոններ (տիկնիկային թատրոն, մանկական պատկերասրահ, ցուցասրահներ և այլն):

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋԱՎԱՅՐ

Գեղեցիկ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը: Այն նպաստում է նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը: Երեխայի գեղագիտական ընկալումը խիստ անհատական է: Դրա հիմքում ընկած է գեղեցիկի նկատմամբ հուզական արձագանքը:

Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է այն ընկալելու, գեղեցիկի միջավայրում ապրելու ցանկության և պահանջմունքի արթնացմանը:

Գեղագիտական դաստիարակությունը բացահայտում է նախադպրոցականի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր որակներ: Այն պետք է ուղղված լինի երեխայի՝ ստեղծագործելու ցանկության արթնացմանը և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Մանկապարտեզի խմբասենյակները, ննջասենյակները, մարզադահլիճը, երաժշտական դահլիճը, բուժկետը և ողջ տա-

րածքը պետք է ձևավորված լինեն գեղեցիկ և ճաշակով՝ վարագույրները, մահճակալների ծածկոցները, կահույքը ընտրվեն ներդաշնակ գույներով: Երեխաների ուշադրությունըհարկավոր է հրավիրել այն բանի վրա, որ իրենք խաղում և պարապում են մաքուր, լուսավոր, գեղեցիկ կահավորված խմբասենյակում:

Զբոսանքի ժամանակ երեխաները պետք է սովորեն տեսնել շրջակա միջավայրի գեղեցկությունը, դիտեն և զննեն մանկապարտեզի տարածքը, տեսնեն ներդաշնակությունը՝ ծաղկանոցի, այգու, խաղահրապարակի միջև:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Երկուսից երեք տարեկան երեխաների համար գերագույն հաճույք է զբաղվել կերպարվեստային գործունեությամբ՝ նկարչությամբ, ծեփակերտմամբ և կառուցողական աշխատանքներով: Նման զբաղմունքը երեխային պարգևում է ուրախություն և բերկրանք: Կերպարվեստային գործունեության ընթացքում երեխան ստանում է ինքնարտահայտման և ինքնադրսևորման հնարավորություն, դրական զգացողություններ:

Այս տարիքային խմբի երեխաների համար կերպարվեստային գործունեության ծրագրում հիմնականում ձևագոյացման և շարժումների յուրացումն է: Երեխան ձեռք է բերում առարկայի ձևը զգալու և այն արտաքին աշխարհին փոխանցելու հմտություն:

Կերպարվեստային գործունեության ընթացքում տեղի է ունենում բուռն ճանաչողական զարգացում: Այս տարիքի երեխաներն արդեն ձևավորում են առարկաների ձևի, գույնի, չափի վերաբերյալ առաջին զգայական կողմնորոշումները, զարգանում են լսելու, տեսնելու, դիտելու, վերլուծելու ունակությունները: Կրտսեր առաջին խմբում սկսվում է կերպարվեստային գործունեության համար կիրառվող նյութերի և գործիքներին սկզբնական ծանոթացումը, ինչը և խթանում է երեխաների հետաքրքրասիրությունը մատիտի, յուղամատիտի /ֆլոմաստերի/, վրձնի, ներկերի, կավի, ծեփանյութի հետ կատարվող գործողությունների նկատմամբ: Ձևավորվում են պատկերացումներ այն մասին, որ մատիտով, վրձնով, յուղամատիտով նկարում են, իսկ ծեփանյութով՝ ծեփում: Այս տարիքային խմբում երեխաների ուշադրությունը պետք է հրավիրել թղթի վրա դրանցով ստացվող գծերի, ուրվագծերի, գույների, պատկերների վրա: Անհրաժեշտ է երեխաներին ուղղորդել մտածելու այն մասին, թե ի՞նչ են նկարել, և ինչի՞ է նման այն: Պարզագույն առարկաներ և երևույթներ նկարելով՝ երեխան ճանաչում է դրանք, և նրա մեջ ձևավորվում են առաջին պատկերացումները արվեստի ոլորտում: Անհրաժեշտ է, որ երեխան կարողանա տեսնել իրականի և նկարածի միջև նմանություններ և տարբերություններ: Սկզբում նա պետք է աշխատի տաք գույներով: Դա օգնում է նրան ուշադիր լինել շրջապատում գտնվող վառ, պայծառ գույներով առարկաների նկատմամբ:

Կերպարվեստային գործունեության ընթացքում երեխան աստիճանաբար սովորում է գույների, գծերի լեզվով «պատմել» իր տեսածի զգացածի մասին, ինչպես

նաև զարմանք արտահայտել՝ շրջապատի երևույթների վերաբերյալ: Կերպարվեստային գործունեությունը լավ տրամադրության սկզբնաղբյուր է, ուստի անհրաժեշտ է խթանել և զարգացնել հետաքրքրասիրությունը ստեղծագործական աշխատանքի նկատմամբ: Երեխան թղթի վրա արտահայտում է ոչ միայն այն, ինչ տեսնում է շրջապատում, այլև դրսևորում է սեփական երևակայությունը: Այսպես խթանվում է երեխայի ստեղծագործական զարգացումը:

Երեխաների հետ միասին անհրաժեշտ է պարբերաբար դիտել պատկերազարդ գրքեր, վերատպություններ:

Կերպարվեստային գործունեության նպատակն է.

Ստեղծել բարենպաստ պայմաններ երեխայի գեղագիտական զգացողության զարգացման համար: Արթնացնել նրանց մեջ գեղեցիկի նկատմամբ հուզական վերաբերմունք: Զարգացնել հետաքրքրասիրություն կերպարվեստային գործունեության տեսակների՝ նկարչության, ծեփի, կառուցողական աշխատանքների նկատմամբ:

Շարունակել երեխաների ուշադրության կենտրոնում պահել շրջապատում գտնվող գեղեցիկ առարկաները, բնության երևույթները, և դրանց դիտումների շնորհիվ հասնել զգայական ընկալման և դրական հույզերի զարգացման:

Ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր /արվեստի կենտրոն/ ինքնուրույն աշխատելու, ստեղծագործելու, գեղարվեստական գործունեությամբ զբաղվելու համար:

Կերպարվեստային գործունեության խնդիրներն են.

- խթանել հետաքրքրասիրություն կերպարվեստային գործունեության տեսակների նկատմամբ,
- ծանոթացնել կերպարվեստային նյութերին, ձևավորել նախնական հմտություններ մատիտի, վրձնի, գուաշի, ջրաներկի, ծեփանյութերի հետ աշխատելու նպատակով,
- զարգացնել պարզ առարկաներ պատկերելու կարողություններ,
- սովորեցնել նկարելով բացահայտել առարկաների հարաբերությունները միմյանց նկատմամբ /հեռու-մոտիկ, բարձր-ցածր/,
- սովորեցնել ծեփելով բացահայտել առարկաների հարաբերությունները միմյանց նկատմամբ /հեռու-մոտիկ, մեծ-փոքր/,
- սովորեցնել զգալ, տեսնել, դիտել շրջապատող աշխարհը,

ձևավորել երևույթների ու առարկաների նկատմամբ երեխաների հուզական-զգայական վերաբերմունքը,

- ձևավորել կերպարային պատկերացումները՝ շոշափելու օգնությամբ,
- զարգացնել ուշադրությունը, դիտողականությունը, պատկերացումները առարկաներին բնորոշ հատկությունների՝ ձևի, չափի, գույնի նկատմամբ:

Նկարչական գործունեություն

Նկարչության որոշ գաղտնիքներ երեխաների համար կարելի է բացահայտել 2-3 տարեկանից: Հետևաբար, անհրաժեշտ է նկարչության գործընթացում զարգացնել երեխաների հետաքրքրասիրությունը և ուշադրությունը նկարչական նյութերի՝ մատիտի, յուղամատիտի, գուաշի, ջրաներիկի, թղթի հետ կատարվող գործողությունների նկատմամբ: Անհրաժեշտ է երեխային տալ հնարավորություն՝ թղթի վրա տարբեր ուղղություններով հետագծեր առաջացնելու համար: Նրա գործողությունները սկզբնական շրջանում կարող են լինել անհամաձայնեցված շարժումներ: Տարեսկզբին երեխաների ուշադրությունը պետք է հրավիրել իր կողմից արված «խզբզանքի», տարբեր գծերի և ուրվագծերի վրա: Հարկավոր է նաև խթանել երեխաներին՝ պատմելու այն մասին, թե ի՞նչ են նկարել, և ի՞նչի է նման իրենց պատկերածը: Նկարչական գործունեության ընթացքում երեխաները պետք է համեմատեն առարկաներն ըստ մեկ հատկանիշի, գտնեն 2 առարկաների կամ երևույթների նմանությունը:

Պետք է երեխաներին սովորեցնել մատիտը ճիշտ բռնել 3 մատով, կատարել տարբեր վարժություններ, նշել կետեր, նկարել տարբեր գծեր՝ ուղիղ, երկար, կարճ, ուղղահայաց, հորիզոնական, թեք, խաչված, ալիքաձև, կատարել պարզագույն վարժություններ՝ շրջանաձև, աղեղնաձև, նկարել մեծ և փոքր գունավոր կծիկներ, օղակներ:

Հարկավոր է սովորեցնել ճանաչել և տարբերել թղթի վրա թողած մատիտի, յուղամատիտի, մոմամատիտի, գուաշի կամ ջրաներկի գունավոր հետագծերը, դրանք ճիշտ անվանել, խթանել գունավոր մատիտներով թղթի վրա նկարելու երեխայի ցանկությունը: Պետք է սովորեցնել վրձինը ճիշտ բռնելու և դրանով նկարելու միջոցները, ձևերը, կատարել վարժություններ՝ վրձնահարվածներ, վրձնահպումներ: Սովորեցնել ճանաչել և տարբերել հիմնական գույները՝ կարմիր, կապույտ, դեղին և որոշ բաղադրիչ գույներ: Կատարել հիմնական գույներով վարժություններ՝ երկու հակադիր գույների զուգակցմամբ՝ կապույտի վրա դեղին կամ նարնջագույն, կարմիր գույնի վրա կապույտ՝ բծեր, զիգզագներ, կաթիլներ, փաթիլներ, հրավառություն: Սովորեցնել մեկ գույնի օգտագործմամբ պատկերել պարզ առարկաներ /օգտագործել գունավոր թղթեր/:

Անհրաժեշտ է բացատրել նկարելու ընթացքում ճիշտ նստելու, իրանի դիրքը ճիշտ պահելու, վրձնից և ներկանյութերից ճիշտ օգտվելու ձևերը: Ձևավորել գունաներկերով /գուաշ, ջրաներկ, կավիճ / ճիշտ և կոկիկ աշխատելու, աշխատատեղը մաքուր պահելու կարողություններ:

Զարգացնել շրջակա աշխարհի գեղագիտական ընկալումը /կարողություններ և հմտություններ/:

ՀԱՎԵԼՎԱԾ N7

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Նկարչություն

Երեխաների մեջ նկարչության նկատմամբ հետաքրքրասիրություն արթնանում է դեռ վաղ տարիքում: Այն երեխաների սիրելի զբաղմունքներից մեկն է, որը մեծ հնարավորություն է տալիս զարգացնելու նրանց ստեղծագործական միտքը, երևակայությունը, ցանկություն է առաջացնում մասնակցելու պարապմունքին: Նկարելով երեխաները սովորում են ճիշտ օգտվել կերպարվեստային նյութերից:

Ուսումնական տարվա սկզբին՝ հատկապես հարմարման փուլում, այս տարիքային խմբի երեխաների հետ կերպարվեստային պարապմունքները պետք է կազմակերպել անհատական կամ փոքր խմբերով: Առաջին 2-3 պարապմունքները հարկավոր է համարել փորձնական խաղ-պարապմունքներ: Սկզբնական շրջանում դաստիարակը պետք է նախապես մի քանի սեղանի վրա դնի կերպարվեստային նյութերը /խմբի երեխաների թվի կեսի համար/ և առաջարկի զբաղվել կերպարվեստային գործունեությամբ այն երեխաներին, որոնք դեռևս խմբասենյակում չեն գտել իրենց համար զբաղմունք: Գործունեության ընթացքում այս երեխաներին կարող են միանալ ևս մի քանի երեխաներ՝ ըստ իրենց ցանկության կամ դաստիարակի առաջարկով: Մյուս երեխաները շարունակում են խաղալ: Նրանց հետ պետք է լինի դաստիարակի օգնականը: Այս պարագայում կարևոր է, որ պարապմունքին չմասնակցող երեխաները խաղան հանգիստ, խոսեն ցածր ձայնով, չխանգարեն պարապմունքի մասնակիցներին: Եթե որևէ երեխա տարված է խաղով և դեռ ցանկություն չունի մասնակցելու կերպարվեստային պարապմունքներին, պետք չէ նրան պարտադրել: Պարտադրանքը կարող է առաջացնել կամակորություն, լաց: Իսկ դա կառաջացնի բացասական վերաբերմունք կերպարվեստային գործընթացի նկատմամբ, և այն կարող է պահպանվել երկար ժամանակ: Աստիճանաբար, երբ երեխաները կընտելանան դաստիարակի կողմից կազմակերպված պարապմունքներին՝ անցումը խաղից դեպի պարապմունք տեղի կունենա ավելի սահուն: Ենթախմբի երեխաները նկարում կամ ծեփում են մոտավորապես 10 րոպե: Պարապմունքի ընթացքում որոշ երեխաներ կարող են շուտ ավարտել աշխատանքը և միանալ խաղացող երեխաներին՝ դաստիարակի թույլտվությամբ: Երբ առաջին ենթախմբի երեխաներն ավարտում են իրենց աշխատանքները, դաստիարակի օգնականը օգնում է նրանց լվացվել, անցնել խաղի կամ հագնվել ու գնալ զբոսանքի: Այս ընթացքում դաստիարակը պարապմունքը կազմակերպում է 2-րդ ենթախըմբի հետ: Պարապմունքի ավարտից հետո 2-րդ ենթախումբը միանում է առաջին ենթախմբին և դաստիարակը իրականացնում է պլանավորված զբոսանք /դիտում, աշխատանք, խաղ/:

Երբ յուրաքանչյուր երեխա կտիրապետի այս աշխատելաձևին, արդեն կարելի է կազմակերպել պարապմունքներ փոքր ենթախմբերով, իսկ երկրորդ կիսամյա-

կում, տարեվերջին՝ խմբով: Այսպիսի մոտեցումը նպատակ ունի դաստիարակին հնարավորություն տալ տեսնելու յուրաքանչյուր երեխայի ներուժը, օգնել նրան և ուղղորդել: Երբ երեխան նոր է սկսում սովորել նկարել, անչափ կարևոր է, որպեսզի նա յուրացնի մատիտից, ներկանյութից, ճիշտ օգտվելու կանոնները:

Երկրորդ կիսամյակում երեխաներն արդեն սիրով են մասնակցում պարապմունքներին, քանի որ նրանք արդեն տիրապետում են աշխատանքային որոշ կանոնների: Այս պարագայում դաստիարակն արդեն հնարավորություն է ունենում կազմակերպել պարապմունքներ ամբողջ խմբի մասնակցությամբ: Սակայն պարապմունքի տևողությունը կարող է լինել տարբեր: Այսինքն, շուտ ավարտող երեխաները գնում են խաղալու: Այս տարիքային խմբում չի կարելի բոլոր երեխաներին ներկայացնել միևնույն պահանջները, քանի որ, նրանք զարգանում են տարբեր տեմպով: Մինչդեռ պետք է նկատել ցանկացած առաջխաղացում և խրախուսել:

Առաջին իսկ պարապմունքներից դաստիարակը պետք է հետևի երեխաների կեցվածքին՝ սովորեցնի նստել ուղիղ, չհենվել սեղանին, ճիշտ օգտվել կերպարվեստային նյութերից, նկարել աջ կամ ձախ ձեռքով /նայած թե ո՞րն է առաջատարը/՝ մյուս ձեռքով պահել թուղթը, սովորել օգտվել փորձաթղթից: Իհարկե, այս գործընթացը տևում է բավականին երկար ժամանակ, որը պայմանավորված է երեխաների տարիքային առանձնահատկություններով: Երեխան կերպարվեստային գործունեությամբ զբաղվում է մեծ ուրախությամբ և խանդավառությամբ: Աշխատելու ընթացքում նա ճանաչում և բացահայտում է գույները: Երեխաներին, իհարկե, հրապուրում է նկարչական գործունեություն. նրանք մեծ ոգևորությամբ նկարում են, պատկերում պարզ առարկաներ: Նրանք կարող են նկարել աջից-ձախ, վերևից-ներքև: Աշխատելու ընթացքում հասկանում են, որ թուղթն ունի կենտրոն, եզրեր, չպետք է դուրս գալ թղթի եզրերից: Դաստիարակը հնարավորինս պետք է երեխաներին տրամադրի տարբեր չափերի թղթեր, քանի որ նույն չափի /ստանդարտ/ թղթերը ձևավորում են <u>ստանդարտ</u> մտածողություն:

Դաստիարակը պետք է ուշադիր լինի և ձախլիկներին չպարտադրի նկարել աջ ձեռքով: Այս տարիքի երեխաները հաճախ նկարում են և՛ աջ, և՛ ձախ ձեռքերով, դա միայն պետք է խրախուսել: Եթե երեխայի մոտ ակտիվ են երկու ձեռքերը, ապա դա խոսում է նրա ուղեղի՝ միաժամանակ երկու կիսագնդերի զարգացման մասին: Կերպարվեստային գործունեությունը նպատակ է հետապնդում նաև զարգացնելու երեխայի երկու ձեռքերի ակտիվությունը: Նշենք, որ դաստիարակը պետք է կազմակերպի այնպիսի աշխատանքներ, որոնց ընթացքում երեխան ստիպված լինի օգտագործել երկու ձեռքերը: Դրանք են՝ ծեփակերտումը, ապլիկացիան, ավազի և ջրի հետ խաղերը, աշխատանքը բնության կենտրոնում և այլն:

Ներկանյութեր և միջոցներ

Այս տարիքային խմբում ծրագրի առաջնային խնդիրներից մեկն է՝ սովորեցնել երեխային ճիշտ բռնել մատիտը, վրձինը, դրանք բռնել 3 մատներով և ոչ բռունցքով: Այս հմտությունները ձևավորվում են բավականին երկար ժամանակի ընթացքում:

Մատիտներ

Նկարչության համար անհրաժեշտ է օգտագործել փափուկ մատիտներ:

Գունազգացողությունը զարգացնելու նպատակով մատիտանկարչության առաջին պարապմունքներին անհրաժեշտ է առաջարկել 2 գույնի մատիտներ, իսկ հետո՝ 4 գույնի: Սկզբից՝ սև և կարմիր գույներ, հետո՝ կապույտը և կանաչը, քանի որ սպիտակ թղթի վրա այս գույներով պատկերները վառ են արտահայտվում:

Առաջին իսկ պարապմունքներից դաստիարակի խնդիրն է՝ սովորեցնել երեխաներին նկատել թղթի վրա նկարած գծերը, հայացքով հետևել նկարող մատիտի շարժումներին: Հարկավոր է աստիճանաբար սովորեցնել գտնել նկարած գծիկների և շրջապատում գտնվող առարկաների ու երևույթների մեջև ընդհանրություն: Որպեսզի երեխայի գործողությունները չկրեն մեխանիկական բնույթ, պետք է դրանք կապել կերպարների և երևույթների հետ /անձրև է, ձյուն է գալիս, տերևաթափ է և այլն/: Անհրաժեշտ է տրամադրել երեխաներին՝ գիտակցված կրկնել նախկինում նկարված գծիկները: Այս փուլը կարևորվում է նրանով, որ երեխան հաջորդ պարապմունքներում կկարողանա պատկերել պարզ առարկաներ և երևույթներ /դաստիարակի օրինակով և առանց օրինակի /: Նման կերպարվեստային պարապմունքներին պետք է նախորդեն համապատասխան խաղեր, դիտումներ, որպեսզի երեխան լավ ճանաչի պատկերվող առարկան:

Երեխայի առաջին նկարները, որպես կանոն, իրենցից ներկայացնում են անկանոն, թույլ, սահող, պատահական՝ հիմնականում կոր գծեր: Մի քանի փորձից հետո գծերը դառնում են կանոնավոր: Կերպարվեստային գործունեության ընթացքում անհրաժեշտ է խրախուսել երեխայի յուրաքանչյուր առաջխաղացումը:

Վրձին, գուաշ, ջրաներկ

Դաստիարակը պետք է երեխաներին բացատրի ներկանյութերից, վրձնից ճիշտ օգտվելու կանոնները: Անհրաժեշտ է սովորեցնել նրանց ճիշտ բռնել վրձինը՝ այն պահել 3 մատներով և ոչ թե բռունցքով:

Դաստիարակը նախապես ջրով բացում է ջրաներկը կամ գուաշը՝ բավականին խիտ, որպեսզի այն չհոսի թղթի վրայից: Այս տարիքային խմբում դեռևս խնդիր չի դրվում հաղորդել իրական առարկայի գույնը: Դաստիարակը պետք է ցույց տա, թե ինչպես կարելի է վրձնի մազափունջը թաթախել ներկանյութի /գուաշի/ մեջ, կատարել հպումներ, քսվածքներ թղթի վրա: Դաստիարակը պետք է տեղյակ լինի, որ կարողությունները ձևավորվում են բավականին տևական ժամանակի ընթացքում :

Ուստի անհրաժեշտ է դրսևորել և համբերատարություն և հետևողական աշխատանքի շնորհիվ օգնել երեխաներին:

Երեխան վրձինը թաթախում է ներկի մեջ, ապա թղթի վրա հպումների, քսումների միջոցով թողնում վրձնահետքեր: Իհարկե, այս ամենը պետք է ուղեկցվի դաստիարակի խոսքային ցուցումներով և վերահսկողությամբ: Երեխան կարող է աշխատել ինչպես աջ, այնպես էլ ձախ ձեռքով: Այս դեպքում դաստիարակը պետք է միջամտի և ուղղորդի:

Երեխաներին պետք է առաջարկել ներկանյութով 3-4 մատիտանկարչության պարապմունքերից հետո: Սկզբում անհրաժեշտ է առաջարկել բոլոր երեխաներին աշխատել մեկ գույնով, որպեսզի նրանց ուշադրությունը կենտրոնանա վրձնից և ներկանյութերից ճիշտ օգտվելու կանոններին: Հաջորդ պարապմունքներին դաստիարակը կարող է փոխել ներկի գույնը: Տարեվեջին մեկ սեղանին դաստիարակը կարող է դնել 2-3 գույն :Պետք է սովորեցնել, որ նկարելուց հետո հարկավոր է վրձինը լվանալ, չորացնել չոր լաթով կամ անձեռոցիկով / ոչ թղթե/ և դնել վրձնամանի մեջ՝ վրձնափունջը դեպի վեր: Պարապմունքից հետո երեխաների աշխատանքները՝ նկարները պետք է թողնել չորանալու, և այնուհետև ցուցադրել նախատեսված տեղում: Անհրաժեշտ է սովորեցնել երեխաներին դիտել նկարները, գնահատել միմյանց աշխատանքները, ասել, թե որքան գեղեցիկ են նկարել:

Այս տարիքային խմբում ծրագրի խնդիրը չպետք է լինի առարկայի ճիշտ ձևի վերարտադրումը: Ցանկացած շտապողականություն կհանգեցնի բնականոն զարգացման խախտման: Սակայն, եթե երեխան ձգտում է փակել գիծը/ ստանալ շրջանաձև պատկեր/, ապա պետք է խրախուսել նրան, քանի որ, նա արդեն իր նկարածի մեջ տեսնում է որոշակի պատկերներ(թեև դրանք բացարձակապես նման չեն իրական առարկաների): Դաստիարակը պետք է ուշադիր լինի այս փուլում և երբեք չասի, թե՝ «Նման չես նկարել»: Նման վերաբերմունքը կարող է առաջացնել բացասական վերաբերմունք կերպարվեստային գործունեության նկատմամբ: Երեխայի մեջ կարող է ի հայտ գալ անվստահություն, հիասթափություն, և նա կարող է հրաժարվել գործունեությունից: Սովորելով նկարել շրջանաձև, երեխան փորձում է ստանալ պատկերներ, թեև դրանք կարող են լինել անհարթ, ունենալ անկյուններ: Բազմիցս նույն գործողությունները կատարելով, երեխայի մոտ աստիճանաբար ստացվում է ցանկալի պատկերը: Ինչպիսին էլ լինի աշխատանքի արդյունքը, միևնույն է աշխատելու ընթացքում երեխաներն ունենում են դրական հուզական, իսկ աշխատանքի վերջում՝ բավարարված զգացողություն: Դաստիարակները պետք է հիշեն, որ կերպարվեստային գործունեության մեջ կարևորը վերջնարդյունքը չէ, այլ աշխատանքի ընթացքը: Վերջնարդյունքի որակական փոփոխությունը տեղի է ունենում տարիների ընթացքում, այն էլ՝ հետևողական, համակարգված աշխատանքի արդյունքում: Պարապմունքի վերջում, երբ տեղի է ունենում կատարած աշխատանքների քննարկում, դաստիարակը ուշադրությունը դարձնում է այն հանգամանքին, թե ով ինչպե՞ս է հասել տվալ պարապմունքի նպատակին. ճիշտ է բռնել մատիտը կամ վրձինը, կարողացել է օգտվել ներկանյութից և ջրից, լսել է դաս-

տիարակի հրահանգները, կարողացել է նկարել ըստ նմուշօրինակի կամ առանց դրա:

Մատիտով և վրձնով նկարչության գործընթացը տեղի է ունենում հետևյալ փուլերով՝

Նկարչություն օդում

Երեխան «նկարում է» օդում, ձախ կամ աջ ձեռքի ուղիղ դիրքով, ցուցամատի օգնությամբ կատարելով տարբեր՝ ուղիղ, թեք, շրջանաձև շարժումներ: Այս հնարն օգնում է ընկալելու և հիշելու շարժման ուղղությունը:

Համատեղ նկարչություն

Նկարչությունը երեխայի և դաստիարակի համատեղ գործունեությունն է: Դաստիարակը վերցնում է իր ձեռքի մեջ երեխայի ձեռքը /մատիտը բռնած/ և սկսում նկարել թղթի վրա: Այս հնարը վարժեցնում է ճիշտ բռնել մատիտը, այն սեղմել թղթին թույլ և ուժեղ:Հարկավոր է նկարելու գործընթացն ուղեկցել խոսքով:

Կիսատ թողած նկարի շարունակություն

Երեխան պետք է ավարտի տրված անավարտ նկարը՝ ավելացնելով որոշ պարզ դետալներ: Այս մեթոդը հնարավորություն է տալիս ամրապնդել նախկինում ձեռք բերած կարողությունները /ճիշտ բռնել մատիտը, ստանալ տարբեր տեսակի գծեր և պատկերներ/:

Ինքնուրույն նկարչություն

Երեխան պետք է նկարի դաստիարակի կողմից առաջարկված թեման կամ ընտրի սեփական ցանկությամբ:

Կերպարվեստային պարապմունքների ժամանակ կարելի է կիրառել ոչ միայն ավանդական, այլև՝ ոչ ավանդական մեթոդներով նկարչություն:

Տարբեր արտահայտամիջոցներով /մատիկներով, աղի խմորով, ճմռթված թղթով, խցանով և այլն/ ոչ ավանդական մեթոդներով կարելի է ստանալ ինքնատիպ հետաքրքիր պատկերներ:

Ծեփ

Ծեփի պարապմունքների նպատակն է՝ երեխաների մեջ առաջացնել հետաքրքրություն ծեփվող նյութերի /պլաստիլին, կավ, աղի խմոր/ նկատմամբ: Ծանոթացնել ծեփանյութերի հատկություններին /փափուկ է, ծեփվող է, մասերի է բաժանվում, գլանվում է / և այդ նյութերով աշխատելու կանոններին: Սովորեցնել ստանալ գլանաձև և գնդաձև մարմիններ՝ ձեռքի ուղիղ և շրջանաձև շարժումներով:

Այս տարիքային խմբի ծեփակերտման պարապմունքների խնդիրն է ՝

- սովորեցնել ձեռքի ուղիղ /հետ-առաջ/ շարժումներով ստանալ գլանաձև մարմիններ,

- կատարել ծեփման վարժություններ՝ երաժշտության ռիթմին համապատասխան /հետ-առաջ, շրջանաձև/,
- կարողանալ երաժշտության փոփոխման հետ փոխել ծեփման շարժումները,
- սովորեցնել ձեռքի ափերի շրջանաձև շարժումներով ստանալ, գնդաձև մարմիններ,
- սովորեցնել՝ գլանի 2 ծայրերը միացնել միմյանց՝ սեղմման միջոցով,
- սովորեցնել՝ 2 գլանաձև մարմինները դնել միմյանց վրա խաչաձև և հատման տեղում սեղմել,
- սովորեցնել մեկ կտորից առանձնացնել մի քանի փոքրիկ կտորներ 2 մատով,
- սովորեցնել սկսած աշխատանքը հասցնել ավարտին,
- ձևավորել ինքնուրույն աշխատելու կարողություններ,
- սովորեցնել՝ խաղերի մեջ կիրառել ծեփած խաղալիքները:

Ծեփակերտում

Այս տարիքային խմբում ծեփի պարապմունքների ժամանակ գնդաձև և գլանաձև առարկաների վերաբերյալ պատկերացումները շուտ են ձևավորվում՝ քան նկարչության պարապմունքների ժամանակ: Սկզբնական շրջանում երեխաները մեկ ամբողջական ծեփանյութից առանձնացնում /պոկում/ են մի քանի տարբեր չափի կտորներ: Այնուհետև այդ փոքրիկ մասնիկներին կարողանում են տալ որոշակի ձև՝ ձեռքի ափերի հետ-առաջ /գլանաձև/և շրջանաձև շարժումներով /գնդաձև/: Ծեփանյութը պետք է լինի փափուկ: Երեխաների ձեռքի մատների մանր մկանները դեռևս թույլ են զարգացած: Նրանց պետք է օգնել այնքան ժամանակ, մինչև ձեռքի մկանները կզարգանան և կաշխատեն ավելի վստահ և ինքնուրույն: Սկզբում դաստիարակը պետք է երեխայի ձեռքերը վերցնի իր ափերի մեջ և ցույց տա, թե ինչպես են ձեռքի ափերի համապատասխան շարժումներով ստանում գունդ կամ գլան: Երեխաները աստիճանաբար այդ գործողությունը կատարում են գիտակցաբար: Անհրաժեշտ է ծեփանյութերին ծանոթացումը և ծեփակերտման աշխատանքը կազմակերպել խաղի ձևով:

Երեխաներին պետք է հնարավորություն տալ՝ շոշափելու միջոցով զգալ այդ նյութերը, տեսնել, թե ինչպես է ձևափոխվում գունդը՝ ձեռքի ափերի սեղմումով և մատների օգնությամբ /տափակացնել, ստանալ խորություն/:

Սովորեցնել ծեփել գնդաձև և գլանաձև մարմիններից՝

- պարզ տեսքի առարկաներ՝ օղեր, թխվածքաբլիթներ, անիվ և այլն,
- պարզ տեսքի մրգեր, հատապտուղներ և այլն:

Աշխատանքի ընթացքում հարկավոր է օգտվել խոնավ լաթից, աշխատանքի ավարտին մաքրել աշխատատեղը:

Երեխային հետաքրքրում են ոչ միայն ծեփման ընթացքը, այլև վերջնական տեսքը, դաստիարակի խրախուսական խոսքը: Սակայն ինչպիսին էլ լինի աշխատանքի արդյունքը, միևնույնն է, դա երեխայի զգայական ընկալման վերարտադրման շնորհիվ ստեղծված պատկերն է, որը ուրախություն և հրճվանք է պարգևում հենց իրեն: Իսկ դա այս տարիքային խմբում առավել կարևոր է, քան վերջնարդյունքի տեսքը:

Ծրագիրը նախատեսում է շաբաթական մեկական նկարչության պարապմունք, իսկ ծեփի և կառուցողական պարապմունքներն անցկացնել շաբաթական մեկ անգամ՝ հերթագայությամբ:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ծրագրում այս բաժնի նպատակն է՝ շարունակել ծանոթացնել կառուցողական նյութերի տեսակներին, հատկություններին և դրանց առանձնահատկություններին:

Հիմնական խնդիրները

Սովորեցնել տարբերակել շինարարական և կառուցողական նյութերի որոշ տեսակներ՝ ըստ ձևի, չափի, գույնի:

Սովորեցնել կառուցել պարզ շինություններ՝ ուղղահայաց, հորիզոնական, հաջորդական դիրքերով:

Շարունակել ձևավորել հետաքրքրասիրությունը կառուցումների նկատմամբ:

Երեխաներին սովորեցնել Ճանաչել տարածության մեջ գտնվող կառուցողական նյութերը՝ անկախ դրանց դիրքից /ուղղահայաց, հորիզոնական /, ճիշտ անվանել դրանք՝ խորանարդ, աղյուս, սալիկ, գլան, բուրգ: Հասկանալ և ճիշտ օգտագործել որոշ հասկացություններ՝ մեծ-փոքր, լայն- նեղ, բարձր-ցածր, երկար- կարճ: Ճիշտ հասկանալ և կատարել դաստիարակի հրահանգները. տա՛ր, բե՛ր, դի՛ր, հավաքի՛ր, դասավորի՛ր, խնդրեմ:

Զարգացնել երեխայի ուշադրությունը, դիտողականությունը, հետաքրքրասիրությունը: Խթանել երեխայի ինքնուրույն գործունեության զարգացմանը: Երեխան սկսում է գործ ունենալ տարբեր ձև ունեցող կառուցողական նյութերի հետ, համեմատում, զուգորդում, այնուհետև կառուցում է աշտարակ, դարպասներ, ճանապարհ, սղարան, տուն և այլն: Ուսումնական տարվա ընթացքում աստիճանաբար պետք է բարդացնել առաջադրանքները:

Կառուցողական գործունեության ընթացքում երեխաների մեջ ձևավորվում է զգայական փորձ, զարգանում են պարզ կառուցողական հմտություններ:

Այս տարիքային խմբում կազմակերպվում է նաև խավատախտակի վրա կառուցողական բնույթի աշխատանք: Հարթության վրա կառուցումները ձևաորում են երեխայի տարածական ընկալումները և պատկերացումները /վերև, ներքև և այլն/:

Երեխաները սկսում են հանդես բերել հետաքրքրություն հարթապատկերային կառուցումների նկատմամբ: Խավատախտակի վրա դասավորում կամ հավաքում են պատկերներ /նվազագույնը 2 մասից բաղկացած/:

Զարգանում է ճանաչողական գործունեությունը, ընդլայնվում են տարրական պատկերացումները շրջապատող առարկաների նկատմամբ: Հարստանում է զգայական փորձը, բառապաշարը, զարգանում են ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, կառուցողական կարողությունները:

Պարապմունքի ընթացքում նրանք ուսումնասիրում են առարկաները, անվանում հատկությունները /մեծ, փոքր, թեթև երկար, կարճ և այլն, գույնը, ձևը:

Կառուցումների ընթացքում զարգանում է միմյանց հետ շփվելու, հաղորդակցվելու կարողություն: Երեխաները ձգտումեն աշխատել ինքնուրույն և համբերատար: Նրանց մեջ մշակվում է կառուցողական և շինարարական նյութերը քանդելու, ճիշտ տեղում դասավորելու, տարածքը կոկիկ հավաքելու կարողություն:

Այս տարիքային խմբում կառուցողական աշխատանքների համար երեխաները կարող են օգտագործել խոշոր և մանր կառուցողական նյութեր:

Կրտսեր առաջին խմբում երեխաները տարվա ընթացքում սովորում են պատրաստել 8-10 պարզ կառույցներ: Առաջին պարապմունքներին պետք է շարունակել կառուցել նախորդ տարիքային խմբից ծանոթ կառույցները /նվազագույնը՝ 2 դետալներից բաղկացած/: Աստիճանաբար. ավելացնելով դետալների քանակը՝ երեխաները սկսում են կառուցել տարբեր չափի, գույնի և բարձրության շինություններ /4-6 դետալներ /խորանարդիկներով, աղյուսներով, գլաններով, բուրգերով:

Յուրաքանչյուր պարապմունքից առաջ, կառուցողական աշխատանքները կազմակերպելու համար պետք է սկսել կառուցել ամբողջական դիտումից հետո. հարկավոր է երեխաների ուշադրությունը բևեռել կառույցի առանձին դետալների վրա /պատեր, տանիք, դուռ, դարպաս, աստիճան և այլն/: Անհրաժեշտ է ցույց տալ դրանց դասավորվածությունը միմանց նկատմամբ՝ կիպ կպած, ուղղաձիգ դիրքով, իրար հավասար, հորիզոնական, հաջորդական դիրքերով:Վերլուծելով նմուշօրինակը՝ դաստիարակը խնդիր է դնում սովորեցնել կառուցման ձևերը՝ հստակ հետևելով նմուշօրինակին: Նման մոտեցումը կնպաստի ձեռք բերած կարողությունները կիրառել ինքնուրույն կառույցների մեջ: Այդ նպատակով երեխաներին պետք է ցուցադրել նույն կառույցի ստացման մի քանի տարբերակներ: Հարկավոր է գտնել նմուշօրինակի և կառուցած առարկայի միջև նմանություններ:

Յուրաքանչյուր պարապմունքի ավարտին պետք է ցույց է տալ՝ ինչպես խաղալ տվյալ կառույցով և հնարավորություն տալ երեխաներին 2-3 րոպե խաղալ պատրաստած կառույցներով: Խաղը հետաքրքիր կազմակերպելու համար կարող են ավելացվել շինության չափերին համապատասխան այլ խաղալիքներ՝ տիկնիկներ, կենդանիներ, մեքենաներ և այլն: Այսպես ձևավորվում է հետաքրքրությունը կառուցողական նյութերով խաղային գործունեության նկատմամբ:

Այս տարիքում կառուցողական աշխատանքները միահյուսվում են սյուժետային խաղին և հանդես են գալիս և՛ որպես միջոց, և՛ որպես բաղադրիչ: Խաղը հանդիսանում է որպես շարժառիթ՝ պարզ կառուցումներ անելու համար, դրա հետևանքով կառուցողական աշխատանքները համարվում են սյուժետային կոմպոզիցիաներ: Կառուցողական աշխատանքները ուղղորդվում են դաստիարակի հրահանգներով, որոնք երեխան պետք է լսի և կատարի: Աստիճանաբար, շարունակելով ձևավորել կառուցողական կարողությունները, դաստիարակը մղում է երեխաներին ինքնուրույն գործունեության:

Տարեսկզբին պարապմունքները պետք է կազմակերպել ենթախմբերով /4-6 երեխա/: Աստիճանաբար, ավելացնելով ենթախմբի երեխաների քանակը, երկրորդ կիսամյակից պարապմունքերըկարելի է անցկացնել ամբողջ խմբի հետ:

Կառուցողական նյութերի անուններն ամրապնդելու նպատակով դաստիարակը կառույցների քանդման և հավաքման գործնթացում խմբավորում է կառուցողական

նյութերը՝ ըստ ձևի, չափի, գույնի, և առաջարկում դրանք դնե իրենց լ հատկացված տեղում:

Դաստիարակը ամբողջ ուսումնական տարվա ընթացքում սովորեցնում և ամրապնդում է տարրական կառուցողական կարողություններ և հմտություններ, մոդուլներեխաներին ինքնուրույն կառուցողական գործունեության, որտեղ նրանք կիրականացնեն սեփական մտահղացումները:

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

Նկարչություն

- Ճանաչել նկարչական նյութերը, միջոցները,
- ճիշտ բռնել մատիտը / 3 մատով/, յուղամատիտը, վրձինը,
- հայացքով հետևել մատիտի, վրձնի շարժման ուղղությանը թղթի վրա,
- հանել վրձնից ավելորդ ջուրը կամ ջրաներկը՝ ջրամանի եզրին քսելով,
- աշխատել փորձաթղթով,
- ներկել վրձնով,
- ճանաչել և տարբերել հիմնական գույները,
- նկարելու ընթացքում պահպանել ճիշտ կեցվածք,
- խնամքով օգտագործել նկարչական նյութերը և օգտագործել դրանք ըստ անհրաժեշտության,
- նկարել թղթի վրա տարբեր ուղղություններով գծեր:

Ծեփ

(պլաստիլին, աղի խմոր, կավ)

- Ճանաչել ծեփվող նյութերը,
- շրջանաձև շարժումներով ստանալ գնդաձև մարմին,
- ծեփել գլան հետ-առաջ շարժումներով,
- գլանի եզրերը միացնել իրար՝ ամուր սեղմելով,
- ծեփանյութից պոկել փոքր մասեր,
- ափերի միջոցով տափակացնել ծեփանյութը,
- սովորել ծեփել պարզ առարկաներ,
- աշխատել կոկիկ,
- օգտվել տակդիրից:

Կառուցողական աշխատանք

- Տարբերել և անվանել կառուցողական հիմնական նյութերը /ըստ ձևի, գույնի/,
- մեծահասակի օգնությամբ կառուցել նմուշին համապատասխան պարզ շինություն,
- օգտագործել հնարավորինս շատ կառուցողական նյութեր,
- խաղալ կառուցած շինություններով :

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԿՐՏՍԵՐ ԱՌԱՋԻՆ ԽՄԲՈՒՄ

Պարապմունքների քանակը /շաբաթական, ամսական, տարեկան կտրվածքով/

Կերպարվեստային գործունեության տեսակները	Շաբաթվա ընթացքում		Ամսվա ընթացքում	Տարվա ընթացքում	
	1 կիսամյակ	II կիսամյակ	I կիսամյակ	II կիսամյակ	
Նկարչություն	1	1	4	4	34
Ծեփ	0.5	0.5	2	2	17
Կառուցողական	0.5	0.5	2	2	17

նկարչություն

Սեպտեմբեր-նկարչություն			
	Թեմա	Նպատակը	Անհրաժեշտ նյութեր
1.	Մեր օգնականները՝ մատիտներ և վրձիններ	Ծանոթացնել՝ - կերպարվեստային նյութերին, մատիտին, վրձնին, ներկանյութերին և դրանց հատկություններին, - վրձնից և մատիտից ճիշտ օգտվելու կանոններին:	Ալբոմի թուղթ, գունավոր մատիտներ, տարբեր տեսակի վրձիններ, ջրաներկ, գուաշ:
2.	Սովորենք նկարել մատիտով	Շարունակել՝ -ծանոթացնել մատիտով աշխատելու կանոններին՝ բռնել սրված մասից մի փոքր վերև 3 մատով, մատիտը ուժեղ չսեղմել թղթին: -սովորեցնել նկարել միայն թղթի վրա: Ձևավորել՝ -հետաքրքրություն և դրական վերաբերմունք նկարչության նկատմամբ:	Ալբոմի թուղթ, գունավոր մատիտների հավաքածու /ըստ երեխաների քանակի/:
3.	Ճանապարհ ճուտիկների համար /մատիտ/	Առաջացնել հետաքրքրություն՝ թեմայի և նկարչության գործընթացի նկատմամբ: Սովորեցնել՝ - ճիշտ բռնել մատիտը, -նկարել ցանկացած ուղղություններով, սահուն շարժումներով մատիտի օգնությամբ՝ ճանապարհ:	Ալբոմի թուղթ, գունավոր մատիտների հավաքածու /ըստ երեխաների քանակի/, պատկերազարդ նկարներ /հավ և ճուտիկներ/:

4.	**Դեղին տերևներ** /վրձին/	Շարունակել սովորեցնել՝ - նկարել վրձնահպումներով տերևներ, - ճիշտ բռնել վրձինը, -ճիշտ օգտվել ներկանյութերից, փորձաթղթից, լաթից, - աշխատանքի վերջում ճիշտ լվանալ վրձինը:	Ալբոմի թուղթ, վրձին, ջրաներկ կամ գուաշ, փորձաթուղթ, ջուր, լաթ, տարբեր տեսակի աշնանային տերևներ պատկերող նկարներ, տերևներ:
		Հոկտեմբեր-նկարչություն	
1	**Անձրև՛, անձրև՛, ե'կ, ե'կ** /մատիտ կամ յուղամատիտ/	Սովորեցնել ՝ - նկարել թղթի վրա, - նկարել կարճ գծեր, -անել վրձնահարվածներ վերևից-ներքև: Ծանոթացնել կապույտ գույնին:	Ալբոմի թուղթ, կապույտ գույնի մատիտներ, անձրև պատկերող նկարներ:
2	**Աշնանային անձրև** /վրձին/	Շարունակել սովորեցնել՝ -վրձնահպումներով նկարել անձրև, - ճիշտ բռնել վրձինը, - ճիշտ օգտվել ներկանյութերից, փորձաթղթից, լաթից, - ճիշտ լվանալ վրձինը: Ծանոթացնել հիմնական գույներից՝ կարմիր գույնին:	Ալբոմի թուղթ, վրձին, ջրաներկ կամ գուաշ, ջուր, փորձաթուղթ, լաթ, անձրև պատկերող նկարներ:
3	**Տերևաթափ** /մատնանկարչություն/	Շարունակել սովորեցնել՝ -նկարել մատիկներով՝ թղթի վրա, -նկարել մատիկների ռիթմիկ շարժումներով, -կատարել երաժշտության ռիթմին համապատասխանշարժումներ: Ծանոթացնել հիմնական գույներից՝ դեղին գույնին:	Ալբոմի թուղթ, ջրաներկ կամ գուաշ, ջրաման, փորձաթուղթ, լաթ, տերևաթափ պատկերող նկարներ:
4	**Մանկապարտեզի ճանապարհը** /մատնանկարչություն/	Շարունակել սովորեցնել՝ -նկարել մատիկներով ճանապարհ, -ռիթմիկ հպումների միջոցով թղթի զոլակի վրա թողնել մատնահետքերը: Շարունակել ծանոթացնել՝ հիմնական գույներին /կարմիր, կապույտ, դեղին/: Ամրապնդել գույների անվանումները: Առաջացնել հետաքրքրություն և դրական վերաբերմունք մատնանկարչության նկատմամբ:	Ցուցապաստառ՝ 2 դեմ - դիմաց գտնվող տնակներ՝ կապույտ և կարմիր տանիքներով, տնակներին միացնում են ճանապարհը, թղթե զոլակներ /ալբոմի թղթի 1/2 երկարությամբ/, ջրաներկ կամ գուաշ, փորձաթուղթ, ջրաման, լաթ:

Նոյեմբեր-նկարչություն			
1	**Գունավոր կծիկներ** /մատիտ/	Սովորեցնել՝ շրջանաձև շարժումներով նկարել թելի գունավոր կծիկներ: Ամրապնդել հիմնական գույների անվանումները: Զարգացնել ձեռքի մանր մկանային համակարգը (մոտորիկան):	Ալբոմի թուղթ, գունավոր մատիտներ:
2	**Հրավառություն** /մատնանկարչու-թյուն/	Շարունակել սովորեցնել՝ -նկարել մատիկներով, -նկարել տարբեր գույներով, -օգտվել փորձաթղթից, -աշխատել կոկիկ: Առաջացնել ուրախություն և հրճվանք:	Մուգ գույնի թղթեր, ջրաներկ կամ գուաշ կարմիր, կապույտ, դեղին գույնի, փորձաթուղթ, լաթ, ջրաման:
3	**Զարդարենք տիկնիկի զգեստը** /վրձին/	Սովորեցնել՝ - վրձնահպումներով զարդարել տիկնիկի հագուստը, - նկարել ծանոթ գույներով: Ամրապնդել վրձնահպումների տեխնիկան:	Տիկնիկի զգեստի ստվերապատկեր, ջրաներկ կամ գուաշ կարմիր, կապույտ, դեղին գույնի, վրձին, փորձաթուղթ, լաթ:
4	**Ցանկապատով տնակ** /վրձին/	Շարունակել սովորեցնել՝ - վրձնով ներկանյութը վերցնել ըստ անհրաժեշտության, -օգտվել փորձաթղթից, - տանել գծեր վերևից-ներքև: Դաստիարակել խնամքով աշխատելու կարողություն:	Տնակ և ցանկապատ պատկերող ցուցապաստառ, ջրաներկ կամ գուաշ, փորձաթուղթ, լաթ,
Դեկտեմբեր-նկարչություն			
1	**Ձյուն է գալիս փաթիլ-փաթիլ** /վրձին	Ծանոթացնել նոր նյութին/բամբակ/: Սովորեցնել՝ - վրձնի օգնությամբ նկարել «փաթիլներ» բամբակե շրջանակի վրա, -օգտվել փորձաթղթից, -բամբակի մակերեսը ներկել կապույտ գույնով:	Բամբակե շրջանակ /դիմահարդարման բամբակներ/, կապույտ գույնի ջրաներկ կամ գուաշ, փորձաթուղթ, վրձին, լաթ, փաթիլ պատկերող նկարներ:
2	**Զարդարենք թաթմանը** /վրձին	Շարունակել սովորեցնել՝ - ծանոթ գույներով զարդարել ստվերապատկերը, -օգտվել փորձաթղթից: Ամրապնդել վրձնով նկարելու տեխնիկան՝ օգտագործելով տարբեր գույներ:	Նմուշօրինակ, թաթմանի ստվերապատկեր, կարմիր, կապույտ, դեղին գույնի ջրաներկ կամ գուաշ, փորձաթուղթ, վրձին, լաթ:
3	**Զարդարենք տոնածառը** /վրձին/	Շարունակել սովորեցնել՝ - կանաչ գույնով զարդարել եղևնու ստվերապատկերը: Ամրապնդել՝	Նմուշօրինակ, երեխաների թվով կանաչ գույնի եղևնու ստվերապատ-

		- վրձնահպումներով նկարելու տեխ-նիկան, - հիմնական գույներով աշխատելու կարողությունը, -օգտվել փորձաթղթից: Աշխատել կոկիկ:	կերներ, ջրաներկ կամ գուաշ, վրձին, փորձաթուղթ, լաթ:
4	**Զարդարենք տոնածառի խաղալիք** /վրձին/	Շարունակել սովորեցնել՝ - ծանոթ գույներով զարդարել տոն-ածառի խաղալիքի ստվերապատ-կերը, -օգտվել փորձաթղթից: Ամրապնդել վրձնով նկարելու տեխ-նիկան՝ օգտագործելով տարբեր գույներ:	Նմուշօրինակ, տոնածառի խաղա-լիքի ստվերապատ-կեր, կարմիր, կա-պույտ, դեղին գույնի ջրաներկ կամ գուաշ, փորձաթուղթ, վրձին, լաթ:
Հունվար- նկարչություն			
1	**Ձյուն է գալիս** /վրձին/	Շարունակել՝ -սովորեցնել ճիշտ բռնել վրձինը, -մազափունջը ամբողջությամբ ներկի մեջ թաթախել, -մուգ գույնի թղթի մակերեսին պատկերել փաթիլներ՝ մազափուն-ջը հպելով, -օգտվել փորձաթղթից, -սովորեցնել ճանաչել և ճիշտ անվանել ծանոթ գույները:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, ջրա-ներկ կամ գուաշ, վրձին, փորձաթուղթ, վրձին, լաթ, ջրաման:
2	**Բազմագույն օղակներ** /վրձին/	Շարունակել սովորեցնել՝ -նկարել շրջանաձև առարկաներ, - օգտվել փորձաթղթից: Կատարել վրձինը լվանալու վար-ժություններ: Զագացնել գունային ընկալումները:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, ջրա-ներկ կամ գուաշ, վրձին, փորձաթուղթ, վրձին, լաթ, ջրաման:
3	**Ձնագնդիներ** /վրձին/	Շարունակել սովորեցնել՝ -ճիշտ գունավորելու տեխնիկան՝ դուրս չգալով սահմաններից, - օգտվել փորձաթղթից: Ամրապնդել՝ -շրջանաձև առարկաներ նկարելու կարողությունը: Կրկնել ձնագնդիներ պատկերելը:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, ջրա-ներկ կամ գուաշ, վրձին, ջրաման, փորձաթուղթ, վրձին, լաթ:
4	**Ձնակույտեր** /վրձին/	Շարունակել սովորեցնել՝ - ճիշտ բռնել վրձինը, -մազափունջը ամբողջությամբ ներկել, - օգտվել փորձաթղթից, -պատկերել ձնակույտեր մուգ գույնի թղթի մակերեսին, - ամրապնդել ծանոթ գույնի նկատ-մամբ երեխաների ընկալումները:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, ջրա-ներկ կամ գուաշ, վրձին, ջրաման, փորձա-թուղթ, վրձին, լաթ:

		փետրվար-նկարչություն	
1	**Գունավոր գնդակներ** /մատիտ/	Սովորեցնել՝ -նկարել շրջանաձև առարկաներ՝ գնդակներ, -անվանել նկարած առարկան:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, գունավոր մատիտներ:
2	**Անձրև է գալիս** /մատիտ/	Սովորեցնել՝ - նկարել կարճ և երկար գծեր, - ճիշտ բռնել մատիտը, - տեսնել երևույթի պատկերը: Զարգացնել նկարելու կարողությունը:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, գունավոր մատիտներ:
3	**Վառենք լույսերը** /վրձին/	Սովորեցնել՝ - նկարել վառ գույներով, - նկարել «պատուհանին» կետիկներ, վրձնահետքեր, -աշխատել կոկիկ, - օգտվել փորձաթղթից: Ամրապնդել ներկերի և վրձնի հետ աշխատելու կարողությունը:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, ջրաներկ կամ գուաշ, վրձին, փորձաթուղթ, վրձին, լաթ, ջրաման:
4	**Մտահղացմամբ նկարչություն** /վրձին/	Սովորեցնել ինքնուրույն ընտրել՝ -նկարչական միջոցները՝ ջրաներկ, գուաշ, մատիտ, - օգտվել փորձաթղթից, - ինքնուրույն ընտրել թեման: Ամրապնդել ներկերի և վրձնի հետ աշխատելու կարողությունը:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, ջրաներկ գուաշ, վրձին, մատիտներ, փորձաթուղթ, վրձին, լաթ, ջրաման:

		Մարտ-նկարչություն	
1	**Բազմագույն օղակներ** /մատիտ/	Շարունակել սովորեցնել՝ - նկարել շրջանաձև շարժումով օղակ՝ մեկ գծով, առանց ընդհատելու, - Ճիշտ բռնել մատիտը:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, գունավոր մատիտներ:
2	**Բազմագույն դարպասներ** /մատիտ/	Սովորեցնել՝ - նկարել աղեղնաձև գծեր, - ճանաչել և անվանել աղեղնաձև գծերը, - օգտվել փորձաթղթից: Ամրապնդել մատիտը Ճիշտ բռնելու կարողությունը:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, գունավոր մատիտներ:
3	**Հրավառություն** /վրձին/	Շարունակել սովորեցնել՝ - Ճիշտ բռնել վրձինը, - վրձնի մազափունջը ներկել ամբողջությամբ, - ճանաչել և անվանել դեղին և կարմիր գույները, - վրձնի վրայից ավելորդ ներկը հանել ներկամանի եզրին քսելով:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, ջրաներկ կամ գուաշ, վրձին, փորձաթուղթ, վրձին, լաթ, ջրաման:

4	**Օղակներ** /մատիտ/	Շարունակել սովորեցնել ` -Ճիշտ բռնել մատիտը, - օգտագործել տարբեր գույնի մատիտներ, -նկարել շրջանի ձև ունեցող առարկաներ: Շարունակել վարժեցնել ձեռքի շրջանաձև շարժումները:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, գունավոր մատիտներ
		Ապրիլ-նկարչություն	
1	**Ուրախ արև** /մատիտ/	Սովորեցնել` - նկարել արև /շրջան. ուղիղ , թեք, կարճ գծեր /: Զարգացնել հետաքրքրություն նկարչության նկատմամբ:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, գունավոր մատիտներ:
2	**Անձրև է գալիս** /վրձին/	Շարունակել սովորեցնել` - վրձնահպումով նկարել անձրև, - վրձինը ճիշտ բռնելու կարողությունը, - վրձնի վրայից ավելորդ ներկը հանել ներկամանի եզրին քսելով, - օգտվել փորձաթղթից:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, ջրաներկ կամ գուաշ, վրձին, փորձաթուղթ, վրձին, լաթ կամ անձեռոցիկ, ջրաման:
3	**Զարդարենք տիկնիկի հագուստը** /վրձին/	Սովորեցնել` -ճիշտ բռնել վրձինը, - տիկնիկի հագուստը զարդարել ռիթմիկ վրձնահարվածներով, - օգտվել փորձաթղթից: Զարգացնել գույնի ընկալումը: Ամրապնդել գիտելիքները գույների վերաբերյալ:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, ջրաներկ կամ գուաշ, վրձին, փորձաթուղթ, վրձին, լաթ, ջրաման:
4	**Ճանապարհորդ Գնդիկ-բոքոնիկը** /մատիտ/	Շարունակել սովորեցնել` - շրջանաձև նկարել, - նկարել գնդիկ-բոքոնիկ: Զարգացնել հետաքրքրություն նկարչության նկատմամբ:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, գունավոր մատիտներ:
		Մայիս-նկարչություն	
1	**Ցանկապատ** /վրձին/	Շարունակել սովորեցնել` - ճիշտ բռնել վրձինը, - նկարել ուղիղ գծեր` վերևից-ներքև, - վրձնի վրայից ավելորդ ներկը հանել ներկամանի եզրին քսելով, - օգտվել փորձաթղթից:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, ջրաներկ կամ գուաշ, վրձին, փորձաթուղթ, վրձին, լաթ, ջրաման:
2	**Կանաչ խոտ** /մատիտ/	Սովորեցնել` -նկարել խոտ, -շարունակել սովորեցնել նկարել կարճ, ընդհատված ուղիղ գծեր:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, գունավոր մատիտներ:

3	**Ցանկապատ** /մատիտ/	Շարունակել սովորեցնել՝ -ճիշտ բռնել մատիտը, - տանել ուղղահայաց գծեր վերևից-ներքև: Ամրապնդել նախկինում ձեռք բերած կարողությունները:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, գունա-վոր մատիտներ:
4	**Մտահղացմամբ նկարչություն** /վրձին/	Սովորեցնել ինքնուրույն ընտրել ՝ - նկարչական միջոցները՝ ջրաներկ, գուաշ, մատիտ, - ինքնուրույն ընտրել թեման: Ուրախանալ իր նկարածով:	Նմուշօրինակ, ալբոմի թուղթ, ջրա-ներկ կամ գուաշ, վրձին, մատիտներ, փորձաթուղթ, լաթ, ջրաման:

Ծեփ և կառուցողական աշխատանքներ

		Սեպտեմբեր **Ծեփ**	
1	**Ծանոթանանք ծեփվող նյութերին**	Ծանոթացնել՝ - ծեփվող նյութերին, - հատկություններին, - ծեփվող նյութերով աշխատելու կա-նոններին:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/, տակ-դիր, լաթ:
2	**Ծեփենք ցանկապատ**	Սովորեցնել՝ - ծեփել գլանաձև մարմին, դրանցով ստանալով ցանկապատի ճաղեր, - ճանաչել նյութի հատկությունները: -կատարել երաժշտության ռիթմին համապատասխան շարժումներ /հետ-առաջ/:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/, տակ-դիր, լաթ:
		Կառուցողական աշխատանքներ	
3	**Աշտարակ**	Ամրապնդել կառուցողական նյութերը միմյանց վրա դնելու կարողությունները: Կառուցել աշտա-րակ՝ուղղահայաց շինություն /4-5 դետալներից/: Կառույցն ավարտել համապատասխան գույնի դրոշակով: Զարգացնել կապակցված խոսքը:	Կառուցողական նյութեր
4	**Աշտարակ**	Սովորեցնել կառուցել 2 աշտարակներ՝ տարբեր գույնի և բարձրության: Ավարտել կառույցը համապատաս-խան գույնի բուրգով: Ամրապնդել աշտարակի վերաբերյալ կառուցողական պատկերացումները:	Կառուցողական նյութեր

Հոկտեմբեր Ծեփ			
1	**Կաթկթում է անձրևը**	Սովորեցնել՝ - մեկ ամբողջ ծեփանյութից առանձնացնել մի քանի **փոքրիկ մասնիկներ** և դրանք տեղադրել թղթի վրա՝ որպես անձրև: - Ծանոթացնել կապույտ գույնին:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/, տակդիր, լաթ:
2	**Հավ մայրիկը**	Ծանոթացնել կարմիր գույնին: Սովորեցնել՝ - մեկ ամբողջ կտոր ծեփանյութից առանձնացնել մի քանի կտորներ, - ձեռքի ափի շրջանաձև շարժումներով ծեփել փոքրիկ կարմիր գնդիկներ՝ իբրև, հավիկի «կերակրման» կուտեր: Աշխատել տակդիրի վրա:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/, տակդիր, լաթ:
	Կառուցողական աշխատանքներ		
3	**Աշտարակ**	- Ամրապնդել աշտարակ կառուցելու կարողությունը: - Սովորեցնել կառուցել տարբեր չափի աշտարակներ՝ խորանարդիկներով /մեծ, փոքր/:	Կառուցողական նյութեր
4	**Ճանապարհ**	Սովորեցնել՝ - ճիշտ օգտագործել կառուցողական նյութերը, - աղյուսները դնել լայնությամբ՝ կիպ կպած իրար:	Կառուցողական նյութեր

Նոյեմբեր Ծեփ			
1	**Կերակրենք ծիտիկներին**	Ծանոթացնել դեղին գույնին: Շարունակել սովորեցնել՝ - ձեռքի ափի շրջանաձև շարժումներով ծեփել փոքրիկ գնդիկներ՝ -ծրտիկների «կերակրման» համար ծեփել դեղին փոքրիկ գնդիկներ: Ծեփել խաղալով: Աշխատել տակդիրի վրա:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/, տակդիր, լաթ
2	**Տիկնիկի ուլունքներ**	Սովորեցնել՝ - մեկ ամբողջ կտոր ծեփանյութից առանձնացնել մի քանի փոքրիկ կտորներ, - ձեռքի ափի շրջանաձև շարժումների օգնությամբ ծեփել գնդիկներ փոքրիկ կտորներից: Աշխատել ծանոթ գույներով: Աշխատել տակդիրի վրա:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/, տակդիր, լաթ

		Կառուցողական աշխատանքներ	
3	**Տարբեր Ճանապարհներ**	Ամրապնդել՝ «լայն», «նեղ», «երկար», «կարճ» հասկացությունները՝ կառուցման միջոցով: Խթանել կառուցելու տարբեր տեսակի ճանապարհներ:	Կառուցողական նյութեր
4	**Հեքիաթային դարպաս**	Սովորեցնել՝ -կառուցել ըստ նմուշի, -գնահատել իր և ընկերոջ աշխատանքը, - խաղալ կառույցներով:	Կառուցողական նյութեր
		Դեկտեմբեր **Ծեփ**	
1	**Գնդիկ-բոքոնիկ**	Շարունակել սովորեցնել՝ - ծեփել գնդաձև մարմիններ, -փոքրիկ կտորներից ստանալ գնդիկներ /ձեռքի ափերի օգնությամբ շրջանաձև շարժումներով/:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/, տակդիր, լաթ
2	**Հրաշագործ մատիտները**	Շարունակել սովորեցնել՝ - ստանալ գլանաձև մարմիններ՝ ձեռքի ափերի հետ-առաջ շարժումներով: - Ծեփել մատիտներ: Զարգացնել ծեփելու ցանկությունը: Աշխատել տակդիր վրա:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/,լաթ, տակդիր
		Կառուցողական աշխատանքներ	
3	**Սղարան**	Շարունակել սովորեցնել՝ - կառուցողական գործողությունները կատարել հաջորդաբար, - կառուցողական նյութերը դնել իրար հավասար, -վերահսկել սեփական գործողությունները: Գտնել նմուշ օրինակի և կառուցած առարկայի միջև նմանություններ:	Կառուցողական նյութեր
4	**Խաղահրապարակ**	Շարունակել սովորեցնել՝ - կառուցողական գործողությունները կատարել հաջորդաբար, - կառուցողական նյութերը դնել իրար հավասար, -վերահսկել սեփական գործողությունները: Գտնել նմուշօրինակի և կառուցած առարկայի միջև նմանություններ:	Կառուցողական նյութեր

Հունվար **Ծեփ**			
	Ընկույզներ	Ամրապնդել գնդաձև առարկաներ ծեփելու կարողությունները: Սովորեցնել ծեփել ընկույզներ: Վարժեցնել ձեռքի ափերի շրջանաձև շարժումները: Աշխատել տակդիրի վրա:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/,լաթ տակդիր
2	**Մեզ հյուր են եկել գունավոր մատիտները**	Շարունակել սովորեցնել՝ ձեռքի ափերի օգնությամբ «հետ ու առաջ» շարժումներով ստանալ գլան: Խրախուսել ծեփելու ցանկությունը: Աշխատել տակդիրի վրա:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/,լաթ տակդիր
		Կառուցողական աշխատանքներ	
3	**Ցանկապատ**	Սովորեցնել ՝ -աղյուսներով կառուցումներ անել ըստ նմուշի, -աղյուսները շարել կողք-կողքի ուղղաձիգ դիրքով:	Կառուցողական նյութեր
4	**Ցանկապատ դռնակով**	Ամրապնդել՝ աղյուսներով ցանկապատ կառուցելու կարողությունը, «բարձր», «ցածր» հասկացությունների յուրացումը:	Կառուցողական նյութեր
Փետրվար **Ծեփ**			
1	**Բազմագույն գնդիկներ**	Շարունակել սովորեցնել՝ - փոքրիկ կտորներից գնդիկներ ծեփելու կարողությունը /ձեռքի ափերի օգնությամբ շրջանաձև շարժումներով/, - ծեփել բազմագույն գնդիկներ:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/, տակդիր, կտորի անձեռոցիկ,
2	**Գնդիկ բոքոնիկ**	Շարունակել սովորեցնել՝ - գունդ ծեփելը, - ձեռքի ափի շրջանաձև շարժումներով ծեփել գնդաձև մարմիններ, -ծեփել գնդիկ-բոքոնիկի մարմին՝ խաղալով:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/, տակդիր, կտորի անձեռոցիկ,
		Կառուցողական աշխատանքներ	
3.	**Տնակի կառուցում**	Շարունակել սովորեցնել՝ -տնակ կառուցել խորանարդիկներից, -օգտագործել տանիքի համար եռանիստ բուրգ: Խաղալ պատրաստած տնակով: Խաղերի համար օգտագործել	Կառուցողական նյութեր

		սյուժետադերային կերպարներ:	
4.	**Պատուհաններով տնակի կառուցում**	Սովորեցնել՝ -կառուցել սեփական մտահղացմամբ, -քանդել կառույցը և դետալները դնել իրենց տեղերը: Ամրապնդել ըստ նմուշի կառուցելու կարողությունը: Հարստացնել բառապաշարը:	Կառուցողական նյութեր

		Մարտ **Ծեփ**	
1.	**Կարտոֆիլ**	Ամրապնդել՝ - ձեռքի ափի շրջանաձև շարժումները: - ծեփանյութով աշխատել տակդիրի վրա:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/, տակդիր, լաթ
2.	**Օղակաձև թխվածքաբլիթ**	Շարունակել սովորեցնել՝ - գլանաձև ծեփել, - հաշվել , -ծայրերը միացնել իրար: Աշխատել տակդիրի վրա:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/, տակդիր, լաթ
		Կառուցողական աշխատանքներ	
3.	**Կառուցում՝ մտահղացմամբ**	Շարունակել սովորեցնել՝ - ինքնուրույն ընտրել կառուցման թեման և դետալները: Ամրապնդել պատրաստած շինությունների հետ խաղալու կարողությունները:	Կառուցողական նյութեր
4.	**Նստարան՝ տիկնիկի համար**	Շարունակել սովորեցնել՝ -կառուցումներ անել աղյուսներով, - աղյուսները դասավորել միմյանց վրա՝ երկարությամբ, - կառուցումներ անել աղյուսների լայն և նեղ մակերեսի կիրառմամբ: Խաղալ կառույցներով:	Կառուցողական նյութեր
		Ապրիլ **Ծեփ**	
1	**Կերակրենք հավիկներին**	Շարունակել սովորեցնել՝ - ձեռքի ափի շրջանաձև շարժումներով ծեփել փոքրիկ գնդիկներ, -իբրև հավիկի կերակրման համար ծեփել կուտեր խաղալով: Աշխատել տակդիր վրա:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/,լաթ տակդիր, անձեռոցիկ
2	**Ճանապարհորդ Գնդիկ-բոքոնիկը**	Շարունակել սովորեցնել՝ - ձեռքի ափի շրջանաձև շարժումներով ծեփել գնդաձև մարմիններ, -ծեփել գնդիկ-բոքոնիկի մարմին՝	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/,լաթ տակդիր,

		խաղալ ով: Աշխատել տակդիրի վրա: Խաղալ ծեփած խաղալիքներով:	անձեռոցիկ
		Կառուցողական աշխատանքներ	
3	**Տիկնիկի կահույք /սեղան, աթոռ/**	Զարգացնել վերլուծելու կարողությունը: -Ի՞նչ տեսքի կառուցողական նյութերից է պատրաստված սեղանը: -Ի՞նչ տեսքի կառուցողական նյութերից է պատրաստված աթոռը:	Կառուցողական նյութեր.նմուշօրինակներ
4	**Աստիճան**	Սովորեցնել՝ - կառուցել 6 խորանարդիկներից աստիճան, - առանձնացնել դետալները: Բարդեցնել շինությունը ավելացնելով դետալների քանակը: Խաղալ կառույցով:	Կառուցողական նյութեր

	Մայիս Ծեփ		
	Պնակ՝ փիսիկի համար	Ամրապնդել՝ - գունդ ծեփելու կարողությունը: Սովորեցնել ` - գունդը ափերի մեջ տափակացնելու կարողությունը, -մատիկներով ստանալ խորություն:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/,լաթ տակդիր, անձեռոցիկ
	Ինքնաթիռ	Շարունակել սովորեցնել՝ -ծեփել գլանաձև, -2 գլանաձև միացնել միմյանց խաչաձև, - ստանալ ինքնաթիռ: Աշխատել տակդիր վրա:	Նմուշօրինակներ, պլաստիլին /աղի խմոր, կավ/, տակդիր, անձեռոցիկ
		Կառուցողական աշխատանքներ	
3	**Սղարան**	Սովորեցնել՝ - ավելացնելով դետալների քանակը բարդացնել շինությունը: - պահպանել կառուցման հաջորդակա-նությունը, -վերահսկել սեփական գործողությունը:	Կառուցողական նյութեր
4	**Ինքնուրույն կառուցում**	Սովորեցնել՝ - ինքնուրույն ընտրել կառուցման թեման , -ինքնուրույն ընտրել դետալները: Խաղալ կառույցներով:	Կառուցողական նյութեր

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Երաժշտական զարգացումը

Այս տարիքում զարգանում է երեխաների հուզական արձագանքը երաժշտության հանդեպ: Ընդլայնվում է երաժշտական ճանաչողությունը. նրանք հիշում և ճանաչում են իրենց սովորած և ունկնդրած ստեղծագործությունները: Զարգանում է նաև երաժշտասենսոր զգայարանները :Երեխաները սկսում են տարբերել երաժշտության տեմբրը, ուժգնությունը, արագությունը:

Երեխաներն ունկնդրում են կարճ երգեր: Ճանաչում են դրանք նախանվագից և նվագակցությունից, ունկնդրում են ծանոթ երգերի մեղեդիներ՝ նվագարանների կատարմամբ՝ մետաղաֆոն, դաշնամուր : Լսում են գործիքային այն երաժշտությունը, որտեղ բնութագրվում են սյուժետադերային խաղերի կերպարները, ձայնանմանակում են առանձին ձայներ և երգում կարճ երգեր՝ պարզ մեղեդիով և բառերի քիչ քանակով:

Հաջողությամբ են զարգանում նաև երեխաների շարժումները երաժշտության ուղեկցությամբ: Նրանք արդեն տիրապետում են մի շարք պարային շարժումների և կարողանում են կապել այն երաժշտության հետ:

Ակտիվորեն մասնակցում են սյուժետադերային խաղերին, որոնց ընթացքում ընդլայնվում են նրանց պատկերացումներն իրենց շրջապատող աշխարհի մասին:

Սյուժետադերային խաղերում երեխաները, երաժշտության բնույթին համապատասխան, կատարում են շարժումներ և դերեր, փոփոխում են շարժումները՝ տարաբնույթ խաղերին համապատասխան:

Օրինակ՝ ծիտիկները քնած են, ապա արթնանում են ու թռչկոտում, հետո՝ թռչում:

Վարժություններում և պարերում երեխաները, երաժշտության հակադիր բնույթին համապատասխան, սահուն շարժումներից անցնում են առավել կտրուկ շարժումների, հանգիստ շարժումներից՝ արագի: Քայլում և վազում են զույգերով՝ ձեռքերը բռնած, պտտվում են զույգերով՝ մեծի օգնությամբ, ձեռքերը բռնած կազմում են շրջան, մեծացնում և փոքրացնում են այն:

Երաժշտական դաստիարակության խնդիրները

1. Զարգացնել երաժշտությունն ունկնդրելու կարողությունը, մտապահելու և տարբերելու հակադիր հնչողությամբ երաժշտության առանձնահատկությունները /ուժեղ, մեղմ, բարձր, ցածր, ռեգիստրներ/:

2.Հրապուրել երեխային երաժշտությամբ՝ հարստացնելով նրա լսողական փորձը և երաժշտական տպավորությունների պաշարը:

3.Զարգացնել երաժշտության տարրական գեղագիտական ընկալումը, ստանալ հուզական արձագանք՝ երեխաներին ընկալելի երաժշտական կերպարների հանդեպ:

4.Զարգացնել որոշ երաժշտական արտահայտչամիջոցների տարրական երաժշտասենսոր ընկալումը, որոնք նպաստում են երաժշտական կերպարի ստեղծ-

մանը՝ հնչյունի բարձրություն, ռիթմ, տեմբր, ուժգնություն, երաժշտական հնչյունների հարաբերություն:

5.Նպաստել երեխաների ակտիվությանը ունկնդրման ընթացքում:

6. Տրամադրել երեխաներին՝ երգերի ընկալմանը, ցանկություն առաջացնել խորանալու տրամադրության, երգերի հնչերանգի և երաժշտության բնույթի մեջ:

7.Խթանել երեխաներին՝ ձայնակցելու և երգելու:

8.Զնավորել տարրական վոկալ կարողություններ: Նախապատրաստել՝

-ձգված, մեղեդային երգեցողությանը,

-ճիշտ երգային առոգանությանը,

-հնչող երաժշտությանը համապատասխան՝ համաձայնեցված երգեցողությանը:

9. Ընտելացնել անհատական և խմբային երգեցողության:

10.Սովորեցնել երեխաներին պարերում կատարել համաձայնեցված շարժումներ:

11.Զարգացնել երաժշտաշարժուդետային խաղերում դերերի կատարման կարողությունը՝ շարժումների ընդհանուր բնույթը կապելով երաժշտության հետ:

12.Խթանել երեխաների երաժշտաստեղծագործական կարողությունների բացահայտմանը՝ակտիվ երաժշտախաղային գործունեության միջոցով:

13.Ստեղծել պայմաններ՝ երեխաների երաժշտական լիարժեք զարգացման համար:

14.Ստեղծել երաժշտական տպավորությունների բազա, վերանայել նրանց նախասիրությունները:

15. Հրապուրել երեխաներին՝ հնչող խաղալիքներով և երաժշտական նվագարաններով:

16.Ծանոթացնել հնչող խաղալիքների և .մանկական նվագարանների հնչերանգներին:

Ծրագրային նյութեր տարվա համար

Ունկնդրում

Սովորեցնել երեխաներին ուշադիր լսել հանգիստ և խրոխտ երգեր, տարբեր բնույթի երաժշտական պիեսներ, հասկանալ և հուզականորեն արձագանքել բովանդակությանը/ ինչի և ում մասին է երգվում/: Սովորեցնել տարբերել հնչյուններն ըստ բարձրության/ զանգակի, դաշնամուրի, մետաղաֆոնի բարձր և ցածր հնչողություն/:

Երաժշտության ունկնդրում

1-ին եռամսյակ

1. «Շվի»-երաժշտ՝. ժողովրդական
2. «Հոտաղների պարը» - հայկ. ժողովրդական
3. «Էծիկ» - երաժշտ.՝ Դ. Ղազարյանի, խոսք՝Հ. Աղաբաբի
4. «Քայլերգ» - երաժշտ.՝ Ա. Լուսինյանի, խոսք՝ Շ.Բրուտյանի

2-րդ եռամսյակ

5. «Լորիկ» - հայկական ժողովրդական երգ. խոսք՝ Ղ. Աղայանի
6. «Իմ տիկնիկը» - երաժշտ.՝ Ա. Լուսինյանի, խոսք՝ Վ.Վարդանյանի
7. «Կարուսել» -երաժշտ՝. Ա.Լուսինյանի.խոսք՝ Ն.Միքայելյանի
8. «Բզեզ» -երաժշտ՝. Ա. Լուսինյանի, խոսք՝.Աթ.Խնկոյանի

3-րդ եռամսյակ

9. «Անձրև» - երաժշտ. և խոսք՝ Ա.Մանդակունյանի
10. «Ով ինչ է անում» - երաժշտ.՝ Ալ.Օհանյանի, խոսք՝Գ.Գեղունու
11. «Զանգակները զնգում են» - երաժշտ՝. Ա.Լուսինյանի
12. «Գարուն» - երաժշ. և խոսք՝ Ա.Մանդակունյանի

Երգեցողություն

Խթանել երեխաներին ուշադիր լսելու երգը, ձգտելու ձայնակցման և երգեցողության: Զարգացնել երգերում ֆրազներին ձայնակցելու կարողությունը /դաստիարակի հետ միասին/: Աստիճանաբար սովորեցնել երեխաներին անհատական երգեցողության:

Ձայնակցում և երգեցողություն

1-ին եռամսյակ

1.«Աշնան գովերգ» - երաժշտ. և խոսք՝. Ա.Մովսիսյանի
2.«Դոփիկ- դոփիկ» - երաժշտ.՝ Ա. Օհանյանի. խոսք՝ Վ.Տալյանի
3.«Ծափիկ – ծափիկ» - հայկական ժողովրդական երգ
4.«Անձրև» - երաժշտ. և խոսք՝ Ա. Մանդակունյանի

2-րդ եռամսյակ

5.«Շնիկը» - երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Աղ. Շահինյանի
6.«Փաթիլ-փաթիլ» - երաժշտ. և խոսք՝ Ա.Մովսիսյանի
7.«Անուշ տատիկ» - երաժշտ. և խոսք.՝ Ա.Մովսիսյանի
8.«Ծափիկ» - երաժշտ. և խոսք՝ Ս.Վարդանյանի

3-րդ եռամսյակ

9.«Գարուն» - երաժշտ. և խոսք՝Ա.Մանդակունյանի
10.«Նապաստակ» - երաժշտ.՝ Է. Միհրանյանի, խոսք՝Ս.Մուրադյանի
11.«Հովիվ» - երաժշտ.՝ հայկ. ժող., խոսք՝ Ս. Կապուտիկյանի
12.«Օրոր» - հայկ. ժող, երգ

Երաժշտառիթմական շարժում

Զարգացնել երաժշտության հուզական և կերպարային ընկալումը շարժման միջոցով: Շարունակել ձևավորել երեխաների մոտ դաստիարակի կողմից ցուցադրվող շարժումների ընկալման ունակությունը / ծափել, դոփել ոտքով, կքանստել, կատարել դաստակների պտույտներ և այլն/: Սովորեցնել երեխաներին սկսել և

ավարտել շարժումները երաժշտության հետ միասին, ցուցադրել կերպարները /ծիտիկը թռչում է, նապաստակը ցատկոտում, ծուռթաթ արջը քայլում է և այլն/: Կատարելագործել քայլելու և վազելու կարողությունը /ոտնաթաթերի վրա, զգույշ, ոտքերը ցածր և բարձր, ուղիղ ձիատրոփ քայլք և այլն/, կատարել պարային շարժումներ շրջանով, ցրված, փոփոխել շարժումները երաժշտության բնույթի և բովանդակության փոփոխմանը համապատասխան:

Երաժշտառիթմական շարժում

1-ին եռամսյակ

1.«Ու՞ր են մեր ձեռքերը»-երաժշ.՝ Գ.Չթչյանի. խոսք՝Շ.Բրուտյանի

2.«Ծափին – ծափին»-հայկական ժողովրդական երգ

3.«Ուրախ պար»-երաժշտ.՝ Ա.Մանուկյանի

4.«Ծափ- ծափ»-երաժշտ.՝Ալ.Օհանյանի, խոսք՝Վ. Տալյանի

5.«Քայլերգ»-երաժշտ.՝ Գ.Չթչյանի

2-րդ եռամսյակ

6. «Պոլկա»-երաժշտ՝.Մ.Կրասևի

7.«Ուրախ ձկնիկ»-երաժշտ.և խոսք ՝Ա.Մովսիսյանի:

8.«Նունիկի փիսիկը»-երաժշտ՝. Ա.Լուսինյանի, խոսք՝ Լ.Պողոսյանի, բեմակ.՝ Կ.Ղազարյանի

«Գորտը»-երաժշտ՝. Ա.Լուսինյանի, խոսք՝ Լ.Պողոսյանի, բեմակ.՝ Կ.Ղազարյանի

3-րդ եռամսյակ

11.«Դոփիկ դոփիկ»-երաժշտ.՝Ալ. Օհանյանի, խոսք՝Վ.Տալյանի

12. « Ծաղիկների վալսը»/-Պ.Չայկովսկու

13. «Արջերը պարում են»-երաժշտ.՝ Է.Փաշինյանի

14. «Աղջիկների պարը»-երաժշտ.՝ Վ.Կոտոյանի

15. «Ջան ծաղիկ»-հայկական ժողովրդական երգ

Զարգացման ցուցանիշները

-Պարապմունքից առաջ երեխաներն անվանում են իրենց սիրած երգերն ու պիեսները և խնդրում կատարել, տրամադրվում են ունկնդրման,

-կրկնում են անցած երգերը և կիսվում տպավորություններով,

-ճանաչում են ծանոթ երգերը նախանվագից,

-ունեն երաժշտական տպավորությունների որոշակի պաշար,

-զարգացած է տարրական երաժշտագեղագիտական ըկալումը և երաժշտության հանդեպ հուզական արձագանքը,

- զարգանում են երաժշտական արտահայտչամիջոցների ընկալումը՝ տևողությունը, ձայներանգը և ուժգնությունը,

-բավականին զարգացած է երաժշտական ակտիվությունը,

-հաճույքով և արտահայտիչ կատարում են իրենց հետաքրքրող երգերը,

-հուզականորեն կատարում են ոչ բարդ պարեր՝ շրջանով և զույգերով:

-հեշտությամբ են ընդգրկվում երաժշտական և երաժշտաայուժետային խաղերում,

-ջանում են կատարել գործողություններ երաժշտությամբ, վերարտադրել խաղային կերպարներին բնորոշ շարժումները.

-զարգանում են նրանց նախնական ստեղծագործական նախադրյալները:

Զվարճանքներ

Խնդիրները՝

-Նպաստել հուզական դրական մթնոլորտի ձևավորմանը մանկապարտեզում և խմբում,

-ապահովել երեխաների հարմարավետությունն ու պաշտպանվածությունը,

-ներգրավել երեխաներին խաղերում, թատերականացված ներկայացումներում, զվարճանքներին և տոներին,

-երեխաների մեջ զարգացնել խաղալիքների, հեքիաթային հերոսների գործողություններին հետևելու կարողություն, համապատասխանորեն արձագանքել դրանց,

-նպաստել հեքիաթային հերոսներին կերպարանավորելու հմտության զարգացմանը:

Ցանկ

Թեմատիկ՝

«Իմ սիրելի խաղալիքները», «Խաղ զվարճանքներ», «Ձմեռային հեքիաթ», «Երաժշտական խաղալիքներ»:

Թատերականացված ներկայացումներ՝

«Հավ մարիկը»- երաժշտական հեքիաթ, «Աշուն», «Ամանոր»:

Զվարճանքներ՝

«Երգերի բեմականացումներ», «Զվարճալի խաղալիքի ցուցադրում», «Հնգմատյա թատրոն», «Սեղանային թատրոն», «Խաղալիքների տոն»:

Տոներ՝

«Տերևաթափ», «Ձմեռ պապին և նապաստակները», «Գարուն»:

Մեթոդական ցուցումներ

Այս տարիքի երեխաներն ունեն ոչ մեծ երաժշտական փորձ, նրանք գիտեն մի քամի երաժշտական ստեղծագործություններ և ուրախանում են, երբ դրանք լսում են: Երգերի կատարումը հիմնականում ուղեկցվում է խաղալիքի ցուցադրմամբ. երեխաների մտածողությունը կոնկրետ է, ուստի նրանք յուրաքանչյուր երգի մեջ տեսնում են կերպար: Այս տարիքի երեխաները դաստիարակի երգելու ընթացքում փորձում են ձայնակցել առանձին վանկերով և և բառերով:

Եթե երեխայի երաժշտական դաստիարակությունը կազմակերպվում է մանկապարտեզում, ծրագրով նախատեսված պարբերականությամբ, ապա տարվա վերջում երեխաները կարող են երգել ոչ բարդ փոքրիկ երգեր:

Վոկալ խնդիրներն են՝

-տարբերել երգչային հնչերանգները,

- ձայնակցել երգին՝ առանձին վանկերով և բառերով, նմանակել դաստիարակին,

- ուշադրությունը հրավիրել երգի բովանդակությանը, առաջացնել հուզական հետաքրքրություն երգի հանդեպ:

Երգելու ընթացքում երեխաներին ակտիվացնելու նպատակով անհրաժեշտ է ընտրել համապատասխան երգեր, կիրառել հատուկ մեթոդական հնարներ երգելու և ձայնակցելու համար: Երգերի ուսուցման ընթացքում պետք է հիշել, որ երեխաների շնչառությունը կարճ է, բառերից շատերը արտասանվում են երկարացնելով: Երեխաները մեծահասակի օգնության կարիք ունեն, նրանք ավելի ակտիվ են երգում, երբ տեսնում են դաստիարակի շրթունքների շարժումը, նրա խրախուսական դիմախաղը: Սովորաբար երեխաները գոհունակությամբ ժպտում են, երբ դաստիարակը գովեստի խոսքեր է ասում նրանց: Դրանից հետո նրանք դառնում են երգի սիրահարներ: Ուսուցանվող երգին ներկայացվում են նաև հետևյալ պահանջները՝ երգի բառերը պետք է լինեն ոչ միայն հասկանալի, այլև հեշտ արտաբերվող, բովանդակությունը՝ կարճ, մեղեդին պետք է լինի երգային՝ կրկնվող ոչ բարդ ֆրազներով:

Ուսուցանվող երգերը պետք է հաճախ կրկնել, քանի որ երեխաները չեն մտապահում բառերը: Դա կարող է խանգարել երեխաների վոկալ կարողությունների ձևավորմանը:

Երաժշտառիթմական շարժմանը ներկայացվուն են հետևյալ պահանջները. երաժշտական վարժությունների և խաղերի միջոցով բարձրացնել հետաքրքրությունը երաժշտության հանդեպ, զարգացնել երեխաների երաժշտական ընդունակությունները, օգնել երաժշտության ամբողջական և հուզական ընկալմանը: Երեխաները պետք է տիրապետեն հետևյալ կարողություններին՝

-սկսել և ավարտել շարժումը երաժշտության հետ միաժամանակ,

-համաձայնեցնել սեփական շարժումները երաժշտության բնույթի, ռեգիստրների փոփոխությանը, արագությանը, ուժգնությանը և երաժշտական ստեղծագործության ձևին,

-կատարել հիմնական շարժումներ՝ քայլք, վազք, ցատկ,

-կատարել մարմնամարզական վարժություններ՝ դրոշակներով, թաշկինակներով և այլն,

- կատարել կերպարային և պարային շարժումներ:

Փոքրերի 1-ին խմբում կիրառվում են պարերի երեք տեսակ՝ մեծերի մասնակցությամբ, մանկական պարեր և շուրջպարեր՝ երգով: Ներկայացված պարերից մեծ մասը կատարվում է դաստիարակի մասնակցությամբ: Առանձին դեպքերում կատարվում են ոչ բարդ վարժություններ, որոնք օգնում են երեխաներին՝ յուրացնելու

ծրագրային պահանջները: Նրանք հաճախ ունենում են խաղային բնույթ և կապված են որոշակի կերպարի հետ: Օրինակ՝«Թռչունները թռչում են»:

Այս տարիքային խմբի երեխաների համար կազմակերպված պարապմունքները ինքնատիպ են իրենց բնույթով: Երգեցողությունը, ունկնդրումն ու երաժշտառիթմական շարժումը սերտորեն կապված են իրար հետ: Երբեմն շարժումներն իրենք են դառնում ինքնատիպ մեթոդական հնարներ՝ երգերի, պարերի և ունկնդրման ընթացքում: Օրինակ, երեխաները սովորում են «Ծիտիկ» երգը և հաջորդաբար կատարում են ծիտիկին բնորոշ շարժումներ:

Պարերի, խաղերի և վարժությունների ուսուցման ժամանակ լայնորեն կիրառվում են խաղային հնարներ: Նյութը պատկերավոր ներկայացնելու համար օգտագործվում են նաև խաղալիքներ: Օրինակ՝ երբ երեխաներին սովորեցնում են ցատկել երկու ոտքով, դաստիարակը բացատրում է, որ նրանք պետք է ցատկեն գնդակի նման: Վերցնում է գնդակը և ցույց տալիս, թե ինչպես է ցատկում գնդակը: Ուսուցման հնարները փոփոխվում են ելնելով ծրագրային պահանջներից: Առաջին հերթին դաստիարակը պետք է երեխաների մեջ ցանկություն առաջացնի՝ շաժվել երաժշտության ռիթմին համապատասխան, դրանից հետո միայն ուշադրությունը հրավիրի երաժշտության ընդհանուր բնույթին և շարժումներին:

Երեխաներին առաջարկվող խաղերը պետք է կառուցված լինեն հակադիր բնույթի երաժշտական ստեղծագործությունների հիման վրա: Խաղի ընթացքում դաստիարակը երեխաների ուշադրությունը պետք է հրավիրի այդ փոփոխություններին:

Մեթոդական գրավիչ հնարներից է երեխաների կողմից արդեն յուրացրած շարժումների ցուցադրումը: Խնդիրների լուծման ժամանակ դաստիարակը չպետք է շտապեցնի երեխաներին, այլ պետք է սավորեցնի համբերությամբ և հաջորդականությամբ: Ստիպողական ուսուցումը կարող է տխրեցնել երեխային և զրկել խաղալու ցանկությունից: Միայն հրապուրելով խաղի բովանդակությամբ, առաջացնելով ուրախ տրամադրություն կարելի է հասնել որոշակի դրական արդյունքների:

Տարվա ընթացքում խաղերն անընդհատ կրկնվում են, և այդ կերպ դրանք կատարելագործվում են:

Դիտարկենք մեկ խաղի օրինակ:

Խաղ՝ «Թաշկինակ», երաժշտությունը ուրախ, աշխույժ

Ծրագրային բովանդակությունը: Սովորեցնել երեխաներին կատարելու պարային շարժումներ և դրանք համաձայնեցնել երաժշտության բնույթին և ձևին:

Խնդիրները: Առաջացնել ուրախության զգացում, դաստիարակել ուշադրություն և զսպվածություն:

Խաղի նկարագրությունը և անցկացման մեթոդիկան: Դաստիարակը վերցնում է թաշկինակը և ցույց տալիս մի քանի պարային շարժումներ՝ զսպանակներ, դոփյուններ, պտույտներ, ծափեր: Դրանից հետո բաժանում է թաշկինակները երեխաներին՝ մոտենալով յուրաքանչյուրին: Դաստիարակն ասում է. «Ահա կապույտ թաշկինակը քեզ, Անահիտ, իսկ քեզ Գևորգ՝ կարմիրը»: Դրանից հետո առաջարկում

է երեխաներին պարել՝ սկզբից իր հետ միասին, իսկ հետո հուշում է շարժումները՝ խոսքով: Երաժշտության ավարտին երեխաներին առաջարկում է թաքնվել թաշկինակների հետևում, ինքը կքանստում է և ցույց տալիս, թե ինչպե՞ս պետք է թաքնվել: Երբ բոլոր երեխաները թաքնվում են, դաստիարակը սկսում է փնտրել երեխաներին, ասելով.«Ու՞ր են երեխաները, ու՞ր են փախել նրանք»:

Կարևոր է, որ երեխաներն ուրախանան. իրենք այստեղ նստած են, և նրանց չեն տեսնում: Նորից հնչում է երաժշտություն, և երեխաները պարում են: Դաստիարակն ասում է.«Ահա և երեխաները»:

Եթե երեխաներից որևէ մեկը չի կանգնում, դաստիարակը արտասանում է նրա անունը և հրավիրում պարելու:

Այլ տարբերակով կարելի է տղաներին և աղջիկներին կանգնեցնել զույգերով՝ տալով յուրաքանչյուր զույգին նույն գույնի թաշկինակներ: Աղջիկների պարից հետո, նրանք թաքնվում են, իսկ տղաները փնտրում են նրանց:

Պար՝ «Պոլկա» - երաժշտ՝. Մ.Կրասևի

Ծրագրային բովանդակությունը: Երեխաներին սովորեցնել փոխել շարժումները երաժշտության հնչողության փոփոխությանը համապատասխան: Կատարել թեթև վազք, խրոխտ դոփյուններ՝ մեկ ոտքով:

Խնդիրները: Դաստիարակել կողմնորոշումը տարածության մեջ:

Պարի նկարագիրը: 1-8 տակտերին երեխաները վազում են՝ ցրված դահլիճով մեկ:

9-16 տակտերին շրջվում են դեմքով դեպի դաստիարակը և դոփում մեկ ոտքով:

Ուսուցման մեթոդիկան: Երեխաներն ունկնդրում են պարի երաժշտությունը, հետո դաստիարակը բացատրում է նրանց, որ սկզբից երաժշտությունը հնչում է ոչ շատ բարձր, այդ ընթացքում նրանք վազում են դահլիճում, իսկ հետո հնչողությունը բարձրանում է, որի ընթացքում կարելի է խրոխտ դոփել մեկ ոտքով: Իր խոսքերը նա ամրապնդում է սեփական կատարումով: Այժմ նա առաջարկում է բոլոր երեխաներին պարել և ինքն էլ պարում է նրանց հետ միասին: Պարի կատարման ընթացքում տալիս է ցուցումներ: Հետագա ուսուցման ընթացքում կիրառում է երաժշտական հանելուկ. «Դուշակեք, երեխանե՛ր, թե ի՞նչ եմ ես նվագում: Ցուցադրում է պարի շարժումները երկու, երեք երեխայի հետ: Պարի կրկնության ժամանակ դաստիարակը պետք է հետևի, որ երեխաները դոփեն մեկ աջ, մեկ ձախ ոտքով: Երբ պարը յուրացվի, կարելի է այն կատարել նաև զույգերով:

Երեխաների երաժշտական զարգացումը իրականացվում է և՛ պարապմունքների ընթացքում, և՛ առօրյայում: Կիրառվում են ուսուցման խմբային և անհատական մեթոդներ և անհատական տարբերակված մոտեցումներ՝ հաշվի առնելով անհատ երեխայի հնարավորությունները:

Երաժշտական պարապմունքները կազմված են երեք մասից՝

1. Նախապատրաստական մաս

Երաժշտառիթմական վարժություններ

Նպատակը՝ երեխաների մեջ զարգացնել հիմնական պարային շարժումների հմտություններ, որոնք կիրառվում են պարերում և շուրջպարերում:

2. Հիմնական մաս

Երաժշտության ունկնդրում

Նպատակը՝սովորեցնել երեխաներին խորասուզվել երաժշտության հնչողության և նվագակցության մեջ, զգացմունքայնորեն արձագանքել դրանց:

Ձայնակցում և երգեցողություն

Նպատակը՝զարգացնել երեխաների վոկալ նախադրյալները, սովորեցնել մաքուր վերարտադրել մեղեդին, երգել առանց լարվածության, ինչպես նաև երգը սկսել և ավարտել դաստիարակի հետ միասին:

Պարապմունքի հիմնական մասում օգտագործվում են նաև երաժշտադիդակտիկ խաղեր, որոնք ուղղված են ծանոթացմանը մանկական նվագարաններին, հիշողության, երևակայության և երաժշտասենսոր զգայարանների զարգացմանը:

3.Ամփոփիչ մաս

Խաղ կամ պար

Նպատակը՝ զգայական հաճույք պատճառել երեխային, առաջացնել ուրախության զգացում կատարվող գործողություններից, հետաքրքրություն երաժշտական պարապմունքների հանդեպ և ցանկություն՝ մասնակցելու այդ պարապմունքներին:

Երաժշտական պարապմունքների ընթացքում, որոնք անցկացվում են շաբաթական երկու անգամ՝ 15 րոպե տևողությամբ, իրականացվում են ուսուցման խմբային և անհատական մեթոդներ և անհատական տարբերակված մոտեցումներ՝ հաշվի առնելով անհատ երեխայի հնարավորությունները:

Ներկայացնենք երգի ուսուցման երեք պարապմունք:

Թեման՝ «Շնիկը» երգի ուսուցում, երաժշտ՝ Ա. Լուսինյանի, խոսք՝. Աղ. Շահինյանի:

1-ին պարապմունք

Այս պարապմունքին երեխաները ծանոթանում են երգին, առաջանում է հուզական վերաբերմունք տվյալ կերպարի հանդեպ: Դաստիարակը ներս է բերում շնիկին և պատմում նրա մասին.

- Սա Քուչիկն է, նա շատ լավ շնիկ է, ճակատը սպիտակ է, քիթիկը սև: Տղան նրան ասում է.

- Շնի՛կ, նստի՛ր գորգին և մի հաչիր: Շնիկը թաթն է տալիս: Շնիկն այնքան խելացի է, նա կլսի նաև ձեզ:

Այս զրույցից հետո, երեխաներն ունկնդրում են երգը:

2-րդ պարապմունք

Դաստիարակը ցույց է տալիս խաղալիք շնիկը և ասում.

-Մեզ նորից հյուր է եկել Քուչիկը: Տեսեք, ի՞նչ լավն է նա: Լսենք նրա մասին երգը:

Ունկնդրումից հետո դաստիարակը ճշտում է երգի բնույթն ու բովանդակությունը: Նա հարցնում է երեխաներին, թե ինչպես է հաչում Քուչիկ շնիկը: Երեխաների միջոցով ճշտում է, որ շնիկը հաչում է բարձր ձայնով, քանի որ նա փոքրիկ է: Շնիկը խնդրում է երեխաներին, որ օգնեն իրեն բարձր հաչել «հա՛ֆ-հա՛ֆ», և այնպիսի բարակ ձայնով, ինչպես կհաչա Քուչիկ շնիկը:

Երգը կատարվում է ևս մեկ անգամ:Երեխաները հնարավորության սահմանում ձայնակցում են:

3-րդ պարապմունք

Դաստիարակը ցույց է տալիս Քուչիկին և ասում, որ այսօր բոլոր երեխաները երգելու են նրան նվիրված երգը: Սկսում են երգել բոլոր երեխաների հետ ֆրազներով:

Դաստիարակը հարցնում է.

-ինչպե՞ս է հաչում Քուչիկը:

Երեխաները երգով պատասխանում են՝«հաֆ-հաֆ», շունն է հաչում:

Դաստիարակը հարցնում է.

-Ո՞վ է տեղից ցատկում:

երեխաները երգում են՝«Փիսոն վախից վեր է ցատկում»:

Դաստիարակ.

-Ինչպե՞ս է մլավում փիսոն:

Երեխաներ՝

-մյաու- մյաու:

Հաջորդ պարապմունքին դաստիարակը բոլոր երեխաներին առանձին-առանձին առաջարկում է երգել: Մեկ երեխա սկսում է երգել, մյուսը շարունակում է:

Երաժշտական պարապմունքների ընթացքում դաստիարակը շարունակում է ուսուցանել երգը՝ ուշադրություն դարձնելով բառերի արտասանությանը և ճիշտ շնչառությանը:

ՀԱՎԵԼՎԱԾ N8

Հեռանկարային պլանավորում
Առաջին եռամսյակ

Սեպտեմբեր

Երաժշտական գործունեության կազմակերպման ձևերը	Ծրագրային խնդիրները	Երաժշտական նյութերի ցանկը
1	2	3
Երաժշտական պարապմունքներ Երաժշտության ունկնդրում, երաժշտական ստեղծագործության ընկալում:	Սովորեցնել՝ -ունկնդրել ուրախ և տխուր երաժշտություն, պարային և օրորոցային երգեր, -տարբերել բարձր և ցածր հնչյունները, ուժեղ և մեղմ հնչողությունը:	«Լորիկ»-երաժշտ.՝ հայիկ. ժող, խոսք՝ Ղ.Աղայանի, «Ծվի» -հայկ. ժողովրդ. «Հոտաղների պարը»-հայկ. ժողովրդական
Երգեցողություն՝ -վոկալ հմտությունների յուրացում:	Նպաստել երգելու ցանկության բավարարմանը, կրկնվող ֆրազների ձայնակցմանը: Սովորեցնել ճանաչել ծանոթ երգերը, հասկանալ դրանց բովանդակությունը:	«Ծափիկ-ծափիկ»-հայկ. ժողովրդ. երգ:
Երաժշտառիթմական շարժում -վարժություններ, -պարեր, -խաղեր:	Սովորեցնել՝ -խրոխտ քայլել խմբով, թեթև վազել, փափուկ կքանստել, -ակտիվ դոփել ոտքերով՝ տարբեր բնույթի երաժշտության տակ, -մեծահասակի ցուցումով կատարել պարային շարժումներ, սկսել և ավարտել պարը երաժշտության հետ, -տարբերել երկմասանի երաժշտությունը: Զարգացնել շարժողական ակտիվությունը:	«Ո՞ւր են մեր ձեռքերը»-երաժշտ.՝ Գ.Չթչյանի, խոսք՝.Շ.Բրուտյանի. «Ուրախ պար»-երաժշտ՝. Ա.Մանուկյանի: «Դոփիկ-դոփիկ»-երաժշտ.՝ Ալ. Օհանյանի, խոսք՝ Վ.Տալյանի
Տոներ և զվարճանքներ	Խթանել երեխաներին՝ ակտիվ մասնակցելու զվարճանքներին:	Երաժշտական հեքիաթի ցուցադրում:

Հոկտեմբեր

Երաժշտական գործունեության կազմակերպման ձևերը	Ծրագրային խնդիրները	Երաժշտական նյութերի ցանկը
1	2	3
Երաժշտական պարապմունքներ Երաժշտության ունկնդրում -Երաժշտական ստեղծագործության ընկալում:	Սովորեցնել -ունկնդրել ուրախ և տխուր երաժշտություն, պարային և օրորոցային երգեր, -տարբերել բարձր և ցածր հնչյունները, ուժեղ և մեղմ հնչողությունը:	«Իմ տիկնիկը»-երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Վ.Վարդանյանի «Շվի» -հայկ. ժողովրդ. «Հոտաղների պարը»-հայկ. ժողովրդ.
Երգեցողություն -Վոկալ հմտությունների յուրացում	Խթանել երեխայի երգելու ցանկությանը, կրկնվող ֆրազների ձայնակցմանը: Սովորեցնել ճանաչել ծանոթ երգերը, հասկանալ դրանց բովանդակությունը:	«Արագիլ»-երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝Ն. Միքայելյանի, «Ծափիկ-ծափիկ»-հայկ. ժողովրդ. երգ:
Երաժշտառիթմական շարժում -վարժություններ -պարեր -խաղեր	Սովորեցնել՝ -խրոխտ քայլել խմբով, թեթև վազել, փափուկ կքանստել, -տարբեր բնույթի երաժշտության տակ ակտիվ դոփել ոտքերով, -մեծահասակի ցուցումով կատարել պարային շարժումներ, սկսել և ավարտել պարը երաժշտության հետ, -տարբերել երկմասանի երաժշտությունը: Զարգացնել շարժողական ակտիվությունը:	«Ո՞ւր են մեր ձեռքերը»-երաժշտ.՝ Գ. Չթչյանի, խոսք՝. Շ. Բրուտյանի. «Ուրախ պար»-երաժշտ.՝ Ա. Մանուկյանի:
Տոներ և զվարճանքներ	Խթանել ակտիվ մասնակցելու զվարճանքներին:	«Հավ մարիկը»-երաժշտական հեքիաթի ցուցադրում:

Նոյեմբեր

Երաժշտական գործունեության կազմակերպման ձևերը	Ծրագրային խնդիրները	Երաժշտական նյութերի ցանկը
1	2	3
Երաժշտական պարապմունքներ Երաժշտության ունկնդրում, -Երաժշտական ստեղծագործության ընկալում:	Սովորեցնել՝ -ընկալել հանգիստ, ուրախ բնույթի երաժշտություն, -արձագանքել երաժշտությանը՝ ձեռքերի, ոտքերի շարժումներով, ծափերով, դոփյուններով, ճոճումներով:	«Հովիվ»-հայկ. ժող. երգ, խոսք՝ Ս.Կապուտիկյանի: «Ով ի՞նչ է անում»-երաժշտ.՝ Ալ. Օհանյանի, խոսք՝ Գ.Գեղունու: «Նապաստակ»-երաժշտ.՝ Է.Միհրանյանի, խոսք՝ Ս.Մուրադյանի:

Երգեցողություն՝ -Վոկալ հմտությունների յուրացում:	Նպաստել երգելու ցանկությանը, կրկնվող ֆրազների ձայնակցմանը, երգը ուղեկցել արտահայտիչ շարժումներով:	«Ծափիկ-ծափիկ»-հայկ. ժողովրդ. երգ:
Երաժշտառիթմական շարժում՝ -վարժություններ -պարեր -խաղեր	Սովորեցնել՝ -ակտիվ շարժվել տարբեր բնույթի երաժշտության տակ /խրոխտ քայլել, թեթև վազել/: -կատարել փափուկ զսպանակ, ճոճումներ, -պարել զույգով, չկորցնել զույգին, կատարել պարային շարժումներ ցուցումով, միասին: -Զարգացնել ակտիվություն, կարողանալ արձագանքել երաժշտության ընթացքում շարժումների փոփոխմանը:	«Ո՞ւր են մեր ձեռքերը»-երաժշտ.՝ Գ. Չթչյանի, խոսք. Շ.Բրուտյանի. «Ուրախ պար»-երաժշտ.՝ Մանուկյանի: «Դոփիկ դոփիկ»-երաժշտ.՝ Ալ.Օհանյանի, խոսք՝ Վ.Տալյանի,
Տոներ և զվարճանքներ	Խթանել երեխաներին՝ ակտիվ մասնակցելու զվարճանքներին:	«Աշուն»-երաժշտաթատերականացված հանդես:

Երկրորդ եռամսյակ

Դեկտեմբեր

Երաժշտական գործունեության կազմակերպման ձևերը	**Ծրագրային խնդիրները**	**Երաժշտական նյութերի ցանկը**
1	2	3
Երաժշտական պարապմունքներ՝ Երաժշտության ունկնդրում:	Սովորեցնել՝ -ունկնդրել երգեր և հասկանալ դրանց բովանդակությունը, տարբերել գործիքային երաժշտության բնույթը: -ճանաչել ծանոթ երաժշտական ստեղծագործությունները, հուզականորեն արձագանքել երաժշտության բնույթին և տրամադրությանը:	«Քայլերգ»-երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Շ.Բրուտյանի, «Բզեզ»-երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Աթ. Խնկոյանի:
Երգեցողություն	Ամրապնդել կարողությունները՝ ձայնակցել մեծահասակների երգեցողությանը կրկնվող ֆրազներով, -սկսել երգը մեծի օգնությամբ, երգել առանց բղավոցի, միջին տեմպով, հանգիստ, - Ընդլայնել երգչային ձայնածավալը:	«Անուշ տատիկ»-երաժշտ. և խոսք՝ Ա. Մովսիսյանի: «Փաթիլ- փաթիլ» երաժշտ. և խոսք՝ Ա.Մովսիսյանի:

Երաժշտառիթմական շարժում -վարժություններ -պարեր -խաղեր	Սովորեցնել՝ -վերարտադրել շարժման միջոցով երաժշտության հանգիստ և խրոխտ բնույթը, -կատարել շարժումներ առարկաներով: Սովորեցնել՝ -շարժվել զույգերով, չկորցնել զույգին, -փոխել շարժումը երաժշտության փոփոխման հետ, մեծի օգնությամբ, - ռիթմիկ դոփել, ծափել, թեթև կատարել զսպանակ: Հետաքրքրություն սերմանել շարժախաղերի հանդեպ, հուզականորեն արձագանքել երաժշտախաղային գործունեությանը:	«Փաթիլների պար»-երաժշտ.՝ Պ.Չայկովսկի, «Արջերը պարում են»-երաժշտ.՝ Է.Փաշինյանի»: «Աղջիկների պարը»-երաժշտ.՝ Վ.Կոտոյանի:
Տոներ և զվարճանքներ	Ուրախություն պատճառել տոնին մասնակցելու համար, սովորեցնել տոնին մասնակցելու վարքի կանոնները:	«Ամանորի» տոն:

Հունվար

Երաժշտական գործունեության կազմակերպման ձևերը	**Ծրագրային խնդիրները**	**Երաժշտական նյութերի ցանկը**
1	2	3
Երաժշտական պարապմունքներ Երաժշտության ունկնդրում	Սովորեցնել՝ -ունկնդրել երգեր և հասկանալ դրանց բովանդակությունը, տարբերել գործիքային երաժշտության բնույթը: Դաստիարակել զգացմունքային արձագանք տարբեր բնույթի երաժշտությանը: Նպաստել սիրված երաժշտական ստեղծագործությունների կուտակմանը:	«Քայլերգ»-երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Շ.Բրուտյանի, «Մառան մտա»-հայկ. ժող. երգ,
Երգեցողություն	Նպաստել երեխաների՝ ձայնակցելու կարողության բացահայտմանը, ճանաչել ծանոթ երգերը: Սովորեցնել՝ սկսել երգը մեծի օգնությամբ, երգել առանց բղավոցի, միջին տեմպով: Ընդլայնել երգչային ձայնածավալը:	«Անուշ տատիկ»-երաժշտ.՝ և խոսք՝ Ա.Մովսիսյանի, «Դոփիկ- դոփիկ»երաժշտ.՝- Ա.Օհանյանի, խոսք՝ Վ.Տալյանի:

Երաժշտառիթմական շարժում՝ -վարժություններ, -պարեր, -խաղեր:	Սովորեցնել՝ -վերարտադրել շարժման միջոցով երաժշտության հանգիստ և խրոխտ բնույթը, -կատարել շարժումներ առարկաներով, -սկսել և ավարտել շարժումները երաժշտության հետ: Զարգացնել ռիթմի զգացողությունը, շարժումների համագործակցվածությունը: Սովորեցնել՝ -կանգնել զույգերով, քայլել զույգերով դահլիճում, -փոխել շարժումը մեծի օգնությամբ, -թեթև և ռիթմիկ դոփել, պտտվել, թեթև կատարել զսպանակ, - ցույց տալ կենդանիներին բնորոշ շարժումներ: Զարգացնել ռիթմի զգացողությունը, ակտիվությունը և շարժունակությունը: Հետաքրքրություն սերմանել շարժախաղերի նկատմամբ:	«Ջան ծաղիկ» հայկ. ժող. Երգ. «Ծափ-ծափ»-երաժշտ.՝ Ա.Օհանյանի,խոսք՝ Վ.Տալյանի, «Ռուսական պար»-երաժշտ.՝ Ռուսական ժողովրդ. «Պոլկա»-երաժշտ.՝ Մ.Կրասևի: «Գնդակ»-երաժշտ.՝ Ա.Լուսիմյանի. խոսք՝ Լ.Պողոսյանի. բեմակ.՝ Կ.Ղազարյանի:
Տոներ և զվարճանքներ	Զվարթ, աշխույժ երաժշտությամբ, ուրախ երգով, հետաքրքրաշարժ պարով և շարժախաղով ուրախություն պարգևել երեխաներին:	«Ձմեռային խաղեր»-խաղային զվարճանք:

Փետրվար

Երաժշտական գործունեության կազմակերպման ձևերը	**Ծրագրային խնդիրները**	**Երաժշտական նյութերի ցանկը**
1	2	3
Երաժշտական պարապմունքներ Երաժշտության ունկնդրում	Սովորեցնել՝ ունկնդրել երգերը և հասկանալ դրանց բովանդակությունը, տարբեր բնույթի գործիքային երաժշտություն, -որոշել ուրախ, տխուր բնույթի երաժշտությունը: Դաստիարակել հուզական արձագանք՝ երաժշտության հան-	«Ֆորկա-ֆորկա»-հայկ. ժող. պարերգ, «Քայլերգ»-երաժշտ.՝ Գ.Չքչյանի, - «Էծիկ»-երաժշտ.՝ Դ.Ղազարյանի, խոսք՝ Հ. Աղաբաբի

	դեպ: Նպաստել սիրված ստեղծագործությունների բազա կուտակելուն:	
Երգեցողություն	Սովորեցնել՝ -սկսել երգը մեծի ցուցումով, - երգել առանց բղավոցի, միջին արագությամբ: Ամրապնդել կրկնվող ֆրազները ձայնակցելու կարողությունը, ճանաչել ծանոթ երգերը: Ընդլայնել երգչային ձայնածավալը:	«Շնիկ»-երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Աղ.Շահինյանի, «Անձրև»-երաժշտ.՝ և խոսք՝ Ա.Մանդակունյանի: «Նապաստակ»-երաժշտ. Է.Միհրանյանի,խոսք՝ Ս.Մուրադյանի: «Հովիվ»-երաժշտ.՝ հայկ ժող, խոսք՝ Ս.Կապուտիկյանի:
Երաժշտառիթմական շարժում՝ -վարժություններ, -պարեր, -խաղեր:	Սովորեցնել՝ վերարտադրել շարժման միջոցով երաժշտության հանգիստ և խրոխտ բնույթը, կատարել շարժումներ առարկաներով, -սկսել և ավարտել շարժումները երաժշտության հետ, -քայլել դահլիճում զույգերով, -փոփոխել շարժումները մեծի օգնությամբ, -թեթև և ռիթմիկ դոփել, պտտվել և փափուկ կատարել զսպանակը, -պատկերավոր կատարել կենդանիներին բնորոշ շարժումներ: Զարգացնել ռիթմական զգացողությունը, շարժումների ներդաշնակությամբ համաձայնեցվածությունը, շարժունակությունը և ակտիվությունը: Ներարկել սեր երաժշտաղիդակտիկ խաղերի հանդեպ:	«Գորտը»-երաժշտ.՝ Ա.Լուսինյանի. խոսք. Լ.Պողոսյանի, բեմակ.՝ Կ.Ղազարյանի: «Ռուսական պար» - երաժշտ.՝ Ռուսական ժողովրդ. «Պոլկա» - երաժշտ.՝Մ. Կրասևի: «Գնդակ»-երաժշտ՝. Ա.Լուսինյանի. խոսք՝ Լ.Պողոսյանի. շարժ.՝ Կ.Ղազարյանի:
Տոներ և զվարճանքներ	Զարգացնել գեղագիտական ճաշակ: Դաստիարակել՝ հետաքրքրություն տիկնիկային թատրոնների նկատմամբ, դրսևորել ապրումակցում կերպարների հանդեպ, լսողական և տեսողական ակտիվություն:	«Գնդիկ բոքոնիկ»- տիկնիկային ներկայացում–ռուսական ժողովրդ. հեքիաթ:

Երրորդ եռամսյակ
Մարտ

Երաժշտական գործունեության կազմակերպման ձևերը	Ծրագրային խնդիրները	Երաժշտական նյութերի ցանկը
1	2	3
Երաժշտական պարապմունքներ՝ -երաժշտության ունկնդրում, -երաժշտ. ստեղծագործությունների ընկալում:	Սովորեցնել՝ ունկնդրել ոչ միայն հակադիր բնույթի ստեղծագործություններ, այլև պատկերային բնույթի ստեղծագործություններ, -ճանաչել ծանոթ երաժշտական ստեղծագործություններ, -տարբերել բարձր և ցածր հնչողությունը: Նպաստել երաժշտական տպավորությունների կուտակմանը:	«Անձրև»-երաժշտ.՝ և խոսք՝ Ա.Մանդակունյանի, «Բզեզ», երաժշտ՝. Ա. Լուսինյանի, խոսք՝ Աթ. Խնկոյանի: «Օրոր»-հայկ. ժող. երգ:
Երգեցողություն՝ -երգչային հմտությունների յուրացում:	Զևավորել երգչային հիմնական հմտությունները: Սովորեցնել ոչ միայն ձայնակցել, այլև երգել ոչ բարդ երգեր, կարճ ֆրազներով, երգել բնական ձայնով, առանց բղավոցի, սկսել և ավարտել մեծերի հետ:	«Շնիկ»-երաժշտ.՝Ա.Լուսինյանի, խոսք՝ Աղ.Շահինյանի, «Անձրև»-երաժշտ.՝ և խոսք՝ Ա.Մանդակունյանի: «Գարուն»-երաժշտ.՝ և խոսք՝ Ա.Մանդակունյանի:
Երաժշտառիթմական շարժում՝ -վարժություններ, -պարեր, -խաղեր:	Սովորեցնել՝ -Խրոխտ քայլել քայլերգի տակ, խմբով թեթև վազել մեկ ուղղությամբ, -թեթև ցատկել երկու ոտքի վրա: Շարունակել աշխատել պարզ պարային տարրերի յուրացման ուղղությամբ: Սվորեցնել -երաժշտության փոփոխության հետ փոփոխել պարային շարժումները, -տարբերել հակադիր երաժշտությունը, -ազատ շարժվել դահլիճում զույգերով: Զարգացնել խաղերում կերպարների՝ *նապաստակ, արջ,* վերարտադրման կարողությունը, տարբերել ուժեղ և մեղմ հնչողությունը:	«Ուրախ ձկնիկ»-երաժշտ. և խոսք՝ Ա.Մովսիսյանի: «Թիթեռ»-երաժշտ. և խոսք՝ Լ. Զսլինյանի: «Նունիկի փիսիկը»-երաժշտ.՝ Ա.Լուսինյանի. խոսք.՝ Լ.Պ ողոսյանի, բեմ. Կ.Ղազարանի: «Գորտը»-երաժշտ՝ Ա. Լուսինյանի. խոսք՝ Լ. Պողոսյանի, բեմակ.՝ Կ.Ղազարյանի:
Տոներ և զվարճանքներ	Զարգացնել երեխաների գեղագիտական ճաշակը: Դաստիարակել՝ հետաքրքրու-	«Մայրիկների տոնը»- հանդես:

	թյուն տիկնիկային թատրոնների նկատմամբ, ապրումակցում կերպարներին: Զարգացնել երեխաների լսողական և տեսողական ակտիվությունը:	

Ապրիլ

Երաժշտական գործունեության կազմակերպման ձևերը	Ծրագրային խնդիրները	Երաժշտական նյութերի ցանկը
1	2	3
Երաժշտական պարապմունքներ Երաժշտության ունկնդրում, -Երաժշտ. ստեղծագործությունների ընկալում:	Սովորեցնել՝ ունկնդրել ոչ միայն հակադիր բնույթի ստեղծագործություններ, այլև պատկերային բնութի ստեղծագործություններ, -ճանաչել ծանոթ երաժշտական ստեղծագործությունները, -տարբերել բարձր և ցածր հնչողությունը: Նպաստել երաժշտական տպավորությունների կուտակմանը:	«Անձրև»-երաժշտ. և խոսք՝ Ա.Մանդակունյանի, «Բզեզ»-երաժշտ.՝ Ա.Լուսինյանի. խոսք՝ Աթ.Խնկոյանի: «Զանգակները զնգում են»-երաժշտ.՝ Ա. Լուսինյանի:
Երգեցողություն -վոկալ հմտությունների յուրացում:	Ձևավորել երեխաների վոկալ հիմնական հմտությունները: Սովորեցնել ոչ միայն ձայնակցել, այլև երգել ոչ բարդ երգեր, կարճ ֆրազներով, երգել բնական ձայնով, առանց բղավոցի, սկսել և ավարտել մեծերի հետ:	«Շնիկ»-երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Աղ.Շահինյանի, «Անձրև»-երաժշտ.՝ և խոսք՝ Ա.Մանդակունյանի: «Գարուն»-երաժշտ.՝ և խոսք՝ Ա.Մանդակունյանի:
Երաժշտաուղիղմական շարժում՝ -վարժություններ, -պարեր, -խաղեր:	Սովորեցնել՝ -Խրոխտ քայլել քայլերգի տակ, խմբով թեթև վազել մեկ ուղղությամբ, -թեթև ցատկել երկու ոտքի վրա: Շարունակել պարային տարրերի մշակումը: Սովորեցնել՝ -երաժշտության փոփոխության հետ փոփոխել պարային շարժումները, -տարբերել հակադիր երաժշտությունը, -ազատ շարժվել դահլիճում զույգերով: Զարգացնել խաղային կերպարների վերարտադրման կարողությունը, տարբերել ուժեղ և մեղմ հնչողությունը:	«Ուրախ ձկնիկ»-երաժշտ. և խոսք՝ Ա.Մովսիսյանի: «Թիթեռ»-երաժշտ. և խոսք՝ Լ. Զալինյանի: « Նունիկի փիսիկը»-երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք ՝ Լ.Պողոսյանի, բեմ.՝ Կ.Ղազարյանի: «Գորտը»-երաժշտ.՝ Ա.Լուսինյանի. խոսք՝ Լ.Պողոսյանի, բեմակ՝. Կ.Ղազարյանի:

Տոներ և զվարճանքներ	Զարգացնել գեղագիտական ճաշակ: Դաստիարակել՝ հետաքրքրություն տիկնիկային թատրոնի նկատմամբ, ապրումակցում կերպարներին, լսողական և տեսողական ակտիվություն:	«Գնդիկ բոքոնիկ»- տիկնիկային ներկայացում – ռուսական ժողովրդ. հեքիաթ:

Մայիս

Երաժշտական գործունեության կազմակերպման ձևերը	**Ծրագրային խնդիրները**	**Երաժշտական նյութերի ցանկը**
1	2	3
Երաժշտական պարապմունքներ Երաժշտության ունկնդրում:	Սովորեցնել՝ -ունկնդրել կերպարային բնույթի երգեր և պիեսներ, ճանաչել ծանոթ ստեղծագործություններ, -տարբերել բարձր և ցածր հնչողությունը. կուտակել երաժշտական տպավորություններ:	«Անձրև»-երաժշտ. և խոսք՝ Ա.Մանդակունյանի, «Կարուսել»- երաժշտ. Ա.Լուսինյանի. Ն.Միքայելյանի: «Զանգակները զնգում են»- երաժշտ. ՝ Ա.Լուսինյանի:
Երգեցողություն Ժողովրդական երգեր:	Շարունակել ձևավորել հիմնական մեղեդիների վերարտադրման հմտությունները: Սովորեցնել ոչ միայն ձայնակցել. այլև երգել ոչ բարդ երգեր, երգել բնական ձայնով, առանց բղավոցի, լսել դաստիարակի երգը:	«Օրոր»-հայկ. ժող. երգ: «Հայրենի հող» -հայկ. ժող. Խոսք՝ Ս.Կապուտիկյանի: «Անձրև- անձրև»-հայկ. ժող. երգ:
Երաժշտաոռիթմական շարժում -վարժություններ -պարեր -խաղեր	Սովորեցնել՝ -Խրոխտ քայլել մեկ ուղղությամբ, -կազմել շրջան և պահպանել այն, -երաժշտության փոփոխության հետ փոփոխել պարային շարժումները, -պարել առարկաներով, -պարել զույգով և չկորցնել իրար, Ուրախություն պատճառել երեխաներին, խաղային գործունեության միջոցով ապահովել հուզական բարենպաստ իրավիճակ: Զարգացնել ճարպկություն, շարժունակություն:	«Ուրախ ձկնիկ»- երաժշտ.և խոսք՝ Ա.Մովսիսյանի: ««Թիթեռ»-երաժշտ.և խոսք՝ Լ.Զալինյանի: «Գնդակով» խաղ- երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Լ.Պողոսյանի, բեմակ.՝ Կ.Ղազարյանի:
Տոներ և զվարճանքներ	Զարգացնել գեղագիտական ճաշակ: Դաստիարակել՝ հետաքրքրություն տիկնիկային թատրոնների նկատմամբ, ապրումակցում կերպարներին, լսողական և տեսողական ակտիվություն:	«Հրաժեշտ գարնանը»- ուրախ ժամանցներ:

Տոներ և զվարճանքներ

Տոներն ու զվարճանքները երեխաների ստեղծագործական ինքնուրույնության դրսևորման լավագույն ձևերից են: Դրանք ուրախության և հաճույքի պահեր են պարգևում յուրաքանչյուր երեխայի: Երաժշտական զվարճանքներն անցկացվում են շաբաթը մեկ անգամ՝ օրվա 2-րդ կեսին: Զվարճանքների տևողությունը 10-15 րոպե է: Թվարկենք մի քանի զվարճանք, որոնք անցկացվում են այս տարիքային խմբում:

-Խաղալիքների տոն,

-հնգմատյա թատրոն՝ հեքիաթ «Կա՝ չկա» /ցուցադրում են ավագ խմբի երեխաները/:

-ծննդյան օրվա նշում,

-սեղանային թատրոն, «Կատվի տունը» հեքիաթը,

-զվարճալի խաղալիքի ցուցադրում,

-խավային թատրոն,

-Ամանորի հանդես՝ «Տոնածառ»,

-պատմվածքներ երաժշտական ձևավորումներով՝ «Անտառում», «Նվագարաններ»,

-երգով խաղեր՝ «Նունիկի փիսիկը», «Գնդակ», «Գորտը», «Աքլորիկ»,

-զվարճանքներ՝ «Հյուր ենք տիկնիկ Անուշիկին», «Հյուր ենք խաղալիքներին», «Ձմռան խաղեր», «Լուսիկ տիկնիկի ծննդյան օրը», «Ո՞վ է տնակում ապրում», «Կրկեսում», «Գազանանոցում» և այլն,

- հայկական ժողովրդական հեքիաթների թատերականացված խաղեր:

-բեմականացումներ,

-տիկնիկային ներկայացումներ:

Զվարճանքներից մի մասը ցուցադրում են ավագ խմբի երեխաները, իսկ փոքրիկները դիտողի դերում են:

Այս տարիքի երեխաների համար նախատեսված տոներն առաջարկում ենք անցկացնել ուրախ ժամանցի ձևով:

Չորրորդ եռամսյակում, այսինքն՝ ամռանը, երեխաները կրկնում են ամբողջ տարվա ընթացքում անցած երգերը, պարերը, խաղերը, խորացնում են իրենց կարողություններն ու հմտությունները գործունեության տարբեր տեսակներով կազմակերպվում են զվարճանքներ և երաժշտական բազմաթիվ խաղեր:

ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Խաղը երեխայի համար սոցիալական հասունացման ուղի է: Խաղի ժամանակ երեխաներն առաջին անգամ փորձեր են անում շփվելու իրենց հասակակիցների հետ: Երեխան սկսում է զգալ իրեն որպես ընդհանուր խմբի անդամ, միաժամանակ նա փորձում է կատարել մեծի դեր՝ հասկանալով հանդերձ, որ ինքը դեռ մեծ չէ: Փոքրիկը ցանկանում է դրանք բավարարել անմիջապես: Նա ամեն կերպ ջանում է գործել մեծի պես, սակայն այդ ձգտումը չի համապատասխանում իր հնարավորություններին: Խաղի մեջ ընդօրինակելով մեծերի գործունեությունը և նրանց հետ կիսելով իր համար հասկանալի ուրախություններն ու տխրությունները՝ երեխան նման յուրօրինակ ճանապարհով դառնում է իրական կյանքի մասնակիցը: Լ. Ս. Վիգոտսկու կարծիքով՝ քիչ խաղացող երեխան կորցնում է զարգացման բազում հնարավորություններ:

Խաղը հասարակ զբաղմունք չէ կամ դատարկ հաճույք: Այն ուրախացնում է երեխային, դարձնում անհոգ և կենսուրախ: Երեխան խաղի ժամանակ շարժվում է, կատարում բազմաթիվ օգտակար շարժումներ. վազում է, թռչկոտում, կառուցում և այլն: Այդ կերպ մեծանում է առողջ, ամուր, ուժեղ և հնարամիտ: Խաղը երեխայի մեջ զարգացնում է տրամաբանությունը, երևակայությունը: Օրինակ՝ փայտից կամ ձողերից նրանք կարողանում են կառուցել գնացք կամ ավտոմեքենա: Միայն խաղալով են երեխաները սովորում համերաշխ ապրել, զիջել ընկերներին, հոգ տանել միմյանց մասին:

Խաղերի միջոցով ընդլայնվում են նաև երեխաների պատկերացումները շրջապատի կյանքի և բնության մասին. նրանք ծանոթանում են բնության երևույթներին, մարդկանց կենցաղին: Հարստանում և ակտիվանում է նրանց բառապաշարը, զարգանում է կապակցված խոսքը, դիտունակությունը, կամային ուշադրությունը, կանոնավորվում է արտասանությունը՝ հատկություններ, որոնք խիստ կարևոր են ապագա դպրոցականի համար[1]:

Խաղի ընթացքում նմանակելով մեծահասակների տնային գործերը՝ երեխաները յուրացնում են կենցաղային աշխատանքի որոշ հմտություններ. սրբում են տիկնիկների կահույքի փոշին, մաքրում իրենց «տան» հատակը, լվանում տիկնիկի սպիտակեղենը: Խաղերի ճնշող մեծամասնությունն արտացոլում է տարբեր մասնագիտության տեր մարդկանց աշխատանքը: Այսինքն՝ խաղի միջոցով ընդլայնվում և խորանում է երեխաների հետաքրքրությունը տարբեր մասնագիտությունների նկատմամբ, և հարգանք է ձևավորվում աշխատանքի հանդեպ:

Խաղի ժամանակ դրսևորվում և զարգանում են երեխայի ստեղծագործական ունակությունները: Վերարտադրելով կյանքի տարբեր իրադարձություններ, հատվածներ հեքիաթներից ու պատմվածքներից՝ նա մտածում է այն ամենի մասին, ին-

1 Լ. Մանուկյան, Լ. Սմբատյան, Հ. Միտոյան «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղեր», Երևան, 2007:

չը տեսել է, կամ իր համար կարդացել ու ասել են մեծերը: Այդ կերպ բազում երևույթների իմաստն ու նշանակությունը նրա համար ավելի հասկանալի են դառնում:

Պիաժեն մատնանշում է մանկական գաղափարների և հասկացությունների ձևավորման նպատակաուղղված սոցիալական գործընթացները, ինչպես նաև ակտիվ ուսուցումը: Ակտիվ ուսուցում իրականացվում է չորս բաղադրիչների առկայությամբ՝ հետաքրքրություն, խաղ, ճշմարիտ փորձարկում և համագործակցություն: Հետաքրքրությունը, փորձարկումը և համագործակցությունը միավորվում են խաղի բովանդակային համատեքստում: Խաղի միջոցով երեխաները տիրապետում են ակտիվ ուսուցման բոլոր տարրերին:

Խաղալիս երեխաներն անկաշկանդ փորձարկում են բանավոր խոսքն առանց վախենալու սխալներից: Մենք հաճախ ենք ականատես լինում, թե ինչպես են երեխաները փորձարկում հնչյունները և լեզվային զանազան մոդելներ, երբ խաղում են մենակ, կամ խմբում ներկայացնում են իրավիճակը: Միաժամանակ մենք տեսնում ենք, որ հենց խմբային դրամատիկ խաղի մեջ մեծանում են հաղորդակցման դերը և լեզվի հիմնական նշանակությունը փոխադարձ նպատակներին հասնելու համար:

Խաղի տեսակը /զարգացման փուլը/	Օպտիմալ զարգացման տարիքը	Նկարագրությունը	Զարգացման իմաստը
Ռեժիսորական խաղ /1-ին փուլ/	2-3 տարեկ.	Երեխայի կողմից երևակայական իրավիճակի ըմբռնումը, որն ստեղծվում է մեծահասակի կողմից: Առարկայի տրամադրում՝ երևակայական գործառույթով:	Նախապատրաստական փուլ՝ խաղային գործունեության զարգացման սկզբի համար: Իրադրության «ռեժիսորավորում» 1-3 առարկաների համար:

ՍՅՈՒԺԵՏԱԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԵՐ

Ստեղծագործական խաղերը նախադպրոցական տարիքի երեխաների ակտիվության, ինքնուրույնության, երևակայության և նախաձեռնողականության դրսևորման արդյունավետ միջոցներից են: Խաղալիս երեխան հայտնվում է ուրիշ մարդու դիրքում և, կարծես, աշխարհին նայում այն մեծահասակի տեսանկյունից, որի դերը կատարում է: Խաղը նպաստում է հոգեկան բոլոր գործընթացների զարգացմանը. ի հայտ է գալիս ստեղծագործական երևակայությունը, զարգանում են մտահղացման ունակությունը, երևակայությունը, խաղի բովանդակության ստեղծումը: Երեխայի երևակայությունը զարգանում է հատկապես ստեղծագործական, դերային խաղերի միջոցով: Դրանք միաժամանակ ապահովում են երեխայի անցումը հաջորդ՝ զարգացման ավելի բարձր փուլ: Ստեղծագործական, դերային խաղերի բովանդակությունն ինքնանպատակ չէ. այն արտացոլում է իրականության մեջ գոյություն ունեցող հարաբերությունները:

Խաղերի ընթացքում նախադպրոցականի ստեղծագործական երևակայության զարգացման պայմաններն են.

ա. Հուզական, բարյացակամ մթնոլորտի առկայություն խմբասենյակում:

բ. Անհրաժեշտ միջավայրի ստեղծում:

գ. Երեխայի ինքնուրույնության, նախաձեռնության և ազատության ապահովում՝ դաստիարակի մանկավարժական ղեկավարման առկայությամբ:

Ստեղծագործական խաղերի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ երեխաներն իրենք են ստեղծում խաղը, և խաղային գործունեությունը կրում է ընդգծված ինքնագործ, այսինքն՝ ստեղծագործական բնույթ: Երեխան հավատում է իր հորինած կերպարներին: Նա ոչ միայն հավատում է, այլև ինքն է կատարում այդ դերերը:

Սյուժետադերային խաղը որպես ստեղծագործական երևակայության զարգացման պայման կարող է դիտվել այն դեպքում, երբ մեծահասակն իրականացնելով մանկավարժական ղեկավարում՝ ստեղծում է համապատասխան մթնոլորտ. չի խախտում երեխայի նախաձեռնությունը և խաղի ընտրության ազատությունը: Մտնելով կերպարի մեջ՝ երեխան դառնում է նա, ում ընդօրինակում է: Հետաքրքիր է, որ երեխան ոչ թե վերարտադրում է կերպարի ամբողջ գործունեությունը, այլ միայն այն գծերը, որոնք անհրաժեշտ են տվյալ խաղի ընթացքի համար:

Հատկապես այս տարիքում դաստիարակը պետք է հանդես գա ուղղորդողի և խաղընկերոջ դերում.

-օգնել երեխաներին՝ ձևավորելու ոչ միայն կողք-կողքի, այլև միմյանց հետ խաղալու, հասակակիցների խաղերին բարյացակամ վերաբերմունք դրսևորելու կարողություն,

-սովորեցնել խաղալիքներով և տարբեր առարկաներով կատարել տարբեր գործողություններ,

-օժանդակել երեխաներին՝ ծանոթ գործողությունները փոխադրել խաղային տարբեր իրադրությունների մեջ,

- հուշող հարցերի միջոցով նպաստել խաղի զարգացմանը:

Ստեղծագործական խաղերը կազմակերպվում են հիմնականում խմբային ձևով: Դրանց մասնակցում են մի քանի երեխաներ, որոնցից յուրաքանչյուրը կատարում է իր դերը: Հարկավոր է երեխաների մեջ ձևավորել կարողություն՝ ստեղծագործական խաղերի ժամանակ օգտագործել կառուցողական, շինարարական տարբեր պարագաներ, ստեղծել հետաքրքիր կառույցներ, ընկերների հետ կարողանալ փոխանակել կառուցողական նյութերը և ստանձնել համապատասխան դերեր:

Սյուժետադերային խաղերի ղեկավարումը նպատակաուղղված է խաղի մտահղացման հստակեցմանը, բովանդակության զարգացմանը, խաղային գործողությունների, դերերի ճշտմանը և երեխաների ընկերասիրական հարաբերությունների ստեղծմանը: Ղեկավարումը չպետք է հարկադրող, վիրավորող բնույթ կրի կամ երեխաների կողմից առարկությունների, բողոքի տեղիք տա կամ առաջացնի խաղից դուրս գալու ցանկություն:

ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԵՐ

Ի տարբերություն ստեղծագործական դերերով խաղերի, որոնցում խաղի նպատակը, բովանդակությունը և ընթացքը որոշում են իրենք՝ մասնակիցները, դիդակտիկ խաղերը նրանք ստանում են պատրաստի վիճակում: Դրանց բովանդակությունը միշտ այնպիսի մտավոր խնդրի իրականացում է, որի լուծման համար երեխան պետք է արագ մտածի, համեմատի առարկաները, երևույթները, վերլուծի, համադրի դրանք և ինքնուրույն կերպով որոշակի եզրակացության հանգի: Դիդակտիկ խաղերի խնդիրն է նպաստել երեխաների ուսումնական և իմացական, ինչպես նաև մտավոր գործունեության ձևավորմանը:

Դիդակտիկ խաղերի միջոցով ընդլայնվում են նաև երեխաների պատկերացումները շրջապատի կյանքի և բնության մասին: Նրանք ծանոթանում են բնության երևույթներին, մարդկանց կենցաղին: Այս ձևով հարստանում և ակտիվանում է նրանց բառապաշարը, զարգանում կապակցված խոսքը, դիտունակությունը և կամային ուշադրությունը: Կանոնավորվում է արտասանությունը: Դրանք ապագա դպրոցականի համար խիստ կարևոր հատկություններ են:

Խաղալիքներով և սեղանային տպագիր նյութերով անցկացվող խաղերը 2-3 տարեկան երեխաների ինքնուրույն գործունեության կազմակերպման կարևոր միջոց են: Դրա համար էլ անհրաժեշտ է անցկացնել խաղեր, որոնք կամրապնդեն առարկաների մեծության, գույնի և ձևի մասին երեխաների ունեցած գիտելիքները և այն խաղերը, որոնք կնպաստեն ուշադրության, մտածողության, ըմբռնման, երևակայության, երեխայի ձեռքի մանր մկանների զարգացմանը:

Նպատակահարմար է օգտվել հավաքովի խաղալիքներով խաղերից /գեղջկական տիկնիկներ, աշտարակ, գնդիկների հավաքածու և այլն/, երկու մասանի հատվող նկարներից /«Զույգ պատկերներ», «Մեծ և փոքր» և այլն/, օգտագործել դիդակտիկ խաղեր, որոնք պահանջում են երկու հոգու մասնակցությունը խաղին:

Դիդակտիկ խաղեր: «Հյուրասիրենք տիկնիկին», «Նշան բռնենք», «Գտի՛ր նմանը», «Նորեկը», «Մենք վարորդներ ենք», «Սագերը», «Ո՞վ է ապրում տնակում», «Գնացք», «Ի՞նչը ինչ ձայն է հանում», «Հանձնարարությունը ճիշտ կատարի՛ր», «Ի՞նչը չկա», «Դիմավորենք տիկնիկին», «Մեր կատուն», «Մեր արջուկը», «Տիկնիկի նոր կահույքը», «Սյուներ կառուցենք», «Տիկնիկի համար բանջարեղեն գնենք», «Մատների խաղ»:

ԶԱՐԳԱՑՆՈՂ ԽԱՂԵՐ

Նախադպրոցական տարիքի երեխաների համար առաջատար նշանակություն ունեն զարգացնող խաղերը: Այս խաղերի նպատակը ոչ միայն գիտելիքների սովորական փոխանցումն է, այլև երեխաների ակտիվ, գիտակցված գործունեության ապահովումը, հոգեկան որոշակի գործընթացների զարգացումը, սոցիալական կարևոր փորձի փոխանակումը:

ԹԱՏԵՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽԱՂԵՐ

Մանկական թատերականացված խաղերը երեխայի կյանքի անբաժանելի մասն են կազմում: Դրանց սյուժետային կառուցվածքի մեջ յուրաքանչյուր «կերպար» ունի իր անելիքը: «Թատերական» խաղերը զարգացնում են երեխայի խոսքը, գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը և նպաստում նրա ինքնակազմակերպմանը, ինքնադրսևորմանն ու ինքնարտահայտմանը:

Թատերական արվեստն ինքնին միջառարկայական կապերի, երեխաների բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման նպատակի գործնական իրականացման առումով ընձեռում է լայն հնարավորություն: Ի վերջո թատրոնը համադրական արվեստ է: Այն ձևավորում է և՛ երգելու, և՛ ասմունքելու, և՛ պարելու, և՛ հորինելու, և՛ նմանակելու հմտություններ, մշակում խոսքի կուլտուրա, տեխնիկական միջոցներ օգտագործելու կարողություն: Բեմականացումներին մասնակցելը հաճախ վերացնում է նաև երեխայի արտասանական կամ այլ բնույթի թերություններ: Ազատ, սահուն, արտահայտիչ ընթերցելը, նույնիսկ թատրոնի միջոցով ենթատեքստի ընկալումն ու մեկնաբանումը վերածվում են կայուն որակների:

Հատկապես այս տարիքում դաստիարակի նպատակը պետք է լինի սիրելի կերպարի հետ երեխաների հաղորդակցության միջոցով նրանց մեջ հետաքրքրության առաջացումը թատերականացված խաղերի նկատմամբ: Երեխան պետք է կարողանա հնչյուններով ակտիվ արձագանքել խաղ-գործողություններին, կրկնօրինակել տարբեր թռչունների և կենդանիների շարժումներին և դրսևորել ինքնուրույնություն ու ակտիվություն:

Զարգացնող միջավայրը սկզբնաղբյուր է թատերական խաղի համար: Այն պետք է լինի անվնաս, մաքուր, գրավիչ, ոչ այնքան բազմազան և ներառի բոլոր այն պայմաններն ու համապատասխան տարածությունը, որը հնարավորություն կտա երեխային՝ պատկերացնելու, հորինելու և ստեղծագործելու: Զարգացնող միջավայրի բաղկացուցիչ մասն է այսպես կոչված «*կախարդական արկղիկը*»: Ցանկալի է, որ այն լինի ոչ միայն մանկապարտեզում, այլև յուրաքանչյուր ընտանիքում: Այնտեղ կպահվեն զանազան հագուստներ, պարագաներ՝ երեխայի թատերական գործունեությունը կազմակերպելու համար: Նա ազատ կարող է վերցնել իրեն անհրաժեշտ առարկան, որը կարճ ժամանակում հնարավոր է վերածել կոստյումի կամ զարդի: Օրինակ, փայտի կտորը հնարավոր է դարձնել և՛ փերիի կախարդական փայտիկ, և՛ թագավորական գավազան, և՛ անվախ ասպետի զենք, և՛ դիրիժորական փայտիկ:

Թատերական խաղեր կազմակերպելիս երեխաները հաճախ իրենք են ստեղծում դեկորատիվ պայմաններ՝ իրենց շրջակա միջավայրից կամ առօրյա կենցաղային իրերից: Դեկորներ պատրաստելիս երեխան վերարտադրում է այն միջավայրը, որի մեջ պատկերացնում է այդ հերոսին: Այդ կերպ զարգանում է նրա պատկերային մտածողությունը:

ԽԱՂ-ԶՎԱՐՃԱԼԻՔՆԵՐ

Մանկապարտեզում երեխաների սիրած զբաղմունքներից են խաղ-զվարճալիքները, որոնք ապահովում են արդյունավետ, ուրախ հաղորդակցություն, զարգացնում են խոսքը, ուշադրությունը, անկաշկանդ գործելու կարողությունը:

ԽԱՂԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Ինքնաբուխ գործունեությունը ծնվում է երեխայի հետաքրքրություններից: Այն ամենաարդյունավետն է: Ինքնաբուխ գործունեության ընթացքում երեխայի մեջ դրսևորվում են խոսելու և շփվելու հակումները: Նրա խոսքն ու գործողությունները ավելի ազատ են, անկաշկանդ, միտքը ճկուն է, որովհետև բացակայում են երեխային կաշկանդող թելադրանքն ու հսկողությունը: Նա ինքն է իրավիճակի «հեղինակը» և իր իսկ ստեղծած իրավիճակում իրեն զգում է՝ ինչպես ձուկը ջրում. ամեն ինչ անում է իր հակումների թելադրանքով:

Ինքնակազմակերպվող գործունեության ժամանակ երեխան՝

բավարարում է իր բնական հակումները,

բացահայտում է իր առանձնահատկությունները,

ինքնադրսևորվում է,

սոցիալական հարաբերությունների մեջ է մտնում ընկերների հետ և ինքնուրույն կարգավորում իր հարաբերությունները,

փորձում է ինքնուրույն հաղթահարել խոչընդոտները,

առօրյա խնդիրներին սովորական կամ անսպասելի լուծումներ է գտնում,

սովորում է իր առջև խնդիրներ դնել և լուծել:

Անկախ, ազատ գործող երեխան լիարժեքորեն օգտագործում է իր բոլոր հմտությունները, ունեցած տեղեկատվությունը՝ դրանք միաժամանակ փոխանցելով իր ընկերներին և յուրացնելով նրանցը: Այդ ընթացքում նա կենցաղային, սոցիալական և հոգեբանական խնդիրներ է լուծում:

Հատկապես օրվա երկրորդ կեսին երեխաներին շատ է ոգևորում խաղային իրավիճակների ստեղծումը, որը նրանց ինքնակազմակերպման, ինքնադրսևորման, ինքնարտահայտման, անհատականության դրսևորման հնարավորություն է տալիս: Երեխան դառնում է նախաձեռնող, սոցիալապես ակտիվ:

Երեխաների վերապրած հույզերն իրական խաղային և պայմանական իրավիճակներում, որոնք առաջանում են դաստիարակի նախաձեռնությամբ կամ տարերայնորեն, հարստացնում են նախադպրոցականների հուզաշխարհը, բացում նոր հնարավորություններ՝ ինքնարտահայտման և համագործակցության համար:

Խաղային իրավիճակները կարող են նաև ընդհանրապես կապ չունենալ առօրյայի, կենցաղի հետ: Դրանց ստեղծողը երեխայի երևակայությունն է: Այս դեպքում նրա մտածողությունն ավելի ազատ ու անկաշկանդ է: Նման խաղեր կազմակերպում է նաև դաստիարակը և ինքն էլ խաղում է երեխաների հետ: Դրանք կարող են հստակ խնդիրներով փոքրիկ խաղ-ներկայացումներ լինել:

Շարժական առարկաները

Միջավայրում գտնվող շարժական առարկաները զարմանալիորեն ազդում են երեխաների խաղի վրա: Խաղահրապարակների քանակն ու հասանելիությունը, տարածքների և պարագաների տարատեսակությունն ու բարդությունը ազդում են խաղի որակի վրա. «ֆունկցիոնալ բարդության» /այսինքն՝ փոխգործունեության հնարավորությունների/ մանիպուլյացիան փոխում է խաղը: Պարագաների «խառնաշփոթն» ապահովող միջավայրն օժանդակում է խաղի առավել բարդեցմանը և փոխգործունեության հնարավորությունների ավելացմանը:

Ձևական խաղ առարկաների հետ

Առարկաների հետ ձևական խաղերը երեխաները սովորաբար շուտ և հեշտությամբ են յուրացնում: Այդ պատճառով, եթե նախադպրոցականը չի ներթափանցում երևակայական առարկաների աշխարհ և կախման մեջ է իրական առարկաներից, ապա պետք է կենտրոնանալ այս խնդրի վրա և անհանգստանալ, որովհետև նա հետագայում սահմանափակ մասնակցություն կարող է բերել նաև դրամատիկ խաղերին:

Երեխայի վստահությունը ձեռք բերելու նպատակով

• Խաղացե՛ք նրա հետ, ինչպես ծնողը զավակի հետ: Կազմակերպե՛ք պահմտոցի, բռնոցի...

• Խաղացե՛ք տիկնիկներով, խաղալիքներով, ուժով չափվեք երեխայի հետ:

• Խաղի ընթացքում ուշադրություն դարձրե՛ք, թե ո՛ր խաղալիքներն է երեխան սիրում:

• Խրախուսե՛ք երեխային՝ կրկնելու ձեր գործողությունները:

• Ընտրե՛ք այնպիսի թեմա, որ երեխաների ամբողջ մի խումբ կարողանա գործողություն կատարել իրական առարկաներով:

• Իրական առարկաները փոխարինե՛ք երևակայական առարկաներով:

• Առաջարկե՛ք դեր այն երեխային, որը խաղին չի մասնակցում:

• Խաղի ժամանակ օգտագործե՛ք խոսքն ու լեզուն խթանող վարժություններ:

• Խոսե՛ք ինքներդ ձեզ հետ /երբ որևէ գործողություն եք կատարում, պատմե՛ք այն, ինչ անում եք/:

• Արտասանե՛ք պարզ մանկական ոտանավորներ:

• Ստեղծե՛ք սցենար, որը խաղի մեջ կընդգրկի բոլոր երեխաներին:

• Դեր ստանձե՛ք և ղեկավարե՛ք սցենարը:

• Կատակե՛ք կամ ծիծաղելի մի բան արեք խաղի ժամանակ:

• Մի՛ ակնկալեք, որ երեխան կզիջի իր բոլոր խաղալիքները:

• Համոզվե՛ք, որ երեխան գիտի զգացմունքային բառեր:

• Հաճախ գովե՛ք երեխային:

ԽԱՂԱԼԻՔԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Խաղալիքը էական դեր ունի երեխայի կյանքում: Ճիշտ ընտրված խաղալիքների միջոցով երեխաները սովորում են սիրել, հոգատար լինել շրջապատի նկատմամբ: Զարգանում է նրանց հուզական աշխարհը: Որպես մանկության անբաժանելի մաս՝ դրանք պետք է համապատասխանեն երկու կարևորագույն չափանիշի՝ չվնասեն երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջությանը և լինեն էկոլոգիապես մաքուր և անվտանգ:

Զարգացնող խաղալիքները երեխայի կյանք ներխուժում են դեռևս կրտսեր տարիքից: Ցանկացած զարգացնող խաղալիք երեխայի առաջ դնում է ուսուցողական խնդիր, որի լուծումը խաղալիքի մեջ է: Միաժամանակ ձևավորվում են մի շարք կարողություններ և հմտություններ՝ միացման, անջատման, հրման, առարկաների շարման, դասակարգման, տրամաբանական պատկերացման և գործողությունների վերլուծության՝ սինթեզի, համեմատության, ընդհանրացման: Այսինքն ձևավորվում են ճանաչողական ունակություններ, օրինակ՝ բացել և փակել տուփը, հավաքել և շարել խորանարդիկները, ամրացնել շրջանակները ձողի վրա: Երեխան յուրացնում է առաջ և հետ գործողությունները, ճանաչում առարկաների հատկանիշները (մեծ-փոքր, լայն-նեղ), որակը (ամուր, կարծր, փափուկ, ծանր, թեթև), քանակը (մեկ, շատ, քիչ), չափը, ձևը, (շրջան, խորանարդ, գունդ, օղակ):

Երեխան ծանոթանում է նաև այլ հատկությունների. գնդակները գլորվում են՝ կանգուն չեն, իսկ խորանարդիկները չեն գլորվում՝ կանգուն են:

ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՏԻԿՆԻԿ- խաղալիք առանց որի չի անցնում ոչ մի սյուժետադերային խաղ: Խաղի և խաղալիքների (տիկնիկ) միջոցով երեխան ճանաչում և բացահայտում է ինքն իրեն: Միաժամանակ խաղի մեջ է ներգրավում մուլտֆիլմի, հեքիաթների հերոսներին՝ վերարտադրելով իրավիճակը:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ - Այս խաղերը բարդ են 2-3 տարեկան երեխաների համար: Հարկավոր է տրամադրել մեծ չափերի անվտանգ խորանարդիկներ, որոնց միջոցով հնարավոր է զարգացնել մանր և միջին մոտորիկան:

ՍՅՈՒԺԵՏԱՅԻՆ ԽԱՂԱԼԻՔՆԵՐ - Այս խաղալիքների հիմնական խնդիրը ստեղծագործական ունակությունների զարգացումն է: Դրանք պետք է մեթոդապես ճիշտ կիրառվեն մանկավարժի կողմից: Դաստիարակը պետք է որոշի խաղի բովանդակությունը, որպեսզի ուղղորդի երեխային, հետաքրքրություն և հույզեր առաջացնի նրա մեջ և ուղղորդի խաղի ընթացքը՝ սյուժետային խաղալիքներով:

ՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶՈՂ ԽԱՂԱԼԻՔՆԵՐ - Այս խաղալիքները նպաստում են երեխայի օրգանիզմի զարգացմանը՝ մկանների, տեսողության, ճկունության, տարածության մեջ կողմնորոշվելու ունակության, աչքաչափի, լսողության, խոշոր մոտորիկայի (գնդակ, պարան, օղակ, կեգլի), իսկ մանր մոտորիկան և աչքաչափը զարգացնելու համար համապատասխանում են հետևյալ խաղալիքները՝ կառուցողական, խորանարդիկներ և այլն:

Գնդակը համարվում է համաշխարհային խաղալիք:, Դրանով խաղում են տարբեր տարիքի մարդիկ՝ փոխելով խաղի բնույթը և բարդությունը: Այս տիպի խաղալիքներով խաղալիս պետք է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները և երեխայի ֆիզիկական զարգացածությունը: Խոշոր մոտորիկան զարգացնող խաղալիքներով խաղալիս պետք է նախատեսել միջին ծանրաբեռնվածություն երեխայի օրգանիզմի համար. միայն այդ դեպքում այն կտա ճիշտ զարգացում: Անշուշտ, այս խաղերի և խաղալիքների նշանակությունը չափազանց մեծ է երեխայի ճիշտ ձևավորման և զարգացման առումով:

ԹԱՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽԱՂԱԼԻՔՆԵՐ

Այս խաղալիքները չափազանց հետաքրքրական են երեխաների համար, զարգացնում են ձեռքերի մանր մոտորիկան, ձևավորում գեղագիտական ճաշակ և ակտիվացնում անգամ ամենապասիվ երեխային:

Տիկնիկների ու խամաճիկների լեզուն շարժումների լեզուն է: Երեխան կարող է միայնակ ժամերով զրուցել տիկնիկի հետ և չհոգնել:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽԱՂԱԼԻՔՆԵՐ

Սրանք այն խաղալիքներն են, որոնք երեխաների մեջ ձևավորում են տեխնիկական հմտություններ, հատկապես նյութերի հատկությունների հետազոտման, մշակման մեթոդին և ընթացքին ծանոթանալու տեսակետից:

Հումքը, որով պատրաստված է տեխնիկական խաղալիքը, կարող է նաև չհամապատասխանել իրականությանը, օրինակ՝ հնարավոր է պատրաստել փայտյա ռոբոտ, գնացք, մեքենա և այլն: Տեխնիկական խաղալիքների շարժման մեխանիզմը պետք է լինի լավ շարժողական, ամուր, հասանելի երեխաների հասկացողությանը՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները:

Երկու տարեկան երեխան առանձնացնում է միայն երթևեկության միջոցներից մարդատար ավտոմեքենան: Նա փորձում է կրկնօրինակել մեքենայի ազդանշանը, վազում է տանը կամ բակում՝ ղեկը ձեռքին:

Այլ խաղերի համար նրան անհրաժեշտ է բեռնատար ավտոմեքենա առանց մեխանիզմի, որով երեխան կարող է տեղափոխել խորանարդիկներ, քարեր ավազ, տիկնիկներ և այլ խաղալիքներ: Դրանց թվին են պատկանում նաև լարովի խաղալիքները:

Այս տարիքի երեխաներին հետաքրքրում է նաև շարժվող գնացքը, որի ընդհանուր շինությունը հիշեցնում է իսկական գնացքին: Ցանկալի կլինի, որ գնացքը լինի փայտյա կամ պլաստմասսե, շարժողական անիվներով և սուլիչով, ինչն էլ հենց հետաքրքրում է երեխաներին:

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽԱՂԱԼԻՔՆԵՐ

Երեխաների գեղագիտական դաստիարակության խնդիրների իրականացման գործում հատուկ դեր է հատկացվում երաժշտական նվագարաններին և մանկական խաղալիքներին: Դրանք լայնորեն կիրառվում են ընտանիքում, մանկապարտեզում, ընդգրկում են երաժշտության ոլորտը, նպաստում երեխայի ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը:

Վաղ և կրտսեր նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատելիս օգտագործվում են մետաղաֆոնէ, դուդուկ, փոքրիկ թմբուկներ, զնգոցներ, զանազան փոքրիկ երգեհոններ և բոլոր այն նվագարանները, որոնք մեղմ ու ցածր են հնչում: Պետք է հիշել, որ այս տարիքում առանձնահատուկ ուշադրություն է պահանջվում փոքրիկի երաժշտական լսողության նկատմամբ: Կրտսեր խմբերում հիշյալ նվագարաններն օգտագործվում են երաժշտադիդակտիկ խաղերի ժամանակ, որոնց նպատակն է զարգացնել երեխաների երաժշտազգայական ունակությունները:

Այս տարիքում կիրառվում են մի շարք երաժշտական խաղալիքներ.

ՇԱՐՄԱՆԿԱ /ԵՐԳԵՀՈՆԻԿ/ - Այս երաժշտական խաղալիքը պատրաստված է փայտից, որն օգնում է ստեղծել անմոռանալի համերգ՝ երեխաների համար: Այն նպաստում է երաժշտական ունակությունների, երևակայության, գեղագիտական ընկալումների զարգացմանը:

Երգեհոնիկի մեկ այլ տեսակ պատրաստված է ճկուն հումքից, որին ամրացված է թել: Այն նախատեսված է պարանոցից կախելու համար:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽԱՂԱԼԻՔ ՀԵՌԱԽՈՍ - Այս խաղալիքի վրա կան գունավոր կոճակներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր երաժշտությունը: Այն զարգացնում է երաժշտական լսողությունը, ուշադրությունը և շարժման մեջ անհրաժեշտ կոորդինացիան:

ԿԻԹԱՌ - Այս խաղալիքը գունեղ 4 լարանի կիթառ է, որը պատրաստված է ճկազանգվածից (պլաստմասսայից): Այն ևս զարգացնում է երեխաների երաժշտական ունակությունը, երևակայությունը և գեղագիտական ընկալումները:

ՇՎԻ - Պատրաստված է փայտից, որը զարդարված է վառ նախշերով: Այն զարգացնում է երաժշտական լսողությունը և շնչառական օրգանները: Որպեսզի շվին նվագի, պետք է որոշակի ջանք գործադրել՝ մաքուր և ուժեղ փչելու համար:

ՇՐԹՀԱՐՄՈՆ - Երաժշտական խաղալիք է՝ պատրաստված ճկա-զանգվածից (պլաստիկայից): Այն զարգացնում է ձայնային ըմբռման կարողությունը, նպաստում ուշադրության կենտրոնացմանը և ձեռքերի մանր մոտորիկայի զարգացմանը:

ՉԽԿՉԽԿԱՆ - Այս երաժշտական խաղալիքը աչքի է ընկնում իր վառ գունային համադրությամբ. պատրաստված է փայտից: Այն զարգացնում է երաժշտական լսողությունը, ուշադրությունը և ձեռքերի մանր մոտորիկան:

ԵՐԵԽԱՆԵՐԸ ՏԱՐԵՎԵՐՋԻՆ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱՆ՝

✓ Խաղալ կողք կողքի, չխանգարել իրար:

✓ Շփվել ծանոթ մեծահասակների և հասակակիցների հետ:

✓ Նմանակել իրենց հարևանությամբ խաղացող երեխայի խաղը:

✓ Կրկնօրինակել մեծահասակների առօրյա կրկնվող գործողությունները:

✓ Իրենց ընտրած խաղով խաղալ որոշակի կարճ ժամանակի /8-10 րոպե/ ընթացքում:

✓ Հասակակցի հետ խաղի ընթացքում մեծահասակի զգալի աջակցությամբ սպասել իրենց հերթին:

✓ Խաղում դրսևորել ինքնուրույնություն /որոշ գործողություններ կատարել իրենց ձևով, հարմար արագությամբ՝ չընդունելով օգնություն/:

✓ Ինքնուրույն հաղթահարել որոշ խոչընդոտներ:

✓ Ձևավորել դերային վարքի պարզագույն ձևեր /մայրիկ, հայրիկ, վարորդ, բժիշկ/, կրկնօրինակել դերին համապատասխան որոշ գործողություններ:

✓ Ցուցաբերել հետաքրքրասիրություն նոր բան սովորելու և նոր փորձառություն ձեռք բերելու նկատմամբ /մասնակցել նոր գործողությունների, խաղերի/:

✓ Ցուցաբերել նախաձեռնություն /մասնակցել ուրիշ երեխաների խաղին, խաղի ընթացքում միաժամանակ օգտագործել մի քանի խաղալիքներ, խաղալիքներից ընտրել մեկը/:

✓ Խաղի մեջ սկսել կիրառել փոխարինող առարկաներ, պայմանական առարկայական գործողություններ, ժեստեր…:

✓ Կարողանալ խաղընկերոջը փոխարինող տիկնիկը, խաղալիքը դարձնել գործող կերպար:

✓ Համատեղ խաղերի ժամանակ դրսևորել հուզական դրական շփում:

✓ Մասնակցել պարզ կանոններով խաղերին՝ բակում և խմբասենյակում:

✓ Դիդակտիկ խաղերի ժամանակ ենթարկվել որոշ պարզագույն կանոնների:

✓ Խաղալիքներով կատարվող ծանոթ գործողությունները կարողանալ փոխանցել խաղային տարբեր իրադրությունների մեջ:

✓ Կարողանալ օգտվել հավաքովի խաղալիքներով խաղերից /գեղջկական տիկնիկներ, աշտարակներ, գնդիկներ.../:

✓ Դրսևորել հետաքրքրություն թատերականացված խաղերի նկատմամբ, հետևել տիկնիկային թատրոնի հերոսների գործողություններին:

✓ Խրախուսել դերային կերպարների հետ շփման առաջին փորձերը /տիկնիկ Նունեն հրավիրում է համերգի/:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Ներկայումս նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում են գտել ուսուցման ժամանակակից /խաղային, գործնական, ակտիվ/ մեթոդները, որոնք: հայտնի են որպես ինտերակտիվ/փոխներգործուն/ մեթոդներ:

Ուսուցման **գործնական մեթոդների** խմբին են դասվում տարատեսակ վարժությունները, փորձերը, հետազոտումը և մոդելավորումը:

Ակտիվ ուսուցման մեթոդները նպաստում են ազատ մտածելու, համարձակ կարծիք հայտնելու կարողությունների և տարածական կողմնորոշումների զարգացմանը, իմացության գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Դրանք խմբային մտավոր աշխատանքի եղանակներ են՝ ուղղված համատեղ մտորումների և որոնումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը:

Ուսուցման փոխներգործուն /Մտագրոհ, Աշխատանք ենթախմբերով, Հարցեր և հարցադրումներ, Իրավիճակի վերլուծություն, Դերային խաղ…/մեթոդները համապատասխանում են անհատակողմնորոշիչ ուսուցման սկզբունքներին[2]:

Այդուհանդերձ, չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր: Ցանկացած խումբ, պարապմունք եզակի է, անկրկնելի: Դաստիարակի խնդիրն է՝ ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել եզակի իրավիճակին:

2-3 տարեկան երեխաների հետ կիրառվող հիմնական մեթոդը **խաղային մեթոդն է,** որի առավելությունները պայմանավորված են խաղային մթնոլորտի բարձր հուզականությամբ, երեխայի համար խաղի բնական և հոգեհարազատ բնույթով: Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները: Հատկապես արդյունավետ են դիդակտիկ խաղերը, որոնք կատարում են երկու կարևոր գործառույթ.

- խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը,
- նպաստում են գիտելիքների ամրապնդմանը և կատարելագործմանը:

Հետաքրքիր խաղային մեթոդ է նաև երևակայական իրադրությունների խաղարկումը, որի ընթացքում երեխայի գիտելիքները և կարողությունները ձեռք են բերվում պարտադրված դերային գործողությունների միջոցով /խաղային իրավիճակներ/:

[2] Տե՛ս, Հ. Միտոյան, Լ. Սմբատյան, Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան, 2010թ.:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Նախադպրոցական կրթության կարևոր խնդիրներից է ուսումնառությունը թեմատիկ պարապմունքների միջոցով կազմակերպելը: Թեմատիկ պարապմունքները կարևորում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում:

Թեմատիկ ուսուցումն ապահովում է երեխայի զարգացման մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը և չի կենտրոնանում մեկ՝ առանձնացված ոլորտի վրա: Այն ենթադրում է ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միավորում՝ մեկ հետաքրքիր գաղափար ուսումնասիրելու միջոցով, որի մեջ ամփոփված են տարբեր առարկաներից բովանդակային միավորներ: Թեմատիկ ուսուցման ծրագիրն այնպես է կազմված, որ երեխաները տեսնում և հասկանում են առարկայական ոլորտների միջև առկա կապերը և այդ ամենի կապը կյանքի հետ: Այսինքն, թեմատիկ ուսուցումը միջառարկայական է, ինչպիսին ինքը՝ կյանքն է:

Թեմատիկ ուսուցումը հնարավորություն է տալիս դաստիարակին՝ ծրագիրը կազմակերպել երեխաների համար հետաքրքրություն ներկայացնող թեմաների, խնդիրների կամ կենսական հարցերի շուրջ:

Թեմատիկ պարապմունքի ծրագրման ժամանակ դաստիարակը պետք է հաշվի առնի հետևյալ հարցերը.

- Արդյո՞ք թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին:
- Նպաստո՞ւմ է այն երևակայության ու ստեղծագործական մտքի խթանմանը,
- Հնարավո՞ր է ընտրված թեման անցնել այնպես, որ ապահովվի բազմամակարդակ մասնակցությունը, և միաժամանակ յուրաքանչյուր երեխայի գործադրած ջանքը պսակվի հաջողությամբ:
- Երեխաները հնարավորություն կունենա՞ն համագործակցելու և որոշակի պատասխանատվություն կրելու:
- Կարո՞ղ են նրանք ավելացնել իրենց գիտելիքները և փորձը՝ առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

ՀԱՎԵԼՎԱԾ N9

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԹԵՄԱՏԻԿ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ԹԵՄԱ	ՆՊԱՏԱԿԸ	ԺԱՄԱՆԱԿԱ-ՀԱՏՎԱԾԸ	ԹԵՄԱՅԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋՈՑԱ-ՌՈՒՄՆԵՐ
Մանկապարտեզ	Ծանոթացնել մանկապարտեզին՝ որպես ամենամոտ սոցիալական միջավայրի: Նպաստել երեխաների հարմարմանը մանկապարտեզի պայմաններին: Ծանոթացնել և՛ մանկապարտեզի շենքին, և՛ նրա տարածքին, հետաքրքրություն առաջացնել շրջակա միջավայրի /բակ, հողամաս, ծաղկանոց, բացօթա խաղամիջոցներ/, խմբասենյակի, այնտեղ տեղադրված կահույքի /անձնական պահարան, սեղան, աթոռ.../, խաղային կենտրոնների նկատմամբ: Ծանոթանալ դաստիարակի և նրա օգնականի հետ, ձևավորել ընկերական, բարեկամական հարաբերություններ: Ձևավորել պատկերացումներ՝ նրանց մասնագիտությունների մասին:	01 -10 -ը սեպտեմբերի	Ուրախ ցերեկույթ՝ «Բարի՛ գալուստ, մանկապարտե՛զ»: Տոնակատարությունը կազմակերպում են դաստիարակը և նրա օգնականը, մասնակցում են նաև ծնողները: Երեխաների համար օրը դարձնել անակնկալներով լի:
Աշուն	Ձևավորել տարրական պատկերացումներ աշնան մասին /բնության մեջ և մանկապարտեզի տարածքում տեղի ունեցող սեզոնային փոփոխությունները, մարդկանց հագուստը/: Տալ սկզբնական պատկերացում՝ բերքահավաքի, բանջարեղենի, մրգերի, հատապտուղների որոշ տեսակների մասին: Ընդլայնել երեխաների պատկերացումներն ընտանի կենդանիների և թռչունների մասին: Ծանոթացնել անտառի կենդանիների և թռչունների վարքի յուրահատ-	01 -10-ը հոկտեմբերի	Տոնահանդես՝ «Աշուն»: Երեխաների ստեղծագործությունների ցուցահանդես /երեխաները նախապես բակից հավաքում են աշնանային գույնզգույն տերևներ և դաստիարակի օգնությամբ ստեղծում խմբային գեղեցիկ աշխատանքներ՝ մեծ պաստառների վրա/:

	կությունների աշնանը: Սովորեցնել հիանալ բնության գեղեցկությամբ:		
Իմ տունը	Ծանոթացնել երեխաներին հայրենի քաղաքի /գյուղի, ավանի հետ/. զրուցել նրա անվան, փողոցների, խանութների, հրապարակների, այգիների, քաղաքում գործող տրանսպորտի տեսակների մասին: Տալ սկզբնական տեղեկություն տեսարժան վայրերի մասին: Սեր դաստիարակել հարազատ ծննդավայրի նկատմամբ, պատմել իրենց շուրջն ապրող մի քանի նշանավոր մարդկանց մասին:	10-20-ը նոյեմբերի	Սպորտային զվարճալի միջոցառում՝ ծնողների մասնակցությամբ: Էքսկուրսիա՝ հայրենի քաղաքի տեսարժան վայրեր:
Գալդ բարի, Նո՛ր տարի	Թեմայի կապակցությամբ կազմակերպել և ինտեգրել երեխաների գործունեության բոլոր տեսակները՝ խաղային, աշխատանքային, գեղարվեստական-ստեղծագործական, թատերական, ճանաչողական...: Այդ ամենը հետաքրքիր ձևով ներկայացնել Նոր տարվա միջոցառման ժամանակ: Ստեղծել ուրախ, աշխույժ մթնոլորտ, ապահովել բոլորի ակտիվ մասնակցությունը:	10-30-ը դեկտեմբերի	Նոր տարվա ուրախ ցերեկույթ:
Ձմեռ	Ձևավորել տարրական պատկերացումներ ձմռանը բնության մեջ և մանկապարտեզի տարածքում տեղի ունեցող սեզոնային փոփոխությունների մասին: Ընդլայնել երեխաների պատկերացումները ընտանի կենդանիների և թռչունների մասին: Ծանոթացնել անտառի կենդանիների և թռչունների վարքի յուրահատկություններին ձմռանը: Սովորեցնել հիանալ ձմեռային բնության գեղեցկությամբ:	10 -20-ը փետրվարի	Ձմեռային զվարճանքների կազմակերպում:

Գարուն	Ձևավորել տարրական պատկերացումներ գարնան մասին: Նպատակային դիտումների և զրույցների միջոցով կարողանալ գտնել պարզագույն կապեր կենդանի և անկենդան բնության միջև: Տալ պատկերացումներ գարնանը բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների մասին: Կարողանալ անվանել գարնանային մի քանի ծաղիկներ՝ ձնծաղիկ, մանուշակ, կակաչ:	05-15-ը մարտի	Տոնակատարություն՝ «Բարև՛, գարուն»: Ուրախ ցերեկույթ՝ նվիրված մայրիկներին:
Մայրիկների տոնը	Թեմայի հետ կապված կազմակերպել և ինտեգրել երեխաների գործունեության բոլոր տեսակները՝ խաղային, աշխատանքային, գեղարվեստական-ստեղծագործական, թատերական, ճանաչողական...: Այդ ամենը հետաքրքիր ձևով ներկայացնել մայրիկներին նվիրված միջոցառման ժամանակ: Ստեղծել ուրախ, աշխույժ մթնոլորտ, ապահովել բոլորի ակտիվ մասնակցությունը:	01-10-ը ապրիլի	Ուրախ ցերեկույթ՝ նվիրված մայրիկներին:
Ամառ	Ձևավորել տարրական պատկերացումներ ամռան մասին /բնության մեջ և մանկապարտեզի տարածքում տեղի ունեցող սեզոնային փոփոխությունները, մարդկանց հագուստը/: Տալ սկզբնական պատկերացումներ միջատների մասին: Ծանոթացնել անտառի կենդանիների և թռչունների վարքի յուրահատկություններին ամռանը: Սովորեցնել հիանալ բնության գեղեցկությամբ:	20-30-ը մայիսի	Տոնակատարություն՝ «Մենք սպասում էինք քեզ, ամա՛ռ»:

ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

Ընտանիքը սոցիալականացման առաջին օղակն է, որտեղ յուրացվում են առաջին սոցիալական դերերն ու հարաբերությունները:

Ընտանեկան դաստիարակության առավել արդյունավետ կազմակերպման նպատակով հարկավոր է կիրառել ընտանեկան դաստիարակության սկզբունքային մոտեցումներ, որոնք կոչված են ուղղորդելու տվյալ գործընթացը և շտկելու հնարավոր սխալներն ու թերությունները: Ընտանեկան դաստիարակության սկզբունքները գրեթե չեն տարբերվում դաստիարակության ընդհանուր սկզբունքներից: Դրանք են՝

- մոտեցում՝ մարդասիրական և գթասրտության դիրքերից,
- երեխայի հանդեպ սիրո և հարգանքի դրսևորում,
- ընտանեկան փոխհարաբերություններում լավատեսության գերակայություն,
- երեխայի հետ բաց և վստահելի հարաբերությունների հաստատում,
- երեխային՝ դաստիարակության միասնական պահանջների ներկայացում,
- հետևողականություն և պահանջկոտություն,
- երեխային ընտանիքի գործունեության մեջ ակտիվ ներգրավում:

Մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը:

Այն առավել արդյունավետ է, եթե հիմնավորված ու համակարգված է և օրգանապես միահյուսվում է դաստիարակի ընդհանուր մանկավարժական գործունեությանը:

Ծնողների հետ տարվող աշխատանքներում անհրաժեշտ է ապահովել հետևյալ պահանջները.

1. երեխայի ընտանիքի կենսաձևի և սոցիալական մշակույթի ուսումնասիրում,
2. երեխայի դաստիարակության մեջ մանկապարտեզի և ընտանիքի միասնական պահանջների սահմանում ու պահպանում,
3. երեխաների ազատ ժամանակի արդյունավետ օգտագործում և այդ աշխատանքների մեջ ծնողների ներգրավում,
4. ծնողների հետ վստահելի և գործնական հարաբերությունների հաստատում,
5. երեխայի զարգացման ընթացքի մասին անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում,
6. ծնողների մանկավարժական գիտելիքների հարստացում,
7. պրակտիկ մանկավարժական օգնության ցուցաբերում,
8. ծնողների՝ մանկապարտեզ այցելելու պարբերականության ապահովում,
9. ծնողներին համապատասխան տեղեկատվության տրամադրում:

Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության ընթացքում կարգավորվող խնդիրներ

1. Ծնողներին ծանոթացնել մանկապարտեզում իրականացվող մանկավարժական գործընթացի առանձնահատկություններին, նախադպրոցականի դաստիարակության և զարգացման ժամանակակից մոտեցումներին:
2. Սովորեցնել ճիշտ հաղորդակցվել երեխայի հետ, գնահատել նրա ձեռքբերումներն ու շտկել թերությունները:
3. Ապահովել յուրաքանչյուր ծնողի ակտիվ մասնակցությունը մանկապարտեզի մանկավարժական գործընթացին:
4. Աշխատանք տանել ծնողների մանկավարժական գիտելիքների բարելավման ուղղությամբ:

Գոյություն ունեն մանկապարտեզ-ընտանիք արդյունավետ համագործակցության երկու հիմնական ուղի՝

1. հետևողական, հստակ, երկկողմանի հաղորդակցություն,
2. նախադպրոցական հաստատության աշխատանքներում ծնողների ներգրավման բազմազան միջոցներ:

Ծնողներին ուշադիր լսելով՝ կարելի է արժեքավոր տեղեկություններ ստանալ և փոխօգնության բաց հարաբերություններ հաստատել:Երկկողմանի և կանոնավոր հաղորդակցության միջոցով ծնողներն ու դաստիարակները սերտորեն համագործակցում են՝ ի շահ երեխաների բնականոն զարգացման:

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին:

Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության ընթացքում իրականացվում են հետևյալ խնդիրները.

- Ծնողներին ծանոթացնել մանկապարտեզում իրականացվող մանկավարժական գործընթացի առանձնահատկություններին, նախադպրոցականի դաստիարակության և զարգացման ժամանակակից մոտեցումներին:
- Սովորեցնել ճիշտ հաղորդակցվել երեխայի հետ, գնահատել նրա ձեռքբերումներն ու շտկել թերությունները:
- Ապահովել յուրաքանչյուր ծնողի ակտիվ մասնակցությունը մանկապարտեզի մանկավարժական գործընթացին:
- Աշխատանք տանել ծնողների մանկավարժական գիտելիքների բարելավման ուղղությամբ:

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի

գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում: Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության:

Առաջարկում ենք մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համագործակցության հետևյալ ուղղությունները.

- ***Շաբաթական կամ ամսական լրատուներ.*** տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:
- ***Ծնողական ժողովներ.*** քննարկվում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտահոգությունների մասին հարցեր:
- ***Ծնողական համաժողովներ.*** դրանց նպատակը ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումն է:
- **Առ*ավոտյան հանդիպումների*** ընթացքում ծնողներին նախապես հայտնվում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:
- ***Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին.*** դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը:
- ***Գրքերի փոխանակումներ.*** սրանք ոչ պաշտոնական հանդիպումներ են այն ծնողների և մանկավարժների համար, ովքեր հետաքրքրվում են գրքով և կարդալուց հետո հավաքվում են՝ կիսելու իրենց գաղափարներն ու կարծիքները:

Կիրառելի են նաև համագործակցության հետևյալ ձևերը.

- ***Այցելություններ ընտանիքներին***
- ***Բաց դռների օրեր***
- ***Հարց ու պատասխանի ցերեկույթներ***
- ***Մանկավարժական հյուրասրահ***
- ***Գաղափարների տոնավաճառ***
- ***Վստահության հեռախոս***
- ***Բարի գործերի օրեր***
- ***Կլոր սեղան***
- ***Զրույցներ՝ անհատական և խմբային***
- ***Խորհրդատվություններ*** **՝ անհատական, ենթախմբերով և խմբային**

Անկետավորում

- ***Երեխաների ընդհանուր նպատակային զննումներ***
- ***Փառատոներ և տոնակատարություններ***
- ***Սպորտային միջոցառումներ***
- ***Ցերեկույթներ***

Կարևոր տեղ է հատկացվում **ծնողներ-մանկավարժ** արդյունավետ ժողովների անցկացմանը: Դրանց նախապատրաստումը դաստիարակները պետք է դիտեն որ-

պես մի շարունակական գործընթաց, որի ժամանակ ծնողներին տեղեկատվության ձևով հաղորդվում են մանկավարժական գիտելիքներ:

Ձևավորվում են պաստառներ, որոնցում տեղադրվելու են ծնողների համար խորհրդատվական նյութեր՝ բոլոր բաժինների ծրագրով: Հատուկ թղթապանակներով ներկայացվում են հակիրճ տեղեկատվական խորհրդատվություններ՝ մանկավարժի, հոգեբանի և բժշկի կողմից: Կան այլ **թղթապանակներ,** որոնցում դաստիարակները տեղադրում են ֆոտո-նյութեր: Դրանց միջոցով լուսաբանվում է երեխաների մասնակցությունը մանկապարտեզի միջոցառումներին: Հատուկ ուշադրության են արժանի «**Խորհուրդ են տալիս ծնողները»** խորագրով տրվող նյութերը /այստեղ հայրիկները և մայրիկները գաղտնիքներ են փոխանակում/: Ներառված են նաև «Նոր բուժման ձև գրիպից», «Աղցանների բաղադրատոմսեր», «Լավագույն տոնական սեղան՝ ծնողների մասնակցությամբ» և այլ օգտակար խորհուրդներ:

Ժողովների անցկացման ուղենիշներ

- Ճանաչելով ընտանիքներին՝ դուք ավելի հեշտությամբ կհարմարվեք ծնողների միջև առկա անհատական տարբերություններին[3]: Ծնողների վերաբերմունքն ըստ իրենց կրթության և փորձի՝ կարող է տատանվել գոհունակությ*ունից մինչև թերահավատություն*[4]: Նախապես իմանալով ժողովների նկատմամբ ծնողների վերաբերմունքի այս տարբերությունները՝ յուրաքանչյուր իրադրությունից դուրս գալու համար ձեզ ավելի պատրաստ կզգաք:

- Ժողովների մասին հայտարարությունից և ընդհանուր տեղեկատվությունից բացի՝ յուրաքանչյուր ծնողի կոնկրետ տեղեկություն հաղորդե՛ք ժողովին առնչվող ձեր նպատակների մասին: Այդ կերպ նրանք մինչև ձեր հանդիպումը մտածելու բան կունենան: Ժամանա՛կ հատկացրեք ժողովի համապատասխան միջավայրի ստեղծմանը:

- Ստեղծե՛ք ընկերական մթնոլորտ՝ թեթև հյուրասիրություն առաջարկելով: Ծնողների հետ քննարկե՛ք երեխային առնչվող սոցիալական, հուզական, կրթական, ճանաչողական և ֆիզիկական նպատակները: Բացատրե՛ք, թե ինչպե՞ս կարելի է հասնել այդ ամենին: Նշե՛ք անհրաժեշտ ռազմավարություններն ու պլանները:

Ժողովներ վարելիս հարկավոր է ձգտել՝

- օգնել ծնողներին՝ իրենց հանգիստ, հարմարավետ և ցանկալի հյուր զգալ, քանի որ մանկապարտեզը մանկավարժի «տարածքն» է,

- հաղորդակցվել ծնողների հետ՝ իրենց մակարդակին համապատասխան, խուսափել նեղ մասնագիտական բառապաշարի օգտագործումից,

- շեշտը դնել երեխայի բնավորության դրական հատկանիշների վրա,

[3] Հայմես, 1974
[4] Նեդլեր և Մաք ԱՖԻ, 1979

- ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որոնցով նրանք կարող են տանը օգնել իրենց երեխաներին:

Տնային այցելությունների ծրագրերը բովանդակային և մեթոդական առումով խիստ բազմազան են: Դրանք իրարից նշանակալիորեն տարբերվում են ըստ այն հանգամանքի, թե այցելության նպատակը ծնո՞ղն է, երեխա՞ն, թե՞ ընտանիքը: Տնային այցելություն կատարողի և ծնողի միջև փոխհարաբերությունները պետք է կառուցվեն համագործակցային սկզբունքով:

Տնային այցելությունները յուրահատուկ ուղի են հարթում դեպի երեխայի ընտանիքը և բացառիկ տեղեկատվություն են ապահովում ընտանեկան իրավիճակի մասին: Միևնույն ժամանակ պետք չէ ակնկալել, որ տնային այցելությունները կկարողանան լուծել խոշոր հիմնախնդիրներ:

Ոչ պաշտոնական գրառումներ

Մանկավարժական կազմը կարող է երեխայի միջոցով տուն ուղարկել կարճ գրառումներ: Դրանք կպարունակեն ընտանիքի անդամներին ուղղված տեղեկություններ՝ երեխայի կողմից որոշակի հմտությունների ձեռք բերման կամ իրականացված որևէ այլ գործունեության մասին: Կարելի է նաև այդ կերպ շնորհակալություն հայտնել ծնողներին ուսումնական հաստատությանն այս կամ այն ձևով աջակցելու համար: Ընտանիքի անդամները նույնպես կարող են մանկավարժներին ուղարկել երախտագիտություն կամ որևէ խնդրանք պարունակող գրություններ:

Անհատական գրառումների գրքույկներ

Այս գրքույկները կարող են ամեն օր տնից հաստատություն և հակառակը փոխանցել ընթացիկ տեղեկատվությունը: Ընտանիքները կարող են մանկավարժներին նախազգուշացնել հատուկ իրադարձությունների, ինչպես, օրինակ, ծննդյան տոների, նոր աշխատանքի հնարավորության, ճանապարհորդությունների և այցելությունների մասին:

Տեղեկատվական բնույթի պատի թերթեր

Պատի թերթն օգտակար է՝ ընտանիքներին միշտ թարմ տեղեկատվություն հաղորդելու առումով: Դրա միջոցով հնարավոր է ազդարարել ժողովները, հատուկ իրադարձությունները, ընտանիքների համար նախատեսված միջոցառումները, ընդհանուր առմամբ՝ ուսումնական հաստատության անցուդարձը:

Առաջարկությունների տուփ

Ծնողներին առաջարկվում է իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկություններն ու հարցերը մանկավարժական կոլեկտիվի անդամներին ներկայացնել հատուկ տուփի միջոցով: Նրանք կարող են տուփի մեջ գցել գրավոր ձևակերպված իրենց հուզող հարցերը:

Նախադպրոցական հիմնարկներում պետք է գործեն նաև **«Վստահության հեռախոս», «Մանկավարժի հյուրասրահ», «Գաղափարների տոնավաճառ»**: Դրանք հաղորդակցության և համագործակցության ժամանակակից ձևեր են, որոնց միջոցով տարբեր մասնագետներ կապի մեջ են մտնում (ընդ որում, նրանք աշխատում

են որոշակի օրերի և ժամերի ընթացքում, ասենք՝ ամեն ամսվա առաջին շաբաթվա օրերից մեկը) նախադպրոցականների ծնողների հետ և օժանդակում նրանց ամենատարբեր հարցերում:

Նպատակահարմար է տարվա ընթացքում անցկացնել մրցույթ՝ «Ամենահամերաշխ ընտանիքը»: Դրան մասնակցելու համար ընդհանուր ծնողական ժողովում ընտրվում են ամենաակտիվ ծնողներն ու իրենց երեխաները:

Մանկապարտեզ-ընտանիք կապը հիմնվելու է փոխադարձ վստահության վրա, որը բազմապատկվում է արդյունավետ հաղորդակցության միջոցով:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻՆ՝ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

• Ծնողներին պարապմունքների և կազմակերպչական աշխատանքների մեջ ներգրավելու համար օգտագործե՛ք բազմատեսակ ձևեր: Ստեղծագործական և ճկուն մոտեցում ցուցաբերե՛ք:

• Ժողովները և հանդիպումները կազմակերպե՛ք ծնողների համար հարմար ժամերի:

• Թո՛ւյլ տվեք, որ ընտանիքն ինքը որոշի ընդհանուր գործին իր մասնակցության լավագույն ձևը:

• Պահպանե՛ք սերտ կապ:

Հետևե՛ք, որ մանկավարժական կոլեկտիվի անդամը յուրաքանչյուր երեխայի ծնողների հետ զրուցի առնվազն շաբաթը մեկ անգամ:

• Փորձե՛ք ներգրավել ամբողջ ընտանիքին:

Երբեմն հայրերը դուրս են մնում երեխաների համար իրականացվող ծրագրերից: Ստեղծագործաբար որոնե՛ք տարբերակներ՝ հայրերին, եղբայրներին, քույրերին և ընտանիքի մյուս անդամներին ներգրավելու համար:

• Հենվե՛ք երեխաների ու ընտանիքի ուժեղ կողմերի վրա և դրանց դրսևորումներին արձագանքե՛ք դրականորեն:

• Եղե՛ք համբերատար: Պահպանե՛ք գաղտնիությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ ԿԳՆ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներ, Երևան 2011-ԿԳՆ 30 մարտի 2011թ N 257-ն հրաման:
2. Հովհաննիսյան Ա., Մարության Ս. և ուրիշներ, Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի կրթական համալիր ծրագիր, Երևան, 2011:
3. Միտոյան Հ., Մարության Ս. և ուրիշներ, Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր, Երևան, 2011:
4. Մարության Ս., Դալլաքյան Ա., Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 2008:
5. Միտոյան Հ., Սմբատյան Լ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան, 2010:
6. Կոնդակչյան Ժ., «Դիդակտիկ խաղերը որպես նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր զարգացման միջոց» , Երևան ,1980թ.:
7. Մանուկյան Լ., «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում», Երևան, 1974:
8. Васильева М. А. “Программа воспитания и обучения в детском саду” Москва 2005г.
9. Гербова В. В. “Развитие речи разновозрастной группе детского сада” Москва 2010г.
10. Гербова В. В. “Разжитие речи в детском саду” Москва 2010г.
11. Лифц Е. А. Лифц И. В. “Развитие речи, движения и мелкой моторики” Мосва 2010г.
12. Микляева Н. В. “Диагнозтика языковой способности у детей дошкольного возраста” Москва 2007г.
13. “Общеобразовательная программа дошкольного образования от рождения до школы” Москва 2010г.
14. Янушко Е. Е. “Помогите малышу заговорить” Москва 2011г.
15. Васильева М. А. “Программа воспитания и обучения в детском саду” Москва 2005г.
16. Из детства в отрочество. Программа для родителей и воспитателей М. 2011г.
18. Э. Г. Пилюгина. Воспитание и обучение детей в первой младшей группе детского сада М. 2006.
19. Л. Н. Павлова .Развивающие игры-занятия с детьми от рождения до трех лет, М 2005.
20. М. Г. Борисенко, Н. А. Лукина В помощь маленькому мыслителю /развития элементалньх математических представленый от 0 до 3 лет/ Санкт-Петербург 2003г.
21. Поиграем с наклейкаму-Размеры М. 1998 /перевод на русский язык-Е. Борисовой-Сартори/.

22.Э. Г. Пилюгина. Сенсорные способности малыша М. 1999.
23. В. И. Мустафаева, М. Н. Павлова,И. А. Осина, Е. В. Горюнова , **Развернутое** перспективное планирование по программе под редакцией М. А. Васильевои, В. В. Гербовой, Т. С. Комаровой. Первая младшая группа / авт.-сост. В. И. Мустафаева [и др.]. - Волгоград : Учитель, 2010. - 87 с. ISBN 978-5-91651-112-3.
24. “От рождения до школы”-Н.Веракса и другие-2010.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բացատրագիր…….. 3
Ծրագրի կառուցվածքը և հիմնական առանձնահատկությունները…… 5
Կրտսեր 1-ին խմբի երեխաների հոգեֆիզիոլոգիական զարգացման տարի-
քային առանձնահատկությունները…….. 6
Երեխաների կյանքի կազմակերպումը…… 8
2-3 տարեկանների խմբի օրվա օրինակելի ռեժիմի տարբերակ…… 9
Դաստիարակության և ուսուցման խնդիրները…… 10
Կրտսեր 1-ին խմբի շաբաթական պարապմունքների տեղաբաշխման օրի-
նակելի ցանկ……. 11
Երեխաների հետ կազմակերպվող աշխատանքի ձևերը…… 12
Դաստիարակության և ուսուցման հիմնական ուղղությունները.
ֆիզիկական դաստիարակություն…….…… 14
Հավելված N1.
Ֆիզիկական դաստիարակության աշխատանքների պլանավորումը…… 22
Մտավոր դաստիարակություն…… 28
Զգայական դաստիարակություն …… 28
Երեխան և շրջակա աշխարհը……. 29
Հասարակական կյանքի երևույթներ……. 29
Հավելված N2.
Մեթոդական ցուցումներ…… 32
Ծանոթացում բնությանը: Էկոլոգիական դաստիարակություն…… 38
Հավելված N3.
Էկոլոգիական պատկերացումների ձևավորման ուղղությամբ կրթադաստիա-
րակչական աշխատանքների, հեռանկարային պլանավորում……..…….
Ճանապարհային երթևեկության կանոնների ուսուցում…… 45
Հավելված N4.
Հեռանկարային պլանավորում - ՃԵԿ…….…….…….. 47
Խոսքի զարգացում……..…… 56

Հավելված N5.

Խոսքի զարգացման պարապմունքների հեռանկարային պլանավորում……. 64

Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացում……..….. 74

Հավելված N 6.

Տարրական մաթեմատիկայի ծրագրի թեմատիկ բաշխումը՝ ըստ ամիսների և շաբաթների …….…… 77

Բարոյական դաստիարակություն……. 93

Աշխատանքային դաստիարակություն…… 93

Գեղարվեստական գրականություն……... 94

Գեղարվեստագեղագիտական գործունեություն……..…….….. 94

Կերպարվեստային գործունեություն……. 96

Հավելված N 7.

Մեթոդական ցուցումներ ……..…. 99

Կառուցողական աշխատանք……..……. 106

Երաժշտական դաստիարակություն…… 121

Հավելված N8.

Մեթոդական ցուցումներ, հեռանկարային պլանավորում……. 131

Խաղային գործունեություն……..……. 141

Ինտեգրված թեմատիկ ուսուցում…….. 153

Հավելված N 9.

Ինտեգրված թեմատիկ ուսուցման հեռանկարային պլանավորում…….. 154

Ընտանիք և մանկապարտեզ……. 157

Օգտագործված գրականության ցանկ……. 164

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿՐՏՍԵՐ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐ

(2-3 ՏԱՐԵԿԱՆՆԵՐ)

Հրատարակչական աշխատանքները՝

Մարիամ Պետրոսյանի

Սրբագրիչ՝

Գոհար Ամիրբեկյան

ê ï áñ ³ ·ñí ³ Í ¿ ï å ³ ·ñáõÃÛ ³ Ý 14. 12. 2012 Ã.:
Ì ³ í ³ ÉÁ¹ 10.5 Ù ³ ÙáõÉ:
ü áñÙ ³ ï ¹ 70X100 1/16:
î å ³ ·ñáõÃÛáõÝÁ¹ ûý ë»Ã:
§ Î ñÃáõÃÛ ³ Ý ³ ½· ³ ÛÇÝ ÇÝë ï Ç ï áõ ï ¦, ºñև ³ Ý, î Ç · ñ ³ Ý Ø»ÍÇ 67, Ñ»é.՝ 57 48 20: